



**BALAT:**  
LIVING TOGETHER

Tigran Amiryanyan / ed.

Տիգրան Ամիրյան /խմբ.

**ԲԱԼԱԹ.**

ԱՊՐԵԼ ՄԻԱՍԻՆ



# BALAT

*Living Together*





# ԲԱԼԱԹ

*Ապրել միասին*

## EDITOR-IN-CHIEF

*Tigran Amiryan*

## EDITORIAL BOARD

*Sona Kalantaryan*

*Gizem Kiygi*

Գլխավոր խմբագիր  
*Տիգրան Ամիրյան*

Խմբագրական կազմ  
*Սոնա Բալանթարյան*  
*Գիզեմ Կըյգը*

**Cultural and Social Narratives  
Laboratory NGO**

Մշակութային և սոցիալական  
նարատիվների լաբորատորիա

CSN LAB  
Yerevan / Երևան  
2023

UDC 93/94:316:008

*Balat: Living Together* explores the memory of one of the most kaleidoscopic neighborhoods of Istanbul, which is significant in terms of its cultural and historical heritage.

Authors from various disciplines such as cultural anthropologists, semiologists, historians, architects have jointly put their efforts to identify and re-actualize the social and urban memory of this place, analyze the current life of Balat, draw parallels between different periods – from the Byzantine era to the tragic events of the 20th century.

One of the main goals of this book is to show the memory and post memory of the multicultural Balat and the transformation of the ways of co-existence of various ethnic and religious groups in one place through transdisciplinary analysis.

The experience of living together, the peaceful co-existence and the shades of minor and major catastrophes and conflicts are anchored in memories of Armenians, Greeks, Bulgarians, Jews, Turks, and others.

Like Balat's memory, this book is multi-layered, woven from various languages and methods. Academic texts, statistics, factual evidence, autobiographical stories, and fiction are intertwined.

In addition, the editors of the book have paid particular attention to the visualization of Balat and fragments of the architectural memory of the place: it is full of illustrations, maps, and photographs from both family archives and notable photographers.

ISBN 978-9939-1-1500-9

© CSN Lab, 2023

Balat: Living Together. Collective monograph ed. by Amiryanyan T., Kalantaryan S., Kiygi G., CSN Lab, Yerevan, 2023, 376 p.

*Բալաթ. ապրել միասին* գիրքը ուսումնասիրում է Ստամբուլի բազմերանգ թաղամասերից մեկի հիշողությունը, որը նշանակալի է իր մշակութային և պատմական ժառանգությամբ:

Տարբեր գիտակարգերից մի շարք հեղինակներ՝ մարդաբաններ, նշանաբաններ, պատմաբաններ, ճարտարապետներ, համատեղ ջանքերով բացահայտել և վերարժևորել են թաղամասի սոցիալական և քաղաքային հիշողությունը, վերլուծել Բալաթի ներկայիս կյանքը, համեմատել տարբեր ժամանակաշրջաններ՝ սկսած բյուզանդական դարաշրջանից մինչև 20-րդ դարի ողբերգական իրադարձությունները:

Գրքի հիմնական նպատակներից էր բազմամշակութային Բալաթի հիշողության ու հետհիշողության պատկերումը, ինչպես նաև միջգիտակարգային վերլուծության միջոցով տարբեր էթնիկական և կրոնական խմբերի համակեցության ձևերի փոխակերպումներն արձանագրելը:

Միասին ապրելու փորձը, խաղաղ համակեցությունը, փոքր ու մեծ աղետների ու հակամարտությունների հետքերը խարսխված են հայերի, հույների, բուլղարների, հրեաների, թուրքերի և այլոց հիշողություններում: Գիրքը բազմաշերտ է Բալաթի հիշողության պես՝ հյուսված տարբեր լեզուներից ու մեթոդներից: Այստեղ միահյուսված են ակադեմիական տեքստերն ու գեղարվեստական արձակը, վիճակագրությունները, փաստերը ու ինքնակենսագրական պատմությունները:

Բացի դրանից, գրքի խմբագիրներն այստեղ կարևորել են Բալաթի և տեղանքի ճարտարապետական հիշողության դրվագների պատկերային ներկայացումը. այն լի է արխիվային վավերագրական լուսանկարներով և նշանավոր լուսանկարիչների գործերով, նկարազարդումներով և քարտեզներով:



This book has been produced with the assistance of the European Union within the framework of the “Support to the Armenia-Turkey Normalization Process: Stage 3” (ATNP-3) programme. The contents of this book are the sole responsibility of Cultural and Social Narratives Laboratory NGO and Palimpsest Center for Space and Memory and can in no way be taken to reflect the views of the European Union or members of the ATNP Consortium.

Գիրքը ստեղծվել է Եվրոպական միության աջակցությամբ՝ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. 3-րդ փուլ» ծրագրի շրջանակներում: Գրքի բովանդակության համար պատասխանատու է Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա ՀԿ-ն և Palimpsest տարածության ու հիշողության կենտրոնը: Բովանդակությունը կարող է չհամընկնել Եվրոպական միության և ծրագիրն իրականացնող կոնսորցիումի անդամների տեսակետների հետ:

ISBN 978-9939-1-1500-9



9 789939 115009



## **BALAT: LIVING TOGETHER** **ԲԱԼԱԹ. ԱՊՐԵԼ ՄԻԱՍԻՆ**

Editor-in-Chief / Գլխավոր խմբագիր  
**Tigran Amiryan / Տիգրան Ամիրյան**

Editorial Board / Խմբագրական կազմ  
**Sona Kalantaryan / Սոնա Բալանթարյան**  
**Gizem Kiygi / Գիզեմ Կըյգը**

Translators / Թարգմանիչներ

English Translation / Անգլերեն թարգմանություն  
**Hovhannes Galstyan / Հովհաննես Գալստյան (18-64)**  
**Burcu Sila Candan / Բուրջու Սըլա Ջանդան**

Armenian Translation / Հայերեն թարգմանություն  
**Armen of Armenia (Ohanyan) /**  
Արմեն (Օհանյան) Հայաստանցի (10-64, 322-368)  
**Norayr Manvelyan / Նորայր Մանվելյան (65-215, 241-321)**  
**Hayarpi Papikyan / Հայարփի Պապիկյան (216-241)**

Proofreaders / Սրբագրիչներ  
English / Անգլերեն  
**Hovhannes Galstyan / Հովհաննես Գալստյան**

Armenian / Հայերեն  
**Meri Sargsyan / Մերի Սարգսյան**

Layout Design and Photo Editing /  
Էջադրում և լուսանկարների խմբագրում  
**Klim Gretchka / Կլիմ Գրեչկա**

Book Cover Design and Illustrations /  
Շապիկի դիզայն և նկարազարդում  
**Harutyun Toumaghyan / Հարություն Թումաղյան**

The editors of this book would like to thank the Ara Güler Museum for its cooperation and for providing a selection of Ara Güler's photographs to the Cultural and Social Narratives Laboratory NGO for publication in this book.

Գրքի խմբագիրները շնորհակալություն են հայտնում Արա Գյուլերի թանգարանին համագործակցության և Արա Գյուլերի լուսանկարների ընտրանին սույն գրքում տպագրելու նպատակով Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա ԶԿ-ին տրամադրելու համար:

A Page from the Editor's Notepad  
*Թերթիկ՝ խմբագրի նոթատետրից*  
Tigran Amiryanc / Տիգրան Ամիրյան  
**10**

Unity from Struggle: The Cibali  
Tobacco Factory Workers and Their  
Strikes

*Պայքարը ստեղծում է միասնություն.  
«Միբալի» ծխախոտի գործարանի  
աշխատողներն ու նրանց  
գործադուլները*  
M. Emir Küçük / Մ. Էմիր Զյուչուք  
**100**

Container of the Uncontainable. Notes  
on Balat's Spatial Memory  
*Անպետեղելիի պետեղարանը. նոթեր  
Բալատի տարածական հիշողության  
մասին*  
Tigran Amiryanc / Տիգրան Ամիրյան  
**18**

Tracing the Memory of Armenian  
Balat: Khorenyan School and Surb  
Hreshdagabed Church  
*Հայկական Բալատի հիշողության  
հետքերով. Խորենյան դպրոցը և Սուրբ  
Հրեշտակապետուց եկեղեցին*  
Diana Yayloyan, Mete Ulutaş,  
Leon Aslanov / Դիանա Յայլոյան,  
Մեթե Ուլութաշ, Լեոն Ասլանով  
**122**

An Evaluation of the Disintegration  
of Multiculturalism in the District  
of Balat and Its Commercial Fabric  
Under the Influence of 19th Century  
Transformations  
*19-րդ դարի փոխակերպումների  
ապրեցության տակ Բալատի  
բազմամշակութայնության քայքայման  
և առևտրային կառուցվածքի  
գնահատումը*  
Melis Bilgiç / Մելիս Բիլգիչ  
**66**

Digital Humanities for Recording and  
Representing the Multicultural Urban  
History of Balat, Istanbul (1894-1950)  
*Թվային հումանիտար գիտությունները՝  
Ստամբուլի Բալատ թաղամասի (1894-  
1950 թթ.) բազմամշակույթ քաղաքային  
պատմությունն արձանագրելու և  
ներկայացնելու հարցում*  
Mesut Dinler / Մեսուք Դինլեր  
**178**

Interview with Çiğdem Şahin  
*Չիղդեմ Շահին, Բալատի մասին  
հարցազրույց*

Gizem Kıyıcı / Գիզեմ Կըյզը

**290**

Living Together, Dying Apart:  
Balat in the Epidemic and Healing  
Geographies of Nineteenth-Century  
Istanbul

*Միասնական կյանք, պատված մահ.  
Բալատը տասնիններորդ դարի  
Ստամբուլի համաճարակի և բժշկման  
աշխարհագրության մեջ*

Gizem Kıyıcı / Գիզեմ Կըյզը

**216**

Interview with Silvina  
Der-Meguerditchian

*Յարգապրույց Սիլվինա Տեր-Մկրտչյանի  
հետ*

Sona Kalantaryan / Սոնա Բալանթարյան

**306**

Eleni: Novelistic Simulations of Space  
Memory and Oblivion

*Էլենի. վիպագրական մտավարժանքներ՝  
տարածքի հիշողության ու*

*մոռացության շուրջ*

Angelos Kottas / Անգելոս Կոտտաս

**244**

The Streets of Balat are a Fish-Grid  
*Ձկնամանդալ են Բալատի փողոցները*

Emre Yalçın / Էմրե Յալչըն

**322**

Urban Patchwork: An Attempt to Read  
Balat's Multicultural History Through  
its Façades

*Քաղաքային կարկատան. Բալատի  
բազմամշակութային պատմությունն  
իր ֆասադների օգնությամբ կարդալու  
փորձ*

Berfin Mollavelioğlu, Meriç G. Doğan /  
Բերֆին Մոլլավելիօղլու, Մերիչ Գ. Դոգան

**262**

Epilogue. The Memory of Balat: Living  
Together

*Վերջաբան: Բալատի հիշողությունը.  
սպրեկով միասին*

Gizem Kıyıcı / Գիզեմ Կըյզը

**370**

## A PAGE FROM THE EDITOR'S NOTEPAD

In the spring of 2018, thanks to the Hrant Dink Foundation program, I had an internship at the French Institute in Istanbul, renting a small apartment in one of the three-storey buildings in Balat. This was my second visit to Istanbul. The magical appeal of the city, which affects the tourist gaze so strongly, seemed somewhat faded. However, it is impossible to leave this gaze behind altogether, even for Istanbulites, and probably, this is the real charm of Istanbul. My daily routine, my evenings and weekends flowed in Balat. Hence, the book that had been envisioned by me and my colleagues, is imbued with Balat's everyday life.

This book aims to recreate the space that is lost or forgotten time and again, unnoticed occasionally, not always or not fully articulated, to revive its architectural, urban, social and biographic components, which constitute the space of memory. It is not an attempt to reconstruct the historical past in terms of archaeology, but rather an attempt to examine Balat's outer layers unveiling the marks of the past left by the inhabitants and buildings of the quarter. Our search for the traces of "living together" was the starting point for a discussion about the difficult, oftentimes inconvenient past of Balat, Istanbul or Turkey and of the entire region indeed. We live in the shadow of this past. The book has become the photographic layer revealing a wide range of ideas about the memory of this place.

Our book brought together authors (researchers, artists) from all over the world. It was written, revised and edited in Armenia and Turkey, in the USA and Belgium, in Russia and Italy, in Greece, in England and in Germany. Balat's narrative dismantles and dissipates any depiction that turns this place into a museum or monument. We all wrote about Balat striving to reach it, focalizing our narrative, at times without noticing how we transpose Balat to various geographical and cultural spaces, how we examine it in terms of semiology, anthropology, sociology, urbanism, architecture, etc. We write about it in different

# Թերթիկ՝ խմբագրի նոթատետրից

2018-ի գարնանը Յրանտ Դինք հիմնարկի ծրագրով Ստամբուլի Ֆրանսիական ինստիտուտում ստածավորում անցնելիս Բալաթի եռահարկ շինություններից մեկում մի գողտրիկ բնակարան էի վարձակալում: Երկրորդ այցս էր Ստամբուլ, ու քաղաքի՝ զբոսաշրջիկի աչք շլացնող մոգական հմայքը թեթևակի մարել էր: Բայց Ստամբուլի հմայքը, թերևս, այն է, որ աչքիդ երբեք էլ սովորական չի դառնում, նույնիսկ ստամբուլցիների պարագայում: Օրերս հոսում էին Բալաթում, երեկոներս, հանգիստս, այսպես ասած՝ սովորական կյանքս: Արդյունքում պարզվեց, որ գործընկերներիս հետ հղացած այս գիրքն էլ է ուղևուծուծով ներծծված լինելու Բալաթի առօրեականությամբ:

Սույն գրքի խնդիրներից է վերստեղծումը մի տարածության՝ հաճախ կորուսյալ, մոռացված կամ կյանքի հորձանուտում մոռացվող, ոչ միշտ նկատված, ոչ միշտ կամ ոչ մինչև վերջ բարբառված, ճարտարապետական, ուրբանիստական, սոցիալական, կենսագրական մի տարածության, որ կոչվում է հիշողության տարածություն: Նպատակն է նաև ոչ թե պատմական անցյալի հնագիտական վերականգումը, այլ ավելի շատ մակերեսի հետ աշխատանքը, որի վրա պատկերվում են բալաթցիների և բալաթյան տների անցյալի հետքերը: Մեր արածը միասնականի հետքերի հնագիտություն է, որ Բալաթի, Ստամբուլի, Թուրքիայի, ինչու չէ՝ նաև մեր ողջ տարածաշրջանի ծանր, երբեմն՝ անհարմար անցյալի մասին խոսակցություն ծավալելու առիթ տվեց, անցյալ, որի ստվերում է անցնում մերօրյա կյանքը: Գիրքը դարձավ լուսանկարչական մի մակերևույթ, որ երևան հանեց տվյալ տարածքի հիշողության շուրջ ամենատարբեր պատկերացումներ:

Գրքի վրա աշխատել են աշխարհի տարբեր անկյուններից հեղինակներ (հետազոտողներ, ստեղծագործողներ). աշխատանքներ են տարվել Չայաստանում և Թուրքիայում, ԱՄՆ-ում, Բելգիայում, Ռուսաստանում, Իտալիայում, Յունաստանում, Անգլիայում, Գերմանիայում: Բալաթի մասին գիրը փոշիացնում, հօդս է ցնդեցնում տեղակքը թանգարանային, կոթողային ներկայացնելու ցանկացած փորձ: Բոլորս գրում էինք Բալաթի մասին՝ ձգտելով դրան, մեր գիրը կիզակետելով, երբեմն անգամ չնկատելով, թե ինչպես ենք Բալաթը փոխադրում ամենատարբեր աշխարհագրական ու մշակութային տարածքներ, ինչպես ենք զննում այն՝ նշանաբանության, մարդաբանության, սոցիոլոգիայի, ուրբանիզմի, ճարտարապետության և այլ դիտանկյուններից, գրում դրա մասին տարբեր լեզուներով, կարդում՝ ֆրանսերեն,

languages, we read books and articles about it in French, Turkish, Armenian, English, Greek and Hebrew. We do it simultaneously – apart and together.

The book would not have been possible without Sona Kalantaryan and Gizem Kıyıcı – two brave and professional colleagues-editors who worked on this project with me for almost two years. I sincerely thank all the authors and editors who contributed to this project sharing their professionalism, knowledge and genuine love for Balat.

Dark times, in which we tried to bring into light every line, every page of this book, will be studied by historians. We worked against the backdrop of a global tragedy; the outbreak of coronavirus stopped the planet several times, alienating us from each other. We learned anew to work together, think about “living together” and Balat despite everything. The Nagorno-Karabakh war spread so much suffering, disappointment and pain across Armenia that grief seemed to overshadow our minds; no book seemed to be finished. Perhaps, the very existence of this book will remind us of our most difficult and most important experience of co-existence and co-creation, even in the most horrifying moments of history. This book has become our shared experience of resisting the language of enmity.

We worked together in different languages, but Balat’s palimpsest came to life thanks to our translators – Armen Hayastantsi (Ohanyan), Norayr Manvelyan, Gizem Kıyıcı, Burcu Sila Candan and Hovhannes Galstyan. All the texts in this book have been proofread and revised many times by our editors in Turkey and Armenia. I am grateful to everyone who made these texts accessible and comprehensible to the reader – Meri Sargsyan, Hovhannes Galstyan, Eylem Can, Teryn Bell.

While the book was being created, there were people who generously provided a helping hand and supported us; I thank Varduhi Balyan, Rafik Santrosyan and Sona Stepanyan for their advice and encouragement. I also thank the whole staff of the Eurasia Partnership Foundation for their kindness and institutional support.

Now that the book is finished, I realize that our designers have been ceaselessly working with

թուրքերեն, հայերեն, անգլերեն, հունարեն ու եբրայերեն հոդվածներ ու գրքեր: Աշխատում էինք յուրաքանչյուր առանձին, բայց արի ու տես՝ միասին:

Գիրքը գլուխ չէր գա առանց իր երկու խիզախ ու բանիմաց խմբագիրների՝ Սոնա Զալանթարյանի ու Գիզեմ Կիյզիի, որ ինձ հետ հավասար գրեթե երկու տարի անդադար աշխատեցին: Անկեղծորեն երախտապարտ եմ խմբագիրներին և բոլոր հեղինակներին, որ այս գործում ներդրեցին իրենց մասնագիտական կարողություններն ու գիտելիքները, և, ինչն ըստ իս ակներև է՝ իրենց անշահախնդիր սերն առ Բալաթ:

Պատմաբանները դեռ երկար կուսումնասիրեն մթին ժամանակները, երբ ստեղծվում էր այս գրքի ամեն մի տողը, ամեն մի էջը: Աշխատում էինք գլոբալ ողբերգության ֆոնին, համավարակը քանիցս ամբողջ աշխարհին դադարներ պարտադրեց, մեզ հեռացրեց իրարից, ուստի սովորում էինք միասին աշխատել, խորհել միասնակյանքի շուրջ ու մտածել Բալաթի մասին նոր պայմաններում՝ ի հեճուկս ստեղծված իրավիճակի: Լեռնային Ղարաբաղում պատերազմն այնքան տառապանք, հիասթափություն և ցավ բերեց ողջ Հայաստանին, որ երբեմն թվում էր՝ վշտից խելքներս կմթագնի, և այլևս երբեք ոչ մի գիրք չի գրվի-վերջացվի: Գուցե, այս գրքի գոյության փաստն ինքնին ինձ ու հեղինակների համար այդպես էլ կմնա իբրև համագոյության ու համաարարման ամենաբարդ ու ամենակարևոր փորձառություններից մեկը՝ անգամ պատմական սարսափազդու պահերին: Ինչ-որ առումով այս գիրքը վերածվեց թշնամանքի լեզվին դիմադրելու համատեղ փորձառության:

Աշխատել ենք միասին ու տարբեր լեզուներով, բայց Բալաթի պալիմփսեստը (կրկնագիր), ի վերջո, հնարավոր էր դառնում մեր թարգմանիչների՝ Արմեն (Օհանյան) Հայաստանցու, Լորայր Մանվելյանի, Գիզեմ Կիյզիի, Բուրջու Սըլա Ջանդակի ու Հովհաննես Գալստյանի ջանքերով: Գրքի տեքստերը ընթերցվել ու շտկվել են Թուրքիայի և Հայաստանի մեր խմբագիրների ու սրբագրիչների կողմից: Շնորհակալ եմ բոլորից, ովքեր տեքստերը ընթերցողի համար հնարավորինս մատչելի ու հասկանալի դարձրին՝ Մերի Սարգսյան, Էլլեն Ջան, Հովհաննես Գալստյան, Տերին Բելլ:

Գիրքն իր ստեղծման ընթացքում ձեռք բերեց ընկերներ, որ տարբեր կերպ նեցուկ եղան նախագծին և աջակցեցին մեզ: Վարդուհի Բայանը, Ռաֆիկ Սանթրոսյանը, Սոնա Ստեփանյանը այն մարդկանցից են, ում շնորհակալ եմ մեր նախագծի ընկերը լինելու համար: Բարեկամական վերաբերմունքի ու ինստիտուցիոնալ աջակցության ենք արժանացել նաև Եվրասիա համագործակցություն և հիմնադրամի աշխատակիցների կողմից, որ օժանդակեցին նախագծին և մշտապես մեր կողքին էին:

us – simultaneously and in parallel, mirroring the idiorhythmic everyday life of Balat’s diverse communities and buildings. The artists of this project did not move from Balat to the printing press; following attentively our dialogues and looking into the research process, they started their trip to Balat through our ideas and engaged readers when getting closer to the quarter. This movement became a reality thanks to the artist Harutyun Tumaghyan, who created unique images of the quarter, which accompany each article in this book, and to the designer Klim Gretchka, who meticulously organized the entire space of this publication.

Paralyzed by the war and political climate, we were not always able to stick to the original plan of our research project. But Istanbul is a unique city that hands out a solution from its treasure chest even in the most difficult circumstances. The photographs, kindly donated by the Ara Güler Museum, became our remedy during the war. Creating a book illustrated with Güler’s photographs is the greatest joy to any author or editor. It is a huge responsibility at the same time. Balat’s images adorning the pages of this book constitute a pre-textual compensation. Everything that we could not convey or depict due to closed borders is captured in the photographs of Güler, “The Eye of Istanbul.” I would like to express my gratitude to the Güler Museum and to Umut Sülün, its director.

Though back in 2018, the idea of this book was still ripening for days and weeks on end, its name was instantly ready. Since then, it has never been erased from my memory, and will never be, I think. On a weekend day, when I did not have to visit the library at the noisy Taksim Square and delve into French books, I walked across the streets of Balat. Moving downwards from Chora, I wandered into an alley. Men of all ages gathered in the courtyard of a mosque. The poor and immigrants were in the queue for social assistance. I stopped and watched the scene for a while; it differed sharply from other gatherings one encounters elsewhere in the city. They took their bags full of food and other stuff, chatted, took something from their packages giving to or exchanging with



Այժմ, երբ գիրքն այլևս ստեղծված է, պարզորոշ տեսնում եմ, որ ձևավորման խումբը ողջ ընթացքում համատեղ, զուգահեռաբար անդուլ գործել է այնպես, ինչպես Բալաթն է ապրում տարբեր մարդկանց ու տարբեր շինությունների միաժամանակությամբ ու իդիորիթմիկ առօրյայով: Մեր նախագծի ստեղծագործական խումբն ընթացել է ոչ թե Բալաթից դեպի տպագրական սարք, այլ ուշիուշով հետևելով մեր երկխոսություններին ու հետազոտական գործընթացի մեջ խորամուխ լինելով՝ քայլել է մեր գաղափարներից դեպի Բալաթ, ուստի մերձեցել ու ընթերցողին մոտեցրել է Բալաթին: Նման ընթացքը հնարավոր է դարձել նկարիչ Յարություն Թումադյանի շնորհիվ, որին հաջողվել է ստեղծել թաղամասի՝ գրքի ամեն հողվածին ուղեկցող բացառիկ պատկերներ, ինչպես նաև Կլիմ Գրեչկայի շնորհիվ, որ կրթորեն կազմակերպել է հրատարակության ողջ գործընթացը:

Քաղաքական ու ռազմական դրությունից շանթահար՝ միշտ չէ, որ մեզ հաջողվում էր հետազոտական նախագծի վրա ըստ նախնական պլանի աշխատել: Բայց Ստամբուլը բացառիկ քաղաք է՝ պատրաստ՝ իր գանձարանից լուծումներ ընծայելու անգամ ամենաբարդ իրավիճակներում: Պատերազմի օրերին նման մի ընծա դարձան Արա Գյուլերի թանգարանի կողմից մեզ սիրահոժար փոխանցված լուսանկարները: Գյուլերի լուսանկարներով գիրք ստեղծելն ամենամեծ ուրախությունն է, որ երբևէ որևէ հեղինակ ու խմբագիր կարող է ապրել, բայց նաև՝ հսկայական պատասխանատվություն: Բալաթի՝ այս գրքի էջերում տեղ գտած լուսանկարները յուրահատուկ նախատեստային լրացումներ են: Այն ամենը, ինչը փակ սահմանների պատճառով մեզ չհաջողվեց փոխանցել ու պատկերել, ներկայացված է Ստամբուլի ամենակարևոր լուսանկարիչներից մեկի գործերով: Ուստի, երախտագիտությունս եմ հայտնում Արա Գյուլերի թանգարանին և տևօրեն Ումութ Սուլունին:

Դեռ այն ժամանակ՝ 2018թ.-ին, շաբաթներով, ամիսներով ներսս խմորվում էր գրքի մտահղացումը, բայց արի ու տես, որ նախագիծն իր անունն առավ մի ակնթարթում, որն արդեն քանի տարի է՝ մտքիցս դուրս չի գալիս, ու կարծում եմ երբեք էլ հիշողությունիցս չի ջնջվի: Հանգստյան օրերից մեկն էր, երբ կարիք չունեի աղմկոտ Թաքսիմ հասնելու և գրադարանում ֆրանսերեն գրքեր պեղելու, ուստի Բալաթի փողոցներն էի չափչփում: Խորայից իջնելիս հայտնվեցի Բալաթի նեղլիկ փողոցներից մեկում, որտեղ մզկիթի բակում խմբված էին տարբեր տարիքի տղամարդիկ: Աղքատներին ու գաղթականներին օգնություն էին բաժանում: Կանգնեցի ու երկար հետևում էի այդ տեսարանին, որը խիստ տարբերվում էր մայրաքաղաքային փողոցներում

each other. The space was brimming with family idyll, friendliness, tranquility and silence; it created a feeling that can be expressed in one phrase – caring for others. Suddenly, some of them noticed my steady gaze; looking at me smilingly, they put something into the hand of a boy who ran in my direction. He brought a small bag of fruits and sweets and handed it to me. I muttered something, trying to refuse the treat, but the language barrier did not allow me to say anything intelligible to the child smiling at me and offering me part of his meal that he held in his thin and tanned hands. I could not dissuade the boy; he left the bag in my hands. When I said “thank you” in Turkish, he tightly hugged my legs, turned abruptly, and ran back to the adults.

I didn't quite understand what had happened. I walked with this package along Balat's streets for a while; a sense of gratitude made me part of Balat's life. I realized on this very day that I am eager to write about this place of caring and acceptance. I quickly scribbled “chora” in Cyrillic script and “vivre-ensemble,” followed by a dash, on the edge of my notepad, which was filled with excerpts from the books of the French library. Gradually, this note turned into a more intelligible text, where we – I and my colleagues of the CSN Lab and Palimpsest Collective – formulated our ideas about this book. Today, when it finally expanded into a book, I am eternally grateful to everyone who wanted to join me and take part in this project of “living together.”

*Tigran Amiryan*

հաճախ պատահող համանման տեսարաններից: Տղամարդիկ իրենց ապրանքի ու սնունդի փաթեթներն առնում, զրույցի էին բռնվում, ու երբեմն ինչ-որ բան տոպրակից հանելով՝ տալիս էին ուրիշներին, փոխանակում: Գրեթե ընտանեկան հովվերգությունը, մարդկանց բարյացակամությունը, հանգստությունը, անդորրը, որոնցով լցված էր տարածությունը, ծնում էին մի զգացողություն, որը կարելի է ձևակերպել պարզ արտահայտությամբ՝ ուրիշի հանդեպ հոգատարություն: Հանկարծ մի քանիսը նկատեցին սևեռուն հայացքս, ժպիտով նայեցին վրաս, ինչ-որ բան տվեցին մի տղա երեխայի ձեռքը, որ վազեց իմ կողմ: Միրզ ու քաղցրեղենով լի փոքր տոպրակը բերեց ու մեկնեց ինձ: Ինչ-որ բան մոռնոթացի, փորձեցի հյուրասիրությունից հրաժարվել, բայց լեզվական անջրպետը թույլ չտվեց հոդաբաշխ խոսքով դիմել ինձ ժպտացող ու արևից մզացած իր բարալիկ ձեռքերով ուտելիքի բաժինն ինձ պարզած երեխային: Չհաջողվեց երեխային համոզել, տոպրակը ձեռքս տվեց, թուրքերեն ասացի՝ «շնորհակալություն», նա ամուր փաթաթվեց ռոքերիս, ապա կտրուկ շրջվեց ու հետ վազեց մեծերի մոտ: Չհասցրի գլխի ընկնել, թե ինչ կատարվեց, ու, տոպրակն առած, երկար քայլում էի բալաթյան նեղ փողոցներով. երախտիքի ու հոգատարության զգացողությունը միառժամանակ ինձ դարձրել էր տեղանքի կյանքի մի մասը: Հենց այդ օրը գիտակցեցի, որ հոգատարության և ուրիշներին տեղ տվող այս տարածության մասին պատմելու ներքին ցանկությունն է մեջս արթնացել: Այդժամ, նոթատետրիս լուսանցքում՝ անատոլիական գրադարանի գրքերի սեղմագրերի կողքին, կիրիլիցայով հապճեպ խզմզեցի «xopa» բառն ու դրանից ելնող սլաքն ուղղեցի ֆրանսերեն «vivre-ensemble»-ին: Որոշ ժամանակ անց, այս գրառումը վերածվեց ավելի հասկանալի, բացված տեքստի, որում լաբորատորիայի գործընկերներիս հետ գրքի գաղափարը շարադրեցինք: Ու այսօր, երբ այն ծավալվելով վերածվել է գրքի, անչափ շնորհակալ եմ յուրաքանչյուրից, որ ցանկացավ ինձ միանալ ու միասնակյանքի մասին այս գիր-նախագծի մաս կազմել:

*Տիգրան Ամիրյան*

## CONTAINER OF THE UNCONTAINABLE

### *Notes on Balat's Spatial Memory*

Khōra reaches us, and as the name. And when a name comes, it immediately says more than the name: the other of the name and quite simply the other, whose irruption the name announces

*Jacques Derrida*

There are places where history is inescapable like a highway accident-places where geography provokes history. Such is Istanbul, alias Constantinople, alias Byzantium

*Joseph Brodsky*

#### SPACE-TIME PERSPECTIVES OF BALAT'S STORY

Ideas about Balat are accompanied by a density of multiple narratives, knowledge of the place, and visual images. This quarter of Istanbul is apparently one of the spots whose historical solidity, rich narratives and memory of the place can be expanded into an infinite story that delves into the deepest layers of our civilization. However, once we start writing about Balat, we are faced with the necessity of understanding where our sensations come from, how the inner workings of fantasy function, and how multilayered ideas about this place take form. Narrative forms defining imaginary Balat abound here: architecture, history of everyday life, political, social, or economic history of the place. Balat shimmers in between approaching and departing from real life and constructs its semiosis when confronted with this space. Balat is an integral part of the urban fabric that attracts solitary flâneurs, touristic groups, urban planners, investors, migrants, researchers, journalists, artists and writers.

# Անգետեղելիի գետեղարանը

## Նոթեր Բալաթի տարածական հիշողության մասին

Խորան հանդիպում է մեզ նաև որպես անուն: Ու  
երբ գալիս է, միանգամից մեզ ասում է ավելին,  
քան անունը, քան անունից եկող ուրիշը  
կամ պարզապես ուրիշը, որի ներխուժումը  
հայտնում է անունը:

*Ժակ Դերիդա*

Կան վայրեր, որտեղ պատմությունն անխուսափելի  
է՝ իբրև ճանապարհային միջադեպ. վայրեր,  
որոնց աշխարհագրությունը պատմությունը  
կանքի է կոչում: Այդպիսին է Ստամբուլը,  
նույն ինքը՝ Կոստանդնուպոլիսը, նույն ինքը՝  
Բյուզանդիոնը:

*Իոսիֆ Բրոդսկի*

### Բալաթի պատումի տարածաժամանակային հեռանկարները

Բալաթի մասին պատկերացումներն ուղեկցվում են  
ամենատարբեր նարատիվների, տեղանքի մասին  
գիտելիքների, տեսապատկերների խտությամբ: Թվում  
է, թե ստամբուլյան այս թաղամասն այն վայրերից է,  
որոնց խիտ պատմականությունը, պատմություններով  
հագեցվածությունը եւ տեղի հիշողությունն  
անվերջանալի ասելիքի տեղիք են տալիս, որ գնում,  
հասնում է մինչև մեր քաղաքակրթության ամենախորը  
շերտերը:

Միևնույն Բալաթի մասին գրելու հենց սկզբում բախվում  
ենք մի շարք հարցերի. որտեղի՞ց են սերում մեր  
զգացողությունները, ֆանտազմի ներքին ի՞նչ մեխանիզմ  
է գործում տվյալ դեպքում, ինչպե՞ս են դասավորվել  
տեղի շուրջ բազմաշերտ պատկերացումները:  
Պատմողականության ո՞ր ձևերն են (ընտրությունը  
մեծ է՝ ճարտարապետություն, առօրեականության  
պատմություն, տեղի քաղաքական, սոցիալական  
կամ տնտեսական պատմություն) սահմանել տվյալ  
երևակայվող Բալաթը: Մի Բալաթ, որը թրթռում է

In terms of “cultural heritage” or “architectural monuments”, Balat can be described as one of the most important fragments of Constantinople or, for that matter, Byzantine history that became part of the *polis*, now present in the form of architectural relics long deprived of their original purpose and mingled with modern or 19th century architectural and urban concepts.

Referring to Balat’s historical past, a good tour will undoubtedly tell you about forgotten times of imperial intrigues and conspiracies that took place within the walls of the Palace of Blachernae and will cite passages from Anna Comnena’s autobiographical writings proving the significance of this place.

Examining the history of the Palace of Blachernae, we open up the prospect of representing this place as the foremost center of Orthodox Christianity (culture). In this regard, the Palace of Blachernae, although reconstructed, will be at the core of Balat’s story. One can also describe this space in the context of catastrophes and cataclysms which caused irreparable damage to the city for centuries and reveal the quarter that sprang back to life after numerous fires and earthquakes<sup>1</sup>. Industrial history of Balat suggests that the quarter actively changed its architectural and social appearance, attracting factory workers and their families in search of new housing.

Accounts of earlier migrations explore a new perspective for Balat’s story; they emphasize transformations of the social and cultural space after many Jews from different parts of the Empire were resettled in Balat from the 15th to the 18th century. This story is also about the Greek community as well as about the small island of Armenian life and printing in the middle of the Jewish quarter.

Balat is mainly perceived as an ensemble or amalgam of different architectural styles and social groups. Balat’s history refers not only to members of the imperial court, diplomats and famous merchants but also to criminals and adventurers. Old wooden synagogues are miraculously preserved until now along with Byzantine stone constructions, the

<sup>1</sup> Almost all devastating fires and earthquakes severely damaged Balat. It is often assumed that little has survived from Balat’s original urban landscape. Some of the great fires of Istanbul described by Deleón were caused by quarter’s stores and residential buildings. See: Deleón, J. 1991. *Ancient Districts on the Golden Horn: Balat, Hasköy, Fener, Ayyansaray*. Gözlem Gazetecilik Basın ve Yayın, İstanbul.

Even though architectural traces of the past disappeared completely, the social composition remained the same. Timber buildings were replaced by brick ones; although they were often similar to former constructions, the main purpose was to build more durable and resistant structures to withstand any natural disaster. See: Leal, K.A. 2010. “The Balat District of Istanbul: multiethnicity on the Golden Horn,” in *Architecture and memory of the minority quarter in the Muslim Mediterranean city*. Cambridge, MA: Harvard Univ Graduate School of Design. History of the space thus sought to maintain continuity through compensatory strategies; architectural memory reshaped social memory, and conversely, social memory “brought back” architectural memory of the place.

ք. 21 / Էջ 21

Map representing Balat-Fethiye-Kesmekaya districts, Pervittich Insurance Maps - June 1929, SALT Research.

Քարտեզում ներկայացված է Բալաթ-Ֆաթիհ-Բեսմեկայա քաղաքային Պերվիտիչյան քարտեզներ, հունիս 1929, SALT Research.

ք. 22 / Էջ 22

Map representing Balat district, Pervittich Insurance Maps - March 1929, SALT Research.

Քարտեզում ներկայացված է Բալաթ քաղաքային Պերվիտիչյան քարտեզներ, մարտ 1929, SALT Research.



իրական կյանքից կտրվելու և դրան մերձեակալու միջակայքում, այդ բախման մեջ իր սեմիոգիսը կազմավորող Բալաթը՝ քաղաքային հյուսվածքի անբաժան մասը, որ դեպի իրեն է կանչում միայնակ ֆլանյորներին, զբոսաշրջիկների խմբերին, քաղաքաչինարարներին, ներդրողներին, միգրանտներին, հետազոտողներին, լրագրողներին, նկարիչներին ու գրողներին:

Բալաթը կարելի է նկարագրել «մշակութային ժառանգության», «ճարտարապետական հուշարձանի» եզրաբանությամբ իբրև Կոստանդնուպոլսի կարևորագույն մի հատված, պոլիսի մաս դարձած բյուզանդական պատմություն՝ պահպանված լոկ ճարտարապետական բեկորների տեսքով, որոնք վաղուց կորցրել են իրենց նախնական գործառույթը և կույ գնացել ժամանակակից կամ տասնիններորդ դարի ճարտարապետական և ուրբան կոնցեպտների հորձանուտին:

Բալաթի պատմական անցյալից խոսելիս բանիմաց զբոսավարն անպայման կպատմի Լեթայի ջրերում մոռացության մատնված, Բլաթերյան պալատի պատերի



splendid building of Or-Ahayim survived intact on the banks of the Golden Horn. But it is also a space of polyphony assimilating different languages. Balat is one of the hubs where Ladino (mixture of Hebrew and Spanish)<sup>1</sup>, Turkish, Western Armenian, Greek, Bulgarian as well as various vernaculars<sup>2</sup> coexist for centuries. They intersect and exist in a small quarter simultaneously or in parallel, mirroring each other.

There is a need for further research on the role of migration—and this includes the desolation of the quarter in the 20th century, sharp population change and modern-day gentrification<sup>3</sup> that puts the quarter at risk of losing its architectural memory at the beginning of the 21st century. The abrupt outflow of Balat's non-Muslim population<sup>4</sup> is a separate plot in Balat's story integrating it into the political landscape.

Metalanguage develops as a result of both external and internal narration. The most vivid examples of the

<sup>1</sup> Curiously, memory of language goes through a series of forgetting and false recollections. For instance, Jews first spoke in a dialect derived from Greek due to Balat's proximity to Fener and later due to the fact that most of the workers of the Cibali tobacco factory were Greeks. Meanwhile, Hispanic Jews settled in Hasköy-a quarter on the other side of the Golden Horn. Their language was proved to be more powerful and spread to Balat. However, in memories of Balat's Jews Ladino is recognized as the common heritage of the past and the "authentic" language of the local population. Sephardic (or Hispanic) Jews assimilate Romanote Jews (Greek speaking) to reinforce the idea of a 'true' and 'genuine' language of religious literature. See: Varol-Bornes, M. 2008. *Le judéo-espagnol vernaculaire d'Istanbul*. Bern, Berlin, Bruxelles, Frankfurt am Main, New York, Oxford, Wien. 70-71. In the second half of the 20th century Ladino was marginalized, becoming a useless fragment of the past, just a local jargon. See Varol-Bornes, M. 1994. "The Balat Quarter and Its Image: A Study of a Jewish Neighborhood in Istanbul" in Avigdor Levy (ed.). *The Jews of the Ottoman Empire*. Washington D. C., 633-646.

<sup>2</sup> It must be noted that in the 19th century the French language was not uncommon in Istanbul after the establishment of Alliance Israélite Universelle schools for boys (1875) and girls (1882). See: Varol-Bornes, M. 1998. "Balat, vieille communauté juive d'Istanbul." *Revue des Études Juives* 147.3-4, 500. As Eli Shaul observes in his autobiography, many French words hence entered the spoken language of local Jews. See: Shaul, E. 2012. *From Balat to Bat Yam: memories of a Turkish Jew*. Libra Books, 67

<sup>3</sup> The social and architectural landscape of the quarter was heavily modified after the urban transformation project initiated by the EU in between 2003-2008. As a result of renovation activities, more than 100 buildings and more than 30 shops were restored. Consequently, the place attracted local and foreign investors, and the real estate prices rose immediately. Under new economic conditions many locals were forced to partially leave the quarter thus resulting in another outflow of the local population in Balat's history. See: Olt, N. 2016. "The Balat Life is Really Unique" - Narratives Of Place And Belonging" in *The Historical Fener-Balat District Of Istanbul*. Kadir Has University, 16-17.

<sup>4</sup> The main stages of this outflow are connected to WWII, creation of the Jewish state and the 1955 anti-Greek pogroms, when almost half the Greek population was forced to leave Istanbul and Turkey.





<sup>1</sup> Բալարին այս կամ այն չափով մեծ վնաս են հասցրել քաղաքի գրեթե բոլոր ավերիչ հրդեհները և երկրաշարժերը: Բալարի նախնական ուրբանիստական լանդշաֆտից քիչ քան է պահպանվել: Դեկտեմբեր ևկարգվել է հրդեհներ, այդ թվում՝ այնպիսիք, որոնց պատճառ է սարքոր են դարձել Բալարի ամառի կրակակնքն ու բնակելի տները, որոնց հետևանքով քաղաքում գրեթե ամբողջությամբ այրվել և վերստին վերակառուցվել է: Deleon, J. 1991. Ancient Districts on the Golden Horn: Balat, Hasköy, Fener, Ayyansaray, Gözlem Gazetecilik Basın ve Yayın, Istanbul: Հուն Կարեն Ա. Լ. խալի՝ երե անգամ անգլայի ճարտարապետական հետերևույթը արտաքին անհետանում էին, սոցիալական քաղաքիչը մնում էր նույնը: Փայտե տները փոխարինվում էին սոցալաշեն տներով՝ երբևէ վերարտադրելով նախկին կառուցիչ տարրը, բայց համայն փորձելով ստեղծել առավել ամուր և բնական աղետների նկատմամբ կայուն շինություններ: St' u Leal, K. A. 2010. "The Balat District of Istanbul: multichnicity on the Golden Horn," in *Architecture and memory of the minority quarter in the Muslim Mediterranean city*. Cambridge, MA: Harvard Univ Graduate School of Design: Լյուսիսով, կոնվանստորիկայի օգնությամբ ստարածության պատմությունը ձգտում էր պահպանել իր անդեհաստանությունը, ճարտարապետական հիշողություն օգնում էր վերակազմակերպել սոցիալական և հավատակը՝ անդամի սոցիալական հիշողություն տարածքին «վերադարձնում» էր իր ճարտարապետական հիշողությունը:

ներքո հյուսված կայսերական ինտրիգների ու դավերի մասին, տեղանքի նշանակությունը հավաստող տողեր կնեջբերի մնա Կոմսենեի ինքնակենսագրականից: Բլաբերյան պալատի պատմությանը հղվելով՝ հեռանկար ենք բացում այս վայրը՝ որպես ուղղափառ մշակույթի կարևորագույն օջախ, ներկայացնելու համար, այս իմաստով, նմանատիպ պատումի առանցքում կլինի թեև վերակառուցված, բայց և այնպես Բլաբերի տաճարը: Նույն հաջողությամբ տարածքը կարելի է ներկայացնել քաղաքին մի քանի դար շարունակ, երբեմն՝ անդառնալի վիսաներ պատճառող աղետների և արհավիրքների համատեքստում ու այսպիսով պատկերել բազում հրդեհներից ու երկրաշարժերից<sup>1</sup> հետո բազմիցս վերածնված Բալաթը:

Բալաթի արդյունաբերական պատմությունն իր հերթին կարող է ցույց տալ, թե ինչպես է թաղամասն ակտիվորեն փոխել իր ճարտարապետական և սոցիալական դիմագիծը՝ իր գիրկն առնելով գործարանային բակվորներին և Նոր բնակարանի կարիք ունեցող ընտանիքներին: Առավել վաղ շրջանի միգրացիան Նույնպես կարող է Բալաթի շուրջ հյուսվող պատմության հենք դառնալ, որտեղ կկարևորվեն սոցիալական և մշակութային տարածության փոխակերպումները, երբ XV - XVIII դդ. ընթացքում հրեական համայնքի մեծ թվով ներկայացուցիչներ բնակվեցին այստեղ, կներկայացվի հունական համայնքի կյանքը և փոքրիկ կղզյակի պես ապրող հայ համայնքն ու հրեական թաղի սրտում ծաղկած հայկական գրահրատարակչության պատմությունը:

Բալաթը հաճախ ընկալվում է որպես համալիր՝ զանազան ճարտարապետական ոճերի, սոցիալական խմբերի համաձուլվածք. տեղանքի պատմությունը կարող

latter are the autobiographical or autofictional narratives<sup>1</sup> of those, who had a direct experience of encountering this space and participated in the production of Balat’s memory space. All these stories open the “gates of Balat” without being false or contradicting each other. On the contrary, they create a multitude of metalanguages that define this place. Metalanguages that speak about this place only in the process of assimilation and intersection, creating the very trajectory of knowledge about this place, explaining to us the lure of Balat’s fantasy. In addition, Balat has the potential for unfolding the spatial-temporal story of the place; Balat’s history can be displayed as a plot or a series of plot lines. Apparently, Balat’s Byzantine history appears in our novelistic tradition. The emergence of the Jewish community, the rise and decline of Jewish life, the history of the Armenian printing in Balat, the lives of Kevork Balatetsi and Brabion Balatetsi—one of the greatest female scribes of Armenian literature,<sup>2</sup> the Greek school as a stage for depicting everyday life of the *Rum* community are all plot lines that broaden the spatial and temporal ideas about this place and create something that is not yet a novel but serves to explain what one calls “novelistic simulations of everyday spaces”<sup>3</sup> where the experience of coexistence goes beyond the confines of one’s home and expands to the whole quarter of Balat whose boundaries are not identified yet, to the whole polis and to the whole city. Balat’s history and spatial memory become the memory of the city – the minimal unit of narrative beams which cover the past of the entire urban space. These beams bring all the plot lines to one place and localize them, and then extrapolate them going beyond the limits of this polygonal fragment attached to the curved line of the Golden Horn.

**FROM THE ARK TO THE IDIORRHYTHMIC SPACE**

Modern guidebooks, whether they are in English, French, or Russian, will note that Balat is one of the oldest quarters of the city; they will mention it in the “Golden

<sup>1</sup> For instance, in their books about Balat Mustafa Yoker (1952) and Eli Şaul (1999) describe the culture of everyday life that completely vanished today and can be guessed from the particles of architectural constructions.

<sup>2</sup> Balat has been examined mainly as a Jewish quarter. While working on the project “Balat: Living together” I managed to make contacts with the major researchers of the quarter (Rifat N. Bali, Roz Kohen, Marie-Christine Varol); in most research papers and fieldwork there was no mention of the Armenian community in Balat. For the Armenian community, this quarter is not the most popular place in Istanbul. Fewer in numbers than Jews or Greeks, Armenians could nevertheless create a distinct cultural landscape. It was at Balat’s Surb Hreshdagabed Church that Kevork Balatetsi (Գեորգ Դսիի Պալատեցի), a prominent Armenian linguist, who spoke 10 languages, created a Persian-Armenian dictionary. Brabion Balatetsi (Բրաբիոն Լոռուտի Պալատեցի) known for her teaching at Surb Hreshdagabed was also one of the greatest scribes of the 18<sup>th</sup> century, who produced more than 10 volumes stored in various European and Armenian collections. See more about Surb Hreshdagabed and about the biographies of church leaders: Մելգոն-Ասատուրի, 1931. Երեզուրեանս պատմութիւնս Ա. Դիւքսալիսպապեանց եկեղեցւոյ Պալատը (1627-1931), Կ.Պոլիս [Melgon-Asatur, 1931. Three-Century History of Surb Hreshdagabed Church in Balat (1627-1931)].

<sup>3</sup> I use here the subtitle of Roland Barthes’s course of lectures called “How to live together: Novelistic simulations of some everyday spaces” which is an original attempt to create a discourse on the semiotics of coexistence. Its title was also used to name our book *Balat: Living together* – a project that, to my mind, was also an attempt to address the very discourse of coexistence rather than a research (sociological or anthropological).

p. 23 / էջ 23

Pervitich Insurance Maps Legend - 1923, SALT Research.

Պերվիտիչյան քարտեզներ, 1923, SALT Research.

p. 25 / էջ 25

Pervitich Insurance Maps Legend - 1923, SALT Research.

Պերվիտիչյան քարտեզներ, 1923, SALT Research.

<sup>1</sup> Չնայած Բալայի հրեաները գործածել են հունարենի ազդեցությամբ մտավորված խոսվածք, որ պայմանավորված է Ֆեների հայրենակցությամբ, ինչպես նաև հետագայում հոյակերի գերակայությամբ՝ «Միբալի» միախառնագործական ֆաբրիկայում, մինչև որ Ոսկեդարի մյուս ավիճակը շարքում հիմնականում իսլամական հրեաները, և նրանց լեզուն արդյունքում ավելի ուժեղ գտնվեց ու տարածվեց նաև Բալայում: Բայց և այնպես, Բալայի հրեաների գրեթե բոլոր հիշողություններում լսողներ հանդիսանում է ընդհանուր անցյալի լեզու, տեղի բնակչության «ստունտիկ» լեզու: Մեֆալիի հրեաները (իսլամական) ուժեղանում են ռոմանական հրեաներին (հունական) հիմնականում «իսկական» կամ «ճշմարիտ» կրոնական գրականության լեզվի ենթով: Տե՛ս մտնումս՝ Varol-Bornes, M. 2008. *Le judéo-espagnol vernaculaire d'Istanbul*. Bern, Berlin, Bruxelles, Frankfurt am Main, New York, Oxford, Wien, 70-71: 20-րդ դարակեսի այս լեզուն արդեն իսկ հայտնվում է լուսագրում և անցյալի անխնայ մնացուկի, տեղական մարզերի համրավ գնոր բերում: Տե՛ս՝ Varol-Bornes, M. 1994. "The Balat Quarter and Its Image: A Study of a Jewish Neighborhood in Istanbul" in Avigdor Levy (ed.). *The Jews of the Ottoman Empire*. Washington D. C., 633-646:



Ե հյուսվել ինչպես արքունիքի, դիվանագետների և անվանի ձեռներեցների, այնպես էլ քրեական տարրերի ու ավանտյուրիստների շուրջ: Մինչ օրս պահպանվում են հրաշքով փրկված փայտաշեն, հին սիևագուների մասեր, ինչպես նաև բյուզանդական քարե շինություններ, իսկ Ոսկեդարի ավիճակ գրեթե անվնաս կանգուն է Օր-Ահայիմի կրթառ շենքը և այլն: Մինչդեռ այստեղ կա նաև բազմաձայնության տարածք, որտեղ միախառնվում են տարբեր լեզուներ: Բալայում հարյուրամյակներով կողք կողքի ապրել են լադինո (հրեերենի և իսլամական լեզուների խառնուրդ)՝, թուրքերենը, արևմտահայերենը, հունարենը, բուլղարերենը և ամենատարբեր խոսվածքներ ու բարբառներ՝ մի փոքր թաղամասում երբեմն խազվելով, երբեմն էլ համաժամ, զուգահեռաբար և միաձուլյ դրսևորվելով:

<sup>2</sup> Չարկ է հիշատակել նաև ֆրանսերենի ներկայությունը՝ XIX դարում հրեա տղաների (1875) և աղջիկների (1882) համար Alliance Israélite Universelle դպրոցների բացման ամենաշուքային: Տե՛ս՝ Varol-Bornes, M. 1998. «Balat, vieille communauté juive d'Istanbul.» *Revue des Etudes Juives* 147, 3-4, 500: Ինչպես իր ինքնակենսագրությունում գրում է Էլի Շաուլը՝ սարսիկոտ շատ ֆրանսերեն բառեր մտնում տեղացի հրեաների խոսակցական լեզվի մեջ՝ լսողին: Տե՛ս՝ Shaul, E. 2012. *From Balat to Bat Yam: memories of a Turkish Jew*. Libra Books, 67:

Տեղանքի միգրացիոն բնութագիրը ներառում է նաև XX դ-ում թաղամասի ամայացումը, բնակչության քանակի կտրուկ փոփոխությունը և սկիզբը մի իրողության, որ կարելի է դիտարկել որպես առանձին պլուժե՝ XXI դարակեսի թաղամասի ճարտարապետական հիշողությունը վտանգած արդի ջենտրիֆիկացիան: Նախորդ դարի կեսից սկսած՝ Բալայի ոչ մուսուլման բնակչության թվի կտրուկ անկումը տեղի պատմության առանձին դրվագ է, որ քաղաքական տարածության պատմության մաս է կազմում:

<sup>3</sup> Թաղամասի սոցիալական և ճարտարապետական լանդշաֆտի յուրք փոխակերպումներ տեղի ունեցան 2003-2008-ին, Եվրամիության նախաձեռնած վերակազմման նախագիծ շքանակներում: Վերականգնողական և նորոգման աշխատանքներից հետո ավելի քան հարյուր տուն և 30 խանութ վերականգնվեց: Սա գրավեց տեղի և արտերկրի ներդրողներին, ինչի արդյունքում անշարժ գույքի գինը կտրուկ աճեց, իսկ տեղի բնակչությունը ներառվեց նոր տնտեսական պայմանների ճնշմանը և մասամբ լքեց թաղամասը, ինչի հետևանքով գրանցվեց Բալայի պատմության մեջ տեղացիների հերթական արտահոսք: Տե՛ս՝ Olt, N. 2016. "The Balat Life is Really Unique" - Narratives Of Place And Belonging" in *The Historical Fener-Balat District Of Istanbul*. Kadir Has University, 16-17:

Սեռայեզուն մշակվում է ոչ միայն արտաքին, այլև ներքին պատմողականությամբ, ինչի ամենավառ օրինակներ կարող են լինել այն մարդկանց ինքնակենսագրականները, որոնք տվյալ տարածքի հետ անմիջական բախման փորձառություն են ունեցել և մասնակցել են տեղի հիշողության կերտմանը: Պատմելու այս բոլոր տեսակները յուրահատուկ ձևով են բացում «Բալայի դարպասը», և դրանցից ոչ մեկը կեղծ չէ և չի հակասում մյուսներին: Ընդհակառակը՝ դրանք

Horn” section, indicating its geographical features and administrative division. While telling you the age of the quarter, one guidebook will certainly use the epithet ‘colorful,’ another one will incidentally remind you of the ‘migrant quarter’ or ‘Jewish quarter.’ Guidebooks are tempting; they are part of the production of this space and identify this quarter as an exceptional place whose postcard pictures are drawn from the other side of the Golden Horn. This space is recognized primarily by the dome of a red brick building, the Greek Lyceum. The uniqueness of Balat disappears and fades away in those stories, where the quarter is mentioned as a ‘neighbor,’ ‘partner,’ or ‘double,’ always attached and fused with the Greek Fener – Fener-Balat.<sup>1</sup>

The lure of Balat is its physical and social density which accumulates architectural evidence regarding the life of various ethnic and religious communities. Guidebooks will certainly define Balat as a place where mosques and Greek churches, synagogues, the Armenian and the Bulgarian churches, etc. are in close proximity. The social memory of coexistence of these ethno-religious groups is either erased or on the verge of extinction. That is why architectural memory is a matter of utmost importance emerging as the only mechanism to narrate about the coexistence of different cultures and languages in a common space.

Listing architectural monuments concentrated on the shores of the Golden Horn fascinates us; we are at the entrance of the ark that before the flood collected at least a monument from each culture belonging to this place. The illusion of the antediluvian vessel,<sup>2</sup> absorbing everything which must become the pretext of a new civilization, epitomizes the lure of Balat’s space without referring to the flood narrative.

Guidebooks cannot integrate all possible metalanguages of Balat. Yet, Balat is ideal for guidebooks; its representative possibilities create a “utopian impulse” becoming “the expression of an unconscious desire to return to simpler and less alienating modes of production”<sup>3</sup> of space and being. The Ahrida Synagogue, the Surb Hreshdagabed Church, the Greek Church, the Byzantine monastery

<sup>1</sup> Almost all studies on Balat allude to the theme of the boundaries between these two quarters. See, for instance Karen A. Leal, “The Balat District of Istanbul,” 196-198. In fact, municipal authorities were never seriously interested in the boundaries between Balat and Fener. However, transitions of a building from one quarter to another fixed in historical documents indicate that the boundaries were important for the residents of the quarter. Apparently, the space was organized around the Greek Patriarchate in Fener and the Synagogue in Balat (the three synagogues-Sigri, Ahrida and Yanbol-placed in closed proximity to each other around the market square of the quarter - constitute a kind of bundle, a general idea of the place); houses located further from these “microcenters” are conceived as their outskirts.

<sup>2</sup> Among many synagogues, Ahrida survived as the only active synagogue in the quarter. Being also the oldest synagogue, as Jak Deleon reminds us, Ahrida is distinguished by its ark-shaped bema. Ahrida, as one of the possible centers of the quarter by its physical form, creates the image of the ark which will eventually affect everything that gives meaning to this quarter. See: Deleon, J. 1991. *Ancient Districts on the Golden Horn*, 27.

<sup>3</sup> Джеймсон, Ф. 2006. Репрезентация глобального. Текст доклада, прочитанного на конференции «Современные медиа: теория, история, практика». Оупбл. в «Синий диван», цит. По онлайн версии [Jameson, F. 2006. “Representation of Globalization” paper delivered at the Moscow conference “Contemporary Media—History, Theory, Practice.”]; <https://polit.ru/article/2010/04/05/jameson/>

Ի Բալասը հիմնականում հետազոտվել է որպես Ստամբուլի կարևորագույն հրեական քաղաք: «Բալաս» ասլը միասին՝ նախագծի շրջանակներում ինձ հաջողվել է կապ հաստատել քաղաքային հիմնական հետազոտողների հետ (Rifat N. Bali, Roz Kohen, Marie-Christine Varol), գրքեր բոլոր հետազոտական տեքստերում և դաշտային աշխատանքներում Բալասի հայ համայնքի մասին տեղեկատվություն պրակտիկորեն չկա: Թաղամասը Ստամբուլի հայ համայնքի նախընտրված վայրերի բնի չի պատկանում, այնուհանդերձ, հրեական և հունական բնակչությանը բնիվ գիշող հայկական բնակչությունը դարերի ընթացքում հասցրել է այստեղ մնալիորեն յուրատիպ մշակութային լանդշաֆտ: Շնեց Բալասի Սուրբ Հրեշտակավանդում է 10 լեզվի տիրապետող Գեորգ Դ-պիր Պալատեցին XVIII-XIX դարադարձին ստեղծել իր հայ-պարսկական բառարանը: Բրաբրոն Դոտար Պալատեցին հայտնի է Սուրբ Հրեշտակավանդում իր ուտջեզական գործունեությամբ, ինչպես նաև որպես XVIII դարի իտալացույց գրագիր, որ ստեղծել է եվրոպական և հայկական տարբեր պատկերներում պատկող 10 հատոր: Սուրբ Հրեշտակավանդի և եկեղեցական առաջնորդների կենսագրության մանրամասները տե՛ս՝ Մելգոն-Ասատուր, 1931 . *Երեքդարեան պատմություն Ս. Հրեշտակավանդաց եկեղեցու Պալատու (1627-1931)*, Կ. Պոլիս:

<sup>2</sup> Այստեղ մասնակիորեն հղվում են Ռոլան Բարտի «Ինչպես ասլը միասին . ատրեսականության որոշ տարածությունների վիպական նմանակումներ» դասախոսությունների շարքին, որի՝ համակերպության նշանաբանության դիսկուրսին վերաբերող Բարտի ինքնատիպ փորձին նվիրված ենթամասը տեղ է գտել տույն գրքի վերնագրում՝ «Բալաս . ասլը միասին» - նախագիծ, որն ըստ իմ՝ ոչ այնքան հետազոտություն է (տեղիոլոգիական կամ մարդաբանական), որքան համակերպության դիսկուրսին միաված փորձ:

ստեղծում են տարածքը նկարագրող մետալեզուների բազմություն: Մետալեզուներ, որ խոսում են տարածքի մասին, բայց լոկ ներթափանցման և իրար հետ խաչվելու պահին, մետալեզուներ, որ ստեղծում են տեղի մասին գիտելիքի՝ Բալասի ֆանտազմի դյուրանքը մեզ հասու դարձնող հետագիծը: Բացի այն, որ Բալաս իր շուրջ ժամանակատարածական պատմություն հյուսելու բավականին մեծ ներուժ ունի, թաղամասի պատմությունը կարող է կառուցվել նաև որպես սյուժե կամ սյուժետային գծերի շարք: Թերևս Բալասի բյուզանդական պատմությունը մեր վիպագրության մեջ այսպես թե այնպես առկա է, նաև՝ հրեական համայնքի ի հայտ գալը, հրեական կյանքի ծաղկունքն ու անկումը, Բալասի հայ գրահրատարակչության պատմությունը, Գեորգ Պալատեցու կամ հայ մատենագրության պատմության մեջ ամենախոշոր գրագիրներից մեկի՝ Բրաբրոն Պալատեցու՝ կենսագրությունները, հունական դպրոցը՝ իբրև ռումբերի անընդհատ և ակտիվ ներկայության պատմությունն անելու բեմահարթակ: Այս բոլոր սյուժետային գծերը, ընդլայնելով տվյալ տեղանքի շուրջ ժամանակային և տարածական պատկերացումները, ստեղծում են այն, ինչը դեռևս կամ այլևս չի հանդիսանում վեպ, բայց կարող է անվանվել «առօրյայի տարածությունների վիպական նմանակում»<sup>2</sup>, որտեղ *համակերպության* փորձառությունը դուրս է գալիս մի բնակտարածքի տիրույթից և ծավալվում Բալասով մեկ, որի՝ առ այսօր չճշգրտված սահմանները հանդարտ ծորում են հարևան թաղերի ուղղությամբ՝ դեպի ողջ քաղաք: Բալասի պատմությունը և տարածական հիշողությունը վերածվում են քաղաքի հիշողության, պատմողական միավորի նվազագույն փնջերի, որոնք ի գորու են ծածկել քաղաքային ողջ տարածության անցյալը՝ մերթ բոլոր պատմողական գծերն իրենց տեղը վերադարձնելով, տեղայնացնելով, մերթ էլ՝ արտարկելով, դուրս գալով բազմանկյուն բեկորի տիրույթից, որ կցված է բյուզանդական Եղջուրի նյարդաթելին:

**Տապանից դեպի իդիոմիթմիկ տարածություն**

Մերօրյա ուղեցույցը՝ լինի գրված անգլերեն, ֆրանսերեն, թե ռուսերեն, Բալասը կհիշատակի իբրև քաղաքի ամենահին թաղամասերից մեկը, կներառի «Ոսկեղջյուր» բաժնում, կմատնանշի աշխարհագրական առանձնահատկություններն ու վարչական բաժանումը: Թաղամասի տարիքը կշեղի գրոսավարը հաստատ կտա «գունագեղ» բնորոշումը, մեկ ուրիշը, ի միջի այլոց, կանվանի «միգրանտների թաղամաս», «հրեական թաղ»: Ուղեցույցները գայթակղություն են առաջացնում՝ դառնալով տարածքի արտադրության մաս ու

or the Or-Ahayim hospital may convey an impression of a museum of the past where each era placed its traces. Balat's social memory displays not only different cultural layers (sequences) at one place (I will come back to the subject of layering in architectural memory below), but also their simultaneity- the idiorrhhythmic past recorded in historical documents and memory of the physical space.

Sometimes the most unexpected fragments of Balat's past demonstrate this simultaneity of various ethno-religious groups' existence. In an autobiographical narrative of Balat's previous inhabitants, the theme of "common festivals" is often repeated: Balat's Armenians, Greeks, Jews and Muslims celebrated Easter together. Shared places of these communities also display idiorrhhythmic life in this quarter.<sup>1</sup> People from different religious backgrounds queued up to get to the holy spring of the Armenian Church; rumors about its healing power transcended all religious boundaries. Representatives of the Greek, Jewish or Bulgarian communities waiting in the queue for the miraculous spring were not at risk of losing or changing their religious identities; they were ready to interact with another identity without any taboo or without violating the space of being together.

Historical documents manifest Balat's simultaneity and coexistence through the most unexpected instances of its inhabitants' everyday life, including criminal chronicles. Scandalous stories about women engaged in sexual activities for money also show the parallelism and simultaneity of living together in Balat. For a passerby or visitor from outside the area, Balat's image is imperceptibly different, whereas the internal structure of Balat's space is polyphonic rather than monolithic. Among the criminal chronicles we find the case of a Jewish woman named Rivka<sup>2</sup> against whom a petition was submitted to the police by the leaders of the Jewish, Armenian and Greek communities in 1750. Representatives of different ethnic groups from Fener, Balat, Hasköy and other nearby quarters complained that her misconduct undermined their peaceful life.

<sup>1</sup> Perhaps the most striking example showing this accumulation of various rhythms (*rhuthmos*) in Balat was the market which brought together almost all ethnic groups involved in selling goods and services. See: Deleon, J. 1991. *Ancient Districts on the Golden Horn*, 39. Moreover, as Mustafa Yoker's memoirs tell us, Muslims and non-Muslims also shared baths. The fact that they were visited by representatives of different genders and ethnic groups is a manifestation of a idiorrhhythmic pact. See: Yoker, M. 2012. *Kalimera Fener, şalom Balat: bizim mahalle*. İstanbul: Çatı Kitapları, 221.

<sup>2</sup> Zarinebaf, F. 2011. *Crime and Punishment in Istanbul: 1700 - 1800*, University of California Press, Berkeley, California, 92-94.

<sup>1</sup> Բալաբը հիշատակող գրքեր բոլոր հետազոտություններում հիշատակվում է երկու քաղաքային միջև սահմանի բնույթը: Տե՛ս, օրինակ, Ռեն A. Leal. The Balat District of Istanbul... 196-198: Գործնականում, քաղաքային իշխանությունների համար Բալաբի և Ֆեների միջև սահմանը գրեթե երբեք չի արժանացել հատուկ ուշադրության կամ հետաքրքրության: Բայց և այնպես, պատմական աղբյուրների կողմից արձանագրված այս կամ այն շինությունների փոխանցումները մի քաղաքային մտային հավաստում են, որ բնակիչները կարևորել են սահմանները: Չավանաբար, տարածությունը կազմակերպվել է որպես համախմբում՝ Ֆեներում՝ հունական պատրիարքարանի, իսկ Բալաբում՝ սինագոգների (որոնցից երեքը՝ միմյանցից նվազագույն հեռավորության վրա գտնվող Միգրին, Աիրիլյան և Յանուրը կազմում էին տեղաբնի մասին ընդհանրական պատկերացում տվող յուրաքանչյուր «փոնջ», որի առաջըրը քաղաքային շուկայի հրապարակն էր), ինչպես նաև տների շուրջ, որոնք տեղակայված էին նշված միկրոլեռնություններից առկայի և ըստ այս կամ այն դիրքավորման՝ կարող էին համարվել քաղաքային «մայրամաս»:

<sup>2</sup> Բալաբը հրեական քաղաքում կոչվելու հարկ է հիշատակել, որ բազմաթիվ սինագոգներից միայն Աիրիլյանի սինագոգն է պահպանվել իբրև գործող: Ինչպես Ժակ Դելանոն է հուշում՝ լինելով սինագոգներից ամենաներկայակացը, այս աշրի է ընկնում բիսա հիշեցնող իր ձևով, ուստի նման է տապալի: Աիրիլյան՝ որպես քաղաքային հնարավոր կենտրոններից մեկը, իր ֆիզիկական ձևով անզամ հաղորդում է տապալի կերպարայնություն, որը և տարածվում է, տվյալ տարածության այլ իմաստաստեղծ ֆիգուրների վրա: Deleon, J. 1991. *Ancient Districts on the Golden Horn*, 27:

<sup>3</sup> Джеймсон, Ф. 2006. Репрезентация глобального. Текст доклада, прочитанного на конференции «Современные медиа: теория, история, практика». СПб. в «Синий диван», մեքրերում արված է աղաքայն տարբերակից՝ <https://polit.ru/article/2010/04/05/jameson/>:

ներկայացնելով այն իբրև մյուսներից տարբեր, բացառիկ մի վայր, որ հաճախ բացիկներում պատկերվում է Ասկեղջյուրի մյուս կողմում: Տարածություն, որ հաճախ ճանաչում են առաջին հերթին կարմիր աղյուսավոր գմբեթով շենքի՝ հունական լիցեյի շնորհիվ: Բալաբի բացառիկությունը ջնջվում, խամրում է այն պատումներում, որտեղ թաղամասը ներկայանում է իր «հարևան», «զուգընկեր», «երկվորյակ»՝ իրեն կցված-սերտաճած հունական Ֆեների հետ. Ֆեներ-Բալաբ<sup>1</sup>:

Բալաբի գլխավոր հմայքն իր ֆիզիկական և սոցիալական խտությունն է, որ ընդգրկում է տարբեր էթնիկ ու կրոնական համայնքների կյանքը հավաստող տարատեսակ ճարտարապետական վկայությունները: Ուղեցույցներում Բալաբն անապայման կիշատակվի իբրև մի վայր, որտեղ կողք կողքի կարելի է տեսնել մզկիթներ ու հունական եկեղեցիներ, սինագոգներ, հայկական, բուլղարական եկեղեցիներ և այլն: Այս էթնոկրոնական խմբերի համակեցության շուրջ սոցիալական հիշողությունը կամ ջնջված է, կամ էլ գտնվում է վերացման եզրին, ուստի ճարտարապետական հիշողությունը ձեռք է բերում գերկարևոր նշանակություն, դառնում տարբեր մշակութային ու լեզվական օջախների միաժամանակյա համակեցության ու ընդհանուր տարածության մասին պատումի միակ ձևը:

Ոսկեղջյուրի ափերին խոնկված ճարտարապետական հուշարձանների թվարկումը մեզ ապշահար է անում. կանգնած ենք տապալի շենքին, որ թեև նախաջրհեղեղյան ժամանակներում այստեղ եղած կենդանի մշակույթների ոչ բոլոր հուշարձաններն է պահել, բայց առնվազն մեկական նմուշ պահպանել է: Ժամանակին սոր քաղաքակրթության նախատեսքտ հանդիսացող ամեն բան իր մեջ առած բիբլիական նավի<sup>2</sup> պատրանքն է, որ ստեղծում է Բալաբի տարածության դյուրանքը՝ շրջանցելով ջրհեղեղի մասը: Ուղեցույցն ի գորու չէ ներառել Բալաբի մասին բոլոր հնարավոր մետալեզուները, բայց Բալաբն ուղեցույցի լեզվի համար կատարյալ է. այն ներկայացնելու հնարավորությունները ստեղծում են անհրաժեշտ «ուտոպիական պոռթկումը»՝ վերածվելով տարածության և գոյի «առավել պարզ ու պակաս օտարված արտադրական ձևերին վերադառնալու անգիտակցական ցանկության դրսևերման»<sup>3</sup>:

Ժամանակի մեջ քարացած Աիրիլյա սինագոգը, Սուրբ Զրեշտակապետը, հունական եկեղեցիները, բյուզանդական վանքերը կամ Օր-Աիայի մի հիվանդանոցը կարծես անցյալի յուրատիպ թանգարաններ լինեն, որտեղ ամեն դարաշրջան իր հետքն է թողել: Բալաբի սոցիալական հիշողությունն ի ցույց է դնում ոչ թե պարզապես տարբեր մշակույթների

She was expelled from the city and sent to Salonica by a court order. According to their claims, Rivka “seduced their innocent youth,” but numerous scandals bringing to her expulsion prove that the primary conflict was that a Jewish woman had sexual liaisons with representatives of all ethnic and religious groups. On the one hand, this is an exemplary story in a sense that all major micro-communities take part in the “normalization” of space. On the other hand, circumstances prior to Rivka’s case also indicate that there was a silent agreement among ethnic groups of Balat and Fener allowing them to live together respecting each other’s boundaries.

It is difficult to construct Balat’s image; it cannot be articulated. Trying to define it, we suddenly get a reply from memory of the place that either augments, or contradicts Balat’s hitherto formulated discourse. Before one mutters that Balat is a Jewish quarter, the walls of the Armenian Church and Khorenyan School dismantle this utterance with their four-hundred-year memory, and Greek churches and schools remind us how Balat revived during the celebration of Orthodox Easter. We cannot say either that Balat was a poor and disorderly quarter; memory thoughtfully directs our attention to the façades of the aristocratic houses stretching from Fener to the south of Balat, points out the opulent interior of the Greek Church, the magnificent façade of Or-Ahayim or refers to wealthy Jewish families. All attempts to define Balat or fix its image run into endless oppositions and ambiguities.

Balat is different from other quarters in its constant diglossia and in these house-*repliques*<sup>1</sup> with a common mode of life and living. Balat’s otherness is not in its grandeur; it is rather related to an interference of different othernesses. In recollections of Balat’s inhabitants, there are boundaries between communities – open and permeable.

Balat’s heteronomy is imprinted on the façades of its buildings belonging to different styles and epochs; it is reflected in the memoirs of Balat’s inhabitants, in their stories of childhood. Our attempts to understand Balat’s idiorhythmic fantasy (phantasm) bring us back to the idea that memory is like childhood; unlike

<sup>1</sup> I use this expression alluding to Kristeva’s notion of “écriture-réplique” (writing-reply). In her earliest writings on semiotics, literary text is described as a response to other texts, as inserted in the *ensemble* of texts; “it is a writing-reply (function or negation) of another (other) text(s).” In this sense Balat’s buildings are often constellated as an ensemble by communicating with or/and negating each other. See: Kristeva, J. 1969. *Séméiotiké. Recherches pour une sémanalyse*. Paris, Seuil, 181.



մեկտեղված շերտերի հաջորդականություն-կուտակումը (ճարտարապետական հիշողության շերտավորման հարցին ստորև դեռ կանդորառնամ), այլ դրանց միաժամանակությունը, այսինքն՝ իդիոռիթմիկ անցյալը, որ ամրագրվել է պատմական աղբյուրներով ու ֆիզիկական տարածության հիշողությամբ:

Տարբեր Էթնոխմբերի կյանքի *միաժամանակությունը* երևան է գալիս երբեմն Բալաթի անցյալի ամենաանսպասելի պատահիկների շնորհիվ: Նախկին բալաթցիների ինքնակենսագրականներում հաճախ են կրկնվում «ընդհանուր տոների» մասին պատմությունները. Չատկի օրերը, որ նշվում էին հայերի, հույների, հրեաների ու մուսուլմանների կողմից՝ որպես բալաթցիների համընդհանուր տոն:

Իդիոռիթմիկ կյանքի հոսքի մասին են վկայում նաև ընդհանուր գործածման վայրերը<sup>1</sup>. տարբեր Էթնիկ խմբերից կազմված հերթը ձգվում էր դեպի հայկական եկեղեցու ամբիջ ջրակունքը, որի բուժիչ գործության մասին լուրը ջնջում էր կրոնական պատկերացումների սահմանները: Փրկության աղբյուրի հերթերում հունական, հրեական կամ բուլղարական համայնքի ոչ մի ներկայացուցիչ իր սեփական Էթնոմշակութային կամ կրոնական ինքնության կորստի, այլակերպման վտանգի առաջ չէր կանգնում, ուստի պատրաստ էր այլ ինքնության հետ հարաբերվել՝ առանց տաբուների՝ Պատմական աղբյուրները ցույց են տալիս նաև Բալաթի և այլոց համակենցության միաժամանակությունը՝ մարդկային առօրեականության առավել անսպասելի էջերում՝ ընդհուպ մինչև քրեական անցքերում: Մարմավաճառ կանանց հետ կապված սկանդալային միջադեպերն ի ցույց են դնում Բալաթում զուգահեռ և միաժամանակյա *միասնակյանքը*: Չքոսաշրջիկի կամ սպառողի աչքին Բալաթի ուրիշությունն ամբողջական է, մինչդեռ այս տարածության ներքին կարգուկանոնը բացարձակ զուրկ է միաճություններից ու կազմված է համաձայնեցված բազմաձայնություններից: Քրեական լրահուսում հանդիպում ենք Ռիվկե<sup>2</sup> անունով հրեա կնոջ գործին, որի դեմ հրեական, հայկական ու հունական համայնքների առաջնորդները 1750թ.-ին ոստիկանությունը հասած հանրագիր էին հեղինակել: Բալաթի, Ֆեների, Չաքսյոյի և այլ հարևան թաղերի տարբեր Էթնիկ խմբերի ներկայացուցիչներ Ռիվկեի գործունեությունը որակել էին հանրային անդորրը խաթարող: Դատարանի որոշմամբ նրան քաղաքից վտարում ու արտաքսում են Սալոնիկ: Չրեաների, հայերի, հույների ու մուսուլման համայնքի պաշտոնական տարբերակներով՝ Ռիվկեի գործունեությունը սահմանվում էր որպես «անմեղ պատանիների գայթակղություն», բայց դատական վճռին հանգեցրած բազմաթիվ սկանդալներն ապացուցում

<sup>1</sup> Թերևս Բալաթի տարաբնույթ Էթնոսների համախմբվածության ամենավառ օրինակը շուկան էր, որն այս կամ այն կերպ ապրանքների ու ծառայությունների արտովաճառքի շուրջ ժողովում էր գրեթե բոլորին: Տե՛ս Delecon, J. 1991. *Ancient Districts on the Golden Horn*: Բացի այդ, ինչպես վկայում են Մուստաֆա Յոքերի հիշողությունները, մուսուլման և ոչ մուսուլման բնակչության մեկ այլ ընդհանուր հավաքատեղի էին բաղնիքները (Tahta Minare Hamamı և Çavuş Hamamı), ուր տարբեր զնեղերային և էթնիկ խմբերի համայնքները վերածվում են իդիոռիթմիկ դաշինքի յուրատիպ վկայություն: Տե՛ս Yoker, M. 2012. *Kalimera Fener, şalom Balat: bizim mahalle*. İstanbul, Çatı Kitapları, 221:

<sup>2</sup> Zarinebaf, F. 2011. *Crime and Punishment in Istanbul: 1700 - 1800*, University of California Press, Berkeley, California, 92-94.

history, it is linked to identity formation.<sup>1</sup>

In his autobiography, Mustafa Yoker tells about his years spent between Fener and Balat, taking the reader to the intimate world of his childhood, where among people in Balat, one clearly sees this inclination of moving from one “other” space to another “other” to know not only about the “other” next to you, but also to get in touch with this other culture. Passing the Metrology church on Vodin Street, he saw, through the wide open door, two priests in black cassocks at the altar blessing and handing out bags with Easter eggs. One would expect to encounter such a scene in a story of a stranger, or of a flâneur who observes ritual practices of another culture. But in Yoker’s childhood everything was different; he was not a spy or an unintentional voyeur.

“I plucked up the courage to stand in a queue. When it was my turn after a while, I kissed the priest’s hand and took the bag when he held it out to me. I happily put the bag in my satchel and rushed to school. It has become a habit since then.”<sup>2</sup> Interacting with the *other* becomes a habit, fits in with the rhythm of everyday life, and this very rhythm (*rhuthmos*) builds memory of the locals and memory of the place.

Religious festivals and rituals were at the same time boundaries between ethnic and confessional micro-communities, a space of interaction and mutual influence. Such memories also help us to understand the idiorhythmy of Balat’s past. Yoker’s recollections as well as dozens of others recorded by researchers<sup>3</sup> set in motion memory and coexistence, and the rhythm determined by Balat’s spatial features. Balat’s previous inhabitants – Jews, Armenians, Greeks – tell about their past with nostalgia and genuine affection for this place. But their speech differs from a lover’s discourse; fitting into Barthes’s concept, they convey the mode of living together, a *diaita* (*life-diet*) rather than a bygone love or longing for their community. “Neither dual nor plural (collective). Something like solitude with regular interruptions...”<sup>4</sup> This feature of Balat is often reflected in stories about childhood when everyday life and one’s own identity are not yet affected by political discourse.<sup>5</sup> Yosef Sevi reminisces about his Balat childhood highlighting

<sup>1</sup> Childhood is at the core of any project about Balat—whether it is a book, or a film. Heroes of Silvina Der-Meguerditchian’s documentary film reminisce about their school years in a Greek lyceum. Autobiographies of Balat’s Jews seem to be written only for relocating the reader into the childhood of a storyteller or to the Balat’s cinema—once a gathering spot for noisy teenagers; before walking home to other quarters, they threw themselves into the world of a multilingual quarter. Emre Yalcin, one of the authors of our book *Balat: Living together*, also focuses on his childhood which was to some extent identical with Balat’s childhood that faded into oblivion.

<sup>2</sup> Yoker, M. 2012. *Kalimera Fener, salom Balat*, 163-164.

<sup>3</sup> Varol-Bornes, M. 1998 “Balat, vieille communauté juive

<sup>4</sup> Barthes, R. 2012. *How to Live Together. Novelistic Simulations of Some Everyday Spaces*. Columbia University Press, 6.

<sup>5</sup> Interestingly, Eastern rituals as a common space in memories of Balat’s inhabitants are mentioned several times in this book. See the essay of Emre Yalcin, or the article of Yayloyan, Ulutaş and Aslanov.

են գրեթե հակառակը, հիմնական խնդիրը այն էր, որ Ռիվկեն, լինելով հրեա, սպասարկում էր բոլոր էթնիկ ու կրոնական խմբերի տղամարդկանց: Մի կողմից՝ այս պատմությունը ցուցանում էր այն առումով որ տարածության «նորմալիզացիային» մասնակցում են բոլոր հիմնական ենթահամայնքները: Մյուս կողմից՝ Ռիվկեի գործի նախապատմությունը հստակ մատնանշում է, որ Բալթի ու Ֆեների էթնոխմբերի միջև մշտապես գործում էր ներքին պայմանավորվածություն, որը թույլ էր տալիս ապրել միասին ու զուգահեռաբար, բայց՝ պահպանելով յուրաքանչյուր էթնոկրոնական համայնքի սահմանները:

Բալթի կերպարը դժվարությամբ է կառուցվում, չի հավաքվում մի արտահայտության մեջ: Փորձելով սահմանել Բալթը՝ մենք հանկարծ բախվում ենք տեղի հիշողությունից դուրս պրծած ռեպլիկի, որը կամ փորձում է լրացնել, կամ հակասում է Բալթի՝ կարծես թե վերջնաձևակերպված դիսկուրսին: Դեռ կես բերան չասած, որ Բալթը Ստամբուլի հրեական թաղամաս է՝ հայկական եկեղեցու ու Խորենյան դպրոցի պատերը՝ իրենց 400-ամյա հիշողությամբ, հոսք են ցնդեցնում տվյալ արտահայտությունը, հունական եկեղեցիներն ու դպրոցները հիշեցնում են, որ Բալթն աշխուժանում էր ուղղափառ Չատկի օրերին: Նույն կերպ չենք կարող պնդել, թե Բալթը տարբերվում էր իր աղքատությամբ ու անհարմարավետությամբ. հիշողությունը տեղուտեղը մեզ ցույց կտա բարձրաշխարհիկ տների ճակատները, որ ձգվում էին Ֆեներից դեպի Բալթի հյուսիս, կհակադարձի ունևոր հրեական ընտանիքների պատմություններով, հունական եկեղեցու ներքին հարդարանքի շքեղությամբ ու Օր-Միայիմի ֆասադի նրբազեղությամբ: Բալթը նկարագրելու, սահմանելու, այն մի կերպարի մեջ բարացնելու փորձերը բախվում են նմանօրինակ ակթիվ հակադարձումների ու երկդիմությունների:

Բալթը տարբերվում է այլ թաղամասերից, և այդ տարբերությունն անընդհատ դիզուսիայի, այդ շենք-ռեպլիկների մեջ է՝<sup>1</sup> դրանց ընդհանուր կենցաղով ու կեցության: Բալթի ուրիշությունը ճշգրտվում է ոչ թե կողողայնությամբ ու ամբողջականությամբ, այլ տարբեր ուրիշությունների ինտերֆերենցիաներով (ներթափանցումներով): Բալթացիների հիշողությունները հաճախ են ցույց տալիս, որ տարբեր համայնքների միջև առկա էին սահմաններ, որոնք, սակայն, բաց էին ու փոխներթափանցելի:

Բալթի տարածության այլօրինությունը դաջված է տարբեր ժամանակաշրջանների ու ոճերի՝ մեկմեկու նայող, մեկմեկու սերտաճած շենքերի ճակատներին: Այն արտահայտվում է բալթացիների հուշերում, նրանց մանկության հիշողություններում. Բալթի իդիոռիթմիկ

<sup>1</sup> Տվյալ արտահայտությունը գործածել են հոլվերդ Կրիստևայի "écriture-réplique" (գիր-պատասխան) հասկացությունը: Մեմֆոտիկային առնչվող իր վաղ շրջանի գործերում գրական տեքստերը ներկայացվում են որպես արձագանք այլ տեքստերին, որ ներառված են տեքստերի համայնքում . «Գիր-պատասխանը (գործառույթ կամ բացասում) այլ (ուրիշ) տեքստ(եր)ի մասին է.»։ Այս առումով Բալթի շենքերը հաճախ համատեղվում են իրեն համայնք հարողակցվելով ն/կամ բացակայելով սինյանց: St' u Kristeva, J. 1969. Séméiotikè. Recherches pour une sémanalyse. Paris, Seuil, 181.

this unity of different communities on festive days. “Hanukkah and the Christmas holidays celebrated by Greeks and Armenians at the same time were mostly conspicuous in the market, copiously supplied with colored eggs, sweet-smelling Easter buns, as well as homemade Hanukkah oil and wax candle wicks standing next to the pipes and elbows made by tinsmith Yanko.”<sup>1</sup>

We have to refer again to the Barthesian fantasy of living together. His reading of idiorrhymy is an attempt to show the paradox which he calls “the aporia of bringing distances together.” It is where Balat’s economic history intersects with its social and architectural memory. It is probably for this reason that memories of Balat’s inhabitants are filled with nostalgia for the past and even negative or traumatic experiences (fears of the Jewish community in the Middle Ages, anti-Greek sentiments during the conflict years in Cyprus, the memory of the Armenian Genocide, the 1955 Pogroms, etc.) are part of fantasy, where eurythmy of everyday life becomes a guide to selective memory.

Barthes reminds us that idiorrhymy is an ensemble, simultaneity, parallelism but not an attempt of mutual subjection. Therefore it cannot be characterized by power relations but those of accompaniment, unity while preserving self-sufficiency. Idiorrhymy, according to Barthes, refers to “small, flexible groups of several individuals who are attempting to live together (within a certain proximity to one another), while each preserving his or her *rhuthmos*.”<sup>2</sup>

Balat’s experience of idiorrhymy can be traced both on the level of the individual corresponding to the Barthesian idea of co-existence of individuals/ subjects as well as on the level of collectives. One can consider an ethno-religious collective as a distinct subject and extend the possibilities of reading the space, tracking the idiorrhymy of everyday life of both individuals and collectives around their institutional centers.<sup>3</sup> The most vivid evidence of simultaneity is not so much the history of everyday life that flowed among Armenians, Bulgarians, Jews, Greeks, etc., in parallel and together but rather the

<sup>1</sup> See: Niyego, D. 2014, July 2. “Yosef Sevi nin eski Balat’ı”, *Şalom*, <https://goo.su/aec0>

<sup>2</sup> Barthes, R. 2012. *How to Live Together*, 43.

<sup>3</sup> This metonymization helps to imagine Balatian experience of co-existence of various ethnic groups “who are attempting to live together while each preserving their *rhuthmos*” as well as proceeding further along the path of abstraction, to explain the neighborhood experience of the Balat-Fener dyad.

<sup>1</sup> Մանկությունը դառնում է Բալայի շուրջ ցանկացած նախագծի արտուկը՝ կնի գործային, քե կիննամոտագրաֆիկ: Միվկինա Տեր-Մկրտչյանի վավերագրական ֆիլմի հերոսները պատմում են Բալայի մասին՝ հիշելով հունական լիցեյի դասանելիությունը անցկացրած տարիները, բալայից հրեաների ինքնակենսագրական գրքերն ասես մտահղացվել են յույ մի նպատակով, որ ընթերցողին տանեն դեպի պատմողի մանկություն ու Բալայի կնիքատարն, որտեղ ժամանակին հավաքվում էին աղմկոտ դեմահամերի ընկերակազմերը, որ կնիքդախիճից ելնում ու մինչ կհասնեն տարրեր քաղերի իրենց տները, ընկղմվում էին բազմալեզու բաղամասի աշխարհի մեջ: Սույն «Բալայ» ապրիլ միասին» գրքի հեղինակներից Էմին Յալչընը նույնպես կենտրոնացրել է իր պատմությունը մանկության շուրջ, որն ինչ-որ աստիճանով հենց Լեբաբի քրեին հասնված Բալայի մանկությունն է:

<sup>2</sup> Yoker, M. 2012. *Kalimera Fener, şalom Balat*, 163-164.

<sup>3</sup> Varol-Bornes, M. 1988. "Balat, vieille communauté juive d'Istanbul. "

ֆանտազմը հասկանալու փորձը վերստին մեզ հանգեցնում է մտքին, որ հիշողությունը մանկությունն է, որ հիշողությունը, ի տարբերություն պատմության, կապված է ինքնության ձևավորման հետ<sup>1</sup>:

Սուստաֆա Յոքերն ինքնակենսագրական գրքում պատմում է իր կյանքի մի շրջանի մասին, որ անց է կացրել Ֆենների և Բալայի միջև, ընթերցողին հրավիրում է մանկության ներանձնական տարածք, որտեղ հստակ երևում է բալայիցիների կյանքի «ուրիշ» տարածքից մեկ այլ՝ «ուրիշ» տարածություն տեղափոխվելու միտումը, որը ոչ թե պարզապես կողքինին ճանաչելու, այլ ուրիշ մշակույթի հետ առնչվելու մասին է: Վողիսա փողոցի երուսաղեմյան եկեղեցու կողքով անցնելիս բաց դռների մեջ նա նկատում է սև փարաջաներով երկու հոգևորականի, որ օրհնելով բաժանում են շատկի ձվերով փաթեթներ: Նման տեսարան հեշտ է պատկերացնել գրոսաշրջային պատմումում, երբ օտարերկրացի ֆլանյորը հետևում է այլ մշակույթի ծեսին, բայց Յոքերի մանկության տարիներին ամեն ինչ այլ էր. նա չի բավարարվում համուկկևդրի կամ ակամա վուայերիստի կարգավիճակով. «Ես համարձակությունս հավաքեցի ու հերթ կանգնեցի: Քիչ անց հերթս հասավ, հոգևորականի ձեռքը համբուրեցի ու վերցրի ինձ մեկնած փաթեթը: Չվով փաթեթն ուրախությամբ դրեցի տոպրակս ու շտապով վազեցի դպրոց: Յետագա տարիներին էլ այս սովորությունս պահպանվեց: Յենց շատիկը գալիս էր, գնում էի երուսաղեմյան եկեղեցի ու, հոգևորականի ձեռքը համբուրելով, վերցնում էի գունավոր ձվերով փաթեթը»<sup>2</sup>: Ուրիշի հետ առնչակցությունն այստեղ վերածվում է «սովորույթի»՝ ներմուծվելով ու համաձայնեցվելով առօրյայի ռիթմի հետ, և հենց այդ ռիթմոսն է կազմավորում տեղացիների ու տեղի հիշողությունները:

Կրոնական տոներն ու ծեսերը միաժամանակ ծառայում էին թե՛ որպես էթնիկ և կրոնական ենթահամայնքների սահմաններ, թե՛ որպես առնչակցման և փոխներթափանցման տարածություն: Նմանատիպ հիշողությունները մեզ թույլ են տալիս հասկանալ, թե ինչպես է կայացել Բալայի անցյալի իդեոռիթմիս: Յոքարի հիշողությունները, մեզ նախորդած հետազոտողների<sup>3</sup> արձանագրած տասնյակ այլ հիշողությունների հետ մեկտեղ, գործարկում են տեղի հիշողությունը, համակեցության պատկերը, որի ռիթմը պայմանավորված է Բալայի տարածության հատկանիշներով: Նախկին բալայիցիները՝ հրեաներ, հայեր, հույներ, մշտապես կարոտաբաղձությամբ ու տեղանքի նկատմամբ անկեղծ սիրով են խոսում իրենց անցյալից, բայց նրանց խոսքը տարբերվում է սիրահարի խոսքից, այն հեշտությամբ տրվում է բարտյան հղացքին, հղվում միասնականաբար ձևին, այդ յուրատիպ

moments of rupture in this stream of life. Balat's multicultural life as embedded in Istanbul's collective imaginary was interrupted by a series of tragic events: legislative changes of 1942 (Varlik Vergisi-Wealth Tax), obliging non-Muslim population to pay more taxes, financially ruining wealthy Jews, as well as many Armenians and Greeks.<sup>1</sup> The outflow of the Jewish population following the creation of the state of Israel interrupts Balat's idiorrhythmy, but not its life. Despite the fact that Jews left Balat, it did not become more Armenian or Greek. On the contrary, the jointly created infrastructure and culture of everyday life disintegrate negatively impacting the other collectives of the quarter.

Two forces or two energies traverse different states of living together: *askesis* and *pathos*. Barthes defines *askesis* as a systematic organization of space, whereas *pathos* as an affect colored by the imaginary.<sup>2</sup> As soon as these two energies or the conditions for their development started to vanish in the second half of the 20th century, the experience of living together flowed from social memory into the space of architectural and urban memory.

<sup>1</sup> To imagine the scale of the discriminatory policies of Turkish authorities in the second half of the 20th century and the suffering inflicted on Balat's inhabitants, one only needs to cite the percentage of taxes imposed on Muslims and non-Muslims according to Varlik Vergisi- Armenians-232 percent, Jews-179 percent, Greeks-156 percent and Muslims- 4.94 percent. See: Guttsstadt, C. 2013. *Turkey, the Jews, and the Holocaust*. Cambridge University Press, 75.

<sup>2</sup> Barthes, R., 2012. *How to Live Together*, 17.

## INTERNAL AND EXTERNAL MEMORY OF THE PLACE

Speaking of the internal order of rhythms (*rhuthmos*), one should clarify that the internal rhythm of each *community-subject* together with another *community-subject* creates a space that is preserved, though partially, in memory of the place and in memories of the locals despite the numerous traumas caused by hard times and political decisions.

Remembering space in Balat takes two, oftentimes discordant forms – internal and external. Internal memory is fragmented and based on everyday life experience and on locals' regular interactions with the architectural and urban environment; whereas Balat's external memory consists only of external observer's attempts to describe the place. For instance, 19th century travelers depict Balat as an impoverished quarter, as one of the chaotic,

<sup>1</sup> Barthes, R. 2012. *How to Live Together. Novelistic Simulations of Some Everyday Spaces*. Columbia University Press, 6.

<sup>2</sup> Ուշագրավ է, որ Ջատկի ծանրը՝ իբրև բալաբոյների համար ընդհանուր տարածք, քանիցս հիշատակվում են սոյն գրքում. տե՛ս՝ Էմրե Յալչընի ակնարկը կամ Յոլյանի, Ապանովի, Ուրթաշի համահնդիակությունը նյութը:

<sup>3</sup> Sli'u Niyego, D. 2014, հուլիսի 2: "Yosef Se-vi'nin eski Balat'ı", Şalom, <https://goo.su/acc0>

<sup>4</sup> Barthes, R. 2012. *How to Live Together*, 43.

*diaita-hն*, ոչ թե կորսված սիրուն կամ սեփական հավաքականության նկատմամբ կարոտին. «ոչ երկուսը, բայց և ոչ բազմություն, [...] պարբերաբար ընդհատվող միայնության պես մի բան»<sup>1</sup>: Բալաթյան կյանքի այս առանձնահատկությունն է հաճախ հնչում մանկության հիշողություններում, երբ առօրեականությունը ու սեփական ինքնությունը դեռևս քաղաքական դիսկուրսներին չեն ենթարկվել<sup>2</sup>: Յոզեֆ Սևին հիշում է իր բալաթյան մանկությունը կրոնական տոներին տարբեր համայնքների նմամատիպ համախմբմամբ: «Խանուկան ու Սուրբ ծննդյան տոները, որոնք համընկնում էին Բալաթի հայերի ու հույների մոտ, ամենից շատ երևում էին բազարում: Ներկած ձկեր, անուշաբույր զատկական բլիթներ [...]։ Դրանց կողքին Խանուկայի ձեռաշեն, անագե, մոմե կամ յուղակերտ պատրույզներ, որ տնկված էին թիթեղագործ Յակոյի խողովակների ու դրանց արմունկների կողքին»<sup>3</sup>:

Այստեղ կրկին անհրաժեշտ է դիմել բարոյյան միասնականքի ֆանտազմի մասին ակնարկին: Իդիոռիթմի նրա ընթերցումը փորձ է՝ ի ցույց դնելու մի պարադոքս, որ նա անվանում է «դիստանցիաների համընդհանրացման ապորիա»: Յենց այս կետում են պարադոքսալ կերպով հատվում Բալաթի տնտեսական պատմությունը և դրա սոցիալական, ճարտարապետական հիշողությունները: Յավանաբար, այդ իսկ պատճառով էլ տեղացիների բոլոր հիշողություններն աչքի են ընկնում անցած օրերի նկատմամբ ծայրահեղ կարոտով, և անգամ բացասական, տրավմատիկ փորձառությունը (դարակեսին հրեական համայնքի վախերը, Կիպրոսի հակամարտության տարիներին քաղաքում առկա հակահունական տրամադրությունները, հայերի պարագայում՝ ցեղասպանության հիշողությունը, 1955-ի ջարդարարությունը և այլն) հանդիսանում է ֆանտազմի մաս, որտեղ առօրեականության Էվոլյուցիան դառնում է ընտրողական հիշողության ուղղորդիչ:

Բարտը մեզ հիշեցնում է, որ իդիոռիթմիան անսամբլ է, միաժամանակություն, զուգահեռում, ոչ թե մեկը մյուսին ենթարկեցնելու փորձ, ուստի ոչ թե իշխանական հարաբերություն, այլ նվազակցման, միասնականության հարաբերություն՝ ինքնակայության պահպանմամբ: Իդիոռիթմիան, ըստ Բարտի՝ «ոչ մեծ, ճկուն գոյակցություն է՝ հաշված մարդկանց միավորող խմբեր, որ փորձում են ապրել միասին (իրարից ոչ հեռու), ընդ որում՝ պահպանելով իրենց սեփական *rhuthmos*-ը»<sup>4</sup>:

Բալաթյան իդիոռիթմիայի փորձը նկատելի է ինչպես անհատական մակարդակում, որ համահունչ է առանձին մարդկանց/սուբյեկտների համակցության բարոյյան մտքին, այնպես էլ՝ խմբային մակարդակում: Կարելի է այս կամ այն Էթնոկրոնական խումբն ընկալել որպես առանձին սուբյեկտ և ընդլայնել

dirty and fetid coasts of the Golden Horn.<sup>1</sup> However, in-depth interviews with local residents reconstruct an extremely positive image of Balat, associated with home, community, untroubled childhood, intercultural life, etc.<sup>2</sup>

In his book (written at the beginning of the 20th century) about the three-century-long history of the Armenian community and the Armenian Church of Surb Hreshdagabed, Melgon-Asatur leads his reader to the gates erected in this part of the city by Michael Monomachos, and called Gates of Balat.<sup>3</sup> Through such an “entrance” into the narrative space of memory Melgon-Asatur writes about the Jewish communities living along the shore of the Golden Horn.<sup>4</sup> The doors of the Armenian Church appear only after the doors of Balat; the narrative about the area is built as a “passage”, a sequence of actions to delve deeper into the real Balat. Meanwhile, this “passage” itself starts with parallelism and simultaneity; Balat’s gates thrown open to the people of Balat every day coexisted with the doors of Surb Hreshdagabed and the doors of numerous synagogues.

History of the Armenian Church and Khorenyan school may seem an exceptional case that did not coincide with the notion of internal co-existence. As soon as we shift our attention from Balat’s social or ethno-cultural component to its architectural image, we will see that the interplay of external and internal life plays a vital role for this place. Surb Hreshdagabed, like many other beloved buildings of Balat’s inhabitants, has been renovated many times. Underneath its present appearance, there are numerous layers of historical reconstruction. The Armenian narrative of Surb Hreshdagabed, however, begins in 1628, when the building of a Greek Church was handed over to the Armenian Patriarchate and Armenian community. Carefully examining Balat’s space and guiding to the doors of the church, Melgon-Asatur continues his story, which can be defined as a reconstruction of a historical and architectural palimpsest; its idea is visible in Balat on multiple levels.<sup>5</sup> Sergey Ivanov, a Russian scholar of Byzantine studies, elaborates on the idea of architectural palimpsest regarding Istanbul and

<sup>1</sup> Varol-Bornes, M. 1994. “The Balat Quarter and Its Image: A Study of a Jewish Neighborhood in Istanbul”, 633-634.

<sup>2</sup> Varol-Bornes, M. 1998. “Balat, vieille communauté juive d’Istanbul.”

<sup>3</sup> Մելգոն-Ասատուր 1931. Երեզդաբեան պատմություն...11. [Three-Century History of Surb Hreshdagabed Church in Balat, 11].

<sup>4</sup> It refers to Karabaş, a completely disappeared neighborhood of Balat. A century after the publication of Melgon-Asatur’s book, this place is mentioned in the memoirs of Eli Shaul: “During the clean-up of the coastal areas of the Golden Horn in between 1984 and 1986, Karabaş was completely demolished and turned into a park. The Or-Ahayim hospital, also called Jewish hospital, is the only building left from the huge coastal quarter”. Shaul, E. 2012. *From Balat to Bat Yam: memories of a Turkish Jew*, 218.

<sup>5</sup> Morisset, L. K. 2010. “Patrimony, the Concept, the Object, the Memory, and the Palimpsest: A View from the History of Architecture.” *The Journal of the Society for the Study of Architecture in Canada*.



<sup>1</sup> Նամսորինակ մետանիդացիան բոլոր է տալիս պատկերացնել ոչ միայն գուտ բալաբյան, տարբեր էթնիկ խմբերի համակեցության փորձառությունը, որոնք «փորձում են ապրել միասին՝ պահպանելով սեփական դիմադրությունը», այլև վերացարկման ուղով առաջ գնալով՝ բացատրել հայրենության՝ Ֆեներ-Բալար երկրակի փորձառությունը:

<sup>2</sup> Դարակնային իշխանությունների խտրական քաղաքականության մատչարարները և բալաբյանների պատճառով արված արվածները պատկերացնելու համար պարզապես կարելի է հիշատակել *Varlik Vergisi* հրատմանով մոտավորապես ոչ մոտավորապես բնակչության հարկման թվերը՝ հայերը՝ 232%, հրեաները՝ 179%, հույները՝ 156%, մոտավորապես՝ 4,95%: Տե՛ս Guttschick, C. 2013. *Turkey, the Jews, and the Holocaust*. Cambridge University Press, 75:

<sup>3</sup> Barthes, R., 2012. *How to Live Together*, 17.

տարածության մեկնության հնարավորությունները՝ նրանում դիտարկելով թե՛ անհատների, թե՛ սեփական ինստիտուցիոնալ առանցքի շուրջ հավաքված խմբերի առօրյա իդիոռիթմը<sup>1</sup>: Միաժամանակության ամենախոսուն վկան ոչ այնքան զուգահեռ ու միասին ապրող հայերի, հրեաների, բուլղարների, հույների և այլոց առօրեականության պատմությունն է, որքան այդ կյանքի հոսքի խզման պահը: Ստամբուլի հավաքական հիշողության մեջ քարացած Բալաթի բազմամշակութային կյանքն ընդհատվում է մի շարք ողբերգական իրադարձություններով: օրենսդրական փոփոխությունները (*Varlik Vergisi*), ըստ որոնց 1942 թ.-ից ոչ մուսուլման բնակչությունը պիտի ավելի շատ հարկեր վճարեր, ինչը բառիս բուն իմաստով սնանկացրեց ունևոր հրեաներին, ինչպես նաև հայերին և հույներին<sup>2</sup>: Իսրայել պետության ստեղծմամբ պայմանավորված՝ հրեա բնակչության արտահոսքն ընդհատում է Բալաթի իդիոռիթմիս, բայց ոչ կյանքը: Հրեաների հեռանալուց հետո Բալաթը չի վերածվում մեծ մասամբ հայերի և հույների թաղամասի, հակառակը՝ համատեղ ստեղծված ենթակառուցվածքներն ու առօրեականության մշակույթը հետընթաց են ապրում և բացասաբար անդրադառնում թաղամասի այլ հավաքականությունների վրա: Միասնականքի տարբեր դրություններում հատվում է երկու հիմնական ուժ, երկու Էներգիա՝ *askesis*-ն ու *pathos*-ը: Ասկեզիզմի տակ Բարսը հասկանում է տարածության որոշակի կանոնակարգում, իսկ պաթոս ասելով՝ Երևակայության արգասիք հանդիսացող որոշակի աֆեկտ<sup>3</sup> 20-րդ դարակեսից, որն ուղեկցվում է տվյալ երկու Էներգիայի կամ դրանց գոյացման պայմանների անկմամբ, միասնականքի փորձառությունը սկսում է սոցիալական հիշողությունից արտահոսել ճարտարապետական և ուրբան հիշողության տարածություն:

## Տեղի ներքին և արտաքին հիշողություն

Վերադառնալով ռիթմների ներքին կանոնակարգին՝ հարկ է նշել, որ յուրաքանչյուր հավաքականություն-սուբյեկտի ներքին ռիթմը մեկ այլ հավաքականություն-սուբյեկտի հետ միաժամանակ ձևավորում է տարածություն, որը թեպետ հատվածաբար, սակայն պահպանում է տեղի և տեղացիների հիշողությունները՝ չնայած ժամանակի և քաղաքական որոշումների հասցրած բազմաթիվ տրավմաներին:

Բալաթի առանձնահատկություններից մեկն էլ իր՝ տարածությունը հիշելու երկու ձևն է, և հաճախ ներքին հիշողությունը համընթաց չէ արտաքինին: Ներքին հիշողությունը հատվածական է,





Balat in particular. Occasionally uncovered mosaics of the still unidentified Byzantine temple known today as Atik-Mustafa (Hazreti Cabir Camii) make historians put forward various hypotheses. As Ivanov puts it, “the mosque’s interior is carefully plastered and it is unclear what is hidden beneath the layers.”<sup>1</sup> And there are many such multi-layered buildings and walls in Balat despite the fact that, according to urban researchers, today’s Balat is radically different from the quarter which existed several centuries ago. The history of Surb Hreshdgabed in the Jewish quarter as well as the history of its transformation from a Greek into an Armenian church constitute a typical Balatian movement from an urban to an architectural palimpsest. Thus, Balat is one of those spaces that are “written” and “spoken” from within. The inner life creates the language of the place, whereas a language describing this place belongs to the outer side of the quarter.

<sup>1</sup> Иванов, С. А. 2011. В поисках Константинополя. Путеводитель по византийскому Стамбулу и окрестностям. - М.: Вокруг Света, 422 [Ivanov, S. 2011. *Searching for Constantinople. A guide in Byzantine Istanbul and its vicinity.* Moscow, 422].

Balat may seem monolithic to a stranger; even if it’s known as the “other” quarter, it can be conceived as an identical “other.” Meanwhile, the internal language of this place eliminates the false image of a monolithic quarter. The internal and external constituting the rescriptus of the space, are part of the language of Balat’s everyday life rather than mere constructions of reason. In Ladino, two Balats exist—Balat Ariento (internal) and Balat Afuera (external). Travelers’ description of Balat mostly reflects the quarter’s outer covering – the coastal area, where the main population was quite poor. The architectural appearance of the quarter could not arouse any interest among travelers sailing along the Golden Horn. They lacked the knowledge of the internal language of the place. Depictions of a poor and dirty industrial district which also do not fail to mention the pungent smell on the coast constitute the external memory of this place. However, if we delve deeper into the quarter, we will find out a completely different type of memorization.<sup>2</sup> Interestingly, we learn about the internal and external Balat as well about their names from oral history rather than official documents. Delving deeper into the quarter and its historical past, changing the relief

<sup>2</sup> Varol-Bornes concluded from her fieldwork that the conventional economic image of Balat is either false, or not entirely plausible. Rich Jewish or Armenian families never flaunted their wealth or fortunes. As it is about those Balatians who lived here in the 20th century, the idea of “hidden wealth” is most likely associated with traumatic memories of the Varlik Vergisi law. Nevertheless, Balat’s division into the inner and outer areas in the 19th century was based not only on geographic or urban, but also on economic characteristics of the space. More prosperous Jewish families lived in Balat Ariento (it was drier and sunnier up on the hill near Kasturiya). Poor families involved in coastal trade or industrial activities in Balat Afuera. See: Varol-Bornes, M. 1988. “Balat, vieille communauté juive d’Istanbul,” 499-500.

հիմնված է առօրեականության փորձառության և ճարտարապետական և ուրբան միջավայրի հետ տեղացիների պարբերական բախումների վրա, միևնույնիսկ Բալաթի արտաքին հիշողությունը լոկ կողմնակի դիտորդի նկարագրության փորձ է: Այսպիսով, 19-րդ դարի ճանապարհորդների նկարագրություններում Բալաթը պատկերվում է որպես Ոսկեղջյուրի ափին աղքատության, քաոսի, աղբի ու զարշահոտության խառնարան:<sup>1</sup> Միևնույնիսկ, հետագայում տեղացիների հետ հարցազրույցներով վերականգնվում է Բալաթի բացառապես դրական նկարագիրը, որ ասոցացվում է տան, հարևանության, անհոգ մանկության, ներմշակութային կյանքի և այլ հրացքների հետ<sup>2</sup>:

<sup>1</sup> Varol-Bornes, M. 1994. "The Balat Quarter and Its Image: A Study of a Jewish Neighborhood in Istanbul", 633-634.

<sup>2</sup> Varol-Bornes, M. 1998. "Balat, vieille communauté juive d'Istanbul."

<sup>3</sup> Մելգոն-Ասատուր 1931. Երկրպետս պատմութիւն... 11:

<sup>4</sup> Նկատի ունի Բալաթի այն մասը, որը կոչվում էր «Քարաթա» և այսօր ամբողջությամբ աննոստացել է: Մելգոն-Ասատուրի գրքի տպագրությունից մեկ դար անց այս մասին էր հիշելուով գրում է Յուզեֆ Մելիխ. «1984 – 1986 թվականների միջակայքում Ոսկեղջյուրի մարտան և վերազինման աշխատանքների ընթացքում ավտոմեքո Քարաթա բաղամասն ամբողջությամբ հողին հավասարեցվեց և կոմունալացատվելով վերածվեց պարտ: Օր-Ալթայիսի հիվանդանոցը, որ կոչում ենք շնեական հիվանդանոց, միակ բանն է, որ մնաց ավտոմեքո հոկայական բարոմասից»: Su'u Shauli, E. 2012. From Balat to Bat Yam: memories of a Turkish Jew, 218:

Մելգոն-Ասատուրը, սկսելով իր՝ 20-րդ դարասկզբին գրված, հայ համայնքի և Սուրբ Հրեշտակապետ հայկական եկեղեցու երեքդարյա պատմությունը, ընթերցողին հրավիրում է անցնել քաղաքի այս հատվածում Միխայիլ Մոնոմախի բարձրացրած դարպասների միջով, որ կոչվում են Պալատյան կամ Պալաթի դարպասներ<sup>3</sup>: Այսպիսի «մուտք» ապահովելով հիշողության պատմողական տարածություն՝ Մելգոն-Ասատուրը հիշատակում է հրեական համայնքը, որով բնակեցված էր անմիջապես Ոսկեղջյուրի ափը, քաղաքի պարիսպներից անդին ողջ տարածությունը<sup>4</sup>: Հայկական եկեղեցու դռները հայտնվում են միայն Պալաթի դռներից հետո. տեղանքի մասին պատումը կառուցվում է որպես «քայլ», որպես խորացում, իրական Բալաթի խորքերը ներթափանցելու արարների հաջորդականություն: Նաև տվյալ «քայլի» մեկնարկը սկզբից ևեթ տրվում է որպես զուգահեռում և միաժամանակություն. Բալաթի դարպասները բացվել են բալաթիցիների առաջ ամեն օր՝ այլ դարպասների՝ Սուրբ Հրեշտակապետի, բազմաթիվ սինագոգների դռների հետ մեկտեղ: Առաջին հայացքից հայկական եկեղեցու և Խորենյան վարժարանի 300-ամյա պատմությունը կարող է թվալ բացառություն, որը ներքին համագոյության այս մոդելի տարածողը չէ: Բայց հայացքը տարածության սոցիալական կամ էթնոմշակութային բաղադրիչից ճարտարապետական կերպին ուղղելու պարագայում ակնառու է դառնում, որ ներքին և արտաքին կյանքի փոխազդեցությունն այս տարածքի հիմքերից մեկն է: Սուրբ Հրեշտակապետը, բալաթիցիների համար կարևոր բազմաթիվ այլ շինությունների նմանությամբ, բազմիցս վերակառուցվել է: Ներկայիս տեսքի տակ թաքնված են պատմական վերստեղծման բազում շերտեր: Բայց շինության հայկական պատմությունը սկիզբ է առնում 1628թ.-ից, երբ հունական եկեղեցու շենքը փոխանցվում է հայ պատրիարքին և հայկական համայնքին: Ներթափանցելով Բալաթի տարածություն, մեզ հասցնելով եկեղեցու դռանը՝ Մելգոն-Ասատուրը շարունակում է իր պատմությունը, որը կարելի

and focalization, a guidebook describes the Palace of Blachernae and its surroundings this way: "out of breath after the steep climb, we realize what a great view spread out before emperors when they walked out onto the balcony looking out over the Golden Horn."<sup>1</sup> It spread out not only before emperors, but also for Jews, Greeks or Armenians, who lived on the upper floors of apartment buildings of Balat Ariento.

<sup>1</sup> Ivanov, S. 2011. *In search of Constantinople*, 433.

Thus, figuratively speaking, Balat's external memory is able to preserve the image of the place for a long time, whereas internal memory embodies the vitality of the quarter and its inhabitants. Balat's internal language gets rid of monolithic and generalized ideas, splits and fragments the plateau, handing it over to memory rather than history, to the natural flow of language, rather than description.

#### NEITHER A CENTER, NOR A PERIPHERY

Balat as a polysemous and multi-layered space is determined not only by the internal/external functioning of memory but also by attempts to define at once the structure (center/periphery) of the space and Balat's place in the structure of the urban fabric.

Apparently, the name of the quarter permanently encoded two opposite images, none of which is false. Balat derived from "palatio" still reminds of its "glorious past" and "erstwhile fortune." Meanwhile, for modern Istanbulites, "Balat" is associated with poverty, disorder and migrants.<sup>2</sup> This ambivalence coalesces into Balat's history and shapes its memory. Balat is the center of the endlessly expanding metropolis of Istanbul; the quarter is part of Fatih, the cultural and religious hub of the city. Looking at the walls of Constantinople, we realize that Balat was once beyond the city limits, if not a periphery; that is to say, not a center. Balat's constant stretching and scattering serve as a "reminder:" local community's mode of life often goes beyond the notion of a city center (religious restraint of Fatih, aristocratic luxury of Beyoğlu, etc.) and shows Istanbulites and its visitors the practice of everyday life in a peripheral quarter.

<sup>2</sup> In 2018, I conducted interviews for a month about Balat with its inhabitants and other residents of Istanbul. One of the first questions concerned the "associations" of "Balat" among citizens. More than half of all 50 respondents first cited such associations as "migrants," "poverty," etc.

<sup>1</sup> Morisset, L. K. 2010. "Patrimony, the Concept, the Object, the Memory, and the Palimpsest: A View from the History of Architecture." *The Journal of the Society for the Study of Architecture in Canada*.

<sup>2</sup> Иванов, С. А. 2011. В поисках Константинополя. Путеводитель по византийскому Стамбулу и окрестностям. - М.: Вокруг Света, 422.

Է բնորոշել իբրև պատմաճարտարապետական վերականգնման պալիմփեստ (կրկնագիր)՝ գաղափար, որ Բալաթի ամենատարբեր մակարդակներում հեշտությամբ կիրառելի է<sup>1</sup>: Ռուս քյուզանդագետ Սերգեյ Իվանովը բավական հաջող ներկայացրել է ողջ Ստամբուլի ճարտարապետության, մասնավորապես՝ Նաև Բալաթի, կրկնագիր լինելու միտքը. առ այսօր հստակեցված չէ եկեղեցու պատկանելիությունը, որ ներկայում հայտնի է որպես Աթիկ Մուսթաֆա (Hazreti Cabir Camii), որտեղ ժամանակ առ ժամանակ ջրի երես ելնող խճապատկերները պատմաբաններին այս կամ այն վարկածն առաջ քաշելու տեղիք են տալիս, և որտեղ «մզկիթի ներքին հարդարանքը ջանասիրաբար սվաղված է, ու այդքան էլ հասկանալի չէ, թե ինչեր են թաքնված սվաղի տակ»<sup>2</sup>: Իսկ Բալաթում նմանօրինակ բազմաշերտ շենքերն ու պատերն անթիվ են, չնայած ուրբանիստ-հետազոտողների կողմից ընդունված է համարել, որ ներկայիս Բալաթը կտրուկ տարբերվում է մի քանի հարյուրամյակ առաջվա թաղամասից: Իսկ հրեական թաղամասի հայկական եկեղեցու, ինչպես նաև դրա՝ հունականից հայկականի փոխակերպման պատմությունը ուրբան կրկնագրից ճարտարապետականի յուրատիպ անցման բալաթյան ձև է:

Այսպիսով, Բալաթն այն տարածություններից է, որոնք մշտապես գրվում և խոսվում են ներսից: Յենց տարածքի ներքին կյանքն է տեղի լեզվի ձևավորման հիմնական աղբյուրը, այն դեպքում, երբ տեղի մասին լեզուն արտահայտված է թաղամասի արտաքին, ճակատային շերտի վրա: Չնայած որ դրսի սուբյեկտին Բալաթը կարող է թվալ միաձույլ՝ իր *ուրիշ* թաղամասի համբավով հանդերձ, կարող է համարվել նույնական/միակ *ուրիշ*, բայց արի ու տես, որ տարածության ներքին լեզուն միաձույլ թաղամասի այդ կեղծ կերպարը տրոհում է: Ներքինի և արտաքինի գաղափարը, որով ձևավորվում է տարածության Եփրեմյան վարքականոնը, ոչ այնքան մտահայեցողական կառույցների արգասիք է, որքան տարածքի առօրեականության լեզվի բնական մաս: Հայտնի է, որ լադիևոյով (հրեերենի և իսպաներենի խառնուրդը) խոսելաձևն արդեն իսկ վկայում է տեղի լեզվական տարածության անմիատարրության մասին. ներքին և արտաքին Բալաթները տարբերակվում են՝ Բալաթ Արյենտո (Ariente) և Բալաթ Աֆուերա (Afuera): Ճանապարհորդների նկարագրած պատկերը հաճախ Բալաթի մակերեսը շոշափող արտաքին դիտարկումների արդյունք է. մերձափնյա մասի պակտերը, որտեղ հիմնական բնակչությունը բավականին աղքատ էր, իսկ թաղամասի ճարտարապետական դիմագիծը դույզն-ինչ հետաքրքրություն չէր առաջացնի Ոսկեդշյուրի ավիով նավարկող ճանապարհորդի մոտ: Սա տեղի

Balat's location, like its name, embraces the necessity of moving inwards, retreating from the edge of the water. Located on the shore of the Golden Horn leaving behind the religiously and culturally saturated center, Balat is a place, where modern flâneurs, like those who sailed along the Golden Horn a century ago, face two viable options: either passing by the quarter, barely aware of its depth and of the belief that it is only the first step towards the origin, or succumbing to temptation and delving deep into this space, moving towards the center from this eternal periphery, climbing the hill, entering the ark.

Balat's name, like that of Fener's, may be similar to a multitude of words unfamiliar to a foreigner, but it can inspire the curious listener to dig into the history of linguistic transformations, to unravel the meaning of the Fener / Balat pairing, to move from Balat to *Palatio*, from Fener to *Fanarion* (lantern). Even if one remains motionless in this space, the space itself starts to move. Balat, like its name, like its memory and physicality, is in constant motion from Istanbul to Constantinople, from poverty to wealth, from Islam to Christianity and later to Judaism and polytheism. The essence of Balat's space is its ability of perpetual transformations and becomings. Likewise, Balat's name speaks about the past and memory, clears the way for a transition from the nominative to the communicative aspect. Balat is neither a center, nor a periphery; it is eternally in the midst of becoming a center and a non-center.

#### **CHORA, OR L'ESPACE MATERNEL**

Balat's architectonics and its name turn the quarter into a semiotic container, an invitation to explore history, memory, and the origins of language. Palimpsests seem to have permeated into this place urging us to think of the beginning, to feel tension before yielding to the temptation of digging into the past, to walk around the streets aligned in a grid that painted a new pattern in Balat- a place intermittently destroyed by multiple fires.



<sup>1</sup> «Արդը, իր դաշտային աշխատանքներին կենդով, նկել է այն եզրահանգման, որ կեղծ է կամ ոչ այնքան ճշմարտացի նաև Բալաթի տնտեսական նկարագրի մասին ընդունված պատկերացումը: Հաճախ, բավականին հարուստ հրեական կամ հայկական ընտանիքները ի ցույց չեն դրել իրենց ունեցվածքը և երբեք դրաչափ չեն դարձրել իրենց կարողությունը: Ու քանի որ խոսքը XX-րդ դարում այստեղ ապարած բալաթցիների հիշողության մասին է, ապա առավել հավանական է, որ «ժամուկ հարստության» նման կեցվածքը կապ ունի նաև varlik vergisi օրենքի տրավմատիկ հիշողության հետ: Ամեն դեպքում, արդեն XIX դարում Բալաթի բաժանումը ներքինի և արտաքինի ոչ միայն աշխարհագրական կամ որբան տարածությունների յուրահասակությունների հիմքով էր, այլև՝ տնտեսական: Ենթին Բալաթում (Balat Ariento) ապրում էին ավելի ապահովված հրեական ընտանիքներ (բյուրն ի վեր, Կատտորիայի մուսուլմանները ավելի արևելքում և շուր էր), իսկ Արտաքին Բալաթում (Balat Afuera)՝ արքայա ընտանիքները, որոնք զբաղվում էին ավանդու առևտրով կամ արհեստով: St' u Varol-Bornes, M. 1988. "Balat, vieille communauté juive d'Istanbul," 499-500:

<sup>2</sup> Иванов С. А. 2011. - В поисках Константинополя, 433.

<sup>1</sup> 2018-ին մեկ ամիս շարունակ Բալաթի մասին հարցազրույցներ են վարել բալաթցիների, ինչպես նաև Ստամբուլի այլ թաղամասի բնակիչների հետ: Առաջին հարցերից մեկը բաղաձայնների շրջանում Բալաթի հետ կապված ասոցիացիաների մասին էր: 50 պատասխանողից կեսից ավելին նախատառչ թվարկում է այնպիսի ասոցիացիաներ, ինչպիսիք են «Վիզրան», «աղբատուրյուն» և այլն:

ներքին լեզվի չիմացության փորձառություն Ե: Տեղի արտաքին հիշողությունը կազմում է հենց այս աղբատ, արտադրական կեղտոտ թաղամասի պատկերը, որի նկարագրություններում պարտադիր հիշատակվում է մերձափնյա անտանելի հողը: Միևնույն, եթե խորանանք թաղամասի մեջ՝ արտաքին հիշողությունից շարժվենք դեպի ներքինը, ապա կանուչվենք տարածքը հիշելու բացարձակ այլ տիպի հետ<sup>1</sup>: Հատկանշական է, որ տարածությունը, ընդ որում՝ համապատասխան անուններով, ներքինի և արտաքինի բաժանելու մասին իմանում ենք տեղի բանավոր պատմությունից, ոչ թե պաշտոնական աղբյուրներից: Ուղեցույցը, շարժվելով դեպի թաղամասի ներսը ու միաժամանակ՝ պատմական անցյալի խորքը, փոխելով ռելիեֆը և ֆոկալիզացիան՝ Բալաթերյան պալատի ու մերձակա տարածքի նկարագրության մեջ հայտնում է, որ «Վերելքից շնչակտուր, հասկանում ես, թե ինչ հրաշալի տեսարան էր բացվում կայսրերի առաջ, երբ դուրս էին գալիս Ոսկեղջյուրին նայող պատշգամբ»<sup>2</sup>: Հրաշալի տեսարան էր բացվում ոչ միայն կայսրերի, այլև հետագայում հրեա, հույն կամ հայ բնակիչների առաջ, որոնք զբաղեցնում էին Երբին Բալաթի տների վերին հարկերը:

Այսպիսով, պայմանականորեն կարելի է առանձնացնել Բալաթի արտաքին հիշողությունը, որն ի գործ է երկար ժամանակով կոնսերվացնել տարածքի պատկերը, և տարածության ներքին հիշողությունը, որն անմիջականորեն կապված է տեղի և տեղացիների կենսական էներգիայի հոսքի հետ: Բալաթի ներքին լեզուն տրոհում է միաձուլությունը և իր շուրջ եղած ընդհանուր/արտաքին պատկերացումները, մասնատում և հատվածների է բաժանում բարձրավայրը՝ ուղարկելով այն հիշողության գիրկը, ոչ թե՝ պատմության, բնական լեզվական հոսքի, դիսկրիպցիայի:

## Ոչ կենտրոն, ոչ ծայրամաս

Բալաթը՝ իբրև բազմանշան և բազմաշերտ տարածություն, առանձնանում է ոչ միայն ներքինի և արտաքինի անընդհատ գործարկմամբ, այլև տարածության կառուցվածքի (կենտրոնի և ծայրամասի) ու քաղաքի հյուսվածքում Բալաթի տեղորոշման ցանկացած փորձով: Թաղամասի անունն ինքնին, ասես առհավետ ծածկագրել է իր մեջ միաժամանակ երկու հակադիր կերպար, որոնցից ոչ մեկը կեղծ չէ: Բալաթը որպես *palatio*-ի դերիվացիա շարունակում է հիշեցնել «փառավոր անցյալի», «երբեմնի ճոխության» մասին: Միաժամանակ Բալաթը ներկայիս ստամբուլցիների խոսքում ասոցացվում է աղբատության և անհարմարավետության, միգրանտների հետ<sup>1</sup>: Այսպիսի երկվությունը տարածության պատմության

Balat always offers at least two routes, two ways of knowing/mastering/remembering oneself and telling about oneself. This space is always affected by binary oppositions (poverty/wealth, center/periphery, locals/migrants, internal/external, etc.), there are always two ways of mastering geopoetics, two modes of “walking rhetoric.”<sup>1</sup> Firstly, moving inwards, from myth to everyday life, from an external name to an internal naming, from integrity to fragmentation and secondly, from the top of the hill down to the coast of the Golden Horn. The first “route”, a pilgrim’s path, is designed and adapted for a guidebook that uses the Or-Ahayim hospital as a reference point. Walking parallel to it along the coastline and moving a little farther, you will quickly find the “Agora” restaurant. Or going to the doors of the Armenian Church and turning to the left, you will see the decaying façade of the Khorenyan School.

Leaving this small street after a small “turn”<sup>2</sup> and moving towards the Vodin Street and following the instructions of a guide, you will approach the walls of the Ahrida Synagogue, and from there, passing by the colorful façades, literally in a minute, you will stand in front of the Chora Monastery, the jewel of the quarter. From there you can make another movement different both from your ascent and from the recognizing/mastering. “To walk is to feel a lack of space,”<sup>3</sup> and to move towards Chora is an attempt to overcome that deficit, to get to a “non-place.”

The Chora Monastery located on the periphery of Balat –once a periphery itself– towers behind the barely discernible street pattern. Chora is like memory or a lost dream that we wish to read either by straining our memory or by leaving this difficult enterprise behind and heading for the city walls. Chora means “land” (one of the possible translations) – an area outside the city, outside the urban space. It also connotes “place.”

Chora’s name predetermines Balat’s myth as the “other” in the entire urban area. At the same time, this status of the *other* explains the vibrancy stemming from this place and luring one to visit it. The physical space of the quarter (its name, architectural solutions – prototypes of Jewish small apartments

<sup>1</sup> Michel de Certeau examines “rhetoric of walking” in relation to stylistic features of movement and defines it as “an art of composing a path” compared with linguistic structures. Departing from Barthes’s notions of “city as a semiotic space,” or “city as a discursive space,” Certeau investigates various types of movements which shape spatiality as well as the very space of the city. See: De Certeau, M.1984. *The Practice of Everyday Life*. University of California Press.

<sup>2</sup> I borrow again de Certeau’s terminology. Entrances to Surb Hreshdagabed and to the Khorenyan School are located in an alley, away from the main street lines; to continue “the long poem of walking” one should make this “turn.” For de Certeau, “the walking of passers-by offers a series of turns (tours) and detours that can be compared to “turns of phrase” or “stylistic figures.”” See: De Certeau, M. 1984. *The Practice of Everyday Life*, 101.

If an ascent to the top of the hill along the Jewish quarter, or a movement from the Greek to the Jewish quarter (and vice versa) constitute “the long poem of walking,” then Armenian places of memory serve as a metonymy, a synecdoche.

<sup>3</sup> *Ibid*, 103.

մաս է դառնում և ձևավորում դրա հիշողությունը: Այսօր մեզապոլիսի չափերի հասած, անկասելիորեն ընդլայնվող Ստամբուլի համար Բալաթը հանդիսանում է կենտրոն, թաղամասը պաշտոնապես ներառված է Ֆաթիհ մշակութային կենտրոնի կազմում: Կոստանդնուպոլսյան պատերին նայելիս կարելի է գլխի ընկնել, որ Բալաթը ժամանակին եթե ոչ ծայրամաս, ապա քաղաքի տարածությունից անդին ընկած տեղանքի սահմանակիցն է եղել, այսինքն՝ կենտրոն չի եղել: Բալաթի այս անվերջ սեղմումներն ու ցրումները վերածվում են «հիշեցման» յուրատիպ ձևի. հաճախ տեղացիների կենսակերպը դուրս է գալիս քաղաքի կենտրոնի մասին պատկերացումներից (Ֆաթիհի կրոնական զսպվածության, Բեյոզլուի բարձրաշխարհիկ ճոխության և այլն) ու ակտիվորեն հիշեցնում է ստամբուլցիներին և այցելուներին, թե ինչպես է հոսում ծայրամասային թաղամասի առօրյան:

Բալաթի դիրքը, անվանումն արդեն իսկ իրենց մեջ ներառում են դեպի խորք շարժվելու, ջրեզրից հետ քաշվելու կարիք: Գտնվելով Ոսկեղջյուրի ափին և թիկունքում թողելով կրոնական և մշակութային իմաստներով հագեցած կենտրոնը՝ Բալաթը վերածվում է մի տարածության, որտեղ մերօրյա ֆլանյորը, Ոսկեղջյուրով մի դար առաջ նավարկողի պես, հայտնաբերում է առնվազն երկու հնարավորություն-գործառույթ: Առաջինը՝ կողքով անցնել, թեթևակի դիպչելով իմացությանը, որ խորքում ինչ-որ բան կա, դա լոկ դեպի *սկիզբը* գնացող սկիզբն է: Երկրորդը՝ տրվել գայթակղությանը և ներթափանցել տվյալ տարածության խորքերը՝ շարժվելով այդ հավերժ ծայրամասից դեպի կենտրոն, ելնել բլուրն ի վեր, մտնել տապան:

Թաղամասի անունը՝ հարևան Ֆեների նմանությամբ, օտարերկրացու ականջին կարող է հնչել որպես բյուրավոր այլ անհասկանալի բառերից մեկը, բայց և կարող է հետաքրքրասեր ունկնդրի մոտ հանկարծակի արթնացնել լեզվական փոխակերպումների պատմության մեջ խորանալու, Ֆեներ/Բալաթ երկայակի իմաստի գաղտնիքը գուշակելու, Բալաթից դեպի Պալատ, Ֆեներից դեպի Ֆանար-լապտեր տեղափոխվելու ցանկություն: Եթե անգամ այս տարածությունում անշարժանաս, այն կշարունակի շարժվել: Բալաթը մեկն է այն թաղամասերից, որ թե՛ իր անվամբ, թե՛ իր հիշողությամբ և մարմնականությամբ գտնվում է հարատև շարժի մեջ՝ Ստամբուլից դեպի Կոստանդնուպոլիս, աղքատությունից դեպի հարստություն, իսլամից դեպի քրիստոնեություն, ապա՝ հրեականություն և բազմաստվածություն: Բալաթի տարածության եուրյունը բացահայտվում է անդադար փոխակերպման, կայացման և ընթացքի մեջ, իր անվան հետ տեղի ունեցողի համանմանությամբ, որն այլակերպման միջով

and apartment buildings called *yahudi hane*, etc.) duplicates the function of this quarter reminding us that Balat is a place of empathy, a place of maternal care. History of the “others” of this place—Jewish, Greek and Armenian settlements, immigrants from the Black Sea region— bears witness of this vibrancy. Even after the disappearance of the first settlers, a new history of migration emerges; today one can encounter many Roma and Syrian migrants in Balat.<sup>1</sup> But apart from accepting others, the urban fabric of the quarter has proven to be caring as well. This is exemplified by the Armenian Church standing in the Jewish quarter for several centuries. Some “others” were able to provide shelter for other “others.” And this is an unmistakable Balat phenomenon.

Chora, located in the depths of the quarter, is our yearning for remembering and our yearning for forgetting.

If we assume that a city, like language,<sup>2</sup> shapes its semiotic space, we can interpret Balat as an utterance addressed to those who happened to visit this quarter or settle in houses whose walls are painted with variegated plaster. Any attempt to read Balat as a semiotician would do, by putting *semata* in cells and tables, will reveal a number of functions that are performed by various groups or individuals as well as functions performed by this place itself. However, besides playing a communicative role, Balat is an utterance–fantasy. Without this utterance, there is no city, there is no language that constitutes the trajectory between the Balat–phenotext and the Balat–genotext. Balat’s streets resemble a stream of utterances telling about religious and ethnic forms of communication with a linguistic gesture that also implies a pre-linguistic basis, its own chora or *khōra*.<sup>3</sup> By accepting the premise of a proto-linguistic foundation, we visualize Balat’s physical space more clearly. For it is not just a space, but a story about space: from the shores of the Golden Horn to the domes of Chora we are guided either by our intentions to sail, ride and walk around Balat satisfied with flashbacks, or by our attempts to explore the quarter thoroughly from Agora to Chora.

On our way to the monastery, we overcame, mastered and recognized the unfamiliar space. When we

<sup>1</sup> Today urban changes of the past decades are depicted in a negative light; they resulted in displacing the local population and attracting more rural residents from Anatolia, who could quickly settle here due to low rents, etc. See, for instance: Olt, M. 2016. “The Balat Life is Really Unique”, 15. However, this process of accepting new “others” in place of the old ones is a typical characteristic of Balat. Both statistics and studies show that the space itself spoke of its readiness to accept new others.

<sup>2</sup> Barthes, R. 1970. “Sémiologie et urbanisme” in *L’Architecture aujourd’hui*. CL III, 11-13.

<sup>3</sup> For instance, Jacques Derrida transcribed the Greek letter  $\chi$  with “kh” instead of “ch.” See: Derrida, J. 1995. *On the Name*. Stanford University Press, xii.

Ե անցել, այսինքն՝ իր գոյությամբ արդեն իսկ խոսուն վկայությունն է անցյալի, հիշողության, նոմինատիվից դեպի կոմունիկատիվ (հաղորդակցական) անցման հնարավորության: Բայաթը կենտրոն չէ, ոչ էլ՝ ծայրամաս, այն հավերժ է իր՝ կենտրոնի վերածվելու և ոչ կենտրոն դառնալու պրոցեսների մեջ:

## Մայրական բարձրավայր կամ Խորա-տարածություն

Թաղամասի արխիտեկտոնիկան (ճարտարակերտություն), անվանումը այն վերածում են որոշակի նշանային ամբարի, մի յուրատիպ զբոսահրավերի դեպի պատմության, հիշողության խորքերը, լեզվի ակունքները: Կրկնագրերն ասես ճեղքում են տարածքը՝ ստիպելով մտածել սկզբի մասին, անցյալ ներթափանցելու գայթակղությամբ ու դյուրանքով մշտապես պահելով լարման մեջ, ստիպելով շրջել փողոցների ցանցով, որ պատվել է նոր նախշով՝ բազմիցս այրված ու քանդված հևի փոխարեն:

Բալաթն առնվազն երկու երթուղի է առաջարկում, երկու միջոց՝ իրեն ու իր մասին պատմությունը ճանաչելու/յուրացնելու/հիշելու: Այս տարածությունն անընդհատ գտնվում է հակադրությունների լարման մեջ (աղքատություն/հարստություն, կենտրոն/ծայրամաս, լուկալություն/միգրացիա, ներքին/արտաքին և այլն), այստեղ մշտապես առկա է գեոպոետիկայի յուրացման, «բայլքի հռետորության»<sup>1</sup> երկու եղանակ: Առաջինը՝ շարժ դեպի խորքերը, միֆից դեպի առօրեականություն, արտաքին անուկից դեպի ներքին անվանում, ամբողջից դեպի հատվածականություն: Երկրորդը՝ բլրի զագաթից վար՝ դեպի Ոսկեղջյուրի ափ: Առաջին «երթուղին» ուխտավորի ուղին նախատեսված ու հարմարեցված է ուղեցույցի համար, որի հավանական մեկնակետը Օր-Ահայիմ հիվանդանոցն է. այստեղից ափին զուգահեռ քայլում են ու փոքր-ինչ խորանալով՝ մի քանի րոպեից հայտնվում են «Ագորա» ռեստորանի հարևանությամբ կամ էլ մոտենում են հայկական եկեղեցու դռներին, որ, գլուխդ աջ թեքելով, տեսնես լքված Խորենյան վարժարանի ճակատը: Մի փոքր «պտտադարձ»<sup>2</sup> անելով ու այս նրբանցքից դուրս գալով, շարժվելով դեպի Վոդիևս փողոց, բառիս բուն իմաստով մեկ րոպեից, ուղեցույցին հետևելով՝ հասնում են Աիրիդա սիևագոգին, ապա, անցնելով գույնզգույն ֆասադների կողքով՝ հաշված րոպեների ընթացքում հայտնվում են թաղամասի պատմության գանձարանի՝ Խորա վանքի մոտ, որտեղից հնարավոր է կատարել մեկ այլ՝ այստեղ քեզ բերած վերելքից ու ճանաչում-խորացումից տարբերվող պտույտ: Հայտնի բան է՝ «զևալ նշանակում է զգալ տարածքի պակասություն»<sup>3</sup>, ուստի դեպի Խորա

<sup>1</sup> Մ. Դև Սերտոն «բայլքի հոետորություն» անելով՝ հասկանում էր շարժման յուրատեսակ ոճական հատկություն. «երթուղի հարթումը» համադրումը լեզվաբանական և տեղադրյալ սկզբունքների հետ: Այստեղ՝ «բալաթն իբրև նշանային տարածություն» գաղափարից կամ, ինչպես Բարտի մոտ է. «բալաթն իբրև դիսկրիպիվ տարածություն». Դև Սերտոն ասես զարգացնում է իր միտքը և վեր հանում շարժման տարբեր հատկություններ, որոնց ինքնին ձևավորում են քե՝ տարածականությունը, քե՝ քաղաքի տարածությունը: Տե՛ս De Certeau, M. 1984. *The Practice of Everyday Life*, University of California Press, Berkeley:

<sup>2</sup> Կրկին փոխառել ենք Դև Սերտոնի արտահայտչաձևեր, քանի որ Մուրբ Չրեշտակալեռի մուտքը և Խորենյանի շենքը գտնվում են նրբանցքով փողոցների հիմնական շարքից հեռու, և «բայլքի էպոսի» շարունակության համար անհրաժեշտ է կատարել տվյալ «պտույտը»: Չիլենցներ, որ Դև Սերտոնի համար «անցորդների երթևեկն իրենից ներկայացնում է հանգուցադարձների շարք՝ «խորի դարձվածքների» կամ «ոճական արտահայտչամիջոցների» նմանությամբ»: Տե՛ս De Certeau, M. 1984. *The Practice of Everyday Life*, 101: Երև «Բայլքի էպոս» ինչ-որ պահի կարող է թվալ հրեական քաղամասով վերելք դեպի բլրի զագաթը կամ քե՝ ընթացք՝ հունականից դեպի հրեական և հակառակը, ապա հայկական տարածքի հիշողությունն այստեղ հանդիսանում է յուրատեսակ փոխաբերություն, սինեդրիս:

<sup>3</sup> Լայն տեղում, 201:



ընթացքը վերածվում է պակասության հաղթահարման փորձի, շարժի դեպի «չտեղ»:

Բալաթի ծայրամասում գտնվող խորա վանքը, որ ժամանակին եղել է պոլիսի ծայրամաս, այժմ շարունակում է խոյանալ փողոցների՝ իրենց նախշով հագիվ գանազանվող գծապատկերի հետևում: Խորան՝ իբրև հիշողություն, կորուսյալ երազատեսություն կուզեինք ընթերցել՝ լարելով մեր հիշողությունը կամ տվյալ զբաղմունքի ծանրությունից ուղղակի մոռանալով մինչ բարձունքի պատերին հասնելը տեսած ամեն բան: Խորայի անունը, ավելի ստույգ՝ բառի հնարավոր թարգմանություններից մեկը, նշանակում է «հող», որը քաղաքի սահմաններից դուրս է, քաղաքային տարածությունից անդին: Այլ մեկնություններ են՝ «վայր», «քաղաք»:

Խորայի անունը նախասահմանում է Բալաթի՝ որպես քաղաքային ամբողջի նկատմամբ *ուրիշի* միֆաստեղծումը: Միաժամանակ *ուրիշի* կարգավիճակից է բխում այս տարածքից եկող ազդակը, որ բոլոր *ուրիշներին* կանչում է իր գիրկը: Թաղամասի ֆիզիկական տարածությունն ինքնին (նրա անունը, ճարտարապետական լուծումները՝ ոչ մեծ բնակարանները, իրենց նախատիպին՝ *յահուդիհաններին* համահունչ բազմաբնակարան տները և այլն) ամեն անգամ կրկնօրինակում է տարածքի գործառույթը, պահպանում հիշողությունն այն մասին, որ ուրիշներին ընդունող տարածք, մայրական հոգատարության վայր է: Այդ ազդակի մասին է վկայում տեղի հիշողությունից ու ֆիզիկական տարածության պատումներից բխող *ուրիշների* պատմությունը՝ հրեական, հունական և հայկական համայնքների բնակեցումը, մերձնևծովյան ժողովրդների վերաբնակեցումը: Անգամ առաջին վերաբնակիչների գրեթե ամբողջական անհետացմանը հաջորդում է միգրացիայի նոր պատմությունը, և ներկայում էլ հաճախ կարելի է տեսնել, որ Բալաթում բազմաթիվ ռումեր և Սիրիայից ներգաղթյալներ կան<sup>1</sup>: *Ուրիշներին* ընդունելու թվարկված շարքից զատ՝ թաղամասի ուրբան հյուսվածքն ինքնին խոսում է հոգատարության տարածք լինելու մասին: Այս առումով գլխավորապես կարող է վկայակոչվել հայկական եկեղեցին, որ հարյուրամյակներով հարատևել է հրեական թաղամասում: Ինչ-որ *ուրիշներ* հաջողացրել են մյուս *ուրիշներին* բարուրումը ֆիզիկապես ապահովել, ինչը Բալաթի տարածության ֆենոմեններից մեկն է: Թաղամասի խորքում գտնվող խորան հիշելու կամ հիշողությունը մոռացության մատնելու մեր ցանկությունն է: Ելնելով նրանից, որ քաղաքը լեզվի համանմանությամբ<sup>2</sup> ձևավորում է նշանային տարածություն՝ Բալաթը կարող ենք դիտարկել որպես որոշակի արտահայտություն՝ ուղղված ակամայից

<sup>1</sup> «Երբևէ տասնամյակների ողբան փոփոխություններն արձանագրելու մնորայն փորձերում ողբանվզայնում գործընթացը բացատրվում է ներկայումս տեղի բնակչությանը տևախանող և Անատոլիայից մեծ թվով գաղթարևակների ներգաղթով, որոնց հաջողվել է ցածր բնակավայրերում արագ յուրացնել բնակելի տարածությունը, և այլն: Sli'a Olt, M. 2016. "The Balat Life is Really Unique", 15: Մյնչդն, հինգի փոխարեն նոր *ուրիշների* ընդունման այս գործընթացը շատ հաստիկ է Բալաթին: Վիճակագրությունը և հետազոտությունները վկայում են, որ տարածությունն ինքնին խոսում է նոր ուրիշների ընդունելու պատրաստակամության մասին:

<sup>2</sup> Barthes, R. 1970. «Sémiologie et urbanisme» in *L'Architecture aujourd'hui*. CL III, 11-13.

go down to the coast, we already possess the knowledge and memory of this place. The walls of the building set out a methodology which stimulates reading the quarter differently. Images peering out from the layers of plaster teach us to look into the inner stratum of the physical.<sup>1</sup>

The space of Chora encompasses a multitude of narratives radiating from the church and spreading out across the coast. Ivanov points out the density of images on the walls of the monastery: “everything here is as tightly knit as a group of parishioners.” Chora’s celestial images are detached from those of ordinary mortals. And the more time passes, the more these decorations alienate from locals. While in the Byzantine period, descendants of imperial families who prayed here could recognize their ancestors in these frescoes; Muslims performing salah here since the 16th century no longer had any “personal” connection with this space. Since the middle of the 20th century the tourist gaze, examining the thick layers of plaster, is eager to uncover the history of the world, complexity of the historical past. The compositional solidity of Chora’s interior transfigures the monastery into a sublime place which also makes ordinary visitors comfortable precisely due to this density of the narrative canvas. Chora, like novelistic space, contains elements of a hubbub and a compact community; it constitutes the combination of the uncombinable. For Chora is the container of the uncontainable. Through this cosmic force and hubbub of people living together, Chora becomes Balat’s protolanguage and prototype.

No conqueror or foreign ship sails along the Golden Horn anymore, and no caravans pass through the edges of Balat. Balat has long become a center that preserves memory of this place, memory of its peripheral charm. Today this very memory attracts those who are trying to conquer the illusion of a proto-language or settle here to preserve this place of language production, a place of centuries-old polyphony.

Kristeva’s reinterpretation of chora helps us to understand the pre-linguistic foundation of language. Splitting into two spaces and highlighting the ambiguity of

<sup>1</sup> The monastery was built in the 5th century. Thereafter, it was reconstructed many times. The most serious transformations took place in between the 12th and 14th centuries. The restoration of Chora by Theodore Metochites dates back to 1321; most of the mosaics are attributed to this period. Sergey Ivanov quotes the request of Theodore Metochites to preserve the Chora library, which, along with other property of the monastery, was at risk of destruction after Andronicus III had captured the city. See: Ivanov, S. 2011. *Searching for Constantinople*, 474.

The history of Chora’s decorations spanned several centuries. They depicted not only biblical stories, but also rulers of different generations. In the beginning of the 16th century Chora was converted into a mosque by Atik Ali Pasha and named *Kariye Camii*. Since then, Chora’s mosaics were covered with thick layers of plaster and centuries-old frescoed narratives were kept out of sight. And only in 1945 the Turkish government decided to turn Chora into a museum and change its name to *Kariye Müzesi*. Chora has existed as a museum for more than half a century.





այստեղ հայտնվածներին կամ վառվումն սվաղով պատված տներից մեկում բնակվողներին: Բալաթն ընթերցելու փորձը՝ իմակներն (սեմաներն) ըստ բջիջների և տուփերի դասավորելով, ինչպես կվարվեին նշանաբանները, մեր առջև կբացվի գործառույթների մի ողջ շարան, որոնք այստեղ իրագործվում էին տարբեր հանրույթների և անհատների կողմից, ինչպես նաև այլ գործառույթներ, որոնք տարածքն ինքն էր իրականացնում քաղաքի նկատմամբ: Այնուհանդերձ, բացի իր հաղորդակցական-գործառնական դերից, Բալաթը ֆանտազմ-արտահայտություն է, առանց որի որևէ քաղաք չի կարող լինել, այնպես, ինչպես չի կարող լինել Բալաթ-ֆենոտեքստի և Բալաթ-գենոտեքստի միջև հետագծեր առաջացնող լեզվի մեկ այլ կտոր:

any utterance, the poetic language develops its semiotics. If Kristeva is interested in the notions of genotext and phenotext, Michel Serres, for instance, defines chora referring to the notion of the multiplicity of foundation. For Serres, foundation is the basic definition of chora. According to him, foundation multiples, the process is “recurrent. It returns, like a refrain.”<sup>1</sup> Balat’s choral basis embodies both the topoi of a quarter located on the periphery, outside the phallic space, outside the city or on its outskirts and of a quarter that integrates what is excluded from the phallic center. If we move from Kristeva’s linguo-semiotics to Serres’s philosophy, all these themes become the transdisciplinary metalanguage, which explains Balat’s phenomenon of willingly accepting migrants, or ethnic minorities. That’s why in the press Balat is referred to as a quarter of artists and hipsters. Balat’s forcefulness of being different and its efforts to avoid the phallic center, which are manifested in the illusion of a proto-linguistic, pre-ideological space, eventually lead to *re-habitat* and its reflections in media discourse.

The particular organization of Chora’s sacred space, or its hierotopy<sup>2</sup> is reflected in Chora’s mosaic walls, like inscriptions and images, constituting the narrative canvas of the monastery as well as serving as an auto-commentary. For instance, one of the pivotal inscriptions above the entrance to the outer narthex next to the image of the Virgin, reads, “container of the uncontainable.” This is a key phrase for Theodore Metochites’s project in which both earthly and heavenly creatures are present. At the same time, it alludes to a physical space (monastery) and to a space which has no spatial dimension (Christ in the womb of the Virgin) and remains unformed, as Derrida puts it.<sup>3</sup>

If Chora’s name makes us think of the proto-linguistic energy of Balat spaces, the history of its building tells us about the entire quarter, as if stretching out the narrative of this monastery to the strait, filling up the entire space of Balat with it to the very shore of the Golden Horn. Built in the 5th century, the monastery underwent many reconstructions;

<sup>1</sup> Watson, J. 2017. “The Urban Chora, from Pre-Ancient Athens to Postmodern Paris.” *China Media Research*, 13(4), 32.

<sup>2</sup> Лидов, А. М. 2009. Иеротопия: пространственные иконы и образы-парадигмы в византийской культуре. – М.: Дизайн. Информация. Картография: Троица, 22-23 [Lidov, A. 2009. Spatial Icons and Image-Paradigms in Byzantine Culture. Moscow, 22-33].

<sup>3</sup> Derrida, as if challenging Kristeva’s interpretation of chora or khōra, seeks to “liberate” this Platonic term from a real referent or characteristics of existents, including from its female gender. For Derrida, khōra only strives to get rid of any referent, to deny any form, to be formless /amorphon/. See: Derrida, J. *Khōra*, Paris, Galilée, 1993, 28.

<sup>1</sup> Օրինակ՝ ժակ Դերիդան տառադարձում էր հունարեն  $\chi$  տառը ոչ թե  $\chi$ , այլ *for* Տե՛ս Derrida, J. 1995. *On the Name*. Stanford University Press, xii.

<sup>1</sup> «Ըանրը կառուցվել է V դարում, ինչից հետո բազմիցս վերականգնվել և փոփոխվել է: Անենագգալի փոփոխությունները տեղի են ունեցել XII և XIV դդ. : Թեոդոր Մետոխիտեսի վերակառուցումը թվագրված է 1321-ին, և իննց այս շրջանին է պատկանում խճապատկերների մեծ մասը: Ս . Ա . Իվանովը մեջբերում է Թեոդոր Մետոխիտեսի Խորայի գրադարանը պահպանելու խնդրանքի խոսքերը, որ, ինչպես և վանքի ողջ ունեցվածքը, վտանգված էր Աղորոմնիկ III-ի կողմից քաղաքի գրավումից հետո: Տե՛ս Иванюв С. А. 2011 . В поисках Константинополя, 474: Խորայի ներքին հարկարանը մնափորվել է մի քանի հարյուրամյակների ընթացքում և ներառում է ոչ միայն բիրյուսկան պատմունքների պատկերներ, այլև՝ տարբեր սերունդների տիրակալների: Այս ամենը շարունակվում է, մինչև Մքիկ Ալի փաշայի հրամանով Խորան չի վերածվում ձկնիթի և ստանում անվան տոր տարբերակ՝ *Kariye Camii*, որ ան այսօր առավել տարածվածն է ստամբուլցիների շրջանում: Այդ պահից, այսինքն՝ 1500 թ. -ից Խորայի խճանկար սրբապատկերները պատվել են սվադի հաստ շերտով և հարյուրամյակներով պատմական բազմաարյու շերտը թարցված էր մարդկանցից: Եվ միայն XX-րդ դարակեսին՝ 1945 թվականին, թուրքական կառավարությունը Խորան բանգարանի վերածելու որոշում կայացրեց ու կրկին անվանափոխեց՝ *Kariye Miizesi*: Վե՛ս դարից սվել Խորան գտնվեց բանգարանի կարգավիճակում:

Բալաթի փողոցները ասես արտահայտությունների հորձանք լինեն, որ պատմում են ներկայիս և անցյալի կրոնական ու էթնիկ հաղորդակցական ձևերի մասին, ստեղծում նախալեզվական հիմք ենթադրող որոշակի լեզվական ժեստ, սեփական խորա: Նախալեզվական հիմքն<sup>1</sup> ընդունելու դեպքում Բալաթի ֆիզիկական տարածությունը կտեսնենք բոլորովին այլ կերպ, քանի որ այն այլևս ոչ թե պարզապես տարածություն կլինի, այլ կվերածվի տարածության մասին պատմության՝ Ոսկեդշյուրի ափից մինչև Խորայի գմբեթները Բալաթի կողքով անցնելու, վարելու, նավարկելու, լույս հիշողության առկայծմամբ բավարարվելու, տարածքի տեսքը մտապահելու մեր մտադրությունից կամ թե թաղամասը ծայրեծայր ոտնատակ տալու մեր փորձերից, Ագորայից մինչև Խորա ձգվող: Ի վեր՝ դեպի վանքը շարժվելիս մենք հաղթահարում, յուրացնում ու ճանաչում էինք անծանոթ տարածությունը, դեպի ափ իջնելիս արդեն ունենք տարածքի մասին գիտելիք ու հիշողություն: Շինության պատերն իսկ հուշում են յուրատիպ մեթոդաբանություն, որի օգնությամբ հետդարձի ճամփին թաղամասն ընթերցվում է բոլորովին այլ կերպ: Սվադի տակից աչքով անող պատկերները մեզ սովորեցնում են նայել խորքերին, տեսնել ֆիզիկականի ներքին շերտը<sup>2</sup>:

Խորայի տարածության մեջ կա պատմողական մի խտություն, որ վանքն արձակում ու տարածում է իր պատերից վար՝ դեպի ջրափ: Բյուզանդագետ Իվանովը նկատում է վանքի որմնակարների խտությունը. «այստեղ ամեն ինչ այնքան խիտ է, որքան խիտ կտեղավորվեն ծխականները»: Երկնային կերպարներն առանձնացված են հասարակ մահկանացուներից: Ու ինչքան շատ է բացվում պատմությունը, այնքան ավելի է կերպարների պատկերաշարը հեռվանում տեղի բնակիչներից: Եթե բյուզանդական շրջանում այստեղ աղոթում էին կայսերական ցեղի զավակները, որոնք պատկերվածների մեջ կարող էին ճանաչել իրենց նախնիներին, ապա XVI դարից նամազ անող մուսուլմաններն այլևս չունեին ոչ մի «անձնական» կապ այս տարածության հետ, իսկ XX դարի զբոսաշրջիկի հայացքը սվադի տակից ծիկրակող կերպարներում փնտրում էր համաշխարհային պատմության կերպարներ, խտություն/հագեցվածություն ու պատմական անցյալի խրթինություն: Խորայի տարածության կոմպոզիցիոն (հորինվածքային) խտությունը այդ տարածությունը դարձնում է միաժամանակ և վե՛հ, և շարքային այցելուների համար առավելապես հարմարավետ: Խորան, վիպական տարածության նմանությամբ, ներառում է ժողովրդական ժխորից, խիտ հարևանությունից եկող ինչ-որ բան՝ անմիավորելի միավորում: Խորան անգետեղելի գետեղարան է: Չենց այս տիեզերական ուժն ու միաժամանակ ժողովրդական համակեցության ժխորն է

though its external meaning was repeatedly affected by political decisions, it managed to keep alive the internal energy of the space. In the spring of 2018, when I came up with the ideas of this article and this research project, Chora still functioned as a museum, but was partially closed for renovation, which made it impossible to visit all the sections of the monastery. In 2020-21, when the article was finished, and the book *Balat: Living Together* was almost ready for publication, the Turkish government formally converted Chora into a mosque like the Hagia Sophia a bit earlier. The peak of Balat's fantasy was again obscured by a veil of coerced forgetting. But the streets of the quarter were still lively; Balat continued to live its own life in a constant stream of recalling and forgetting the memory of "living together."

*In this article, the photographs on pages 40-41, 52, 55, 60, 62 and 64 are acquired from the Ara Güler Museum. Photo credit: Ara Güler, 1990s-2000s, Ara Güler Dođuş Sanat ve Müzecilik AŞ, İstanbul.*

Խորան դարձնում նախալեզու և Բալաթի նախատիպ: Վաղուց այլևս Ոսկեդշյուրով չեն լողում օտարերկրյա նվաճողների նավերը, իսկ քարավանները չեն անցնում-դառնում Բալաթի եզրով: Բալաթը վաղուց է վերածվել կենտրոնի՝ պահպանելով տեղի հիշողությունը, ծայրամասի հմայքի մասին իր հուշը: Տեղի հենց այդ հիշողությունն է կանչում բոլոր նրանց, ովքեր փորձում են տիրապետել նախալեզվի պատրանքին կամ տեղափոխվում են այստեղ՝ փորձելով պահպանել լեզվաստեղծ այս վայրը, դարեդար չլռող բազմաձայնության տարածքը:

Խորայի կրիստեայական վերամեկնաբանությունն օգնում է հասկանալ լեզվի նախալեզվական հիմքերը, որտեղ պոետական լեզուն տրոհվում է երկու տարածության, հանգում ցանկացած արտահայտության երկվության ու դրա հիման վրա ստեղծում լեզվի կշանաբանությունը: Եթե Կրիստեայի համար կարևոր է գենոտեքստի և ֆենոտեքստի գաղափարը, ապա, օրինակ, Միշել Սերան խորան հիմքի բազմակիության կատեգորիայի մեջ է ներառում՝ խորայի հիմնական սահմանում դարձնելով հիմքը<sup>1</sup>: Ֆունդամենտի բազմակիությունը Սերայի մոտ արտահայտվում է կրկնվելու, վերակրկնօրինակվելու ներուժով. «*is recurrent. It returns, like a refrain*»: Բալաթի խորայական հիմքը դրսևորվում է ծայրամասում ոչ ֆալիկ տարածությունում, քաղաքից անդին կամ նրա արվարձանում գտնվելու *տոպոններով*, ինչպես նաև ինտեգրացիայով՝ ֆալիկ կենտրոնի կողմից չներառված ամբողջի ներառմամբ: Կրիստեայի լեզվասեմիոտիկայից Սերայի փիլիսոփայությանն անցնելու պարագայում այս բոլոր *տոպոններն*՝ ակնհայտորեն վերածվում են տրանսդիսցիպլինար մետալեզվի, որով և կարելի է բացատրել ներգաղթյալներին ու ազգային փոքրամասնություններին այդչափ պատրաստակամ ընդունող Բալաթի ֆենոմենը: Այս իսկ պատճառով, ներկայում մամուլում հաճախ է հիշատակվում, որ Բալաթը երեք թաղամասից մեկն է, ուր տեղափոխվում են արվեստագետներն ու հիփոթեթերները: Նախալեզվի պատրանքը, նախագաղափարախոսական տարածությունը մարմնավորվում են *ուրիշ* տարածության եներգիայով և ֆալիկ կենտրոնից խուսափելու փորձերով, որ պատճառ են դառնում վերաբնակվելու (*re-habitat*) միտման և դրա շուրջ մեդիադիսկուրսի առաջացման:

Խորայի սրբազան տարածության հատուկ կազմակերպվածությունը կամ դրա հիերոտոպիան<sup>2</sup> արտացոլված է հենց վանքի խճանկարային պատերին, ասես գրություններն ու պատկերները, վանքի ընդհանուր պատմողական կտավի բովանդակությունը լինելով, նաև ինքնամեկնաբանության գործառույթ են իրականացնում: Այսպիսով, ծրագրային արտահայտություններից մեկը, որ

<sup>1</sup> Watson, J. 2017. "The Urban Chora, from Pre-Ancient Athens to Postmodern Paris." China Media Research, 13(4), 32.

<sup>2</sup> Лидов, А.М. 2009. Иеротопия: пространственные иконы и образы-параллели в византийской культуре. – М.: Дизайн. Информация. Картография: Троица, 22-23.



<sup>3</sup> Դերիդան, ասես պատմական եզրի կրիտիկայի մեկնությունը վիճարկելով, ձգտում է խորան «ազատագրել» գոյի հետ որոշակի համարությունց կամ հարաբերակցությունց, այդ բովու՝ Խորայի կանացի Լույսան հետ: Ըստ Դերիդայի՝ Խորան միմյայն ձգտում է սեփական ռեֆերենտության բացակայության ցուցադրման, ցանկացած ձևի բացաման, այսինքն՝ ամորֆության /amorphous/, ինչպես գրում է փիլիսոփան: Si' u Derrida, J. *Khôra*, Paris, Galilée, 1993, 28:

Խորայի այցելուները կարող են տեսնել Էկզոնարտեքսի մուտքի մոտ՝ Աստվածամոր պատկերի կողքին, ասում է՝ «անզետեղելի զետեղարան»: Այս արտահայտությունը հիմնարար է Թեոդոր Մետոխիտեսի նախագծի համար, որը սկիզբ է դրել մի պատումի, որտեղ միաժամանակ ներկա են թե՛ երկրային, թե՛ երկնային աշխարհների ներկայացուցիչները, որտեղ միաժամանակ խոսվում է և՛ ֆիզիկական տարածության (վանքի), և՛ մեկ այլ՝ տարածականությամբ չչափվող (Հիսուսը մոր արգանդում) տարածության մասին, ինչը, ըստ Դերիդայի<sup>3</sup>, չի տրվում ձևի փոխակերպման:

Եթե Խորայի անունը մեզ ստիպում է խորհել Բալաթի տարածության ձևավորման նախալեզվական Էներգիայի մասին, ապա շենքի պատմական ուղին վերածվում է ողջ թաղամասի յուրատիպ պատմության՝ ասես տարածելով վանքի պատումը ներքև, դեպի ջրերը, լցնում է իրենով Բալաթի ողջ տարածությունը՝ ընդհուպ մինչև Ոսկեդջուրի ափը: Մ դարում հիմնված վանքը բազմիցս վերականգնվել է, քաղաքական որոշումներով պայմանավորված՝ քանիցս փոխել է իր արտաքին նշանակությունը՝ պահպանելով տարածության ներքին Էներգիան: 2018թ.-ի գարնանը՝ այն օրերին, երբ հղացվում էր սույն հողվածի ու «Բալաթ. ապրել միասին» գրքի գաղափարը, Խորան գործում էր որպես թանգարան և գտնվում էր մասնակի վերականգնողական աշխատանքների փուլում, ինչով պայմանավորված՝ վանքի ոչ բոլոր շինություններն էր հնարավոր այցելել: 2020-2021 թթ.՝ այն օրերին, երբ հողվածն իր ավարտին հասցվեց, իսկ «Բալաթ. ապրել միասին» գիրքը գրեթե պատրաստ էր հրատարակման, թուրքական իշխանությունների որոշմամբ Խորային, ինչպես և դրանից ոչ վաղ՝ Սուրբ Սոֆիայի տաճարին, մգկիթի կարգավիճակ տրվեց: Բալաթյան բարձունքի ֆանտազմը վերստին պատվեց արհեստական մոռացության քողով, բայց և այնպես թաղամասի փողոցներում կյանքը շարունակվեց, Բալաթը շարունակեց ապրել՝ այսրոպեական ու հանապազօրյա մտաբերման և «միանակյանքի» մասին հիշողության կորստի հորձանուտում:

*Սույն հողվածում 40-41, 52, 55, 60, 62 և 64 էջերում  
օգտագործված լուսանկարները ձեռք են բերվել Ara  
Güler Museum-ից: Լուսանկարները՝ Արա Գյուլերի,  
1990-2000-ականներ, Ara Güler Doğuş Sanat ve  
Müzecilik AŞ, İstanbul.*







*Տիգրան Ամիրյան*

**Անգետեղելիի զետեղարանը.**

նրթեր Բալաթի տարածական հիշողության մասին

## BIBLIOGRAPHY / ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Barthes, R. 1970. "Sémiologie et urbanisme in *L'Architecture aujourd'hui*, n° 153, Paris, 11-13.
- Barthes, R. 2012. *How to Live Together. Novelistic Simulations of Some Everyday Spaces*. Columbia University Press.
- De Certeau, M. 1984. *The Practice of Everyday Life*. University of California Press.
- Deleon, J. 1991. *Ancient Districts on the Golden Horn: Balat, Hasköy, Fener, Ayvansaray*. Gözlem Gazetecilik Basın ve Yayın.
- Derrida, J. 1995. *On the Name*. Stanford University Press.
- Guttstadt, C. 2013. *Turkey, the Jews, and the Holocaust*. Cambridge University Press
- Kristeva, J. 1974. *La révolution du langage poétique*, Collection Tel Quel, Paris, Seuil.
- Kristeva, J. 1969. *Séméiotikè. Recherches pour une sémanalyse*. Paris, Seuil.
- Leal, A.K. 2010. *The Balat District of Istanbul : multiethnicity on the Golden Horn, in Architecture and memory of the minority quarter in the Muslim Mediterranean city*. Cambridge, MA : Harvard Univ Graduate School of Design, 175-209.
- Şaul, E. 2012. *From Balat to Bat Yam: memories of a Turkish Jew*, Libra Books, İstanbul.
- Varol-Bornes M. 2008. *Le judéo-espagnol vernaculaire d'Istanbul*. Bern, Berlin, Bruxelles, Frankfurt am Main, New York, Oxford, Wien.
- Varol-Bornes, M. 1988. "Balat, vieille communauté juive d'Istanbul." *Revue des Études Juives*. 495-504.
- Varol-Bornes, M. 1994. "The Balat Quarter and Its Image: A Study of a Jewish Neighborhood in Istanbul" in Avigdor Levy (ed.). *The Jews of the Ottoman Empire*. Washington D. C. 633-646.
- Morisset, L.K. 2010. "Patrimony, the Concept, the Object, the Memory, and the Palimpsest: A View from the History of Architecture." *The Journal of the Society for the Study of Architecture in Canada*, 53-62
- Niyego, D. 2014, 2 Temmuz. "Yosef Sevi'nin eski Balat'ı", *Şalom*, <https://goo.su/aec0>
- Olt, M. 2016. "The Balat Life is Really Unique". *Narratives Of Place And Belonging in The Historical Fener-Balat District Of Istanbul*. Kadir Has University.
- Watson, J. 2017. "The Urban Chora, from Pre-Ancient Athens to Postmodern Paris." *China Media Research*, 13(4)
- Yoker, M. 2012. *Kalimera Fener, şalom Balat: bizim mahalle. İstanbul : Çatı Kitapları*.
- Zarinebaf, F. 2011. *Crime and Punishment in Istanbul: 1700 - 1800*. University of California Press.
- Джеймисон, Ф. 2006. Репрезентация глобального. Текст доклада, прочитанного на конференции «Современные медиа: теория, история, практика». Опул. в «Синий диван», цит. По онлайн версии [Jameson, F. 2006. "Representation of Globalization" paper delivered at the Moscow conference "Contemporary Media—History, Theory, Practice.": <https://polit.ru/article/2010/04/05/jameson/>]
- Иванов, С. А. 2011. *В поисках Константинополя. Путеводитель по византийскому Стамбулу и окрестностям*. – М.: Вокруг Света, [Ivanov, S. 2011. *Searching for Constantinople. A guide in Byzantine Istanbul and its vicinity*. Moscow].
- Лидов, А. М. *Иеротопия: пространственные иконы и образы-парадигмы в византийской культуре*. – М.: Дизайн. Информация. Картография: Триона.
- Մելգոն-Ասատուր 1931. *Երեքդարեան ւրանմութիւն Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ Պալատը* (1627-1931), Կ.Պոլիս.



# **AN EVALUATION OF THE DISINTEGRATION OF MULTICULTURALISM IN THE DISTRICT OF BALAT AND ITS COMMERCIAL FABRIC UNDER THE INFLUENCE OF NINETEENTH CENTURY TRANSFORMATIONS**

It is known that the Golden Horn, as a natural harbor, accommodated commercial and port functions of Istanbul, and contributed to the development of the region since the early days of settlement in the city. The multicultural and multifunctional structure that grew along the coasts of the Golden Horn and its surroundings started to change in the second half of the 19th century. In this context, the factors driving the change and transformation of Balat, a unique district in Haliç (the Golden Horn), are studied.

Consisting of multiple different neighborhoods, the District of Balat was a small settlement on the coast of the Golden Horn that was named "Balat Karabaş Neighborhood" during the early Republican Era. The borders of the neighborhood framed only a small part of Balat which grew over the years with ties between its communities and a sense of belonging. "Balat Neighborhood" was established by the decision of the Istanbul Metropolitan Municipality in 2009. However, the neighborhood was created by joining five units and remapping the previous boundaries of the District of Balat. Places, including Yavuz Selim Mosque and Çukurbostan on upper areas of the district, were incorporated in the Balat Neighborhood, while the historic Balat Gate and Balat Bazaar remained within the borders of the Ayvansaray Neighborhood. This structure should not apply to districts; the borders are usually intertwined and they are more than mere physical boundaries of the area. The location of the District of Balat never changed over centuries. Hence, the research focuses on the borders determined during the 19th century.

## 19-րդ դարի փոխակերպումների ազդեցության տակ Բալաթի բազմամշակութայնության քայքայման և առևտրային կառուցվածքի գնահատումը

Յայտնի է, որ Ոսկեդջյուրը՝ որպես բնական նավահանգիստ, ստանձնել է Ստամբուլի առևտրային և նավահանգստային գործառույթները, ինչպես նաև նպաստել է տարածաշրջանի զարգացմանը քաղաքում բնակչության հաստատման առաջին իսկ օրերից: Ոսկեդջյուրի ափերի և նրա շրջակայքի երկայնքով առաջացած բազմամշակույթ և բազմագործառույթ քաղաքային պատկերը սկսեց փոխվել 19-րդ դարի երկրորդ կեսից ի վեր: Այս համատեքստում ուսումնասիրության են արժանի Բալաթի՝ հասարակական կառուցվածքով Յալիչում (Ոսկեդջյուր) եզակի թաղամասի փոփոխմանը և փոխակերպմանը հանգեցրած գործոնները:

Թուրքիայի «Ժողովրդահանրապետական» կուսակցության կառավարման առաջին տարիներին Բալաթը, կազմված լինելով տարատեսակ այլ թաղամասերից, Ոսկեդջյուրի ափին մի փոքր բնակավայր էր՝ հայտնի «Բալաթ կարաբաշ թաղամաս» անվամբ: Այդ ժամանակաշրջանի թաղամասի սահմաններն ընդգրկում էին այժմյան Բալաթի միայն մի փոքր մասը, որը տարիների ընթացքում ընդլայնվում է հարակից համայնքների հետ կապերի շնորհիվ: 2009թ.-ին Ստամբուլի քաղաքապետի որոշմամբ՝ «Բալաթ»-ը թաղամասի կարգավիճակ է ստացել: Թաղամասը, սակայն, ստեղծվեց հինգ միավորի կցմամբ՝ հակասելով Բալաթի շրջանի նախկին սահմաններին: Յուսիսային մասի տարածքները՝ ներառյալ Յավուզ Սելիմ մզկիթն ու Չուբուրբոստանը, ընդգրկվեցին Բալաթ թաղամասի վարչական տարածքում, մինչդեռ Բալաթի պատմական դարպասն ու շուկան մնացին Այվանսարայ թաղամասի սահմաններում: Սակայն սահմանները հաճախ միահյուսված են, և դրանք ավելին են, քան տարածքի սոսկ ֆիզիկական սահմանագծեր: Դարեր շարունակ Բալաթ շրջանի աշխարհագրական դիրքը երբեք չի փոփոխվել: Այդ իսկ պատճառով այս հետազոտությունը հիմնվում է 19-րդ դարի ընթացքում սահմանված տարածքի վրա:

Urban transformation activities and the dynamics that led to the transformation of the District of Balat after the proclamation of the Imperial Edict of Reorganization (1893), which is the era of rapid and peak changes in the 19th century, are examined. The change of the district is explained based on the physical and social data. In the first part, the spatial structure of Fener before the 19th century is identified. In the second part, the changes at the center of the District of Balat as well as on the coasts of the Golden Horn after the proclamation of the Imperial Edict of Reorganization are addressed under the titles of "industrialization", "fires and reorganization of the urban fabric" and "resettlement of the population." Visuals such as maps, engravings, and photographs depicting the studied period as well as written resources are utilized for the research. The evaluation of the change and transformation of the historic District of Balat and the relevant urban and social dynamics along with their multidimensional impacts makes this study unique.

The District of Balat is situated on the southern coast of the Golden Horn in the Historic Peninsula, between Fener and Ayvansaray, rising towards the inland, and Eğrikapı. Located within the Fatih Sub-Province, the neighborhood is limited by the Mürsel Paşa Road on the north, extending along the Golden Horn. Ayan and Vodina Roads are the main axes that divide Balat into two parts in the east-west and north-south directions. Starting from the Vodina Road, Kürkçü, Sultan Çeşmesi and Salma Tomruk Roads lead to Edirnekapı on the south and Fener on the east (Figure 1).<sup>1</sup>

<sup>1</sup> Deleon, J. 2004. *Balat ve Çevresi: İstanbul'un Fethi ve Halîç Semleri*, Remzi Kitabevi, İstanbul, 36.

## **BALAT BEFORE THE NINETEENTH CENTURY**

Taking its final form with the additions made during the Byzantine Period between the fourth and eleventh centuries, the Golden Horn has gates that open to the sea and that are connected to the piers. Porta Basailique (The Imperial Gate – La Puerto) between the Kynegon (Avcılar – Küngöz) Gate and Porta Fenari (Fener Gate) is known to be the gate of the Palace of Blachernae which Balat is believed to be named after. It was called the Balat Gate during the Ottoman



<sup>1</sup> Deleon, J. 2004 . *Balat ve Çevresi: İstanbul'un Fethi ve Halic Semtleri*. Remzi Kitabevi, İstanbul, 36.

Հետազոտության առարկա են քաղաքային փոխակերպման գործողությունները և դիսամիկան, որոնք նպաստեցին կայսերական վերակազմակերպման հրովարտակի (Գյուլհանեի հաթթը շերիֆ) հռչակմանը (1839թ.), որը 19-րդ դարի սրընթաց և շրջադարձային փոփոխությունների շրջանի մեկնարկն է համարվում: Շրջանի փոփոխությունը բացատրվում է՝ հիմնվելով ֆիզիկական և սոցիալական տվյալների վրա. առաջին մասում սահմանվում է Ֆեների մինչև 19-րդ դարի տարածական կառուցվածքը, երկրորդ մասում խոսվում է Բալաթի շրջանի կենտրոնում և կայսերական վերակազմակերպման հրովարտակի հռչակումից հետո Ոսկեղջյուրի ափերին կատարված փոփոխությունների մասին՝ «Արդյունաբերականացում», «Յրդեհներ և քաղաքային հյուսվածքի վերակազմավորում» և «Բնակչության վերաբնակեցում» վերնագրերի ներքո: Հետազոտության կատարման համար օգտագործվել են գրավոր աղբյուրներ, առավելապես՝ տեսողական նյութեր, ինչպիսիք են՝ քարտեզները, փորագրությունները և լուսանկարները, որոնք օգնում են պատկերացում կազմել ուսումնասիրված ժամանակահատվածի մասին: Այս ուսումնասիրությունը եզակի են դարձնում Բալաթի պատմական շրջանի փոփոխման և փոխակերպման գնահատումը, ինչպես նաև նույն համատեքստում քաղաքային և հասարակական փոփոխությունների դիսամիկան՝ բազմաչափ և համատեղ ձևավորված ազդեցություններով հանդերձ:

Balat, which had one of the densest Jewish populations for centuries, was home to Greeks, Armenians, and Muslims who formed their own settlements with their own monumental buildings. Balat Bazaar, which is a common space for different ethnic and religious groups and different occupations at the intersection of Ferruh Kethuda Mosque, Surb Hreshdagabed Armenian Church, and Yanbol Synagogue, carries the traces of three big congregations that co-existed in the area. Having its golden age in the 17th century (in terms of sociocultural and socioeconomic characteristics), the area gradually lost its significance since the 19th century. The period following the Imperial Edict of Reorganization, administrative organization, and social texture of the Ottoman cities went through changes, which can be observed in urban spaces; Balat started to lose its conventional functions and unique social order, and new functions and building types emerged in line with those changes. The central premise of this article is that the developments in the physical and social texture occurred simultaneously and they have a causal relationship. The main causes of the changes include the decreased commercial vitality on the coasts of the Golden Horn, prioritization of industrial activities, the 1894 earthquake, several major fires, and the following urban developments. Hasköy, Kuzguncuk, Ortaköy, Galata, and Pera as a consequence turned into growing settlements, and

<sup>1</sup> Karmi, İ. 1992. *Jewish Sites of İstanbul*, 75.

<sup>2</sup> Varol, M. 1989. *Balat: Faubourg juif d'Istanbul*, 25-33.

<sup>3</sup> Նույն տեղում:

կրթությունն ստանալու փաստը վկայում է թաղամասի տնտեսական ոչ բարվոք պայմանների մասին 19-րդ դարի վերջին: Քանի որ Բալաթի պետական դպրոցում աղջիկների համար Նախատեսված դասեր չկային, Գալաթայի դպրոց հաճախող աղջիկների ընտանիքները տեղափոխվում են Գալաթայի շրջան:<sup>1</sup> Բալաթում կրթության որակը բարձրացրած հրեական միության դպրոցներն ավերվեցին 1911-թ.-ի հրդեհների ժամանակ, ինչի հետևանքով աշակերտներից ոմանք տեղափոխվեցին Յաքոյոյ, իսկ մյուսները՝ Գալաթայի դպրոց:<sup>2</sup> 19-րդ դարում Բալաթում ու Ոսկեղջյուրի ափերին մահմեդական և ոչ մահմեդական տարածքները կտրուկ չեն փոխվում, այլ կորցնում են իրենց գրավչությունը: Յարուստները տեղափոխվում են այլ՝ նոր զարգացող բնակավայրեր, իսկ Ոսկեղջյուրի շուրջ գտնվող թաղամասերը 20-րդ դարի սկզբին տուն դարձան հիմնականում միջին կամ ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Բալաթից տեղաշարժեր են սկսվում հատկապես Գալաթա թաղամաս: Թեպետ 1920-ականներին արթնության և աշխուժացման կարճ ժամանակահատված է լինում՝ այն չի ստիպում հարուստ առևտրականներին չտեղափոխվել Կուզունջուկ՝ ժամանակաշրջանի հայտնի շրջաններից մեկը, և Գալաթա, որտեղ ապրում էին հարուստ հրեաները:<sup>3</sup>

## Ամփոփում


Դարեր շարունակ հրեաներով ամենախիտ բնակեցված թաղամասերից մեկում՝ Բալաթում, ապրում էին հույներ, հայեր և մահմեդականներ, ովքեր հիմնում էին իրենց բնակավայրերը՝ կերտելով յուրօրինակ կոթողային շենքեր: Բալաթի շուկան, որը միավորում է տարբեր էթնիկ և կրոնական խմբերի, ինչպես նաև տարբեր զբաղմունքների տեր մարդկանց Ֆերրուհ Քեթիյուդա մզկիթի, Սուրբ Յրեշտակապետաց հայկական եկեղեցու և Յանբուլ սինագոգի խաչմերուկում, կրում է երեք մեծագույն համայնքի համակեցության հետքերը: 17-րդ հարյուրամյակը սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական առումներով ոսկեդար էր տարածքի համար, որը, սակայն, 19-րդ դարի ընթացքում աստիճանաբար կորցնում է երբեմնի նշանակությունը: Գյուլիանեի հաթթը շերիֆին հաջորդած շրջանում օսմանյան քաղաքների վարչական կառուցվածքը և հասարակական կյանքը ենթարկվում են փոփոխությունների, որոնք կարելի է դիտարկել քաղաքային տարածքներում: Կարելի է նկատել, որ Բալաթը՝ Ոսկեղջյուրի ափերի մի մասը կազմող շրջանը, սկսում է կորցնել իր պայմանական գործառույթները և եզակի հասարակական կառույցը, ու այդ փոփոխություններին զուգահեռ, ի հայտ են



Figure 7: The map demonstrates the arrangements, street expansions, and the new developments after the fires in Inner Balat in 1877 (Atatürk Library - Hrt\_Gec\_000947).

Պատկեր 7՝ քարտեզ, որը ցույց է տալիս 1877թ. -ին Ներքին Բալարի հրդեհներից հետո տեղի ունեցած փոփոխությունները, փողոցների ընդարձակումները և նոր զարգացումները (Աթաթուրքի գրադարան - Hrt\_Gec\_000947):





**Figure 8:** The map shows the Street expansions and new developments within and outside the city walls near the coastline in 1914 (Atatürk Library - Hrt\_Gec\_001178).

**Պատկեր 8**՝ քարտեզում ներկում են 1914 թ. -ի քաղաքի պահպաններից ներս և դուրս առափնյա գոտու ստապակայրում փողոցների ընդարձակումները և նոր զարգացումները (Աթաթուրքի գրադարան - Hrt\_Gec\_001178):

գալիս նոր գործառույթներ և շենքերի տեսակներ: Այս ուսումնասիրության հիմնական գաղափարն այն է, որ ճարտարապետական և սոցիալական հյուսվածքների զարգացումներն ընթացել են միաժամանակ, և ունեն պատճառահետևանքային կապ: Փոփոխությունների հիմնական պատճառներն են՝ Ոսկեշյուրի ափերին առևտրի ոլորտի անկումը, արդյունաբերական գործունեության առաջնահերթություն տալը, 1894թ.-ի երկրաշարժը, մի շարք խոշոր հրդեհներ և քաղաքաշինական հետագա զարգացումները: Զաղաքային հյուսվածքի փոփոխությունների պայմաններում Յասըյոյը, Կուզգունջուկը, Օրթաքյոյը, Գալաթան և Պերան վերածվեցին բարգավաճող բնակավայրերի, իսկ հրեական բնակչությունն ու ոչ մահմեդական այլ համայնքներ լքեցին Բալաթը: Թաղամասում առևտրի նվազման և միաժամանակ արդյունաբերականացմանն ուղղված ջանքերի հետևանքով առափնյա հատվածի բնակելի տարածքներն

the Jewish population, as well as other non-Muslim communities, moved from Balat.

Due to the decline of Balat's commercial activities on the one hand and industrialization efforts on the other, residential areas on the coasts gradually vanished, and it was unlikely to take advantage of maritime transport opportunities. These developments did not have a dramatic impact on businesses extending to the Balat Bazaar and Ayvansaray. However, wealthier people moved towards the northern parts of the city.

*Islahat-ı Turuk Komisyonu* (The Committee for Improvement of Roads) reorganized the fire grounds in Balat through the *Turuk ve Ebniye Nizamnamesi* (Regulations on the Roads and Buildings) dated 1863. The fact that Balat was densely populated by non-Muslims is one of the main reasons that it was made a primary target for development after the fires. Street expansions and grid plan subdivision in Inner Balat and Kastorya areas can be seen in the Archived documents. For instance, in the case of Inner Balat, it is the loss of old texture around the Armenian Church, Ferruh Kethuda Mosque, and the Greek Church, and as to the Kastorya area, a grid-type subdivision with strict geometry was adopted. The changes within the scope of modernization and urban reform activities failed to harmonize with the surroundings and improve social fabric.

Analyzing the transformation of the coasts of the Golden Horn and Balat in the 19th century, it can be said that the traditional neighborhood units that grew around monumental religious buildings disappeared and new models emerged in line with the economic needs of the population. Traditional congregations started to disintegrate, making the social status more significant for coexistence than the ethnic-religious divide. The increasing number of factories between the coasts of Unkapanı and Balat also impacted social classes, the number of low-income families in the area also increased, whereas people with higher incomes moved to newly developed settlements. This created an urban structure, where various religious and ethnic groups intermingle forming a multicultural settlement.

անհետացան, ու արդեն ահևար էր դադարեցնել ծովային փոխադրումների, պահեստների և այլնի սրընթաց աճը: Այս զարգացումները բացասական ազդեցություն չունեցան Բալաթի շուկայում և Արվանսարայում գործող բիզնեսների վրա: Սակայն առավել ունևոր մարդիկ տեղափոխվեցին քաղաքի հյուսիսային հատվածներ: Ծանապարհների բարելավման կոմիտեն (*İslahat-ı Turuk Komisyonu*) վերակազմավորեց Բալաթի հրդեհաշիջման վայրերը՝ 1863 թ.-ի Ծանապարհների և շենքերի մասին կարգավորումների (*Turuk ve Ebriye Nizamnamesi*) նախագծի շրջանակներում: Բալաթի՝ հիմնականում ոչ մահմեդականներով բնակեցված լինելու փաստը համարվում է թաղամասի՝ հրդեհներից հետո զարգացման ծրագրերի գլխավոր պատճառներից մեկը: Ներքին Բալաթում և Կաստորիայում փողոցների ընդարձակումների և հիպոդամյան հատակագծի մի մասը կարելի է գտնել արխիվացված փաստաթղթերում: Օրինակ՝ Ներքին Բալաթի դեպքում հայկական եկեղեցու, Ֆերրուհ Զեթիյուղա մզկիթի և հունական եկեղեցու շուրջ պատմական հյուսվածքի կորուստն է, իսկ Կաստորիայի դեպքում խիստ երկրաչափական ցանցային հատակագիծը: Արդիականացման և քաղաքաշինական բարեփոխումների շրջանակներում, մի քանի սահմանափակ տարածքում տեղի ունեցած զարգացումներն ի վիճակի չէղան միախառնվել միջավայրի հետ՝ այսպիսով չկարողանալով իրականացնել սկզբնական նպատակը՝ հասարակական կառուցվածքը բարելավելը:

Վերլուծելով Ոսկեդջյուրի և Բալաթի ափերի զարգացումը՝ կարելի է ասել, որ 19-րդ դարի Ստամբուլում բնակչությանը հավաքող ավանդական թաղամասային միավորները, որոնք կազմվում են կոթողային, կրոնական շենքերի շուրջ, անհետացել են, և ի հայտ են եկել նոր՝ մարդկանց տնտեսական կարիքների համահունչ մոդելներ: Ծխական ավանդական գաղափարը սկսեց քայքայվել՝ համակեցության համար սոցիալական կարգավիճակն ավելի կարևոր դարձավ, քան Էթնիկ-կրոնական բաժանումը: Երբ Ունքափանի և Բալաթի ափերի գործարանների քանակն աճեց, տարածքում ցածր եկամուտով ապրող մարդկանց թիվը նույնպես աճեց, քանի որ բարձր եկամուտ ունեցող մարդիկ տեղափոխվել էին նորակառույց և հարմարավետ բնակավայրեր: Այս իրադրությունը բազմամշակութային բնակավայրը վերածեց մի քաղաքային կառուցվածքի, որտեղ խառնվում են տարբեր կրոնական և էթնիկ խմբեր:

## BIBLIOGRAPHY / ԳՐԱՎՆԱԴՅՈՒՄ

- Akın N. 1994. "Balat", *Dünden Bugüne İstanbul Ansiklopedisi* içinde, Türkiye Ekonomik ve Toplumsal Tarih Vakfı, İstanbul, 2: 10-12.
- Akın, N. 1998. *19. Yüzyılın İkinci Yarısında Galata ve Pera*, Literatür, İstanbul.
- Deleon, J. 2004. *Balat ve Çevresi: İstanbul'un Fethi ve Haliç Semtleri*, Remzi Kitabevi, İstanbul.
- Dirimtekin, F. 1956. *Fetihten Önce Haliç Surları*, İstanbul Enstitüsü, İstanbul.
- Eyice, S. 1997. "Haliç", *İslam Ansiklopedisi* içinde, Türkiye Diyanet Vakfı, İstanbul, 15: 264-280.
- Eyice, S. 2010. *Tarih Boyunca İstanbul*, Etkileşim Yayınları, İstanbul.
- Eyüpgiller, K. K. 1999. "19. Yüzyıl Osmanlı Kentinde Etnik Yapı ve Fiziksel Çevre", *Mimarlık*, 287: 49-56.
- Güleriüz, N. 1992. *İstanbul Sinagogları*, Ajans Class, İstanbul.
- Hovhannesyan, S. 1996. *Payitaht İstanbul'un Tarihçesi*, çev. E. Hançer, Tarih Vakfı Yurt Yayınları, İstanbul.
- İnciyan, P. Ğ. 1976. *18. Asırda İstanbul*, çev. H. D. Andreasyan, İstanbul Fetih Cemiyeti İstanbul Enstitüsü Yayınları 43, İstanbul.
- Karmi, İ. 1992. *Jewish Sites of İstanbul*, ISIS Press, İstanbul.
- Koçu, R. E. 1960a. "Balat", *İstanbul Ansiklopedisi* içinde, İstanbul Ansiklopedisi ve Neşriyat Kollektif Şirketi, İstanbul, 4: 1961-1965.
- Koçu, R. E. 1960b. "Balat Sahili", *İstanbul Ansiklopedisi* içinde, İstanbul Ansiklopedisi ve Neşriyat Kollektif Şirketi, İstanbul, 4: 1974.
- Kömürçüyan, E. Ç. 1988. *İstanbul Tarihi: 17. Asırda İstanbul*, Eren Yayıncılık, İstanbul.
- Kuban, D. 2010. *İstanbul Bir Kent Tarihi*, 4. Baskı (1. Baskı 1996), Tarih Vakfı Yayınları, İstanbul.
- Mantran, R. 1986. *17. Yüzyılın İkinci Yarısında İstanbul*, cilt II, çev. M. A. Kılıçbay, E. Özcan, V Yayınları, Ankara.
- Müller-Wiener, W. 1992. "15-19. Yüzyılları Arasında İstanbul'da İmalathane ve Fabrikalar", *Osmanlılar ve Batı Teknolojisi* içinde, haz. E. İhsanoğlu, İstanbul Üniversitesi Edebiyat Fakültesi, İstanbul, 53-120.
- Müller-Wiener, W. 2001. *İstanbul'un Tarihsel Topoğrafyası*, çev. Ü. Sayın, Yapı Kredi Yayınları, İstanbul.
- Ortaylı, İ. 1998, 13 Mart. "Anılar coğrafyası kıtalara yayılan Semt: Balat", *Cumhuriyet*, 16-17. <https://core.ac.uk/download/pdf/38302471.pdf>
- Ökçün, A. G. 1997. *Osmanlı Sanayii: 1913, 1915 Yılları Sanayi İstatistiki*, Devlet İstatistik Enstitüsü, Ankara.
- Schiele, R. ve Müller-Wiener, W. 1988. *19. Yüzyılda İstanbul Hayatı*, Roche, İstanbul.
- Tekeli, İ. 1985a. "Tanzimat'tan Cumhuriyet'e Eğitim Sistemindeki Değişmeler", *Tanzimat'tan Cumhuriyet'e Türkiye Ansiklopedisi* içinde, İletişim, İstanbul, 2: 456-475.
- Tekeli, İ. 1985b. "Tanzimat'tan Cumhuriyet'e Kentsel Dönüşüm", *Tanzimat'tan Cumhuriyet'e Türkiye Ansiklopedisi* içinde, İletişim, İstanbul, 4: 878-890.
- Tuğlacı, P. 1994. *Ermeni Kiliseleri*, Pars Yayın, İstanbul.
- Varol, M. 1989. *Balat: Faubourg juif d'İstanbul*, ISIS Press, İstanbul.
- Yalçın, E. 1992. "Balat from the 20's to 60's: some observations on the social structure and changes", *Observatoire Urbain d'İstanbul: Lettre d'Information*, 3: 15-25.



## UNITY FROM STRUGGLE: THE CIBALI TOBACCO FACTORY WORKERS AND THEIR STRIKES

Many factories, storages, and small-scale industrial workshops were constructed on both sides of the Golden Horn in the late nineteenth and early twentieth centuries. Balat, which is located on the western bank, was a heavily industrialized area. It had storages for tobacco and foods, and factories dedicated to the production of flour, soap, soda, sesame,<sup>1</sup> and wool yarn.<sup>2</sup> Moreover, smaller industrial and artisan shops were to be found in Balat in the beginning of twentieth century.<sup>3</sup> Furthermore, the Ottoman Fez Factory and the Cibali Tobacco Factory, two larger industrial organizations, were near Balat. The industrialization of Balat and its surroundings inevitably became one of the main reasons for changes in its demographic structure. While well-off inhabitants of the region started to move to Pera, Tarabya, Kuruçeşme, Arnavutköy, Kadıköy, and Şişli, low ranking civil servants, workers, artisans, and small traders remained in the region.<sup>4</sup> This article attempts to show how factory workers from different religions, ethnic backgrounds, and nations lived together in Balat at the beginning of the twentieth century. This study will specifically analyze strikes in the Cibali Tobacco Factory during which solidarity was created among workers despite their backgrounds.

<sup>1</sup> The name of the sesame factory was *Hacı (Hoca) Ali Efendi Tahin Fabrikası*.

<sup>2</sup> The wool yarn factory was called *Süreyya Bey Yün İpliği Fabrikası*.

<sup>3</sup> Köksal, T. G. 2005. *İstanbul'daki Endüstri Mirası İçin Koruma ve Yeniden Kullanım Önerileri*, doctoral thesis, İstanbul Teknik Üniversitesi, İstanbul, 243-249.

<sup>4</sup> Yılmaz, G. I. 2008. *Haliç Kıyı Şeridinde Sanayileşme ile Ortaya Çıkan Kentsel Dönüşüm*, unpublished doctoral thesis, Yıldız Teknik Üniversitesi, İstanbul, 176.

### THE CIBALI TOBACCO FACTORY

The first monopoly over the production, buying, and selling of tobacco in Istanbul was given to two Greek bankers - George Zarifi and Christaki Zografos - in March 1872. After a few months, however, they asked for the abrogation of the monopoly rights because they realized that the company was less profitable than expected. In October 1872, therefore, the Ottoman government established the Tobacco Monopoly Administration (*Inhisar-ı Duhan İdaresi*) as a state-

# Պայքարը ստեղծում է միասնություն. «Սիբալի» ծխախոտի գործարանի աշխատողներն ու նրանց գործադուլները

Ուշ 19-րդ և վաղ 20-րդ դարերում բազում գործարաններ, պահեստներ և արդյունաբերական փոքր արհեստանոցներ էին կառուցվել Ոսկեդձյուրի երկու ափի երկայնքով: Արևմտյան ափին տեղակայված Բալաթը խիստ արդյունաբերացված տարածք էր, որն ուներ ծխախոտի և սննդի պահեստներ, ինչպես նաև ալյուրի, օճառի, սոդայի, քունջութի<sup>1</sup> և բրդի մանվածքի<sup>2</sup> արտադրության գործարաններ: Բացի այդ, 20-րդ<sup>3</sup> դարի սկզբին Բալաթում կկարողանայիք գտնել ավելի փոքր արդյունաբերական գործատներ և արհեստանոցներ: Ուշագրավ է նաև երկու արդյունաբերական մեծ կազմակերպությունների՝ «Օսմանյան ֆեաի գործարանի» և «Սիբալի» ծխախոտի գործարանի Բալաթին մոտ գտնվելը: Բալաթի և դրա շրջակայքի արդյունաբերականացումն ակամա դարձավ տեղի ժողովրդագրական կառուցվածքում փոփոխություններ ազդարարողը: Մինչդեռ տարածքի ունևոր բնակիչները սկսեցին տեղափոխվել Պերա (Բեյօղլու), Թարաբիա, Զուրուչեշմե, Արևավոթքոյ, Զադըթոյ, Շիշլի, ցածր դասի պետական ծառայողները, աշխատավորները, արհեստավորները և մանր առևտրականները շարունակեցին բնակվել նույն տարածքում<sup>4</sup>: Այս հողվածը միտում ունի ցույց տալու, թե ինչպես էին Բալաթում միասին ապրում տարբեր կրոնների, էթնիկական և ազգային պատկանելիության գործարանային աշխատավորները 20-րդ դարի սկզբին: Սույն ուսումնասիրությունը վերլուծում է մասնավորապես «Սիբալի» ծխախոտի գործարանի գործադուլները, որոնց ընթացքում, չնայած մշակութային տարբերություններին, աշխատողների միջև համերաշխություն ձևավորվեց:

<sup>1</sup> Քունջութի գործարանի անուն էր *Hacı (Znliu) Ali Efendi Tahin Fabrikası*:

<sup>2</sup> Բրդի մանվածքի գործարանը կրում էր «*Süreyya Bey Yün İpliği Fabrikası*» անվանումը:

<sup>3</sup> Köksal, T. G. 2005 . *İstanbul'daki Endüstri Mirası İçin Koruma ve Yeniden Kullanım Önerileri*, դոկտորական թեզ, İstanbul Teknik Üniversitesi, İstanbul, 243-249:

<sup>4</sup> Yılmaz, G. I. 2008 . *Haliç Kıyı Şeridinde Sanayileşme ile Ortaya Çıkan Kentsel Dönüşüm*, չհրատարակված դոկտորական թեզ, Yıldız Teknik Üniversitesi, İstanbul, 176:

## «Սիբալի» ծխախոտի գործարանը

Ստամբուլում ծխախոտի արտադրության, առքի և վաճառքի առաջին մենաշնորհը տրվել էր երկու հույն բանկիրի՝ Տորջ Չարիֆիին և Խրիստակի Չողրավոսին, 1872թ. մարտին: Սակայն մի քանի ամիս անց նրանք դիմեցին սպասվածից քիչ օգտավետ մենաշնորհի իրավունքներից հրաժարվելու խնդրանքով: 1872թ. հոկտեմբերին

run enterprise. The Tobacco Monopoly Administration opened many manufacturing plants to produce tobacco, which employed 1400 workers in Istanbul.<sup>1</sup> However, the Administration did not last long; the Ottoman Government dissolved it in 1877 and the monopoly ended. From 1877 to 1881, the market for tobacco was divided by many small producers.<sup>2</sup>

This situation drastically changed again in 1881, when the Public Debt Administration (Düyun-u Umumiye İdaresi) was established as a result of the failure of the Ottoman Empire to pay back loans to European creditors. The Public Debt Administration (PDA), which was governed by representatives of the European creditors and of the Ottoman Empire, collected the revenue of some tax sources to repay the debts. In order to provide the PDA with a steady income, the Ottoman government granted it a monopoly on tobacco and salt in the entire empire. However, the PDA transferred the monopoly on tobacco to the Regie Company in return for an annual payment of 750.000 Turkish Liras. Moreover, in addition to the annual payment, the Regie Company also had to share its profit with both the PDA and the Ottoman government: respectively 35, 35, and 30% for profits up to 500.000 Liras and 34, 27, and 39% for profits above 500.000 Liras.<sup>3</sup>

In 1884, a couple of years after acquiring the monopoly on tobacco, the Regie Company established its largest factory in Cibali, just 1 kilometer outside Balat.<sup>4</sup> The Cibali Tobacco Factory had the facilities to produce tobacco at all levels, from cutting tobacco leaves to producing tin boxes for packing the products.<sup>5</sup> The production had the following stages: sorting tobacco leaves, blending, cutting, rolling into cigarettes, and preparing packages. The different stages of production were assigned to certain gender groups.

In the blending department, a group of male workers used various types of tobacco in order to create cigarettes with different kinds of aroma, strength, flavour etc. In this process, well-qualified workers were required to know tobacco types properly. Experienced blenders, who had to have a well-developed sense of taste and smell, earned higher wages than other workers.<sup>6</sup>

<sup>1</sup> Nacar, C. 2019. *Labor and Power in the Late Ottoman Empire: Tobacco Workers, Managers, and the State, 1872 – 1912*, Palgrave Macmillan, Londra, 23.

<sup>2</sup> *Ibid.*, 24.



<sup>3</sup> *Ibid.*, 24–25.

<sup>4</sup> Today the factory building is used as Kadir Has University.

<sup>5</sup> *Ibid.*, 26–27.

<sup>6</sup> *Ibid.*, 63–64.



<sup>1</sup> Nacar, C. 2019. *Labor and Power in the Late Ottoman Empire: Tobacco Workers, Managers, and the State, 1872 – 1912*, Palgrave Macmillan, Londra, 23.

<sup>2</sup> Նույն տեղում, 24:

<sup>3</sup> Նույն տեղում, 24 – 25:

<sup>4</sup> Ներկայում գործարանի շենքը գործում է որպես Կադիր Չաս համալսարանի շենք:

<sup>5</sup> Նույն տեղում, 26 – 27:

օսմանյան կառավարությունը հիմնում է «Ծխախոտի մենաշնորհի վարչությունը» (*Inhisar-ı Duhan İdaresi*)՝ որպես պետական ձեռնարկ: «Ծխախոտի մենաշնորհի վարչությունը» ծխախոտի արտադրության բազմաթիվ գործատուներ բացեց, որոնք Ստամբուլում ունեին 1400 աշխատող<sup>1</sup>: Այսուհանդերձ վարչության կյանքը կարճ տևեց, քանի որ 1877 թ.-ին օսմանյան կառավարությունն այն կազմալուծեց՝ վերջ դնելով մենաշնորհին: 1877-1881 թթ. ծխախոտի շուկան բաժանվում է մի քանի մասը արտադրողի միջև<sup>2</sup>:

Իրավիճակը կրկին կտրուկ փոխվեց 1881թ.-ին, երբ Օսմանյան կայսրության՝ եվրոպացի պարտատերերի պարտքերը մարել է վիճակի չլինելու արդյունքում հիմնվեց «Չանրային պարտքերի վարչությունը» (Dünya-ı Umumiye İdaresi): Չանրային պարտքերի վարչությունը (ՉԴՎ), որը կառավարվում էր եվրոպացի պարտատերերի և Օսմանյան կայսրության ներկայացուցիչների կողմից, հավաքեց որոշ հարկային աղբյուրներից ստացված եկամուտ՝ վճարելու պարտքերը: ՉԴՎ-ը կայուն եկամտով ապահովելու նպատակով Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում դրան են տրվում ծխախոտի վերականգնված և աղի մենաշնորհները: Սա թերևս չէր նշանակում, որ հենց ՉԴՎ-ն էր գործարկելու ծխախոտի մենաշնորհային իրավունքները: ՉԴՎ-ը ծխախոտի մենաշնորհը փոխանցեց «Ռեժի» ընկերությանը՝ տարեկան 750,000 թուրքական լիրա վճարի դիմաց: Ավելին, ի լրացում տարեկան վճարին, «Ռեժի» ընկերությունը կիսում էր շահույթը և՛ ՉԴՎ-ի, և՛ օսմանյան կառավարության հետ. մինչև 500.000 լիրան՝ համապատասխանաբար 35, 35 և 30 տոկոսի չափով և 34, 27 և 39 տոկոսի չափով՝ 500,000 լիրան գերազանցող շահույթի պարագայում<sup>3</sup>:

Օսմանյան կայսրությունում ծխախոտի մենաշնորհը ստանալուց մի քանի տարի անց՝ 1884թ.-ին, «Ռեժի» ընկերությունը հիմնում է իր ամենամեծ «Սիբալի» գործարանը Բալթից ընդամենը մեկ կիլոմետր հեռու<sup>4</sup>: «Սիբալի» ծխախոտի գործարանը հարմարեցված էր ծխախոտ արտադրելու բոլոր հնարավոր փուլերի համար՝ ծխախոտի տերևները կտրատելուց ու ծխախոտի թուղթ արտադրելուց մինչև փաթեթավորման համար նախատեսված թիթեղյա տուփերի արտադրություն<sup>5</sup>: Գործարանի աշխատակիցները բաժանված էին հինգ խմբի՝ ծխախոտի տերևների տեսակավորողներ, խառնուրդ ստացողներ, կտրատողներ, սիգարետ փաթեթողներ և տուփեր փաթեթավորողներ: Արտադրության տարբեր փուլերի պարտականությունների բաշխումը կատարվում էր ըստ գեղեցիկային խմբերի:

Խառնուրդների ստացման բաժնում տղամարդ աշխատողներն օգտագործում էին ծխախոտի տարբեր տեսակներ՝

In the cutting department, male workers cut the blends prepared by the previous group by using machines or simple hand-powered havans. In the early 1890s, however, the cutting department was the first in the Cibali Factory to face the results of mechanization. Workers in this department were often afraid of losing their jobs. For example, in 1874, before the Cibali Factory existed, the state-run Tobacco Monopoly Administration had employed two hundred tobacco cutters in different workshops.<sup>1</sup> As the Cibali Factory was a more centralized enterprise, it had only about eighty hand cutters and fifty operators for twenty five large tobacco cutting machines.<sup>2</sup> Moreover, those hand cutters who still had a job at the Cibali Factory were forced to increase their speed in order to save their jobs.

<sup>1</sup> *Ibid.*, 64.

<sup>2</sup> *Ibid*

After the tobacco leaves had gone through the cutting department, female workers rolled the tobacco into cigarettes. In this stage of the production process, like in the cutting department, mechanization led to layoffs, resulting in an increase of individual workers' speed, and a decrease in wages. While the Cibali Factory started with about 600 workers in this department before mechanization, the number of workers decreased to 250-260 workers over time.<sup>3</sup>

<sup>3</sup> *Ibid.*, 71.

The last stage of production before selling the products in the market was packaging. In this department, the Cibali Factory employed more than 400 women, most of whom were Jews.<sup>4</sup> Women in these last two departments normally worked 9 hours a day at a rapid pace.<sup>5</sup> *Figure 2* depicts working women in the packaging department under a man's supervision (probably a foreman). The foremen and forewomen, who controlled the discipline of workers in all departments, were a separate group of employees at the Cibali Factory. In all groups there were also apprentices who assisted the workers.<sup>6</sup>

<sup>4</sup> *Ibid.*, 74.

<sup>5</sup> *Ibid.*

The profile of the workers at the Cibali Tobacco Factory was very diverse in terms of age, gender, religion, ethnicity, and nationality. Children constituted a substantial part. For example, according to surveys made by the Ministry of Trade and Public Works, tobacco packers in the Cibali Tobacco Factory in 1913 and 1915 were mostly children under the age

<sup>6</sup> Oktar, T. and Alan, M. M. 2018. "Reji Şirketi Cibali Tütün Fabrikası İşçi Grevleri (1883-1925)", *Süleyman Demirel Üniversitesi Vizyoner Dergisi*, 9: 20, 32; Nacar, *Ibid.*, 61.

տարատեսակ բույրով, ուժգնությամբ, համով և այլ հատկանիշներով, սիգարետներ ստանալու համար: Այս գործընթացի համար բարձր որակավորում ունեցող աշխատողները պարտավորվում էին պատշաճ կերպով ճանաչել ծխախոտի տարբեր տեսակները: Այս բաժնի փորձառու աշխատողները, ովքեր համի և հոտի ճանաչման բարձր հմտություն էին ձևավորել, ստանում էին ավելի բարձր աշխատավարձ<sup>1</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, 63 – 64:

Կտրատելու բաժնի արական սեռի աշխատողները կտրատում էին նախորդ բաժնում պատրաստած խառնուրդը՝ կիրառելով մեքենայացված սարքավորումներ կամ ավելի պարզ՝ ձեռքով աշխատող գործիքներ՝ *հավաններ*: Այնուամենայնիվ, 1890-ականների սկզբին հենց կտրատման բաժինն առաջինն իր վրա զգաց մեքենայացման հետևանքները: Այս բաժնի աշխատողները սկսեցին վախենալ մեքենայացման պատճառով աշխատատեղերը կորցնելուց: Օրինակ՝ 1874թ.-ին, երբ «Սիբալի» գործարանը դեռ գոյություն էլ չուներ, կառավարական «Ծխախոտի մենաշնորհի վարչությունը» տարբեր աշխատանքներում աշխատանքի էր ընդունել ծխախոտի 200 կտրատողի<sup>2</sup>: Զանի որ «Սիբալի» գործարանն ավելի կենտրոնացված ձեռնարկություն էր, այն ուներ ձեռքով կտրատող շուրջ ութսուն և ծխախոտի կտրատման քսանհինգ խոշոր մեքենա դեկավարող հիսուն օպերատոր<sup>3</sup>: Եվ նույնիսկ ձեռքով այն կտրատողներին, ում հաջողվել էր պահպանել աշխատատեղը, ստիպեցին ավելի արագ աշխատել՝ գործը չկորցնելու համար:

<sup>2</sup> Նույն տեղում, 64:

<sup>3</sup> Նույն տեղում:

Ծխախոտի տերևները կտրատման բաժնով անցնելուն պես հայտնվում էին կին աշխատողների ձեռքերում, ովքեր ծխախոտից սիգարետներ էին փաթաթում: Արտադրության գործընթացի այս փուլում, ինչպես և կտրատման բաժնում, մեքենայացումը հանգեցրեց կրճատումների, ինչի արդյունքում առաջացավ աշխատանքը կորցնելու վախ, պահանջվեց անհատ աշխատողների արդյունավետության բարձրացում և աշխատավարձը նվազեց: Եթե մեքենայացումից առաջ «Սիբալի» այս բաժնում կար մոտ 600 աշխատող, ժամանակի ընթացքում աշխատողների թիվը հասավ 250-260-ի<sup>4</sup>:

<sup>4</sup> Նույն տեղում, 71:

Ապրանքը վաճառքի հանելուց առաջ արտադրության վերջին փուլը փաթեթավորումն էր: Փաթեթավորման բաժնում «Սիբալի» գործարանը աշխատանքի էր ընդունել ավելի քան 400 կնոջ, որոնց մեծ մասը հրեա էր<sup>5</sup>: Այս վերջին երկու բաժնի կանայք, որպես կանոն, աշխատում էին օրական 9 ժամ՝ արագացված տեմպով<sup>6</sup>: Պատկեր 2-ը ցուցադրում է փաթեթավորման բաժնում աշխատող կանանց՝ տղամարդու (հավանաբար վերակացուի) վերահսկողության ներքո: Վերակացու տղամարդիկ և կանայք, ովքեր վերահսկում էին աշխատողների

<sup>5</sup> Նույն տեղում, 74:

<sup>6</sup> Նույն տեղում:

of fifteen.<sup>1</sup> Moreover, approximately two-thirds of workers of Cibali Factory were female workers. These women workers were mostly Jewish, and the rest were Christians.<sup>2</sup> The workers of the Cibali Factory consisted of Ottoman subjects, including Muslims, Jews, Armenians, Greeks, and Bulgarians. The Cibali Factory also had some foreign workers, especially Italian and Greek laborers.<sup>3</sup>

The information about the number of workers at the Cibali Factory is limited, but we know that in the tobacco factories in Izmir and Cibali in 1913 there were 2109 workers in total, of whom 96 were civil servants, 19 foremen/forewomen, 1071 male and 923 female workers. In 1915, there were a total of 2237 workers, including 109 civil servants, 16 foremen/forewomen, 1026 men and 1086 women workers.<sup>4</sup>

The workers of the Cibali Tobacco Factory generally lived in the nearby neighbourhoods around Cibali, such as Fener, Balat, Unkapani, and Hasköy. For example, Haris Spataris, a former Greek resident in Fener, described the arrival of Jewish female workers to Cibali: "When these girls were passing through Fener on their way to Cibali, they created an atmosphere of excitement among 124 both young and old men of the neighborhood."<sup>5</sup>

The precise wage level for the Cibali workers is not known, but we know that in 1913, the total payment for the wages of all the employees in the Cibali and Izmir factories together was 7.755.919 piastre. Gündüz Ökçün calculated that each employee must have received 3675 piastre in 1913. The daily wage of an employee (based on 300 days in a year) was 12.3 piastre. Ökçün emphasized that employees included civil servants, who were paid more than workers; the daily wage of a worker was around 10 piastre.<sup>6</sup> According to Eldem, the 1913 average daily wage in Istanbul was 14.1 piastre.<sup>7</sup> Hence, the daily wage of a worker in Cibali Factory was below the average daily wage of Istanbul. Petitions written by workers are another source of information regarding the wages in the Cibali Factory. These petitions, however, are far from giving the full and accurate picture. They rather show that the wages differed among various groups of employees, in which their gender and their

<sup>1</sup> Ökçün, G. 1984. *Osmanlı Sanayi İstatistikleri: 1913-1915*, Hil Yayınları, İstanbul, 65.

<sup>2</sup> Nacar, *Ibid.*, 38.

<sup>3</sup> *Ibid.*, 42.

<sup>4</sup> Ökçün, *Ibid.*, 65.

<sup>5</sup> Nacar quoted from Haris Spataris, Nacar, C. 2019. *Labor and Power in the Late Ottoman Empire*, 43. For more information see Spataris, H. 2004. *Biz İstanbullular Böyleyiz! Fener'den Anılar, 1906-1922*, Kitap Yayınevi, İstanbul, 69.

<sup>6</sup> Ökçün, *Ibid.*, 66.

<sup>7</sup> Eldem, V. 1970. *Osmanlı İmparatorluğu'nun İktisadi Şartları Hakkında Bir Tetkik*, Türkiye İş Bankası Yayınları, Ankara, 209.

<sup>1</sup> Oktar, T. İ Alan, M. M. 2018. "Reji Şirketi Cibali Tütün Fabrikası İşçi Greyteri (1883 – 1925)", *Süleyman Demirel Üniversitesi Vizyoner Dergisi*, 9: 20, s. 32; Nacar, *İnyü* *inlgmü*, 61:

<sup>2</sup> Ökçün, G. 1984. *Osmanlı Sanayi İstatistikleri: 1913 – 1915*, Hil Yayınları, İstanbul, 65.

<sup>3</sup> Nacar, *İnyü inlgmü*, 38:

<sup>4</sup> *İnyü inlgmü*, 42:

<sup>5</sup> Ökçün, *İnyü inlgmü*, 65:

<sup>6</sup> Nacar-ի մեջբերմունքը Haris Spataris-ից: Nacar, C. 2019. *Labor and Power in the Late Ottoman Empire*, 43: Ավելին խնամախոս համար տե՛ս Spataris, H. (2004), *Biz İstanbulullar Böylesi! Fener'den Anılar*, 1906 – 1922. Kitap Yayınevi, İstanbul, 69:

կարգապահությունը բոլոր բաժանմունքներում, «Սիբալի» գործարանի աշխատակիցների առանձին խումբ էին: Բոլոր խմբերին կցված էին նաև աշակերտներ, ովքեր անկրթաժողովրդական դեպքում օգնում էին աշխատողներին<sup>1</sup>:

«Սիբալի» ծխախոտի գործարանի աշխատողների նկարագիրը խիստ զանազան էր՝ տարիքային, գենդերային, կրոնական, էթնիկական խմբերի պատկանելիությամբ ու ազգությամբ պայմանավորված: Երեխաները նույնպես աշխատուժի մի զգալի մաս էին կազմում: Օրինակ՝ ըստ «Առևտրի և հանրային աշխատանքների նախարարության» կատարած հարցումների՝ 1913 և 1915թթ. «Սիբալի» գործարանի ծխախոտի փաթեթավորողները հիմնականում մինչև տասնհինգ տարեկան երեխաներ էին<sup>2</sup>: Ավելին, «Սիբալի» գործարանի աշխատողների շուրջ երկու երրորդը կազմում էին կին աշխատակիցները: Այս կանանց մեծ մասը հրեա էր, իսկ մնացածը՝ քրիստոնյա<sup>3</sup>: «Սիբալի» գործարանի աշխատողների մեջ կային օսմանյան հպատակներ՝ մահմեդականներ, հրեաներ, հայեր, հույներ և բուլղարացիներ: «Սիբալիում» աշխատում էր նաև մի քանի օտարերկրյա աշխատակից՝ հատկապես իտալացի և հույն<sup>4</sup>:

«Սիբալի» գործարանի աշխատուժի թվերի մասին տեղեկությունները սահմանափակ են, սակայն գիտենք, որ Իզմիրի և «Սիբալի» ծխախոտի գործարաններում 1913թ. դրությամբ աշխատում էր ընդամենը 2109 աշխատավոր, որից 96-ը քաղաքացիական ծառայող էր, 19-ը՝ տղամարդ կամ կին վերակացու, 1071 արական և 923 իգական սեռի աշխատավոր: 1915թ. աշխատողների ընդհանուր թիվը կազմում էր 2237, որից 109-ը քաղաքացիական ծառայող էին, 16-ը՝ արական և իգական սեռի վերակացուներ, 1026-ը՝ տղամարդ, իսկ 1086-ը՝ կին աշխատողներ<sup>5</sup>:

«Սիբալի» ծխախոտի գործարանի աշխատողները հիմնականում բնակվում էին գործարանի մերձակա թաղամասերում՝ Ֆեներում, Բալաթում, Ունքափանում և Յասքոյում: Ֆեների հույն նախկին բնակիչ Խարիս Սպատարիսին հիշում է հրեա կին աշխատողների՝ Բալաթից «Սիբալի» ճանապարհորդությունը. «Երբ այդ աղջիկները անցնում էին Ֆեների միջով դեպի «Սիբալի», բռուն էմոցիաների ալիք էին տարածում թաղամասի 124 երիտասարդ և տարեց տղամարդկանց շրջանում»<sup>6</sup>:

«Սիբալիի» աշխատողների աշխատավարձի ճշգրիտ չափը նույնպես հայտնի չէ, բայց գիտենք, որ 1913 թ. «Սիբալիի» և Իզմիրի գործարաններում բոլոր աշխատողների աշխատավարձերի տարեկան ընդհանուր գումարը կազմում էր 7,755,919 պիաստր: Գյուլնդուզ Օթչունը հաշվարկել է, որ 1913թ. յուրաքանչյուր աշխատակից հավանաբար ստացել է ընդհանուր 3675 պիաստր:



Editeur Max Fruchtermann, Constantinople. 1861.

Fabri



**Figure 1:** The view of the Cibali Tobacco Factory from the sea (Krt\_006949, Fabrique de Tabacs, Stamboul, Constantinople / ed.: Max Fruchterman) Atatürk Library, Istanbul.

**Պատկեր 1**՝ «Սիբալի» ծխախոտի գործարանի տեսքը ծովից (Krt\_006949, Fabrique de Tabacs, Stamboul, Constantinople / ed.: Max Fruchterman) Արարորդի անվան գրադարան, Ստամբուլ:

contribution to the production process also played a part. Below, I will discuss one example of a petition.

In July 1902, a collective petition written by twenty-six male workers from the department of cigarette making in the Cibali Factory, gives us information on the wages and their changes after mechanization.<sup>1</sup> According to this petition, their wages were 11 piasters per thousand cigarettes before, whereas now they received just 6 piasters for the same work. Workers connected the decreases in wages with mechanization. The workers added a second complaint to the petition. Two foremen, called Mehmed and Pascal (probably a Greek), had fined workers for their poor quality work. Imposing fines was a threat to the livelihood of the factory workers. Even when the workers turned to the director of the Cibali Factory, he just ignored the gravity of their situation. The twenty six petitioners, among them- Muslims, Greeks, Armenians, and Jews, asked for the protection of their rights by the grand vizier. The signatures (*Figure 3*) show the ethno-religious diversity among workers and their solidarity against the administration of the Cibali Factory, which was multicultural too. It is unknown whether the administration responded to this petition, but we know that the collective petition did not lead to any strike in 1902.

The working conditions of the Cibali factory were quite strict and unhealthy. The bells signalled the start of the working day in the morning: anyone who joined late could be fined. During the day, workers were controlled by foremen to sustain the working discipline in the factory. Moreover, at the end of the working day, guards searched workers before they left the factory to prevent any smuggling activities.<sup>2</sup> In addition, tobacco dust led to unhealthy conditions in the factory, especially for children and pregnant women.<sup>3</sup>

## STRIKES AT THE CIBALI TOBACCO FACTORY

Under the above mentioned working conditions, workers of the Cibali Factory went on strike many times from 1893 onwards. I will refer to the 1904 and 1906

<sup>1</sup> BOA (Başbakanlık Osmanlı Arşivleri), BEO 1890 / 14173, doküman 2 (9 Temmuz 1318 R / 22 Temmuz 1902).



<sup>2</sup> Nacar, *Ibid.*, 61.

<sup>3</sup> *Ibid.*, 76-77; Balsoy, G. 2009. "Gendering Ottoman Labor History: The Cibali Régie Factory in the Early Twentieth Century", *International Review of Social History* 54: 17, 66-67.



<sup>1</sup> Ökçün, *İmji unluğmü*, 66:

<sup>2</sup> Eldem, V. 1970. *Osmanlı İmparatorluğu'nun İktisadi Şartları Hakkında Bir Tetkik*. Türkiye İş Bankası Yayınları, Ankara, 209.

<sup>3</sup> BOA (Başbakanlık Osmanlı Arşivleri), BEO 1890 / 14173, doküman 2 (9 Temmuz 1318 R / 22 Temmuz 1902).



Աշխատողի օրական վճարը (տարեկան 300 օրվա հաշվարկով) կազմել է 12,3 պիաստր: Օբջուներ շեշտում է, որ աշխատողների խմբին էին պատկանում նաև բաղաբացիական ծառայողները, ովքեր այլ աշխատողներից բարձր էին վարձատրվում: Օբջուներ պնդում է, որ աշխատավորի օրական վճարը մոտ 10 պիաստր էր<sup>1</sup>: Ըստ Էլդեմի՝ 1913թ. Ստամբուլում օրական միջին վարձատրությունը կազմել է 14,1 պիաստր<sup>2</sup>: Հետևաբար «Սիբալիի» աշխատողների օրավճարները Ստամբուլի միջին օրավճարից ցածր էին: «Սիբալի» գործարանի վարձատրությունների վերաբերյալ մեկ այլ աղբյուր են համարվում աշխատավարձի նվազման դեմ գրված խնդրագրերը: Սակայն նույնիսկ այս խնդրագրերը ի գործու չեն ամբողջապես ներկայացնել աշխատավարձերի բաշխման ընդհանուր պատկերը: Փոխարենը, այս խնդրագրերը ցույց են տալիս աշխատավարձերի տարբերությունները՝ ըստ աշխատողների խմբերի, սեռի ու արտադրական գործընթացում ունեցած ներդրումի: Հաջորդիվ կքննարկենք այդպիսի խնդրագրի մի օրինակ: Աշխատավարձերի և մեքենայացումից հետո դրանց փոփոխության մասին տեղեկատվություն է տրամադրում 1902թ. հուլիսին «Սիբալի» գործարանի սիգարետների պատրաստման բաժնի քսանվեց տղամարդ աշխատակցի կազմած հավաքական խնդրագիրը<sup>3</sup>: Համաձայն խնդրագրի՝ ավելի վաղ ժամանակներում նրանց աշխատավարձը կազմում էր մեկ հազար ծխախոտի համար 11 պիաստր, որը նույն աշխատանքի ծավալի պարագայում դարձել էր ընդամենը 6 պիաստր: Աշխատողները վճարների նվազումը կապում են մեքենայացման հետ և խնդրագրում ավելացնում երկրորդ բողոքը: Երկու վերակացու՝ Մեհմեդ և Պասկալ (հավանաբար հույն) անուններով, տուգանում են որոշ աշխատողների՝ պատճառաբանելով, որ նրանց աշխատանքի որակն ընկել է: Տուգանքները վտանգի տակ էին դնում գործարանի աշխատողների ապրուստը: Նույնիսկ այն ժամանակ, երբ աշխատողները ներկայացնում են այս իրավիճակը «Սիբալի» գործարանի տնօրենին, նա պարզապես անտեսում է աշխատողների աշխատանքային պայմանները: Խնդրագրի հետևում կանգնած քսանվեց աշխատողները, ովքեր մահմեդական, հույն, հայ և հրեա էին, իրենց իրավունքների պաշտպանության հարցով դիմում են մեծ վեզիրին: Աշխատավորների ստորագրությունները (պատկեր 3) վկայում են էթնոկրոնական բազմազանության և «Սիբալի» գործարանի ղեկավարության դեմ համբաշխ պայքարի մասին, որն, ի դեպ նույնպես բազմամշակույթ էր: Հայտնի չէ՝ ընդունել է ղեկավարությունն այս խնդրագիրը, թե՛ ոչ, սակայն հստակ է, որ 1902 թ. բողոքների և խնդրանքների այս գործողությունը չի հանգեցրել որևէ գործադուլի:

strikes which show the multicultural and multi-ethnic backgrounds of the workers.

Two years after the collective petition in 1902 by workers from the cigarette making department, a strike against using machines and newly appointed foremen was organized by the same department in November 1904. The strike ended with the intervention of police and negotiations with the factory administration. 12 workers were accused of being instigators of the strike. The names and neighbourhoods are written in the list below (*List 1*).<sup>1</sup> According to this list, five of the twelve workers lived in Balat. Moreover, the list shows that both male and female workers from different backgrounds, mostly Greek and Jewish, were active participants in the strike.

<sup>1</sup> BOA, DH.MKT. 912 / 53 (18 Teşrinisani 1320 R / 1 December 1904).

<b>(Names)</b>	<b>(Place of residence)</b>	<b>(Nationality)</b>
Odisya Tebrizya	Tatavla	Italian
Haim Varon	Balat	Ottomans
Marko Tesiton	Sultan Hamamı (Balat)	Ottomans
Benson Bendazora	...Saray	Ottomans
Yasef Eskenazi	Hasköy	Ottomans
Kostantino Nikolo	Fener	Ottomans
Yorgi Konstantino	Balat	Ottomans
Kostantino Ebaris	Kuzguncuk	Ottomans
Haton Alyof (?)	Sirkeci	Ottomans
Mari Behar (?)	Balat	Ottomans
Raşil Eskenazi	Hasköy	Ottomans
Bin Behar(?)	Balat	Ottomans

The second strike was a response to the cancellation of the annual Easter payment in 1906. Approximately 200 Jewish and Greek workers from the cigarette making department attended this demonstration.<sup>2</sup> Ottoman bureaucrats were worried about the development of the strikes among other workers in Istanbul and a possible attack on the office of Régie, near the Ottoman Bank building in Karaköy. Sultan Abdülhamid II ordered the payment of the annual Easter to the Christian workers of the Cibali factory.<sup>3</sup> However, some workers, who were accused

*List 1:* The list showing the names, places of residence and nationalities of the workers accused in the 1904 strike at the Cibali Tobacco Factory.

<sup>2</sup> Nacar, *Ibid.*, 99.

<sup>3</sup> BOA, BEO, 2794 / 209533 (17 March 1322 R / 31 March 1906).

«Սիբալի» գործարանի աշխատանքային պայմանները բավականին խիստ և անառողջ էին: Աշխատողները պարտավորված էին աշխատանքային առավոտը սկսել զանգի ազդանշանով, հակառակ դեպքում՝ կենթարկվեին տուգանքի: Օրվա ընթացքում նրանք վերահսկվում էին վերակացուների կողմից՝ գործարանում աշխատանքային կարգապահությունը պահպանելու համար: Ավելին, օրվա վերջում աշխատողներին խուզարկում էին գործարանը լքելուց առաջ՝ մաքսանենգության ցանկացած գործողություն կանխելու նպատակով:<sup>1</sup> Բացի այդ, գործարանում ծխախոտի փոշին անառողջ պայմաններ էր ստեղծում հատկապես երեխաների և հղի կանանց համար:<sup>2</sup>

<sup>1</sup> Nacar, *Լոյն տնդում*, 61:

<sup>2</sup> *Լոյն տնդում*, 76-77; Balsoy, G. 2009 . "Gendering Ottoman Labor History: The Cibali Régie Factory in the Early Twentieth Century", *International Review of Social History* 54: 17, 66-67:

### «Սիբալի» ծխախոտի գործարանի գործադուլները

Վերը նշված աշխատանքային պայմաններից դրոյված՝ «Սիբալի» գործարանի աշխատողները 1893թ.-ից ի վեր բազմիցս գործադուլ են հայտարարել: Կներկայացնենք այդ գործադուլներից երկուսը, մասնավորապես՝ 1904 և 1906 թթ. գործադուլները, որոնցում ակներև է աշխատողների մշակութային ու ազգային բազմազանությունը:

1902թ. սիգարետների բաժնի աշխատակիցների հավաքական խնդրագրից երկու տարի անց՝ 1904թ. նոյեմբերին, նույն բաժինը գործադուլ է հայտարարում մեքենաների գործածման և նորանշանակ վերակացուների դեմ: Գործադուլը հաջողվում է կասեցնել ոստիկանության միջամտությամբ և գործարանի ղեկավարության հետ բանակցությունների միջոցով: Գործադուլից անմիջապես հետո 12 աշխատող մեղադրվում է գործադուլի առաջնորդ լինելու մեջ: Նրանց բնակության թաղամասերը ներկայացված են ստորև.<sup>3</sup> (ցուցակ 1): Այս ցուցակի համաձայն՝ տասներկու աշխատողից հինգն ապրում էր Բալաթում, մինչդեռ մյուս թաղամասերից կային ավելի քիչ աշխատողներ: Ավելին, ըստ ցուցակի՝ գործադուլի աշխույժ մասնակիցներ են եղել ինչպես տղամարդ, կանայք՝ հիմնականում հույն և հրեա:

<sup>3</sup> BOA, DH.MKT. 912 / 53 (18 Teşrinisani 1320 R / ղնկունքնրի 1, 1904):

**Ցուցակ 1.** Սիբալի ծխախոտի գործարանի աշխատակիցների ցուցակ (անուն, բնակության վայր և հպատակություն), ովքեր մեղադրվել են գործադուլի առաջնորդ լինելու մեջ 1904 թվականին:





*Figure 2:* Packing for export at Cibali Tobacco Factory, (Salt Research, Guillaume Berggren, 1884).

**Պատկեր 2՝** արտահանման համար փաթեթավորում «Սիբալի Ռեզի» ծխախոտի գործարան (Salt Research, Guillaume Berggren, 1884):

of initiating the strikes, were sent to exile: Nesim, a Jewish Italian worker, and Vasil Yani, Vangil Sarandi, Pandoli, and Istilyano.<sup>1</sup>

Because mechanization threatened mostly workers in the cigarette making departments, it is logical that the first powerful strikes were organized by this group which consisted mostly of Greek and Jewish female workers. Even when the Cibali Régie Workers' Union Association was established in 1910, the 800 members were mostly from the tobacco-cutting, cigarette-making, and tobacco-packaging departments, which were threatened by the mechanization of production.<sup>2</sup>

<sup>1</sup> Nacar, *Ibid.*, 61.

<sup>2</sup> *Ibid.*, 76-77; Balsoy, G. 2009. "Gendering Ottoman Labor History: The Cibali Régie Factory in the Early Twentieth Century", *International Review of Social History* 54: 17, 66-67.

## CONCLUSION

Balat was one of the residential neighbourhoods of the Cibali workers and it was just one kilometer away from the Cibali Régie Tobacco Factory. In the Cibali Régie Tobacco Factory male and female workers from different ethnic backgrounds, nations, and religions worked together. They had similar concerns over their livelihood, such as job insecurity, unhealthy conditions of the workplace, decreasing wages, and so on. These concerns overrode the tension among different groups. Muslim, Armenian, Greek, and Jewish workers signed the same petition to demand their rights against their foremen (a Muslim and a Greek) and the Regie Company, which had representatives from different nations and ethnic backgrounds. Furthermore, Jewish workers showed solidarity with Greek workers for their Easter payments. As Neuburger argues referring to Bulgarian tobacco workers, "the machinations of the tobacco economy worked against a clear crystallization of ethnic horizons or hatreds."<sup>3</sup> Living together in Balat cannot be fully understood without the workplaces of its residents.



<sup>3</sup> Neuburger, M. C. 2013. *Balkan Smoke: Tobacco and the Making of Modern Bulgaria*, Cornell University Press, Ithaca, 69.

Անուններ	Բնակության վայր	Հպատակություն
Օդիսյա Թերրիզյա	Թաթավլա	իտալացի
Հայմ Վարոն	Բալաթ	օսմաններ
Մարկո Թեսիթոն	Սուլթան Համամի (Բալաթ)	օսմաններ
Բենսոն Բենդագորա	...Սարայ	օսմաններ
Յասեֆ Էսբենագի	Հասքոյ	օսմաններ
Կոստանտինո Լիկոլո	Ֆեներ	օսմաններ
Յորդի Կոնստանտինո	Բալաթ	օսմաններ
Կոստանտինո Էբարիս	Կուզգունջուկ	օսմաններ
Հաթոն Ալյոֆ (?)	Սիրքեջի	օսմաններ
Մարի Բեհար (?)	Բալաթ	օսմաններ
Ռաշիլ Էսբենագի	Հասքոյ	օսմաններ
Բին Բեհար (?)	Բալաթ	օսմաններ

<sup>1</sup> Nacar, նոյն տեղում, 99:

<sup>2</sup> BOA, BEO, 2794 / 209533 (մարտի 17, 1322 R / մարտի 31, 1906):

<sup>3</sup> BOA, DH.MKT 912 / 53, doküman 11 (մարտի 17, 1322 R / մարտի 31, 1906):

<sup>4</sup> Nacar, նոյն տեղում, 144:

1906թ.-ին, ընդդեմ ամենամյա Սբ. Չատկի առթիվ հավելավճարների չեղարկման՝ տեղի է ունենում երկրորդ գործադուլը: Ցույցին մասնակցում է սիգարետների պատրաստման բաժնից շուրջ 200 հրեա և հույն աշխատող<sup>1</sup>: Օսմանյան բյուրոկրատները մտահոգված էին գործադուլների՝ Ստամբուլի այլ աշխատավորների շրջանում հետագա տարածումով, ինչպես նաև Զարաքոյում «Օսմանյան բանկ»-ի մոտ՝ «Ռեժի» գրասենյակի վրա հնարավոր հարձակմամբ: Ուստի սուլթան Աբդուլ Համիդ II-ը հրամայում է գործարանի քրիստոնյաներին վճարել Սուրբ Չատկի ամենամյա հավելավճարները<sup>2</sup>: Այնուամենայնիվ, երբ գործադուլն ավարտվում է, մի շարք աշխատողներ՝ հրեա-իտալացի Նեսիմը, Վասիլ Յանին, Վանգիլ Սարանդին, Պանդոլին և Իսթիլյանոն, մեղադրվում են գործադուլն առաջնորդելու մեջ և աքսորվում<sup>3</sup>:

Մեքենայացումն առավելապես վտանգի տակ էր դնում սիգարետների պատրաստման բաժնի աշխատողների աշխատանքը, այդ իսկ պատճառով տրամաբանական է, որ առաջին ծավալուն գործադուլների մասնակիցներն էին հենց այս խմբի՝ առավելապես հույն և հրեա իգական սեռի աշխատողները: Նույնիսկ երբ 1910թ.-ին հիմնվեց «Սիբալի Ռեժի» արհմիությունը, դրա Տօօ անդամ, որոնց աշխատատեղերին սպառնում էր արտադրության մեքենայացումը, հիմնականում ծխախոտի կտրատման, սիգարետների պատրաստման և փայթեթավորման բաժնիներից էին<sup>4</sup>:





**Figure 3:** The collective petition written by workers from the department of cigarette making in the Cibali Factory. (BOA, BEO 1890/14173, doc. 2 (9 Temmuz 1318/ July 22, 1902).

**Պատկեր 3**<sup>1</sup> «Սիբալի» գործարանի ծխախոտի պատրաստման բաժնի աշխատողների կազմած միասնական խնդրագիրը:


<sup>1</sup> Neuberger, M. C. 2013. *Balkan Smoke: Tobacco and the Making of Modern Bulgaria*, Cornell University Press, Ithaca, 69.

## Ամփոփում

«Սիբալիի» աշխատողների բնակության թաղամասերից մեկը Բալաթն Էր, և այն գտնվում էր գործարանից ընդամենը մեկ կիլոմետր հեռավորության վրա: «Սիբալի Ռեժի» ծխախոտի գործարանում միասին աշխատում էին տարբեր էթնիկական, ազգային և կրոնական պատկանելիության տղամարդիկ և կանայք: Նրանք կիսում էին միմյանց մտահոգությունները՝ ապրուստի միջոցների, աշխատատեղերը կորցնելու, աշխատավայրում առողջությանը վտանգավոր պայմանների, աշխատավարձի նվազման և այլնի հետ կապված: Այս կենսական հարցերի շուրջ մտահոգությունները կիսելու շնորհիվ նրանց հաջողվել է հաղթահարել տարբեր խմբերի պատկանելիությամբ պայմանավորված լարվածությունը: Մահմեդական, հայ, հույն և հրեա աշխատողները, վերակացուներից ոմանք (մեկը՝ մահմեդական, մյուսը՝ հույն) և «Ռեժի» ընկերության ներկայացուցիչներ (տարբեր ազգեր) իրենց իրավունքների պահպանմանն ուղղված միասնական խնդրագիր են ստորագրել: Ավելին, հրեա և հույն աշխատողները Չատկի վճարումների հարցի շուրջ միմյանց հանդեպ համերաշխություն են ցուցաբերել: Ծխախոտի գործարանների բուլղարացի աշխատողների մասին գրելիս Նոյբուրգերը փաստում է. «Ծխախոտի տնտեսության մեքենայացումներն աշխատել են էթնիկական բախումների և ատելության բացարձակ բյուրեղացման դեմ»<sup>1</sup>: Բալաթի բնակիչների համակեցությունը հնարավոր չէ լիովին պատկերացնել առանց դրա բնակիչների աշխատավայրերի ուսումնասիրության:

## BIBLIOGRAPHY/ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Balson, G. 2009. "Gendering Ottoman Labor History: The Cibali Régie Factory in the Early Twentieth Century", *International Review of Social History*, 54: 17.
- Eldem, V. 1970. *Osmanlı İmparatorluğu'nun İktisadi Şartları Hakkında Bir Tetkik*, Türkiye İş Bankası Yayınları, Ankara.
- Köksal, T. G. 2005. *İstanbul'daki Endüstri Mirası İçin Koruma ve Yeniden Kullanım Önerileri*, yayımlanmamış doktora tezi, İstanbul Teknik Üniversitesi, İstanbul.
- Nacar, C. 2019. *Labor and Power in the Late Ottoman Empire: Tobacco Workers, Managers, and the State, 1872–1912*, Palgrave Macmillan, Londra.
- Neuburger, M. 2013. *Balkan Smoke: Tobacco and the Making of Modern Bulgaria*, Cornell University Press, Ithaca.
- Oktar, T. ve Alan, M. M. 2018. "Reji Şirketi Cibali Tütün Fabrikası İşçi Grevleri (1883-1925)", *Süleyman Demirel Üniversitesi Vizyoner Dergisi*, 9: 20.
- Ökçün, G. 1984. *Osmanlı Sanayi İstatistikleri: 1913–1915*, Hil Yayınları, İstanbul.
- Spataris, H. 2004. *Biz İstanbullular Böyleyiz! Fener'den Anılar, 1906–1922*, Kitap Yayınevi, İstanbul.
- Yılmaz, G. I. 2008. *Haliç Kıyı Şeridinde Sanayileşme ile Ortaya Çıkan Kentsel Dönüşüm*, yayımlanmamış doktora tezi, Yıldız Teknik Üniversitesi, İstanbul.



# TRACING THE MEMORY OF ARMENIAN BALAT: KHORENYAN SCHOOL AND SURB HRESHDAGABED CHURCH

Diana Yayloyan,  
Mete Ulutaş,  
Leon Aslanov

An abandoned building lies in the heart of Balat.<sup>1</sup> Its broken windows, burned and cracked graffiti-covered walls, and entrance blocked by vehicles, are inconspicuous to passersby. However, those with a keen eye will spot a barely visible Armenian inscription above the arched front door: "Khorenyan Armenian Mixed-Sex School. Established in 1866."<sup>2</sup>

The story of the Khorenyan School is not simply one of a building. It is a story of community work, driven by shared concerns and hopes for the future. It is a story of the tireless dedication demonstrated by Armenian residents of Balat contributing to the social, cultural and economic life of their community. The abandoned Khorenyan School building is just one of many poignant reminders of cultural loss. This theme of loss runs through the history of Armenian life in Balat, a neighbourhood that bears witness to the fading heritage of multicultural coexistence.

Since the Khorenyan School building has not been functioning for decades, our attempts at accessing information about it redirected us to the Armenian Church in Balat, Surb Hreshdagabed, and the Edirnekapi Armenian Cemetery [Edirnekapi Ermeni Mezarlığı]. The building ceased to function as a school after the fire in 1925, but was not abandoned altogether. While lessons continued in the garden of the Surb Hreshdagabed Church, the building turned into a tobacco factory, soap factory, and a homeless shelter.

Urban transformation projects were launched in the districts of Fener and Balat in 2006. Due to conservation status of these districts and the resistance of their inhabitants, the projects were eventually cancelled in 2014.<sup>3</sup> After another incident of fire in the school building in 1994, the Foundation of Balat Surb Hreshdagabed Armenian Church - Khorenyan School and Edirnekapi Armenian Cemetery rented out the damaged building to a private company to be

<sup>1</sup> The authors thank Delal Dink, Pakrat Estukyan, Leda Mermer and George Shirinan for their valuable contributions to the research. The authors express their special gratitude to Sevan Degirmencian for his assistance to the fieldwork, and to Axel Corlu for the valuable comments and critical feedback. And last but not least the authors express their gratitude to Husik Ghulyan, whose profound expertise in the politics of space and urban studies was of tremendous help.

<sup>2</sup> In Turkish language, the school is referred to as "Horenyan Mektebi", however, in Armenian, the school name is "Khorenyan" (the Turkish alphabet does not have the Armenian letter յ [kh]). Since the authors were directly transliterating from documents and sources in Western Armenian, the school's original name is used throughout the text.

<sup>3</sup> Dinler, M., Şahin Güçhan, N. 2016. "Fener ve Balat'ın Dönümü" Üzerine: Üç Vizyon / Üç Dönem / Üç Ayrı 'Koruma' Anlayışı", *TUBA Kültür Envanteri Dergisi*, 14, 243, <http://tubaked.tuba.gov.tr/index.php/tubaked/article/view/220/230>

Դիանա Յայրոյան,  
Մերն Ուլուբաշ,  
Լևոն Ասլանով

# Հայկական Բալաթի հիշողության հետքերով. Խորենյան դպրոցը և Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին

<sup>1</sup> Շեղիանկներն իրենց երախտագիտություն են հայտնում Դեյվ Դինքին, Բագրատ Էստուկյանին, Լեդա Մերմերին և Ջորջ Շիրինյանին հետազոտությանը իրենց արժեքավոր նպաստը բերելու համար: Չառուկ շնորհակալություն են հայտնում Սևան Տէյիրմենճեանին հետազոտության ընթացքին սատարելու համար, ինչպես նաև՝ Ալեքս Չորոյին արժեքավոր դիտարկումների համար: Չառուկ հիշատակմամբ երախտի խոսք ենք ուղղում նաև Հուսիկ Ղուլյանին, որի տարածքի քաղաքակառուցության և ուրբանիստիկայի ոլորտում մասնագիտական կարծիքը մեծապես օժանդակեցին այս հետազոտության կայացմանը:

<sup>2</sup> Խորենյան դպրոց, թուրք.՝ *Horenyan Mektebi*, քանի որ թուրքերենում «ի» տառ չկա: Շեղիանկներն արևմտահայերեն փաստաթղթերից և աղբյուրներից են օգտվել, ուստի անգլերեն տարբերակում օգտագործվում է *Khorenyan* գրելանքը, իսկ հայերեն բազմամասնություն մեջ արևելահայերեն տառադարձմամբ և գրքի այլ հոդվածների գործածմամբ համահունչ՝ Խորենյան դպրոց:

<sup>3</sup> Dinler, M., Şahin Güçhan, N. 2016. “Fener ve Balat’ın Dönüştürüşü Üzerine: Üç Vizyon / Üç Dönem / Üç Ayrı ‘Koruma’ Anlayışı”, *TÜBA Kültür Emvanti Dergisi*, 14, 243, <http://tubaked.tuba.gov.tr/index.php/tubaked/article/view/220/230>

<sup>4</sup> Նյութը հրատարակման պատրաստելու ընթացքում հայտարարվեց, որ Խորենյան դպրոցը վերածվելու է մշակութային կենտրոնի: Տես “Balat’taki Khorenyan Ermeni İlkokulu Kültür Merkezi Olacak”, (ապրիլ 25, 2021), Emlak Kulisi, <https://emlakkulisi.com/balattaki-khorenyan-ermeni-ilkokulu-kultur-merkezi-olacak/672423>:

Բալաթի սրտում մի լքված շինություն կա:<sup>1</sup> Կտրած պատուհանները, վառված ու գրաֆիտիապատ, ճաքած պատերը, շքամուտքը՝ դիմացը կայանած մեքենաների պատճառով, անցնող-դարձողի ուշադրությունը չեն հրավիրի իրենց վրա: Ինչևհից, սուր աչքը կնկատի կամարավոր մուտքի դռան վերևում հազիվ նշմարելի հայատառ գրությունը. «Ազգային Խորենյան երկսեռ վարժարան. հիմնեալ յամին 1866 Պալաթ»:<sup>2</sup>

Լուկ շենք-շինության մասին չէ Խորենյան դպրոցի պատմությունը: Համատեղ հոգսերից ու գալիքի հույսերից ծնված համայնքային մի գործի պատմություն է: Բալաթի հայ բնակիչների ցուցաբերած անդուլ նվիրումի՝ համայնքի տևեսական, մշակութային և սոցիալական կյանքին բերած մեծ նպաստի պատմությունն է: Խորենյան դպրոցի լքված շենքը մշակութային կորստի դառը հիշատակներից միայն մեկն է: Կորստի թեման անցնում է Բալաթի ողջ հայկական պատմության միջով՝ իբրև բազմամշակութային համակեցության ժառանգության վկայություն:

Զանի որ դպրոցի շենքը տասնամյակներով չի գործել, տեղեկություններ հավաքելու փնտրույքը մեզ ուղղորդեց դեպի Բալաթի Սուրբ Հրեշտակապետաց հայկական եկեղեցի և Էդիրնեքափրի հայկական գերեզմանատուն: Շենքը դադարել է ծառայել որպես կրթօջախ 1925-ի հրդեհից հետո, թեև հիմնովին չի ավերվել: Դասերը շարունակվել են Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցու այգում, իսկ դպրոցի շենքը վերածվել է ծխախոտի, ապա՝ օճառի ֆաբրիկայի, այնուհետև՝ անտունների ապաստարանի:

2006-ից ի հայտ եկած ուրբան վերափոխումների ծրագրի նպատակը Ֆեներ և Բալաթ թաղամասերի ազգայնացումն էր, ինչը չհաջողվեց բնակիչների դիմադրության և տարածքի հատուկ կարգավիճակի պատճառով, և, ի վերջո, 2014-ին<sup>3</sup> ծրագիրը չեղարկվեց: Բալաթի Սուրբ Հրեշտակապետաց հայկական եկեղեցու, Խորենյան դպրոցի և Էդիրնեքափրի հայկական գերեզմանատան հիմնադրամու դպրոցի շենքը 1994-ի հրդեհից հետո վարձակալությամբ տվեց մասնավոր ձեռնարկատիրություն, որ վերականգնելի և աշխատեցնելի որպես հյուրանոց<sup>4</sup>: Ինչպես Ստամբուլի շատուշատ ուրբան վերափոխման ծրագրերի դեպքում, այս անգամ էլ վերականգնողական աշխատանքները 6 տարի

renovated and transformed into a hotel.<sup>1</sup> However, like most urban transformation projects in Istanbul, the restoration has been put on hold for six years; it requires a permit due to the historical artifact status of the building. Even if it doesn't entail major changes, the fantasy created by these projects still exists in the collective imagination over these spaces. We can see a similar pattern with regards to the suspended renovation of the Khorenyan School and its persistence in the imagination over how the building should be maintained.

How can one tell the story of marginalized groups when their material relics are either destroyed or abandoned? Despite their centuries-long presence in Balat, Armenian community narratives have been largely excluded from the official discourse. Obstacles along our way of finding reliable sources and recounting the story of the Khorenyan School show a reckless disregard for community experiences. There are hundreds of Armenian, Greek, Jewish, and other minority community sites in Istanbul- Khorenyan School is only one of them-left behind after the deaths of those who kept their memory alive. As Joy Damousi argues, oral history has been essential in bringing up the voices of marginalized groups, "as a means of retrieving those experiences... that are eliminated from official documentation."<sup>2</sup>

Information was collected on a research field trip to the district between October 4 and 10, 2020. The research team interviewed two former students of the Khorenyan School - Romanos Vartkes Cezveciyan, who is the current chairman of the local Edirnekapi Armenian cemetery, and Garbis Khorasanjian, a former teacher of the Armenian language, Armenian literature and religion. The research team also visited the Edirnekapi Armenian cemetery and Surb Hreshdagabed Church and spoke with one of its employees.

<sup>1</sup> While this text was being prepared, it was announced that the Khorenyan School would be transformed into a cultural center. See "Balat'taki Khorenyan Ermeni İlkokulu Kültür Merkezi Olacak", (April 25, 2021), Emlak Kulisi, <https://emlakkulisi.com/balattaki-khorenyan-ermeni-ilkokulu-kultur-merkezi-olacak/672423>




The outdoor view of the Khorenyan School.  
Խորենյան դպրոցի շքանտառը:

<sup>2</sup> Damousi, J. 2001. *Living with the Aftermath: Trauma, Nostalgia, and Grief in Post-war Australia*, Cambridge University Press, Cambridge, 2.

## EARLY ARMENIAN SETTLEMENTS IN BALAT

Balat was one of the first places where the Armenians of Constantinople resided during the Ottoman period.



Khorenyan School anthem.  
Courtesy of Romanos Cezvecian.  
Խորենյան դպրոցի դպրոցի  
օրհներգը: Տրամադրեց Ռոմանոս  
Չեզվեջյանը:

<sup>1</sup> Damousi, J. 2001 . *Living with the Aftermath: Trauma, Nostalgia, and Grief in Post-war Australia*, Cambridge University Press, Cambridge, 2.

սառեցվեցին, նաև իբրև պատմամշակութային հուշարձան հատուկ թույլտվություններ ստանալու հարցը ձգձգվեց: Ստամբուլում քաղաքային վերափոխման շատ ծրագրեր նմանատիպ ճակատագրի են արժանացել՝ կամ սառեցված են, կամ՝ չեղարկված, մինչդեռ ուրբան այս տարածքները շարունակում են սնուցել հանրային երևակայությունը: Անգամ իրական փոփոխությունների չէնթարկվելով՝ միևնույն է, նման նախագծերի ազդեցությունը մտում է հավաքական երևակայության մեջ: Նման մի պատկեր հյուսվել է նաև Խորենյան վարժարանի կասեցված վերակառուցման շուրջ, և թե ինչպես կարելի էր այն աշխատեցնել:

Ինչպե՞ս պատմել լուսանցքայնացված խմբերի պատմությունը, երբ նրանց նյութական ժառանգությունը ոչնչացված է կամ ավերված: Չնայած Բալթաում հայերի դարավոր ներկայությանը՝ տեղի հայ համայնքի փորձառությունը և պատմությունները պաշտոնական դիսկուրսից դուրս են և որպես կանոն՝ անտեսված: Խորենյան դպրոցի վերաբերյալ դժվար էր գտնել հավաստի աղբյուր, ինչը ցույց կտար տեղանքի կամ համայնքի մասին պատմության վերականգնման խոչընդոտները, էթե այն չի եղել պաշտոնական: Խորենյան դպրոցը Ստամբուլի հայկական, հունական, հրեական և այլ փոքրամասնական համայնքների պատկանող հարյուրավոր վայրերից միայն մեկն է, որ մոռացության է մատնվել իրենց հիշողության մեջ այն պահպանող անհատների մահից հետո: Ինչպես Տոյ Դամուսին է պնդում՝ բանավոր պատմությունը վճռորոշ է լուսանցքայնացված խմբերի ձայնը լսելի դարձնելու գործում, որ «վերականգնի նրանց փորձառությունը... որը ջնջվել է պաշտոնական փաստագրությունից»<sup>1</sup>:

Խորենյան դպրոցի վերաբերյալ տեղեկությունները հավաքագրվել են 2020-ի հոկտեմբերի 4-ից 10-ը իրականացված դաշտային հետազոտության արդյունքում, որը ներառում է վարժարանի երկու նախկին սանի՝ Ռոմանոս Վարդգես Չեզվեջյանի՝ Էդիրնեքափրի հայկական գերեզմանատան ներկայիս վերակացուի և Կարպիս Խորասանջյանի՝ հայոց լեզվի, գրականության և կրոնի նախկին ուսուցչի հետ հանդիպումները: Հետազոտական թիմը երկուսի հետ էլ հարցազրույցներ է արել, այցելել է տեղանք, հավաքել արժեքավոր նյութեր, որոնք լույս են սփռում Բալթաի հայկական համայնքի և Խորենյան դպրոցի պատմության վրա: Հետազոտողներն այցելել են նաև Էդիրնեքափրի հայկական գերեզմանատուն և Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցի, գրուցել աշխատանքներից մեկի հետ:




▲ Khorenyan School, Inscription above the entrance door, October 2020.  
 ▲ Խորենյան դպրոց, շքամուտքի գրություն, հոկտեմբեր, 2020

▼ On the right are the walls of Surp Hreshதாகapet Church. On the left are the barbed wire fences of a Turkish elementary school. Across the road we see the Khorenyan School's entrance, blocked by a truck. October 2020.

▼ Աջից Մուրր Շրեշտակապետաց եկեղեցու պատն է, ձախից՝ թուրքական տարրական դպրոցի փշալարերով պատված դարպասը . հետի հատվածում բնենատարր փակել է Խորենյան դպրոցի մուտքը. հոկտ . . 2020:







▲Outside view of the abandoned main Khorenyan School building.  
▲Խորենյան դպրոցի հիշողության հետքերով

▼ The garden inside of Surb Hreshdagabed, the favorite playground of Khorenyan Students. October, 2020.  
▼Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցու բակը, խորենյանցիների սիրած խաղաղաշրջ, օկտոբեր, 2020:



“When thousands of Armenians were brought from *Kefe* (Feodosia in Crimea) and settled in 1474 in the center of a city in Balat, they called the place *the neighborhood of the townspeople*<sup>1</sup> [Քաղաքացվոց թաղ], whereas the Turks called it *Kefeli Mahale* referring to Kefe where these Armenian migrants were coming from.”<sup>2</sup>

Another wave of Armenians settled in the Balat neighbourhood as a result of the Celali rebellions<sup>3</sup> that affected both Muslims and non-Muslims, including Armenians in the Anatolian provinces (from Erzurum to Sivas and Trabzon). As the Armenian community was in grave danger, Armenians began migrating to safer places, looking for shelter in the Western part of the Ottoman Empire, such as Constantinople<sup>4</sup> and Adrianople (today’s Edirne).<sup>5</sup>

<sup>1</sup> We thank Pakrat Estukyan for the correct translation of this collocation.

<sup>2</sup> Alboyajian, A. 1931. “The composition of Balat”, Melgon-Asatur, *Three-Century History of Surb Hreshdagabed in Balat (1627-1931)* (originally in Armenian), Istanbul, 169.

<sup>3</sup> To read about the mass flight of Armenians during the Celali Revolts, see Shapiro, H. R. 2018. *The Great Armenian Flight: The Celali Revolts and The Rise of Western Armenian Society*, Princeton University Doctoral Dissertations, Princeton, NJ.

<sup>4</sup> Melgon-Asatur 1931. *Three-Century History of Surb Hreshdagabed in Balat (1627-1931)*, (originally in Armenian), Istanbul, 31-32.

<sup>5</sup> In the Armenian source called *The Armenian community of Adrianople* published by Hagop Aghassian in 1935 in Plovdiv, the author gives detailed information on the settlement of Armenians in Adrianople as the result of the Celali rebellions.

## TRACING THE MEMORY OF KHORENYAN SCHOOL

### *Historical Overview*

The Church was the main provider of education for Armenians in the Ottoman Empire. Gradual reforms in school education and the emergence of intellectuals outside the Church brought forth more secular institutions to educate the youth, such as the Khorenyan School.

The Khorenyan School was the primary Armenian school in the district of Balat from the 19th century until the 1970s. It was unfortunately forced to close due to lack of funds and shortage of students. It was intimately connected with the district’s Armenian community whose children attended the school to learn their native language. The school was part of one *vakif* (an “endowment” in Ottoman law) along with the Armenian Church Surb Hreshdagabed and Edirnekapi Armenian cemetery.

The building that later became the Khorenyan School was constructed in 1816. It was originally an orphanage for girls (the first one in Constantinople), founded by Brabion, the sister of Simeon of Yerevan. It was reconstructed between 1862 and 1865 adjacent to the church, and used as a unit for manufacturing incense. The construction of the school was

## Բալաթի վաղ հայկական շնորհյունները

Բալաթը Օսմանյան շրջանում Կոստանդնուպոլսի (այսուհետ՝ Պոլիս) հայերով բնակեցված առաջին վայրերից է: Երբ հազարավոր հայեր բերվեցին *Քեֆեից* (Ղրիմի Թեոդոսիա քաղաքից) և 1474-ին բնակեցվեցին քաղաքի կենտրոնում՝ Բալաթում, որը անվանեցին Քաղաքացվոց թաղ, իսկ թուրքերը կոչեցին՝ *Քէֆէլի մահալլէ*<sup>1</sup>՝ նկատի ունենալով, որ հայերը տեղահանվել էին Քեֆեից:<sup>1</sup>

Բալաթում հայերի բնակեցման մեկ այլ ալիք էլ առաջացավ Չելալիների շարժման<sup>2</sup> արդյունքում, որ մեծապես ազդեց Անատոլիայի թե՛ մուսուլմանների, թե՛ ոչ մուսուլմանների՝ ներառյալ հայերի վրա: Երզրումից մինչև Սեբաստիա և Տրապիզոն հայերի համար ստեղծվեց անտանելի իրադրություն, և սկսվեց հայերի գաղթ դեպի Օսմանյան կայսրության առավել անվտանգ՝ արևմտյան հատվածը, մասնավորապես՝ դեպի Պոլիս<sup>3</sup> և Ադրիանապոլիս (մերօրյա Էդրինե)<sup>4</sup>:

## Խորենյան դպրոցի հիշողության հետքերով

### Պատմական ակնարկ

Օսմանյան կայսրության հայկական համայնքներում կրթությունը ապահովվում էր եկեղեցու միջոցով, որը Բալաթի դեպքում Սուրբ Հրեշտակապետացն էր: Կրթության հետզհետե աշխարհիկացմամբ և եկեղեցուց դուրս մտավոր գործունեություն ծավալողներին ներգրավելու հանգամանքով պայմանավորված՝ սերունդ կրթելու համար Խորենյան դպրոցի տիպի կրթօջախներ բացելու կարիք եղավ:

Խորենյանը՝ իբրև հիմնական դպրոց, գործել է Ստամբուլի Բալաթ թաղամասում 19-րդ դարից մինչև 1970-ականները: Ցավոք սրտի, աշակերտների և միջոցների սղության պատճառով չի շարունակվել դրա գործունեությունը: Դպրոցը սերտորեն կապված էր թաղաբնակ հայերի հետ, որոնց երեխաները հաճախում էին դպրոց՝ հայերեն ուսանելու: Դպրոցը հանդիսանում էր *վաքոֆի մաս* (օսմանյան օրենքի համաձայն՝ Հիմնադրամի)<sup>5</sup> Սուրբ Հրեշտակապետացի և Էդիրնեքափըի հայկական գերեզմանատան հետ:

Խորենյան դպրոցի շենքի պատմությունը սկիզբ է առնում 1816-ից: Ի սկզբանե աղջիկների մենատուն էր (առաջինը Պոլսում)<sup>6</sup> բացված Սիմեոն Երևանցու քրոջ՝ Բրաբիոնի ջանքերով: 1862-1865-ին վերակառուցվում է որպես եկեղեցուն կից արհեստանոց, որտեղ եկեղեցու կարիքների համար խունկ էր արտադրվում: Դպրոցը հիմնվում է շուրջ հիսուն անհատի<sup>5</sup> նվիրատվությունների և ջանքերի շնորհիվ: Կրթօջախի

<sup>1</sup> Ալլոյաճան, Ա. 1931. “Պալաթու թաղի կամոքիներ”, Մելգոն-Ասատուր. *Երեքդարան պատմություն Ս. Հրեշտակապետաց եկեղեցուց Պալաթու (1627-1931)*, Կ. Պոլիս, 169:

<sup>2</sup> Չելալիների շարժման ընթացքում հայերի գանգվածային տեղահանության մասին տե՛ս Shapiro, H. R. 2018. *The Great Armenian Flight: The Celali Revolts and The Rise of Western Armenian Society*, Princeton University Doctoral Dissertations, Princeton, NJ:

<sup>3</sup> Մելգոն-Ասատուր 1931. *Երեքդարան պատմություն Ս. Հրեշտակապետաց եկեղեցուց Պալաթու (1627-1931)*, Կ. Պոլիս, 31-32:

<sup>4</sup> Հ. Աղապաճը *Ադրիանապոլսյան հայ գաղթը* (Բյուկեսթ, 1935) հայտնելու աղբյուրում մանրամասն ներկայացնում է Չելալիների ապստամբության հետևանքով հայերի վերաբնակեցումը Ադրիանապոլսում:

<sup>5</sup> Մելգոն-Ասատուր, *նույն տեղում*, 169:

accomplished through the efforts and donations of approximately fifty individuals.<sup>1</sup> The completion of the Khorenyan school was celebrated as a great success, praised as “a glory and honor to this historical district, with its rich educational harvest.”<sup>2</sup>

<sup>1</sup> Alboyacian, A., *ibid.*, 169.

<sup>2</sup> Melgon-Asatur, *ibid.*, 193.

According to the inscription above the iron lattice entrance door on Isa Mektebi Street, the Khorenyan School started to function in 1866. Besides the main entrance, two other doors led students to the large garden located to the North and the South of the School. The ground floor contained two rooms for female and male housekeepers, two big canteens, and two rainwater storage tanks. The floor was tiled. The middle floor had four average classrooms, two spacious classrooms, several storerooms, and toilets (male and female). The third floor had a teacher’s cabinet, four average classrooms, two spacious classrooms, and storerooms.<sup>3</sup>

<sup>3</sup> *Ibid.*

In 1920, the Khorenyan School played a historical role by hosting the first meeting of the Armenian Democratic Liberal Party (ADLP or Ramgavar Party). J. Abikyan wrote in the Armenian newspaper “Jokhovourti Dzayne, Jamanak”: “One month ago the ADLP (Ramgavar Party) organised a club in Balat with 30 members. Dr H. Levengian, well-known and respected in the Armenian community, was elected as the Chairman of the Party, while P. Sargis Poghosian took the position of the Secretary. Members from Fener, Balat, Lonca and Aывansaray gathered their forces in Balat.”<sup>4</sup>

<sup>4</sup> Abikyan, J. 1920. *Jokhovourti Dzayne: Jamanak*, N628 (Thursday, October 22-November 4), Istanbul.

Residents of Balat gathered on Sunday for the opening ceremony organised by the Party: “Last Sunday we witnessed the constructive energy, brought in the hall of the Khorenyan School by Armenians of Balat and other neighbourhoods. The newly founded Ramgavar club solemnly held its opening ceremony in front of a big crowd.”<sup>5</sup>

<sup>5</sup> *Ibid.*

The Armenian and Greek flags were auctioned, and the winner would have the honour of raising the two flags in the club. Speeches were given by a representative of the American branch of Ramgavar Party G.S. Papazian and Cilician National Unity, Ramgavar member and editor of *Armenian Voice* [Հայ Ձայն] S. Gebenian.

After the 1925 fire, for several decades the school continued its activities in the wooden construction for clergymen in the garden of the Surb Hreshdagabed

հիմնարկեքը կշվում է որպես մեծ հաջողություն «փառքն ու պատիւը եղած է պատմական՝ սոյն թաղին. կրթական իր հարուստ հունձովքը»:<sup>1</sup>

<sup>1</sup> Մելգոն-Ասատուր, *Նույն տեղում*, 193:

Իսա Մեքթեբի փողոցի երկաթակուռ դռան գրույթան համաձայն՝ Խորենյան դպրոցը սկսել է գործել 1866-ից: Բացի հիմնական մուտքից, ևս երկու դուռ բացվել է դեպի շենքի հյուսիսային և հարավային հատվածներում տեղակայված ծառաշատ այգին: Առաջին հարկը բաղկացած էր կին և տղամարդ սպասավորների համար երկու անջատ սենյակից, երկու մեծ մառանից, երկու խորը ջրամբարից (անձրևաջրերի համար): Հատակը սալիկապատ էր: Միջնահարկն ուներ չորս դասասենյակ, երկու դասարահ, պահեստներ, զուգարաններ (տղաների և աղջիկների): Երրորդ հարկում կային ուսուցչանոց, չորս դասասենյակ, երկու դասարահ և պահեստներ<sup>2</sup>:

<sup>2</sup> *Նույն տեղում*:

1920-ին Խորենյան դպրոցը պատմական դերակատարում ունեցավ՝ Հայ ժողովրդավար ազատական կուսակցության (կամ Ռամկավար կուսակցություն) առաջին ժողովը հյուրընկալելով իր պատերի ներքո: Ժ. Աբիկյանը գրեց «Ժողովուրդի Ձայնը. Ժամանակ» թերթում. «*Ամիսը մը ի վեր Պալաթի մէջ կազմակերպուած է ՀՌ- կուսակցութեան ակումբ մը, 30է աւելի անդամներով, որուն առենապետ ընտրուած է Մօնթէլիէի բժշկ. համալսարանի հին ընթացաւարտներէն Տօթթ. Հ. Լէվէնգեան, պատուական հայ մը, որուն մասին ակնածանօք կը խօսին բոլոր թաղեցիները: Քարտուղարութեան պաշտպանը կը վարէ Պ. Սարգիս Պօղօսեան: Ակումբը իր կազմակերպութեան առաջին օրէն իսկ սկսած է ցօյց տալ օրինակելի գործունէութիւն մը, որ մեծ քաջալերութեան առարկայ կը դառնա Ոսկեղջիւրի չորս թաղեցիներու կողմէ – Տէնէր, Պալաթ, Լօժնա և Այվան Սարայ – որոնք իրենց ուժերը Պալաթի մէջ կեդրոնացնելով՝ ձեռնամուխ եղած են շարժումի մը, որ օրէ օր ծաւալ կը գտնէ ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ»:<sup>3</sup>*

<sup>3</sup> Abikyan, J. 1920. *Jokhovouri Dzayne: Jamanak*, №628 (հինգշաբթի, հոկտ. 22, նոյեմբերի 4), Istanbul:

Բալաթցիները կիրակի օրը հավաքվեցին Խորենյան դպրոցում Կուսակցության բացման արարողությանը: «*Անցեալ կիրակի ականատես եղանք այն շինիչ եռանդին, գոր Պալաթցին և միւս բոլոր թաղեցիները պարզեցին Պալաթի Խորէնեան վարժարանի սրահին մէջ: Նորաբաց Հ. Ռ. Ակումբը հանդիսատրապէս, խտուն բազմութեան մը ներկայութեանը, կատարեց իր բացման հանդէսը...»:<sup>4</sup>*

<sup>4</sup> *Նույն տեղում*:

Աճուրդի հանվեցին հայկական ու հունական դրոշները, և հաղթողին վերապահվեց ակումբում զույգ դրոշը բարձրացնելու պատիվը: Երկու ելույթով հանդես եկան Ռամկավարների ամերիկյան մասնաճյուղից Գ. Ս. Փափագյանը և Կիլիկյան ազգային միությունից ռամկավար կուսակցական և «Հայ ձայնի» խմբագիր Ս. Գեբեկյանը:

1925-ի հրդեհից հետո դպրոցը շարունակեց գործել Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցու այգում տեղակայված





Դիանա Յայլոյան, Մերն Ուրուրաշ, Լեոն Ասլանով  
Հայկական Բալաթի հիշողության հետքերով, Խորենյան  
դպրոցը և Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին



•The inside of the Khorenyan School. The school is now closed and nobody is allowed to enter. We were lucky that Romanos shared these photos, taken by him earlier.

•Խորենյան դպրոցի ներքը: Դպրոցն արդեն փակ է, և թող չի տրվում ներս մտնել: Բարեբախտաբար Ռոմանոսը տրամադրեց մեզ ավելի վաղ արված այս լուսանկարը:

•Photo from 1931-1932. Students with the Principal of the Khorenyan School. Names of the students sitting (from right to left): Orner Shake Djerejian, Siranush Boyajjian, Verzhin Pamukjian (Romanos Cezveciyan's mother), Verzhin Partizpanyan. Students standing: P.P Zareh Arapyan, Zaven Maglrmayan, Harutyun Ohanyan, Nvard Trtoyan (Garbis Khorasanjian's mother), Hustik Stepanyan, Aghavni Alemyan, Aliksan Siloyan, Hakob Demirjyan, Levon Karmiryan (absent).

•1931-32 թթ. լուսանկար. Խորենյանի սաները սնօրենի հետ: Նստած աշակերտների անունները՝ աջից ձախ. Օրներ Շաքե Զերեջյան, Սիրանուշ Բոյաջյան, Վերժին Փամուկյան (Ռոմանու Չեվեցյանի մայրը), Վերժին Պարտիզպանյան: Կանգնած աշակերտները՝ Պ. Պ. Զարեհ Առապյան, Զավեն Մագլրմյան, Հարություն Օհանյան, Նվարդ Բրթոյան, (Կարպիս Խորասանյանի մայրը), Հուսիկ Ստեպանյան, Աղավնի Ալեմյան, Ալիկսոն Սիլոյան, Հակով Դեմիրջյան, Լևոն Կարմիրյան (բացակա):





Խորհնեան վարժարանի աշակերտութիւնն և ուսուցչական կազմն մաս մը

Part of the staff and students of the Khorenyan School.

Խորենյան դպրոցի որոշ աշխատակիցներ և սաներ:

Church. The burnt and empty school building was rented out and used as a tobacco factory. In the late 1990s, this building turned into a soap factory. The clergy school, known as "Little Khorenyan", enrolled less and less students in the 1940s and late 1950s as Armenians living in and around Balat moved out to other districts. This drastic decline in the student number (four individuals in the 1976–77 class) led to the closure of the school.



## VISUALISING KHORENYAN SCHOOL THROUGH THE MEMORIES OF ROMANOS AND GARBIS

*Romanos Vartkes Cezveciyan*

From the very first phone call, Romanos Vartkes Cezveciyan was eager to help with our research. He invited us to his apartment in Kurtuluş, where we began our fieldwork. Romanos had prepared all the documents (curriculum, old photos, student ID, photocopies of the books) related to the Khorenyan School. We immediately understood from our first conversation that Romanos dearly loves the Armenian culture and is dedicated to its preservation.

Romanos was born near Edirnekapi. He has two brothers, and both studied at Khorenyan School. One brother, Varuzhan, has passed away. Another brother, Kamer, a jeweller, has moved to Germany. For security reasons, the family always accompanied Romanos to the Khorenyan School and took him home after classes: *“My whole family studied at Khorenyan. I lived near Edirnekapi, and every day went to school from there, it’s a 15 to 20-minute walk. In the second year of my studies I had health issues; it was difficult for me to go to school and get back home during cold winter days. So my mother decided to take me to the Nersesyan Armenian Boarding School [Hasköy-Halicioğlu], where I completed my primary education.”*

Romanos showed us an old photo of his mother, Verzhin, with other students, all graduates of the Khorenyan School. Referring to the Khorenyan School curriculum, dated back to 1920, Romanos said with amusement: *“Look at these classes, would you find anything like this today? I was shocked when I saw these subjects: Religion, Ethics, Classical Armenian, Calligraphy...”*



հոգևոր դպրանոցի փայտաշեն շինությունում: Վառված և դատարկված շենքը վարձակալության տրվեց ծխախոտի գործարանի: Ուշ 1990-ականներին շենքում գործում էր օճառի արտադրամաս: «Փոքրիկ Խորենյան» անվամբ հայտնի հոգևոր դպրոցի սաները 1940-ականներից մինչև ուշ 1950-ականներ գնալով պակասեցին, քանի որ Բալաթում և շրջակայքում ապրող հայերը լքեցին թաղամասը: 1976-77 թթ. աշակերտների թիվը հասավ չորսի, ինչն էլ հանգեցրեց դպրոցի փակմանը:



**Խորենյան դպրոցի պատկերը՝  
Ռոմանոսի և Կարախիսի հիշողություններում**

*Ռոմանոս Վարդգես Չեզվեշյան (Ռոմանոս Ճեզվեճեան)*

Առաջին իսկ զանգից Ռոմանոս Վարդգես Չեզվեշյանը մեր հետազոտությանը ոգևորությամբ սատար կանգնեց: Հրավիրեց մեզ Քուրթուլուշի իր բնակարան, որտեղից մեկնարկեց մեր դաշտային աշխատանքը: Ռոմանոսը նախապատրաստվել էր և սեղանին շարել Խորենյան դպրոցին առնչվող բոլոր կյոթերը (ուսումնական ծրագիրը, հին լուսանկարներ, աշակերտական վկայականը, գրքերի լուսապատճեններ): Չրույցից պարզ դարձավ, որ Ռոմանոսը ջերմորեն սիրում է հայ մշակույթը և դրա պահպանության նվիրյալ է:



Ռոմանոսը ծնվել է Էդիրնեքափրի հարևանությամբ: Երկու եղբայր ունի, երկուսն էլ Խորենյան դպրոցում են սովորել: Սի եղբայրը՝ Վարուժանը, արդեն մահացել է, մյուսը՝ Կամերը, որ ոսկերիչ է, տեղափոխվել է Գերմանիա: Անվտանգ լինելու համար ընտանիքը մշտապես ուղեկցել է Ռոմանոսին դպրոց, դասերից հետո՝ տուն: «Ողջ ընտանիքս սովորել է Խորենյանում: Ապրում էինք Էդիրնեքափրի հարևանությամբ, և Էստեղից ամեն օր դաս էի գնում, 15-20 րոպեի ճամփա է ոտքով: Խորենյանում ուսանելուս երկրորդ տարում առողջական խնդիրներ ունեցա, և քանի որ ինձ համար դժվար էր ձմեռվա ցրտին դպրոց գնալ-գալը, մայրս որոշեց ինձ տանել Հասքոյ-Հալըշըօղտի Ներսեսյան գիշերօթիկ հիմնական դպրոցը, որտեղ էլ ավարտեցի կրտսեր դպրոցը»:<sup>1</sup>

<sup>1</sup> Սույն հոդվածում մեջբերված գրույցները բուրբերենով են: Բուրբերենից բարգմանեց Ա. Օհանյանը:

Ռոմանոսը մեզ ցույց տվեց իր մոր՝ Վերժինի հին լուսանկարը, երկու այլ աշակերտի հետ, բոլորն էլ՝ Խորենյանի շրջանավարտներ: 1920 թ.-ի Խորենյանի ուսումնական ծրագիրը ցույց տալիս նա հիացմունքով ասաց. «Նայեք այս դասերին, այսօր նման բան կտեսնե՞ք: Ապշած էի, երբ այս առարկաները տեսա՝ կրոն, Էփիկա, դասական հայերեն, գեղագրություն...»:



Ռոմանոսը հայկական դպրոցներում հայերենի դասաժամերի կրճատումը ծանր է տանում: Ըստ իրեն՝ շաբաթական ընդամենը երկու դասաժամն աշակերտներին չի

Romanos lamented the decrease of teaching hours of the native language in Armenian schools. According to him, Armenian taught only twice a week hurts students' proficiency in the language. In the early 1960s, when he was at Khorenyan, all classes in the curriculum were in Armenian, except for Turkish language classes. In 1971, the number of students at Khorenyan had already dropped to four.

*“Our class wasn't crowded. Even the executives of the Surb Hreshdagabed Church—two sisters and their brothers—were also graduates of the Khorenyan School. The school was a wooden building in the backyard of the Church. But that building... I do not remember in which year... was burned to the ground. Before the 1920s, the Khorenyan School was a beautiful building. Then it was moved to the Church's garden, where I also studied.”*

Until 1924, the Armenian Patriarchate was in charge of the Armenian schools providing textbooks, supplies, and appointing teachers and inspectors.<sup>1</sup> Following the adoption of the Unification of Education Act in 1924 Armenian schools were subordinated to the Ministry of Education. The latter changed the curriculum and appointed administrators and teachers for compulsory classes such as Turkish history, geography and citizenship education.<sup>2</sup> However, Armenian schools were still allowed to teach their native language and literature as well as music.<sup>3</sup>

Romanos' whole family is buried at Edirnekapi Armenian cemetery. As soon as Romanos began working at the cemetery, it became an ideal place of fieldwork for him. He spent an enormous amount of time reading and translating the inscriptions on the gravestones (old ones date back to the 18th century). By the time we met, Romanos had already prepared 60 translations from more than two hundred gravestones. Doing this on a voluntary basis, Romanos hopes to issue a catalogue and share it with everyone interested in the history of the Armenian community in Balat. Among them are bishops, archbishops, patriarchs, and priests.

The cemetery could be defined as a “Diary of Armenian Balat,” since this was the place where generations of Balat Armenians were buried since the 18th century. As Romanos told us, *“The story of these tombstones in Edirnekapi Cemetery should be a topic for separate research.”*

<sup>1</sup> Ekmekçioğlu, L. 2016. *Recovering Armenia: The Limits of Belonging in Post-Genocide Turkey*, Stanford University Press, Stanford, 124.

<sup>2</sup> Hofmann, T. 2002. *Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic*, The EU Office of Armenian Associations of Europe, Brüksel, 26.

<sup>3</sup> Ekmekçioğlu, L., *ibid.*, 125.

ապահովում լեզվի իմացություն: Ռումանոսի ասելով՝ վաղ 1960-ականներին, երբ ինքն ուսանում էր Խորենյանում, բոլոր առարկաներն անցնում էին հայերեն՝ բացառությամբ թուրքերենի դասաժամի: Իսկ 1971-ին Խորենյանի աշակերտների թիվը հասավ չորսի:

«Մեր դասարանը մարդաշատ չէր: Երկու քույր կա՝ իրենց եղբոր հետ, որ ներկայում Բալաթի եկեղեցին են դեկավարում, նրանք էլ են Բալաթի դպրոցում սովորել: Եթե նրանց մոտ գնանք, գուցե նրանք էլ որոշ բաներ հիշեն: Դպրոցը եկեղեցու հետնաբակում գտնվող փայտե շենք էր, բայց այդ շենքը ... Չեմ հիշում՝ որ թվականն էր ... հրդեհից վնասվեց ու ավերվեց: 1920-ից առաջ Խորենյան դպրոցը մի գեղեցիկ շենքում էր տեղակայված, բայց 1920թ. հետո այն տեղափոխվեց եկեղեցու բակ, որտեղ նաև ես եմ ուսանել»:

Այսպիսով, պարզեցինք, որ Բալաթում երկու Խորենյան դպրոց է եղել, և մինչ Խորենյանի հիմնական շենքը փակի տակ է եղել 1925-ի հրդեհից հետո, դասերը տեղափոխվել են Փոքր Խորենյան՝ Սուրբ Յրեշտակապետացի այգի՝ հետնաբակից իր առանձին մուտքով:

Մինչև 1924-ը հայկական դպրոցները ենթակա էին Չայոց Պատրիարքարանին, որը համակարգում էր դասագրքերը, ուսումնական կյուրթերը, նշանակում ուսուցիչներին և վերակացուներին:<sup>1</sup> Իրավիճակը փոխվեց 1924-ին, Կրթության միասնականացման ակտով, որի համաձայն՝ հայկական դպրոցներն անցան Կրթության նախարարության<sup>2</sup> վերահսկողության տակ, որը և հաստատում էր ուսումնական ծրագիրը, նշանակում վարչական աշխատողներին և պարտադիր ուսումնական առարկաների ուսուցիչներին՝ Թուրքիայի պատմության, աշխարհագրության և քաղաքացիական կրթության<sup>3</sup>: Չայկական դպրոցների սաներն իրենց ինքնությունը պահպանելու համար հաճախում էին հայերենի, հայ գրականության և երաժշտության դասերի:

Խորենյան դպրոցը գործում էր Սուրբ Յրեշտակապետաց եկեղեցու ֆինանսական օժանդակությամբ և պատկանում էր Բալաթի Սուրբ Յրեշտակապետաց հայկական եկեղեցու, Խորենյան դպրոցի և հայկական գերեզմանատան հիմնադրամին (թուրք.՝ Balat Surp Hreşdagabet Ermeni Kilisesi, Khorenyan Mektebi ve Mezarlığı, Vakfı): Լախիկիսում Փոքր Խորենյանի շենքը Սուրբ Յրեշտակապետացի հոգևորականների համար որպես հյուրատուն էր ծառայում և վերածվեց դպրոցի, երբ Խորենյանի հիմնական շենքը վարձակալությամբ տրվեց օճառի գործարանի:

Ռումանոսի ողջ ընտանիքը թաղված է Էդիրնեքափըի հայկական գերեզմանատանը: Այն ժամանակվանից, երբ Ռումանոսը գործի է անցել այդ գերեզմանատանը, տարածքը դարձել է իր համար պատահական հայտնագործությունների վայր: Անհաշվելի ժամեր է անցկացրել գերեզմանաքարերի գրություններն

<sup>1</sup> Ekmekcioğlu, L. 2016. *Recovering Armenia: The Limits of Belonging in Post-Genocide Turkey*, Stanford University Press, Stanford, 124.

<sup>2</sup> Նույն տեղում, 125:

<sup>3</sup> Hofmann, T. 2002. *Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic*, The EU Office of Armenian Associations of Europe, Brussels, 26.

## *Garbis Khorasanjian*

On the third day of our fieldwork we went with Romanos to visit his former classmate Garbis Khorasanjian, who was born in Balat in 1948. Seeing two former Khorenyan students together remembering their old school days and singing the Khorenyan anthem was one of the most unforgettable memories from the fieldwork. They both looked animated as if they stepped back in time and visited their classroom:

*“We are the students of Khorenyan  
Glowing flowers in the orchard  
We tie bouquets from this garden  
From the splendid flowers of education.”<sup>1</sup>*

<sup>1</sup> Translated from Armenian by the authors of this article.

Despite his retirement from the Yesayan School and serious illnesses, Garbis continues to work on translations of Armenian books. His love for the Armenian language, history and literature is inspiring. The walls in his guestroom are decorated with paintings and Armenian inscriptions. Among these objects, we noticed a fascinating wall clock with the images of iconic Armenian public intellectuals, made in 1992 by Perch Erzian, “a modest and self-sacrificing worker of our community.”<sup>2</sup>

Garbis Khorasanjian’s mother, Nvard Trtoyan, was a classmate of Romanos’ mother Verzhin. Garbis was one of the last students of the Khorenyan School. “In 1922 the school turned into a girls’ school, because after the 1915 genocide, 300 orphan girls were brought to the school,” noticed Garbis. Towards the end of its existence, the school had only four grades; fifth graders had to find another school, or repeat the fourth year. Garbis says that he graduated only with one other person, a boy named Dikran.

<sup>2</sup> Degirmenciyan, S. September 5, 2018. “A literary feat - ‘Nork’,” Agos gazetesi.

He blames his community for the eventual demise of the school: “Now parents come and say “what is s/he going to do with Armenian? You have to earn money. I became an Armenian teacher, and got my salary. But you shouldn’t learn Armenian only to earn money. Or let’s say a Congolese person doesn’t learn his/her language to earn money. S/he learns it because s/he belongs to that nation.”

ընթերցելու և թարգմանելու վրա՝ սկսած 18-րդ դարի թվագրվող թարերից: 2020-ի հոկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում՝ մեզ հանդիպելու ժամանակ, Նա արդեն հասցրել էր ավելի քան երկու հարյուր գերեզմանաքարից 60-ի գրությունները թարգմանել: Ռոմանոսը հանրային հիմունքներով է այս գործը ստանձնել և հույս ունի, որ վերջնարդյունքը կիրապարակի կատալոգի տեսքով՝ կիսվելով բոլոր նրանց հետ, ում հետաքրքրում է Բալաթի հայ համայնքի պատմությունը: Հանգուցյալների ցուցակում պատրիարքներ, եպիսկոպոսներ և բազմաթիվ հոգևորականներ կան:

Գերեզմանատունը կարելի է կոչել «Բալաթի հայության հուշամատյան», քանի որ հենց այստեղ են 18-րդ դարից սկսած թաղվել Բալաթի հայերի բազմաթիվ սերունդներ: Ռոմանոսն ասում է. *«Էդիրնեքափրի գերեզմանատան տապանաքարերի պատմությունը մի առանձին հետազոտության նյութ է»:*

#### *Կարպիս Խորասանջյան (Գարբիս Խորասանճեան)*

Դաշտային աշխատանքների երրորդ օրը Ռոմանոսի հետ այցելեցինք իր Նախկին համադասարանցի Կարպիս Խորասանջյանին, որը ծնվել է Բալաթում, 1948 թ.-ին: Դաշտային աշխատանքների ամենահիշարժան պահերից մեկն էր Խորենյանի Նախկին երկու սանին միասին տեսնելը: Ականատես եղանք, թե ինչպես են նրանք միասին հիշում դպրոցական հին օրերը և երգում Խորենյանի հիմնը: Երկուսն էլ ոգևորված, ասես ժամանակի միջով հետ էին գնացել՝ դեպի աշակերտական Նստարաններ:

*«Մենք ենք սաներ Խորենեանի  
Վառ ծաղիկներ բուսատանի  
Կը կապենք փունջ այս պարտեզէն  
Ուսմանց չքնաղ ծաղիկներէն»:*

Չնայած առողջական լուրջ խնդիրներին և Եսայան դպրոցում թոշակի անցնելուն՝ Կարպիսը շարունակում է աշխատել հայերեն գրքերի թարգմանության վրա: Կարպիսի սերը դեպի հայերենը, հայոց պատմությունն ու գրականությունը ոգեշնչող է: Նրա հյուրասենյակի պատերը զարդարված են հայկական նկարներով ու գրերով: Պատերի զարդարանքներով հիանալիս նկատեցինք պատի՝ 1992-ին ստեղծված մի ուշագրավ ժամացույց, որի վրա պատկերված էին հայ արվեստի, գրականության և քաղաքականության մեծանուն դեմքեր՝ Պերճ Երզյան անունով «Հայ համայնքի համեստ և ինքնամոռաց աշխատավորից»<sup>1</sup> գրությամբ:

<sup>1</sup> Değirmenciyan, S. սեպտեմբերի 5, 2018. "A literary feat - 'Nork' ," Agos gazetesi:

Garbis sees a direct link between Armenian language and Armenian culture in general. For instance, he retells his experience of “feeling Armenian” when he was part of the Turean choir [Թուրեան Երզնայում] at the Surb Hreshdagabed church. He sang there to express and preserve his culture:

*“I sang in the Church choir for around 14-15 years. My father took me there, when I was about six years old. I knew the prayers by heart. Then I had doubts, I questioned myself. However, I continued singing. I said to myself, “this church is one of the foundations of Armenian culture. I will go to the church and sing. Neither for the sake of religion, nor for Jesus. But for the sake of my culture.”*

The Turean choir, where Romanos sang with his brother Kamer Cezveciyan, does not exist anymore. Regarding his own education at Khorenyan school, Garbis notes that all classes were taught in Armenian apart from history, geography and the Turkish language.<sup>1</sup> Those were taught in Turkish by an ethnic Turk. French was the only foreign language taught at school. He thinks French is a substantial part of his general education.

## “CHILDREN OF KHORENYAN”

The following text is an excerpt<sup>2</sup> from the “Five-Year Bulletin of Khorenyan Mixed-Sex School” published by the Terzyan Brothers in 1933:

*By the end of 1924 the Khorenyan School was forced to abolish middle and higher classes. The decision was made to function without higher classes for about 5-6 years. During that period, children in Balat, after finishing elementary classes, were compelled to work (crafts, etc) without the opportunity to complete their education. Only children of several well-to-do families could attend faraway schools.*

*1928-1929. At the end of the semester, the school had only 48 students, including the kindergarten section. Despite the fact that the school was reopened in December, it functioned quite well during this period.*

*1929-1930. The number of students has risen to 63. However, since the school size remained the same, some of our students had to leave Khorenyan.*

*1930-1931. The decision was made to apply to the District Council*

<sup>1</sup> As Linda Barış mentions in her doctoral study, “It was mandatory that teachers teaching courses like Turkish language and Literature, National History and Geography, National Security classes in Armenian schools had to be Turkish, were required to be selected from among those who had a sense of [belonging to] national identity.” Barış, L. 2017. *The Effects of the Armenian Schools on the Ethnic Identity Formation of the Armenian Students in Turkey*, Doctoral Thesis, Orta Doğu Teknik Üniversitesi, Ankara. The fact that only Turkish language and Literature, National History and Geography, National Security were taught in Turkish indicates the importance of those subjects in the context of nation-building through education.

<sup>2</sup> Translated from Armenian by the authors of this article.





Annual Works Evaluation, early 1920s, Khorenyan School.

Վարդան Կարամյանի 1920-ականների, Խորենյան դպրոց:

<sup>1</sup> Ինչպես Լինդա Բարիշն է հիշատակում իր դոկտորական քեզում՝ «Պարտադիր էր, որ հայկական դպրոցներում թուրքերեն և թուրք գրականություն, ազգային պատմություն և աշխարհագրություն, ազգային անվտանգություն դասավանդող ուսուցիչները լինեին թուրքեր, որոնք ազգային ինքնության վառ կրողներ էին»: St' u Baris, L. 2017. *The Effects of the Armenian Schools on the Ethnic Identity Formation of the Armenian Students in Turkey*, դոկտորական ասեռատեսություն, Orta Dogu Teknik Üniversitesi, Ankara: Փաստը, որ միայն այս ստարկաները՝ թուրքերենը և թուրք գրականությունը, ազգային պատմությունը և աշխարհագրությունը, ազգային անվտանգությունն էին ուսուցանվում թուրքերեն, ստանալուով է դրանց կարևորությունը կրթության միջոցով ազգակերտման գործում:

Կարպիս Խորասանջյանի մայրը՝ Նվարդ Թրթոյանը, Ռոմանոսի մոր՝ Վերժինի համադասարանցին էր, Խորենյանի վերջին շրջանավարտներից: «1922-ին դպրոցը դարձավ օրիորդաց վարժարան, որովհետև 1915-ի ցեղասպանությունից 300 որբացած աղջիկ բերվեց դպրոց»,- նկատում է Կարպիսը: Դպրոցն իր գոյության վերջին տարում ընդամենը քառամյա ուսուցում էր ապահովում՝ հիևգերորդ դասարան փոխադրվելու համար պետք է գնայիր այլ դպրոց կամ ստիպված էիր մնալ չորրորդ դասարանում: Կարպիսը հիշում է, որ ավարտելիս ընդամենը մեկ դասընկեր ուներ՝ Տիգրան անունով:

Սեղադրում է համայնքին, որ միջոցների սղության և շահագրգռվածության պակասի պատճառով դպրոցը չհաջողվեց փրկել: «Հիմա խնամակալը գալիս ու ասում է. «Ի՞նչ ենք անելու հայերենը»... Էդտեղ ամեն ինչ վերջանում է: Այդ խոսքի վրա նա էլ չի դիմանում... Հայերենով գումար վաստակել... Կվաստակես, ես հայերենի ուսուցիչ եմ: Գումար վաստակում եմ, աշխատավարձ եմ ստանում: Բայց հայերենը դրա համար չէ, որ պիտի սովորես: Ասենք՝ Կոնգոյի բնակիչները իրենց լեզուն գումար վաստակելու համար չեն սովորում, չէ՞: Սովորում են, որովհետև իրենք այդ ազգի ներկայացուցիչն են»:

Կարպիսն անմիջական կապ է տեսնում հայերենի և հայ մշակույթի միջև: Օրինակ՝ իր պատմելով՝ առաջին անգամ իրեն «հայ է զգացել», երբ Թուրեան երգչախումբի մաս է եղել Սուրբ Զրեշտակապետաց եկեղեցում, որտեղ երգել է իր մշակույթը պահպանելու և ցույց տալու համար:

«Ես շուրջ 14-15 տարի եկեղեցու երգչախմբի կազմում էի: Մոտ 6 տարեկան էի, երբ երգչախումբ մտա: Հայրս ինձ տարավ, ընդունել տվեց: Ես հիմնականում անգիր գիտեի պատարագը: Հետո մտածողությունս փոխվեց: Արդեն սկսեցի ինքս ինձ քննել ու այդպես շարունակեցի: Ինքս ինձ ասում էի՝ քեզ նայիր, Էստեղ նայիր, Էստեղ նայիր, այս եկեղեցին հայկական մշակույթի հիմնաքարերից մեկն է: Ես եկեղեցի կզնամ, կսովորեմ, բայց ոչ միայն հանուն կրոնի կամ միայն հանուն Հիսուսի, այլ հենց հանուն իմ մշակույթի»:

Թուրեան երգչախումբը, որտեղ Ռոմանոսի եղբայրը՝ Կամեր Չեզվեջյանը նույնպես երգել է, այլևս չկա: Խորենյանում ուսանելու մասին Կարպիսը հիշատակում է, որ բոլոր դասերը հայերեն էին անցնում, բացի պատմությունից, աշխարհագրությունից և թուրքերենից, որոնք անցնում էին թուրքերեն<sup>1</sup>, և որ պակաս կարևոր չէ՝ ուսուցիչը պետք է լիներ ծագումով թուրք: Դպրոցում ուսուցանվող միակ օտար լեզուն ֆրանսերենն էր: Նրա կարծիքով՝ ֆրանսերենը բախտավոր նշանակություն ուներ իր սերնդի կրթության գործում:

*for establishing the 3rd grade, which was unanimously accepted. As a result of opening the 3rd grade, the number of students at Khorenyan increased to 89.*

*On New Year's Eve, residents of the district as well as their supporters organized a school festival in honour of parents<sup>1</sup>.*

*In 1931, before proceeding with a major renovation plan (especially old desks), a steamboat tour was organised for school children.*

*On this occasion, the school-loving and energetic youth of the district, following the call, made every effort to support the cause both financially and morally. They organised a dance tour collecting a significant amount of money (more than 300 gold), which was spent as intended.*

*1931-1932. To ensure the progress of the Armenian education in Balat, the decision was made to make a small increase to the budget and open the 4th grade. The number of students increased to 97.*

*As a result of the dedication and care of the Armenian community, Khorenyan School continued to grow, fulfilling its most important mission of providing education to the kids of Balat.*

*1932-1933. This academic year, by adding the 5th grade and expanding the teaching staff, Balat now had its fully developed elementary school. The number of students increased to 130.*

Until 1924, the Khorenyan School did not have higher classes. Throughout the brochure, we see references to a strong sense of unity, or “superhuman sacrifices” among Armenians which contributed to the sustainable education in Balat:

*“Even if many of them attend colleges or even universities, becoming future doctors, lawyers, businessmen and getting to the top of their fields, these students should never forget that this lovely educational center...was the first place to accompany them on their way to education.”<sup>2</sup>*

Balat should be understood as the center of 5-6 quarters, such as Fener-Edirnekapi, Salma Tomruk, Eyup, Lonca, including partially Khasgyugh (modern Hasköy), from where dozens of students attended Khorenyan.

Despite financial difficulties and lack of funds needed for school maintenance, the administration offered free tuition for 18 students from poor families. To cover their expenses on textbooks and school meals, Khorenyan applied to the presidency of the Red Crescent. The latter agreed to help the poor students, providing daily lunches for them.

<sup>1</sup> All holiday programs of the Khorenyan School were provided by Mr. Hovsep Degirmenciyan. See: Five-Year Bulletin of Khorenyan Mixed School, 1933 (originally in Armenian).

<sup>2</sup> *Ibid.*

## «Խորենյանի երեխաները»

Ստորև ներկայացված են Խորենյան դպրոցի հնգամյա տեղեկագրից հատվածներ, որ հրատարակվել է Թերզեան եղբայրների կողմից 1933-ին:

1924. Տարւոյն վերջերը, երբ Խորենեան վարժարանը Միշին եւ բարձրագոյն կարգերը շնչելուու հարկին տակ գտնուեցաւ, ալ ատկէց ասոյն շուրջ 5-6 տարիներ առանց վերին կարգերու Խորենեան իր ընթացքը կը շարունակէր:

Այդ ժամանակամիջոցի տետողութեան, թաղին մանկտին, ստիպուած, վարժարանին տարրական կարգերը աւարտելով կը նետուէր գործի ասպարէզին մէջ, զրկուած իր ամենակարեւոր նախակրթութիւնէն, անշուշտ բացառութիւն կազմելով միմիայն բարեկեցիկ դասակարգին պատկանող մի քանի ծնողքներու զասկները, որոնք՝ տեղի հետադրութեան, տարիքի անյարմարութեան պատճառով մեծ դժուարութիւններ կրելով կը յաճախէին հետադր թաղերու վարժարաններ:

1928-1929. — Շրջանին վերջերը, երբ Խորենեանի դէկը մեզ յանձնուեցաւ, վարժարանը ունէր միայն 48 աշակերտ, մէջը ըլլալով մանկապարտէզի բաժինը:

Այս շրջանին, վարժարանը Դեկտեմբերին վերաբացուած ըլլալուն հակառակ, բաւական զոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերուեցաւ...


1929-1930. — Տարւոյն աշակերտութեան թիւը եղաւ 63, բայց այդ տարին վարժարանին մակարդակը անփոփոխ պահուելուն պատճառաւ, մեր աշակերտներէն քանիներ ստիպուեցան հեռանալ վարժարանէ:

1930-1931. — Տարեշրջանին դիմում ըլլալով օրուան Թաղ. Խորհուրդին, շեշտուելով միանգամայն Գ.րդ կարգին կազմութեան անհրաժեշտութիւնը, միաձայն հասանութեամբ որոշուեցաւ կազմել Գ. կարգը: Շուտով յատկեալ կարգին կազմութեան հրամանը կատարութեանն ձեռք բերուելով, բացուեցաւ յիշեալ կարգը. աշակերտութեան թիւը եղաւ 89:

Տարւոյն կիսուն Կաղանդի Ուրբաթ օրը, ի պատիւ ծնողքներու, թաղեցիներու եւ համակիրներուն Դպրոցական հանդէս մը (\*)<sup>1</sup> սարքուեցաւ ճոխ յայտագրով: Վարժարանը այդ տարին փայտուն շրջան մը բոլորելով ամալկերջի հանդէսով մը սկսաւ ամառնային արձակուոյին:

Այդ տարին վարժարանը կարելուր նորոգութեան եւ դպրոցական զանազան առարկաներու պակասը գնելու եւ մանաւանդ հին գրասեղանները, նոյնպէս դաշնակին նորոգութեան պէտքը տեսնուելով վարժարանին ի նպաստ շոգենաւային զբօսապտոյտ մը սարքել մտադրեցինք: Ուստի այս առիթով թաղին դպրոցատէր եւ եռանդուն երիտասարդութեան կոչ մը ուղղուեցաւ որոնք գրեթէ առանց բացառութեան, ազնուօրէն եկան եւ իրենց նիւթական ու բարոյական աշխատութիւնը իսպաս դրին, ձեռք ձեռքի տալով ջանացին խիստ փայտուն կերպով սարքել զբօսապտոյտ-դաշտապարահանդէսը . որմէ կարելուր գումար մը ւապահովուեցաւ:
In recent years, Balat has embodied the nostalgia for multicultural life along with the efforts of gentrification. Even if the Fener-Balat-Ayvansaray urban transformation project was not implemented, this unique urban patch created a historical city image by melting these three neighboring districts in the same pot. This image seems to erase all nuances and other geographical contexts that individuate them. Today, we cannot mention Balat without Fener. The reason is not only due to the fact that these two districts are side by side, or even intertwined. Rather, it is a spatial manifestation of the prevailing understanding that squeezes people and experience of different beliefs, ethnicities, social classes, habits, stories into the nostalgia of multiculturalism, which is constantly reinvented with selective definitions and acceptances.

However, the urban memory of Istanbul cannot be limited to either a couple of symbolic buildings or the people who built them; the experience of living together manifests this memory as a much broader, much greater motion that transcends human and structure. It includes dogs, cats and seagulls sharing the streets, birds migrating with the change of seasons, trees witnessing the big and small disasters, cypresses covering the cemeteries, fires that devour neighborhoods with their fierce flames, earthquakes, waters that flow and dry, urban waste and pollution, epidemics and many more. Looking at how non-human forces influence/shape urban memory allows us to see the continuity of care and violence practiced in human communities during different tensions over time.<sup>1</sup>

<sup>1</sup> There has been an increase in studies that extend Istanbul's historiography with an environmental approach, thus reevaluating the history and present of the city with the influence of non-human components. For a current bibliography of Istanbul studies. See: Kocabal, O., Özcan, D. 2020. "Istanbul Bibliography 2020", *YILLIK: Annual of Istanbul Studies* 2, 225-235.

# Միասնական կյանք, գատված մահ. Բալաթը տասնիններորդ դարի Ստամբուլի համաճարակի և բժշկման աշխարհագրության մեջ

Որևէ քաղաք ճանաչելու ամենաճիշտ ձևերից մեկն էլ իմանալն է, թե ինչպե՞ս են այնտեղ աշխատում, ինչպե՞ս են սիրում և ինչպե՞ս են մեռնում:

*Ալբեր Զամյու, Ժանտախտը*

Վերջին տարիների ընթացքում Բալաթը դարձել է բազմամշակութային կյանքի հանդեպ նոստալգիկ հայտնի կենտրոններից մեկը. երևույթ, որն ուղեկցվում է հուշերի մեջ թաղամասի ազնվականացմամբ: Թեև Ֆեներ-Բալաթ-Այվանսարայ քաղաքային փոխակերպման ծրագիրը չիրագործվեց, սակայն այն ստեղծեց պատմական քաղաքի պատկեր՝ միաձուլելով այս երեք հարևան թաղամասը մեկ ամանի մեջ: Այս պատկերը կարծես սրբում է բոլոր նրբերանգներն ու աշխարհագրական այլ համատեքստերը, որոնք ընդգծում են թաղամասերի անհատականությունը: Այսօր դժվար է խոսել Բալաթի մասին՝ չհիշելով Ֆեները: Պատճառը միայն թաղամասերի հարևան, նույնիսկ միացված լինելը չէ, այլ տարածական արտահայտումն այն ըմբռնման, որը ներառում է մարդկանց և զանազան դավանանքների, ազգությունների, սոցիալական խավերի, սովորույթների, պատմությունների փորձը բազմամշակութային նոստալգիայի մեջ, որը շարունակաբար հորինվում է ընտրովի սահմանմամբ ու հավանությամբ:

Ստամբուլի քաղաքային հիշողությունը չի կարող սահմանափակվել մի խումբ շենքերով կամ այդ շենքերը կառուցող մարդկանցով: Միասնական կյանքի փորձը և այս հիշողության արտահայտումն ավելի լայնատարած, ավելի մեծ ընթացք է, որը սահմանահատում, անցնում է մարդուն ու կառույցը: Այն ներառում է փողոցներում համատեղ ապրող շները, կատուները ու ծովորորները, չվող թռչունները, մեծ ու փոքր աղետներին վկա ծառերը, գերեզմանատներում հովանի անող կիպարիսները, թաղերը կատաղի կրակների մեջ կլանող հրդեհները, երկրաշարժերը, հորդ ու ցամաքած հեղեղները, քաղաքային աղբը, աղտոտվածությունը, համաճարակները և շատ ավելին:

Քաղաքային հիշողության մեջ ոչ մարդածին ազդեցությունները դիտարկելը հնարավորություն է

Focusing on the role of nineteenth-century epidemics in Balat's memory, the article explores examples from Istanbul's epidemic and death experiences in an effort to expand the concept of "living together". It aims to take Balat out of the spatial framework limited to urban transformation and rehabilitation projects and reposition it in Istanbul's epidemic and healing geographies. In doing so, it intends to trigger new questions about the continuities on which the discourse of "urban cleaning" have been built and how these continuities affect the experience of "living together".

#### **"A DISGUSTING SERPENT" LYING ON THE SHORE OF GOLDEN HORN: BALAT IN THE CENTURY OF EPIDEMICS**

The well-known story of Balat tells of a district where the Jewish community of Ottoman Istanbul lived heavily. The Golden Horn forms the geographical context of Balat. The changing meaning of the Golden Horn over the centuries shapes Balat. Until the eighteenth century, the vitality of the Golden Horn brought Balat to its golden ages, but the loss of commercial importance of the region from the eighteenth century and the concentration of industrial areas around the Golden Horn brought about both population change and urban waste. The wealthy population of Balat began to migrate to rising districts of the period, such as Pera.

Balat, which we encounter in the documents describing nineteenth-century Istanbul on the other hand, has quite different features from today's longed-for past. In these texts, we read about a poor neighborhood pushed to the margins and suffering from the waste of late Ottoman urbanization efforts, poverty and pollution mashed together to a degree that *Balat Sewers* became a subject of a separate entry in the *Istanbul Encyclopedia*, one of the primary resources that every Istanbul researcher refers to:

<sup>1</sup> Ավելացել է Ստամբուլի պատմագրության մեջ շրջակա միջավայրը դիտարկող մտաբանների կիրառող ուսումնասիրությունների քիվը, այսպիսով՝ վերագահատելով քաղաքի պատմությունն ու ներկան և հաշվի առնելով ոչ մարդկային տարրերը: Ստամբուլի ուսումնասիրությունների ընթացիկ գրականության համար տե՛ս՝ Kocabal, O., Özcan, D. 2020. "Istanbul Bibliography 2020", YILLIK: Annual of Istanbul Studies 2, 225-235:

ընձեռում տեսնել ժամանակի ընթացքում տարբեր ճշումների ներքո ապրող մարդկային համայնքներում ինամբի ու բռնության կարգերի շարունակականությունը:<sup>1</sup>

Կենտրոնանալով Բալաթի հիշողության մեջ տասնիններորդ դարի համաճարակների դերի վրա՝ սույն հոդվածը փորձ է վերլուծության միջոցով ուսումնասիրել «միասնակյանք» գաղափարը: Նպատակն է դուրս հանել Բալաթը վերլուծությունների տարածական շրջանակից, որոնք սահանափակված են քաղաքային փոխակերպման ու վերականգման ծրագրերով, և զետեղել այն Ստամբուլի համաճարակի և բժշկման աշխարհագրության մեջ: Այս կերպ հոդվածը բարձրացնում է Նոր հարցեր այն անընդհատ պրոցեսների վերաբերյալ, որոնցով կառուցված է «քաղաքային մաքրման» դատողությունը, և ինչպես են այս գործընթացներն ազդում «միասնակյանք» փորձի վրա:

## **Ոսկեդշյուրի ափին պառկած «գարշելի օձը». Բալաթը համաճարակների դարում**

Օսմանյան Ստամբուլում Բալաթը հիմնականում հայտնի էր որպես հրեական թաղամաս: Թեև դեռևս ուշ բյուզանդական ժամանակաշրջանում հրեաների փոքրաթիվ մի համայնք ապրում էր այս տարածքում բնակչության իրական աճ նկատվեց Կոստանդնուպոլսի անկումից հետո տարբեր վայրերից այստեղ բնակություն հաստատած հրեաների շնորհիվ: XVII դարը թաղամասի ոսկեդարն էր, սակայն արդեն XVIII դարի սկզբին, երբ Ոսկեդշյուրը կորցրեց իր առևտրական նշանակությունը, և տարածքում աղտոտվածությունը սաստկացավ, բնակչությունը սկսեց գաղթել:

Բալաթը, որին հանդիպում ենք XIX դարի Ստամբուլը նկարագրող փաստաթղթերում, խիստ տարբերվում է այսօրվա կարոտած անցյալից: Այս բնագրերում կարդում ենք մի աղքատ, անտեսված և ուշ օսմանյան շրջանի քաղաքաշինական ջանքերով առաջացած աղբից տառապող թաղի մասին: Այստեղ աղքատությունն ու աղտոտվածությունը միախառնված էին այն աստիճան, որ *Բալաթի կոյուղիները* դարձան մի առանձին հոդվածի թեմա «Ստամբուլի հանրագիտարանում», որը Ստամբուլն ուսումնասիրելու առաջնային աղբյուրներից է:

*Բալաթը Ստամբուլի ամենակեղտոտ վայրերից է դեռևս անտիկ ժամանակներից: Թաղամասը պահպանեց այս կարգավիճակը մինչև Աբդուլ Համիդ II-ի իշխանությունը: Թաղամասի բոլոր կոյուղաջրերը հավաքվում էին մի մեծ ջրատարի մեջ*

*Balat was one of the dirtiest places in Istanbul since ancient times; it maintained this state until the reign of the second Abdulhamid. All the sewers of the district were collected in one big channel and run into the sea as a continuous stream, flowing through the middle of Balat; people got used to the stench, when it became clogged and overflowed around every few years, Chief Rabbi gave a request to the Divanühümayun<sup>1</sup> wishing that the sewers of Balat would be cleaned.<sup>2</sup>*

<sup>1</sup> State's Council of Ottoman Empire.

<sup>2</sup> Koçu, R. E. 1960. *Istanbul Ansiklopedisi*, cilt 4, Tan Matbaası, İstanbul, 1964.

The urban waste flowing in Balat and the poverty of its inhabitants were also noticed by travelers who visited Istanbul in the nineteenth century and recorded the silhouette of the city with orientalist amazement. Italian writer Edmondo de Amicis (1846-1908), one of most significant intellectual visitors of the city in this period, described Balat in his two-volume book published in 1874 *Costantinopoli* as follows:

*(...) I armed myself with courage, and took many turns through the vast ghetto of Balata, which winds like a disgusting serpent along the shore of the Golden Horn. I pushed on even into the most wretched alleys, in the midst of houses "grommate di muffa", like the banks in the Dantesque circle through crossways, where I wished for stilts, and stopped my nose, I looked in windows tapestried with rags at black and filthy rooms; I stopped before the entrances of courts, from which issued an odor fetid enough to take away my breath, making way before groups of diseased and ugly children, elbowing horrible old men, who looked like resuscitated corpses dead of the plague, stumbling over wretched dogs, and avoiding hanging clouds of the dirty linen; but my courage was unrewarded.<sup>3</sup>*

<sup>3</sup> De Amicis, E., Tilton, C. 1886-1878. *Constantinople*, G.P. Putnam's sons, New York.

The English poet and novelist Miss Julia Pardoe (1806-1862), in her travel book *The City of the Sultan and Domestic Manners of the Turks* (1837) where she portrayed the upper-class Ottomans with orientalist sympathy, did not mention Balat with the same tone that she saved for the higher classes:

*The ancient Palace of Constantine, vulgarly named the Palace of Belisarius, stands in that quarter of the city called Balata, a corruption of Balati, "the gate of the palace". It is impossible to visit this curious ruin with any pleasure, as it has been given up*

<sup>1</sup> Օսմանյան կայսրության պետական խորհուրդը:

<sup>2</sup> Koçu, R. E. 1960. *Istanbul Ansiklopedisi*, cilt 4, Tan Matbaası, İstanbul, 1964.

*և Բալաթի կենտրոնով հոսում դեպի ծով: Մարդիկ սովորել էին զարշահոտությանը, և երբ ջրատարը իսցանկում էր ու արտահոսում մի քանի տարին մեկ, Գլխավոր Ռաբբին խնդրագիր էր ներկայացնում Սուլթանական դիվան<sup>1</sup> խնդրելով, որ Բալաթի կոյուղիները մաքրվեն:<sup>2</sup>*

Բալաթով հոսող քաղաքային թափունը և բնակիչների աղքատությունը նկատում էին նաև ճամփորդները, որոնք այցելում էին Ստամբուլ XIX դարում և արձանագրում քաղաքի ուրվագիծը՝ օրինատալիզմի ուրույն զարմանքով: Էրմոնդո դե Ամիչիսը՝ ժամանակի խոշորագույն գրողներից մեկը, իր 1874 թվականին լույս տեսած «Կոստանդնուպոլիս» երկատրոյակում նկարագրել է Բալաթը հետևյալ կերպ.

*[...] Ես պինվեցի քաջությամբ և մի քանի պտույտ արեցի Բալաթի մեծ գետտոյում, որը զարչելի մի օձի նման ոլորվում է Ոսկեղջյուրի ափին: Մինչև իսկ մտա ամենաթշվառ նրբանցքները՝ բորբոսապատ տների արանքում, ասես Դանթեսականի ոլորանները՝ խաչվող փողոցներում, որտեղ պահել էի շունչս և հենացույցեր էի ուզում չընկնելու համար: Տնցոտիներով պատաստված պատուհաններից նայեցի սև ու աղտոտ սենյակներին, կանգնեցի բակերի մուտքերի մոտ, որտեղից փչում էր շունչս կտրելու աստիճան մի ժանտաբույր, անցա ժանտահար ու տգեղ երեխաների խմբերի մոտով, հրեցի մի սարսափելի ծերուկի, որը նման էր ժանտահտից վերակենդանացած մի դիակի, պատահեցի թափառող շներին, խուսափեցի աղտոտ սպիտակեղենի կախված ամպերից, բայց իմ քաջությունը մնաց անհատույց:<sup>3</sup>*

<sup>3</sup> De Amicis, E., Tilton, C. 1886-1878. *Con-  
stantinople*. New York, G.P. Putnam's sons.

Բանաստեղծ և վիպասան Չուլիա Պարդոն իր «Սուլթանի քաղաքը և թուրքերի կենցաղը» 1837 թվականի ճամփորդությունների գրքում, որտեղ նա պատկերել է բարձր խավի օսմանցիներին օրինատալիզմի համակրանքով, Բալաթի մասին խոսում է ավելի զուսպ.

*Կոնստանդինի անտիկ պալատը՝ հասարակ ժողովրդի լեզվով Բելիսարիուսի պալատը, գտնվում է քաղաքի Բալաթա կոչված թաղամասում, որը Բալաթի՝ «պալատի դարպաս» բառի աղճատված տարբերակն է: Դժվար է այս արտասովոր ավերակն այցելելիս որևէ հաճույք պզալ, որովհետև այն հատկացվել է կարիքավոր հրեաներին, որոնք պարիսպների ներսում հիմնել են ինչ-որ խղճուկ կացարաններ, որտեղից աղտաբույր էր փչում:<sup>4</sup>*

<sup>4</sup> Pardoe, M. 1837. *The City of the Sultan and Domestic Manners of the Turks*, H.G. Clarke and Co., 73.

*to the needy Jews, who established within its walls a species of pauper barrack, redolent of filth.*<sup>1</sup>

<sup>1</sup> Pardoe, M. 1837. *The City of the Sultan and Domestic Manners of the Turks*, H.G. Clarke and Co., 73.

These texts, which to all appearances put the burden of pollution on the poor residents of Balat, are important in terms of revealing the selectively ignored dimension of social class, central to the concept of living together, that is summarized with the word “multiculturalism” today. The clichés framing multiculturalism are built upon certain selective stereotypes: people lived in “tolerance” in Ottoman Empire, non-Muslims<sup>2</sup> were wealthy, they spent their life in a certain quality and in buildings with good architecture, their food culture and entertainment were developed, and they had access to good education and health services through charitable and religious endowments within their communities. This narrative of the past and multiculturalism purged of violent practices and amalgamated from selective acceptances, “lightened” by nostalgia and thus marketed, is one of the components of the denial mechanism in Turkey.<sup>3</sup> The memory of nineteenth-century Balat, which includes poverty, urban waste and epidemics fulfill a very important gap – the class dimension in these narratives. It also allows to reveal the constant violence involved in ignorance and care practices.

<sup>2</sup> At this point, it is necessary to note that the word non-Muslim itself is a controversial expression that covers all different religious-ethnic identities, thus singularizing the existence of both different communities and individuals with the emphasis of “not being Muslim”.

<sup>3</sup> In many real estate websites in Turkey, historical residences dating back to the nineteenth century are offered for sale as “Charming Greek Houses”.

When we relocate the image of Balat rising through the notebooks of travelers reflecting on the nineteenth-century urbanization dynamics of Istanbul, we realize that one of the main founding features of daily life was the experience of “dying together”. The nineteenth century, when modernism was systematized over the urban space and changed its form, was also the century of epidemics. During epidemics and disasters, death, as a commonly neglected<sup>4</sup> part of the living together notion, exaggerates social inequalities and injustice of power balances. It disrupts and re-establishes the balance by accelerating the forms of violence internalized in daily life. Rituals and places framed by religious references and power’s domination<sup>5</sup> over death make it one of the most divisive events for communities. In nineteenth-century Istanbul,

<sup>4</sup> Istanbul is a city surrounded by cemeteries. Documents about death and cemeteries contain unique records for memory studies. However, studies on death and cemeteries in Istanbul’s memory are very few.

<sup>5</sup> The power’s domination over death encompasses a wide area extending both to the legitimacy it establishes over “killing” and its control over the dead body (and therefore the living), death rituals and their associated spaces.



Այս բնագրերը, որոնք քաղաքի աղտոտվածության բեռն ակնհայտորեն դնում են Բալաթի աղքատ բնակիչների ուսերին, կարևոր են բացահայտելու սոցիալական խավի հայեցակետը, որն անտեսված է ընտրովի կերպով: Այս անտեսումը «միասնականք» գաղափարի հենքն է և այսօր համառոտագրվում է «բազմամշակութայնություն» բառի մեջ: Բազմամշակութայնությունը ձևակերպող մաշված դարձվածքները հենվում են մի շարք ընտրովի կարծրատիպերի վրա. Օսմանյան կայսրության մեջ մարդիկ ապրում էին «խանդուրժողականության» մթնոլորտում, ոչ մուսուլմանները<sup>1</sup> հարուստ էին, նրանք ունեին կյանքի որոշակի որակ և ապրում էին լավ կառուցված շենքերում, նրանց խոհանոցն ու ժամանցը զարգացած էր, նրանց հասանելի էր լավ կրթությունն ու առողջապահությունը, որոնք ձեռնարկել էին իրենց համայնքները *վաթֆների*<sup>2</sup> միջոցով:

Անշուշտ այս ենթադրությունները մոտ են իրականությանը: Ոչ մուսուլմանները մասնակցել են և անգամ ունեցել են հիմնարար դեր այս աշխարհագրության մշակութային կյանքի, հաստատությունների հիմնադրման, գիտական գործունեության, լավ ճարտարապետության և քաղաքային զարգացման մեջ: Բայց այս ենթադրությունները մինևույն ժամանակ կիսատ են: XIX դարի Բալաթի պատմությունը, որն ընդգրկում է աղքատությունը, քաղաքային թափոնը և համաճարակները, լրացնում է կարևոր մի բաց այս պատմություններում՝ սոցիալական խավի հայեցակետը: Այն հնարավորություն է ընձեռում բացահայտել մնայուն բռնությունը, որը կա անտեսելու և խնամելու պրակտիկաներում:

Երբ վերստին անդրադառնում ենք XIX դարի Ստամբուլի քաղաքաշինության ընթացքի մասին մտորող ճամփորդների նոթատետրերում Բալաթի պատկերին, ապա հասկանում ենք, որ առօրյա կյանքի հիմնարար հատկանիշներից մեկը «միասնական մահի» փորձն էր: Այս դարաշրջանում, երբ արդիականացման ջանքերը Օսմանյան կայսրության մեջ տարվում էին վարչական աստիճանում, քաղաքները դիտարկվում էին որպես արդիականացման ցուցանիշներ համաշխարհային մասշտաբով: Մասնագետների և տեղեկատվության հոսքը քաղաքների միջև աշխույժ էր, օսմանյան մտավորականները և Եվրոպայի մասնագետները մշակում էին քաղաքների նախագծման ու դեկավարման նոր մոտեցումներ: Թերթերն ու հանրամատչելի գիտական ամսագրերը ներկայացնում էին թե՛ բանավեճեր Ստամբուլի քաղաքային խնդիրների շուրջ: Եվրոպա այցելած օսմանյան մտավորականները գովաբանում էին արևմուտքի քաղաքների կազմակերպվածությունն ու մաքրությունը:<sup>3</sup> Այսպիսով՝ գեղեցկացման ու բարեկարգման գաղափարները

<sup>1</sup> Այստեղ անմիջապես է նշել, որ ոչ մուսուլման բառն ինքնին վիճելի արտահայտություն է, քանզի այն ընդգրկում է զանազան կրոնական ու ազգային ինքնությունները, դարձնում տարբեր համայնքների և անհատների գոյությունը եզակի և շեշտադրում այդ գոյության մեջ «ոչ մուսուլման լինելը»:

<sup>2</sup> Բավառական երկրներում, սկսած արաբական տիրապետության ժամանակաշրջանից, պետության, կալվածատերերի և ունեոր հավատացյալների կողմից մզկիթների, եկեղեցիների, բարեգործական կամ ուսումնական հաստատությունների իբրև բնօրինակ անօտարելի, ապահարկ սեփականություն նվիրած հողային տիրույթներ ու այլ նկատարելի ստացվածքներ: Մեկնաբանությունը՝ քարզմանն է:

<sup>3</sup> Akyürek, G. 2011. *Bilgiyi Yeniden İnşa Etmek: Tuncimat Döneminde Mimarlık, Bilgi ve İktidar*, Tarih Vakfı Yurt Yayınları, İstanbul.

consecutive cholera epidemics changed the meaning of death and life. Urban planning prioritized infrastructure developments, waste management, the arrangement of cemeteries, the creation of green areas, and health services. The emphasis on cleanliness and aesthetics turned into phenomena that spread to the administrative level in the definitions of modern cities in the nineteenth century.<sup>1</sup> The cleanliness and beauty of cities were based on a more vital concern than aesthetic judgments and well-being.

On the other hand, it is difficult to assume that the urban cleaning discourse that developed in this period fits into an inclusive context. Preventive actions (including urban waste management and open space regulations) have chosen certain districts in terms of social class. According to the documents we found in the Ottoman archives, Balat is not among these selected districts. On the contrary, Balat, the shore of Golden Horn where ships carried the epidemic to the capital city from other geographies, was the quarter for sewage dumping, among the settlements where the epidemic was commonly seen.<sup>2</sup> Authorities blockaded the district during the spread of the disease.<sup>3</sup> Archival documents also show that the poor Balat Jews living in the barracks were placed in other houses as a precautionary measure during the epidemic. They were evacuated from these houses after the epidemic.<sup>4</sup> Thus, the epidemic and accompanying urban cleaning approach created a kind of displacement practice rather than permanent precautionary measures and housing improvement.

While the epidemics deepen social and spatial segregation between neighborhoods, residences, and open spaces, establishing healing spaces and the struggle to reach them triggered other divisions. For example, quarantine, the most accepted method of dealing with cholera, was a new and compelling practice for the Ottomans. However, the most challenging for the Ottomans was that the quarantine involved the examination of dead bodies regardless of gender or ethnicity. Burials were strictly determined by religious rituals. In addition,

<sup>1</sup> Even in the founding document of the Istanbul Municipality, the purpose of establishment of the municipality is stated as "preserving the natural beauty and cleanliness of the city".

<sup>2</sup> *Gazette Medicale D'Orient*, April 1868.

<sup>3</sup> DSA. BEO / 528-39595, "Bilad-ı mücaverede kolera zuhur ettiğinden Galata, Balıkpazarı, Kasımpaşa ve Balat..." H- 28-01-1311(Archival document).

<sup>4</sup> DS. BEO / 486 - 36386, "Ortaköy ve Kuzguncuk ve Balat'da barakalarda ikamet ettikleri halde geçen sene kolera esnasında görülen lüzum üzerine İkinci ve Dokuzuncu Belediye Daireleri dahilinde bazı hâli hanelere yerleştirilmiş olan Musevilerin orarlardan ihracı hakkında.", H- 06-06-1312 (Archival document).

<sup>1</sup> Անգամ Մտամբոլի քաղաքապետարանի հիմնադրման փաստաթղթի մեջ որպես քաղաքապետարանի հիմնադրման նպատակ նշված է՝ «պահպանել քաղաքի բնական գեղեցկությունն ու մարդությունը»: Kiyzi, G. 2019. *The Transformation of Beyoğlu Muslim Cemetery: Sanitizing, Beautifying and Reproducing the Memory of the City in the Nineteenth Century*, MA Thesis, Boğaziçi University.

<sup>2</sup> Մտամբոլի քաղաքապետարանի հիմնադրվել է 1857 թվականին:

<sup>3</sup> Yıldırım, N. 2009. “Salgın Afetlerinde İstanbul”, in *Afetlerin Gölgesinde İstanbul: Tarih Boyunca İstanbul ve Çevresini Etkileyen Afetler*, İBB Yayınları, İstanbul, 116.

<sup>4</sup> *Gazette Medicale D'Orient*, սաղիլի, 1868:

<sup>5</sup> Hamlin, C. 2013. *Among the Turks*, Boğaziçi Üniversitesi Yayınları, 235 .

մտան XIX դարի արդի քաղաքների սահմանման մեջ:<sup>1</sup> Քաղաքների մաքրությունն ու գեղեցկությունը, սակայն, բխում էր կենսական մի խնդրից և պարզապես եւթետիկ մտահոգություն էր: Քանզի XIX դարը, բացի արդիականացման ճիգերից, նաև համաճարակների դար էր:

Երբ խոլերայի համաճարակը վեց անգամ ամայացրեց աշխարհը XIX դարի ընթացքում, այն առաջնային դարձրեց ենթակառուցվածքների կարգավորումը, թափոնների հեռացման կազմակերպումը, կանաչապատ տարածքների ստեղծումը, առողջապահությունը և մահվան կազմակերպումը քաղաքային նախագծի մեջ: Երբ 1831 թվականին առաջին անգամ խոլերայի համաճարակը տարածվեց Ստամբուլում, քաղաքը դեռևս չունէր ժամանակակից առողջապահական և քաղաքային հաստատություններ:<sup>2</sup> Կայսրության արդիականացման ջանքերը ուղեկցվում էին խոլերայի համաճարակով, կամ այլ տենդային հիվանդություններով, ինչպիսիք են ժանտախտն ու տիֆը, որոնք կրկնվում էին ամեն 10-15 տարին մեկ: Այս հարյուրամյակի ընթացքում աշխարհը պայքարում էր խոլերայի դեմ՝ չիմանալով հիվանդության տարածման ստույգ պատճառը: Խոլերան տարածվում է ջրի միջոցով, բայց ժամանակի տարածված կարծիքն էր, որ այն տարածվում է մարդկային շփման և օդի միջոցով:<sup>3</sup> Բալաթը՝ Ոսկեղջյուրի ափը, որտեղից նավերը այլ վայրերից տարածում էին համաճարակը դեպի մայրաքաղաք, և որտեղով հոսում էին կոյուղաջրերը, բնակության համար բարենպաստ էր այս տարիներին: Հիբադի, այս ժամանակաշրջանի թերթերում ու արխիվային փաստաթղթերում Բալաթը նշվում է այն բնակավայրերի շարքում, որտեղ համաճարակներ հաճախ էին բռնկվում:<sup>4</sup>

Չնայած նախորդող դարերի ընթացքում կայսրությունը շարունակաբար պայքարել էր համաճարակների դեմ, հատկապես՝ ժանտախտի, ըստ տարածված համոզմունքի՝ համաճարակները կստծո պատիժն էին:<sup>5</sup> Օսմանյան բժիշկները չունեին պատշաճ փորձ հանրային առողջության ոլորտում: Կային ընդամենը մի քանի հիվանդանոցներ՝ հիմնված *վակֆների* միջոցով, և նրանց մատուցած ծառայությունները ձևակերպված էին ըստ այն համայնքների կարիքների, որոնց այդ հաստատությունները պատկանում էին: Ոչ մուսուլմանները բուժում կարող էին ստանալ մուսուլման *վակֆներին* պատկանող հիվանդանոցների միայն առանձին բաժիններում: Ստամբուլում բնակվող եվրոպացիներն ունեին իրենց հիվանդանոցները: Իրենց հիվանդանոցներն ունեին նաև հույն և հայ համայնքները, որոնք կարող էին նաև բուժվել եվրոպացիների հիմնած

the calcification of the dead bodies (especially of women) caused reactions.<sup>1</sup> Fearing that the quarantine practices would meet with opposition by the Muslim population, the Ottoman Empire could start quarantine practices only in 1838 with the fetva of Şeyhülislam stating that the quarantine was following the Sharia. The decree on quarantine regulations established that regardless of the disease and *millet*,<sup>2</sup> all deaths had to be reported to the Quarantine Council, and burials without the council's approval were forbidden. In addition, the decree stated that each *millet* should establish their hospitals, specifically Jewish and Karaim<sup>3</sup> communities, that did not have one yet.<sup>4</sup>

Although the empire had repeatedly struggled with epidemics, especially the plague, in previous centuries, there was a widespread belief that epidemics were the punishment of God.<sup>5</sup> Ottoman physicians had no proper experience in the field of public health. There were only a few *wakıf* hospitals in the city and their services were shaped according to the communities they belonged to. Non-Muslims could receive treatment only in separate departments in hospitals belonging to Muslim foundations. Europeans living in Istanbul had their own hospitals. Greek and Armenian communities too had hospitals, and they could also access hospitals established by Europeans. The Jewish community was the only community in the Ottoman Empire that did not have a hospital.<sup>6</sup> Also, being taken care of in a hospital was not a common habit. Treatments for the epidemic could be applied with the efforts of itinerant doctors and pharmacists. When the contagion intensified, police stations were turned into hospitals.<sup>7</sup> It was a controversial issue that Jews and Muslims did not visit a doctor and buried their dead without permission from the Quarantine Council, so official death statistics were misleading.<sup>8</sup> The fact of treatment in other communities' hospitals included exposure to missionary activities, and the scarcity or complete absence of community hospitals could be interpreted as factors that triggered the perception of receiving health care as a threat to identity or belief.

<sup>1</sup> For example, medical research on corpses caused rebellions in the Ottoman Empire. See Yıldırım, N. 2016. "Osmanlı Coğrafyasında Karantina Uygulamalarına İsyanlar, 'Karantina İstemezük!'", in *Toplumsal Tarih*, 150, İstanbul.

<sup>2</sup> The direct translation of the millet is nation. Since the Ottoman Empire was not a national state, this term in the documents refers to ethnic-religious groups. Thus, I prefer to use the term without translation.

<sup>3</sup> An ethnicity derived from Turkic-speaking adherents of Karaité Judaism in Central and Eastern Europe.

<sup>4</sup> Takvim-i Vekayi, No: 164, (11 Safer 1254 [6 May 1838]).

<sup>5</sup> Hamlin C. 2013. *Among the Turks*, Boğaziçi Üniversitesi Yayınları, 235.

<sup>6</sup> This situation also increased the missionary activities towards the Jews who were treated in Christian hospitals. See Danacıoğlu E. 2003. "A 100 Year Pause in History's Long Voyage" in *Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*, Balat Or-Ahayim Jewish Hospital Foundation, İstanbul, 30.

<sup>7</sup> Yıldırım, N. 2009. "Salgın Afetlerinde İstanbul", in *Afetlerin Gölgesinde İstanbul: Tarih Boyunca İstanbul ve Çevresini Etkileyen Afetler*, İBB Yayınları, İstanbul, 113.

<sup>8</sup> Zennaro, M. S. 1868. "Etude sur le Choléra de Constantinople en 1865", in *Gazette Medicale D'Orient*, İstanbul, 23. Statistics published during this period included the number of deaths from each millet separately.

<sup>1</sup> Այս իրավիճակն ընդլայնեց միսիոներների գործունեությունը հրեաների շրջանում, որոնք հնարավորություն ունեցան բուժվել քրիստոնեական հիվանդանոցներում: Տե՛ս Danacioglu, E. 2003. "A 100 Year Pause in History's Long Voyage" in *Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*, Balat Or-Ahayim Jewish Hospital Foundation, Istanbul, 30:

<sup>2</sup> Yıldırım, N. 2009. "Salgın Afetlerinde İstanbul", in *Afetlerin Gözgesinde İstanbul: Tarih Boyunca İstanbul ve Çevresini Etkileyen Afetler*, İBB Yayınları, İstanbul, 113.

<sup>3</sup> Օրինակ՝ դիպվածների վրա բժշկական հետազոտություններն ապաստարանությունների պատճառ դարձան Օսմանյան կայսրության մեջ: Տե՛ս Yildirim, N. 2016. "Osmanlı Coğrafyasında Karantina Uygulamalarına İsyenlar, "Karantina İstemezük!", *Toplumsal Tarih*, 150, İstanbul:

<sup>4</sup> *Միևեր* բառի ուղղակի թարգմանությունը ազգն է: Բայց, քանի որ Օսմանյան կայսրությունը ազգային պետություն չէր, և վաստատորենում այն եղալոր վերաբերում է ազգային ու կրոնական խմբերին, հետևաբար ես նախընտրում եմ գործածել եզրույթը՝ առանց թարգմանության:

<sup>5</sup> Քյոլբրալեզու հրեաներ, որոնք սպորում են կենտրոնական և արևելյան Եվրոպայում՝ հիմնականում Ղրիմում և Լիվոնիայում:

<sup>6</sup> *Takvim-i Vekayi*, No:164, (11 Safer 1254 [մայիսի 6, 1838]):

<sup>7</sup> Zennaro, M. S. 1868. "Etude sur le Cholera de Constantinople en 1865", in *Gazette Medicale D'Orient*, İstanbul, 23: Այս շրջանում հրապարակված վիճակագրությունը ներկայացնում է մասնաթղթերի ղեկավարներն առանձին՝ ըստ միլիթների:

հիվանդանոցներում: Օսմանյան կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների մեջ հրեական համայնքը հրակն էր, որ չուներ հիվանդանոց:<sup>1</sup> Հարկ է հավելել, որ հիվանդանոցային խնամքն ինքնին ընդունված սովորույթ չէր: Համաճարակների դեպքում բուժումները նշանակում էին շրջիկ բժիշկներն ու դեղագործները: Երբ վարակը սաստկանում էր, ոստիկանական բաժանմունքները վերածվում էին հիվանդանոցների:<sup>2</sup>

Քանի որ խոլերան համընդհանուր վտանգ էր, կարանտինը դարձավ հիվանդությունից պաշտպանվելու ամենաընդունված ճան: Այնուհանդերձ, դա կայսրության բնակիչների համար նոր ու դժվար հաղթահարելի միջոց էր: XXI դարում մեզ համար դժվար է հասկանալ Օսմանյան կայսրության մահացությունները կառավարելու անկարողությունը, քանզի Քովիդ-19 համավարակի ընթացքում մենք սովոր ենք կարանտին պահել մեր իսկ տանը, ամեն օր հետևել մահացությունների վիճակագրության առցանց հավելվածներով ու սոցիալական ցանցներով: Օսմանյան կայսրության բնակիչների համար կարանտինը ինդրահարույց էր, քանի որ այն նախատեսում էր մեռած մարմինների գնում՝ անկախ սեռից ու ազգությունից: Թաղումները խստորեն սահմանվում էին կրոնական ծիսակարգով: Ավելին, դիսհերձումը և հատկապես կանանց մարմինների գնումը բորբոքումներ էին առաջացնում:<sup>3</sup> Արդարև, վախենալով, որ կարանտինի կարգը մեծ բորբոքումների պատճառ կդառնա մուսուլման ազգաբնակչության շրջանում՝ Օսմանյան կայսրությունը սկսեց կիրառել կարանտինը միայն Շեյխուլիսլամի 1838 թվականի *ֆարվայով*, որը սահմանեց, որ կարանտինը համապատասխանում է Շարիային: Կարանտինի կանոնակարգը սահմանող հրամանով որոշվում էր, որ բոլոր մահացության դեպքերը, անկախ հիվանդությունից և *միլեթից*,<sup>4</sup> պետք է զեկուցվեին կարանտինի խորհրդին, և առանց խորհրդի հավանության՝ թաղումներն արգելվում էին: Ավելին, հրամանը սահմանում էր, որ յուրաքանչյուր *միլեթ* պետք է ունենար իր հիվանդանոցը, մասնավորապես՝ հրեա և քարաիմ<sup>5</sup> համայնքները, որոնք հիվանդանոցներ դեռ չունեին:<sup>6</sup> Չնայած կանոնակարգին և սահմանափակումներին՝ խոլերայի համաճարակների ընթացքում մահացությունների վիճակագրության անորոշությունը ժամանակաշրջանի բժշկական ամսագրերում քննարկվող խնդիրներից էր: Բժիշկների ենթադրությունների և պաշտոնապես հայտարարված թվերի մեջ տարբերություն կար չարտոնված թաղումների պատճառով: Հատկապես հրեաները ու մուսուլմանները թաղում էին իրենց մեռելներին առանց բժշկի այցի և թաղման թույլտվության:<sup>7</sup>

When we look at the Or-Ahayim Hospital, which provides health services with its magnificent building on the shore of the Golden Horn in Balat, with this background, it is not surprising that the Jewish community chose to establish its hospital in Balat. Moreover, when we take a short memory journey in the book *Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*,<sup>1</sup> published for the 100th anniversary of the hospital, how the complex aspects of the Ottoman epidemic experience were spatialized in the district. Or-Ahayim bears the memory of the doctors, who treated the residents of the neighborhood with their means, taking the initiative in the Ottoman public health dilemmas, and the care developed from within the community in the face of the spatial separation created by the epidemic.

Although the urban management, health institutions, knowledge and experience of Ottoman Istanbul improved over time, Balat could not escape from being the permanent residence of the epidemic due to its constantly overflowing sewers, poverty and the industrial density of the Golden Horn. At this point, it is worth noting that urban services such as park and infrastructure construction and road arrangement were concentrated in the developing districts of the period, especially in Pera. The city administration did not focus on the situation of Balat, except for the arrangements made after the fires. In the report prepared by the Health Council visiting the places where the epidemic was common in 1895, the situation of Balat was recorded as follows:

*(...) Conditions in the regions of Hasköy, Balat and Ayvansaray even worse: most houses where cholera was seen are situated on sloppy land which favors the spread of disease; and since there are no sewers, sewage and soiled waters from the Jewish houses flow directly into the streets. The soil of the large square near the pier is covered with excrement and horse manure; the trench around it is filled with fetid water and animal urine and ranking with unbearable smell.<sup>2</sup>*

<sup>1</sup> Following paragraphs about the hospital constitute a compilation of the information from the articles "A 100 Years Pause in History's Long Voyage" of Esra Danacıoğlu and "Birth of A Hospital" in the book published for the celebration of the hospital's 100 years anniversary. The newspaper news and speech texts mentioned are also quoted from the translations in the book. See Alapaçi, V. 2003. *Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*, Balat Or-Ahayim Jewish Hospital Foundation Publication, İstanbul.

<sup>2</sup> Danacıoğlu, E. 2003. "A 100 Year Pause in History's Long Voyage" in *Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*, Balat Or-Ahayim Jewish Hospital Foundation, İstanbul, 36.

Համաճարակի կառավարման գործում Օսմանյան Ստամբուլում հանդիպող դժվարությունը միայն հիվանդների և մահացության դեպքերի թվին հետևելու անկարողությունը չէր: XIX դարի ընթացքում գերեզմանոցների տարածքի կառավարումը քաղաքային խնդիրներից կարևորագույնների շարքում էր: Համաճարակի դեմ միջոցների շրջանակներում, քաղաքում գտնվող գերեզմանոցներում թաղումներ կատարելը արգելվում էր: Թաղումներն արտոնված էին միայն բնակավայրերից հեռու, քաղաքի պարիսպներից դուրս և գյուղերում գտնվող գերեզմանոցներում: Էդիրնեքափը գերեզմանոցը, որը շատ մոտ է Բալաթին, այն տարածքներից էր, որտեղ թաղումներն արտոնված էին: Երբ մահացությունների թիվն ավելանում էր, դիրը տեղափոխում էին քաղաքի պարիսպներից դուրս: Բնակավայրերից հեռու դիրքի տեղափոխման շուրջ առաջացած վեճերը նույնպես արտացոլված են բժշկական ամսագրերում:

Չնայած օսմանյան Ստամբուլի քաղաքային կառավարումը, առողջապահական հաստատությունները, գիտելիքն ու փորձը բարելավվեցին ժամանակի ընթացքում, բայց Բալաթը չկարողացավ խուսափել համաճարակի մշտական բնակատեղի լինելուց՝ շարունակաբար արտահոսող կոյուղիների, աղքատության և Ոսկեղջյուրի արդյունաբերական խտության պատճառով: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ քաղաքային ծառայությունները, օրինակ՝ պուրակները, ենթակառուցվածքների կառուցումը ու ճանապարհաշինությունը կենտրոնացած էին ժամանակաշրջանի զարգացող թաղամասերում՝ հատկապես Բերայում: Բալաթի իրավիճակը քաղաքի ղեկավարության ուշադրության կենտրոնում հայտնվում էր միայն հրդեհներին հաջորդող բարեկարգումների ժամանակ: Հարուստ բնակիչները տեղափոխվում էին այլ թաղամասեր, օրինակ՝ Հասքյոյ և Գալաթա, որոնք ավելի բարենպաստ պայմաններ ունեին:<sup>1</sup> XIX դարավերջի խոլերայի համաճարակի ժամանակ, անգամ Բալաթի բարաքներում ապրող աղքատ հրեա ընտանիքներին էին ժամանակավոր տեղափոխում դատարկ բնակարաններ:<sup>2</sup> 1895 թվականին համաճարակի տարածման վայրեր այցելած Առողջապահության խորհրդի պատրաստած զեկույցի մեջ Բալաթում իրավիճակը հետևյալն է.

*[...] Իրավիճակը Հասքյոյում, Բալաթում ու Այվանասարայում ավելի վատ է: Տների մեծ մասը, որտեղ խոլերան նկատվել է, գտնվում է խոնավ հողի վրա, որը նպաստում է հիվանդության տարածմանը: Եւ քանի որ չկան կոյուղիներ, հրեական տների կոյուղաջրերն ու աղտաջրերը ուղղակիորեն փողոց են հոսում: Նավամատույցի մոտ ընդարձակ հրապարակի զետիճը ծածկված է արտաթորանքով*

<sup>1</sup> Kaya, Ö. 2016. *İstanbul'da Yahudi Cemaatinin Yaşam Alanları 2: Galata ve Balat*, Şalom Newspaper, 7 September 2016. [https://www.salom.com.tr/arsiv/haber-100396-istanbulacuteda\\_yahudi\\_cemaatinin\\_yasam\\_alanlari\\_2\\_galata\\_ve\\_balat.html](https://www.salom.com.tr/arsiv/haber-100396-istanbulacuteda_yahudi_cemaatinin_yasam_alanlari_2_galata_ve_balat.html)

<sup>2</sup> DS. BEO / 486 - 36386, "Ortaköy ve Küzgunçuk ve Balat'da barakalarda ikamet ettikleri halde geçen sene kolera esnasında görülen lüzum üzerine İkinci ve Dokuzuncu Belediye Daireleri dahilinde bazı hâli hanelece yerleştirilmiş olan Musevilerin oralardan ihracı hakkında.", H- 06-06-1312 (արխիվային փաստաթուղթ):

**“LIGHT OF LIFE” OR-AHAYIM:  
A COMMUNITY HOSPITAL IN BALAT**

During the nineteenth century, the situation in Balat was in the center of attention for many community notables because of the Jewish population both living in and moving out from the district. For example, Dr. Captain Rafael Dalmediko, one of the founders of the hospital and an idealist physician who was born in Balat, treated his patients in his two-bed infirmary in the district that he established with his own initiatives during the second half of the nineteenth century. There was an urgent necessity for an initiative that would both help the poor and meet the community’s health care needs.

The first institutional foundations of Or-Ahayim Hospital were laid in 1884. A group of notable Jewish intellectuals of the time established a new committee, which they called “Or-Ahayim”, meaning “light of life”. Or-Ahayim had two main purposes – to obtain the materials to establish a hospital with the support of Jews and to provide health services and care for the poor in need. The medical authorities of the period encouraged Dr. Captain Rafael Dalmediko to lead the process. As a witness of the poverty and the threat of disease in Balat, Dr. Dalmediko accepted the duty expressing his enthusiasm and revealed his intention to remove Balat from the epidemic geography of Istanbul and place it in the geography of healing:

*I have always regarded charitable institutions with respect. We are soldiers ready to respond to all the woes of brethren and solve their medical problems. I want to congratulate you for your charitable enterprise and thank you for the honor of selecting me to this function and reiterate that I stand at your service. Our activities should not be limited just to the region of Balat: our aims are much higher and we will endeavor to serve a whole community. Let not the size of the project deter you... Little brooks make great rivers.<sup>1</sup>*

<sup>1</sup> *Ibid.*, 75-76.

At the meeting held in Tchana Synagogue under the presidency of Dr. Dalmediko, the idea of distributing a charity box to all households was accepted as the



*և ձիու գունադրով, դրա շուրջ գտնվող առվափոսը  
լցված է զարչահոտ ջրով ու կենդանու մեկով, և  
անտանելի հոտ է տարածվում:<sup>1</sup>*

<sup>1</sup> Danacıoğlu, E. 2003. "A 100 Year Pause in History's Long Voyage" in *Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*, Balat Or-Ahayim Jewish Hospital Foundation, Istanbul, 36.

Բալաթը, սակայն, չէր մատնվել բախտի քմահաճույթին: Առողջապահության խորհրդի զեկույցները ներկայացնում են թաղամասի հանդեպ ուշադրությունը հատկապես համաճարակների ժամանակ: Կային նաև Գլխավոր Ռաբբիի՝ օսմանյան ղեկավարությանն ուղղված կոյուղիները մաքրելու խնդրագիր-դիմումները: Ի վերջո, օգնությունը Բալաթին հասավ հենց հրեա համայնքի միջոցով: Օր-Ահայիմ հիվանդանոցը, որն այսօր էլ շարունակում է իր գործունեությունը, հիմնադրվեց XIX դարի վերջին՝ Բալաթում տիրող աղքատության ու մահվան դեմ «կյանքի հույս» ստեղծելու նպատակով:

### «Կյանքի հույս» Օր-Ահայիմ. համայնքային հիվանդանոց Բալաթում<sup>2</sup>

Տոնակատարությունը, որը տեղի ունեցավ 1896 թվականի մայիսի 10-ին՝ կիրակի օրը, հիշվելու է որպես մեծաշուք ու հանդիսավոր առիթ Ստամբուլի հրեական համայնքի համար: Հագարավոր հրեա քաղաքացիներ մասնակցեցին արարողությանը և հավաքվեցին Բալաթի Գերուշ սինագոգում: Ուղիղ ժամը 10-ին Գլխավոր Ռաբբի Մոշե Հալևին ծիսական հանդերձանքով մտավ տաճար, մինչ տեղի դպրոցի երեխաներից կազմված երգչախումբը սաղմոսներ էր երգում: Գլխավոր Ռաբբին բարձրացավ թևա [քարոզչի ամբիոնը], որտեղ, աղոթքից հետո, նա հայտնեց իր երախտագիտությունը սուլթանին և թուրք ժողովրդին իրենց ավանդական օսմանյան հյուրասիրության ու հանդուրժողականության համար: Արարողությունից հետո, Գլխավոր Ռաբբիի և երևելի անձանց գլխավորած թափորը, որոնց ուղեկցում էին ռազմաթշկական ակադեմիայի ուսանողները, դանդաղորեն շարժվեց դեպի շինիրապարակ՝ Մեսիդիյե քայլերգի մեղեդու ներքո: Այս առիթով հատուկ զարդարված վրանում կարճատև դադարից հետո, Գերաշնորհը մոտեցավ այն կետին, որտեղ հիմքը պետք է դրվեր և բախի օգնությամբ դրեց առաջին քարը, վրան էլ՝ կրաշաղախի առաջին շերտը:<sup>3</sup>

«Ստամբուլ» թերթում հայտնված այս տողերը նկարագրում են Օր-Ահայիմ հիվանդանոցի հիմնադրման արարողությունը, որը բեկումնային իրադարձություն էր հրեական համայնքի համար: Հաշվի առնելով XIX դարի ընթացքում համաճարակների փորձը՝ պատահական չէր, որ հրեական համայնքը որոշել էր հիվանդանոցը կառուցել Բալաթում:

<sup>2</sup> Այս բաժինը բանարարություն է. Էսրա Դանաչիօղլուի «Չարյուրամյա դադար պատմության երկար ժամկողորդության ընթացքում» հոդվածից և «Օր-Ահայիմ հիվանդանոցը. մեկդարյա սեր և կարևորում» գրքում «Մի հիվանդանոցի ծնունդը» հոդվածից: Գիրքը հրատարակվել է հիվանդանոցի 100-ամյակի առիթով: Քերթնում հայտնված լուրերը և կոյուրների տեսքերը բարգվամարար մեջբերված են գրքում: Sü' u Alapaçi, V. 2003. *Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*, Balat Or-Ahayim Jewish Hospital Foundation Publication, Istanbul:

<sup>3</sup> *Նայն տերուն*, 85-86:

first step to establish a hospital. These boxes, which are remembered as the Or-Ahayim piggy banks, became a tradition that continued until the 1970s. This small box, which is found in the homes of almost all Istanbul Jews, also creates a new image for the neighborhood by pairing Balat with Or-Ahayim. In 1886, fundraising activities were diversified for the establishment of the hospital including proms and lotteries. Additionally, Dr. Saul Naar's play *Faith, Hope and Charity* was translated from Greek to Ladino and staged by an amateur group. These events became a tradition for the members of the community both living in different parts of Istanbul and abroad, who gathered together and stood in solidarity for years. The donation activities that spread to the streets and households received great support also from the notables of the Jewish community living in different countries. These donations contributed to the purchase of the land on which the hospital was built and to medical equipment. The same year, a small health center with eight beds, five for men and three for women, began to operate.

Piggy banks helped to collect a greater sum than the Or-Ahayim founders expected. The overall interest and enthusiasm for fundraising activities were important indicators suggesting that the establishment of the hospital was supported by the majority of the community. But there were also oppositions. The same prejudices against accessing health services and receiving treatment in hospitals that persisted through the nineteenth century affected the process of establishing Or-Ahayim Hospital. Receiving treatment in a bed away from home was not welcomed by some in the Jewish community. The founders and doctors of Or-Ahayim had to deal with the propaganda against the hospital in this period. Still, these reactions could not stop the activities. On the contrary, the experience gained during the ten years of operation of the infirmary revealed the need for a full-fledged hospital.

During the last cholera attack of the century, in 1893-1894, each district municipality established a municipal hospital so that all communities could receive treatment side by side.<sup>1</sup> In this period, the

<sup>1</sup> According to official records, 1597 Muslims, 505 Greeks, 386 Armenians and 173 Jews were treated in these hospitals during this period. See, Yıldırım, N., 2009. "Salgın Afetlerinde İstanbul", in *Afetlerin Gölgesinde İstanbul: Tarih Boyunca İstanbul ve Çevresini Etkileyen Afetler*, İBB Yayınları, İstanbul, 143.

XIX դարի ընթացքում Բալաթում բնակվող և այնտեղից տեղափոխվող հրեա ազգաբնակչության պատճառով թաղամասում տիրող իրավիճակը համայնքի երևելի շատ անձանց ուշադրության կենտրոնում էր: Այս անձանցից էր Կապիտան Ռաֆայել Դավենդիկոն՝ հիվանդանոցի հիմնադիրներից մեկը, իդեալիստ մի բժիշկ՝ ծնված Բալաթում: Նա ընդունում էր իր բուժառուներին երկու մահճակալանոց հիվանդասենյակում, որը հիմնել էր իր իսկ ջանքերով XIX դարի կեսին: Հրատապ կարիք կար ձեռնարկելու մի միջոց, որը կօգներ աղքատներին և կբավարարեր համայնքի առողջապահական կարիքները: Օր-Սհայիմ հիվանդանոցի շենքի հիմքերը դրվեցին 1884 թվականին: Ժամանակի մի խումբ երևելի հրեա մտավորականներ հիմնեցին մի կոմիտե՝ կոչելով այն Օր-Սհայիմ կյանքի լույս: Օր-Սհայիմն ուներ երկու նպատակ: Առաջինը՝ հրեաների օգնությամբ հիվանդանոց հիմնելու համար անհրաժեշտ միջոցների հավաքումն էր: Երկրորդը՝ առողջապահական ծառայություններ մատուցելը և կարիքի դեպքում աղքատներին խնամք տրամադրելն էր: Ժամանակի բժշկական ղեկավարությունը քաջալերում էր Կապիտան Ռաֆայել Դավենդիկոյին, որ նա ղեկավարեր գործընթացը: Որպես Բալաթում աղքատության և հիվանդության սպառնալիքի վկա՝ բժիշկ Դավենդիկոն ընդունեց պարտականությունը՝ հայտնելով իր ոգևորությունը հետևյալ կերպ.

*Միշտ մեծարանքով եմ վերաբերվել բարեգործական հաստատություններին: Մենք փնփորներ ենք՝ պատրաստ հասնելու մեր եղբայրների վշտին և լուծելու իրենց բժշկական խնդիրները: Ցանկանում եմ շնորհավորել ձեզ ձեր բարեգործական ձեռնարկի համար և շնորհակալություն հայտնել այն պատվի համար, որին ինձ արժանացրիք՝ ընտրելով այս պաշտոնում և կրկնել, որ պատրաստ եմ միշտ ծառայել: Մեր գործունեությունը չպետք է ասհմանափակվի Բալաթի շրջանով: Մեր նպատակներն ավելի բարձր են, և փորձելու ենք օգնել ողջ համայնքին: Չընկրկեք ծրագրի մեծությունից: Մեծ գետերը կապմվում են փոքր վտակներով:<sup>1</sup>*

<sup>1</sup> Լոյյն տեղում, 75-76:

Տչանա սինագոգում բժիշկ Դավենդիկոյի նախագահությամբ կայացած ժողովի ժամանակ ընդունվեց բոլոր տներին բարեգործական տուփեր բաժանելու գաղափարը, որպես հիվանդանոցի հիմնադրման առաջին քայլ: Այս տուփերը, որոնք հետագայում հիշվեցին որպես Օր-Սհայիմի գանձատուփեր, դարձան ավանդույթ, և դրանց բաժանումը շարունակվեց մինչև 1970-ականները: 1886 թվականին հիվանդանոցի հիմնադրման համար դրամահավաք, զանազան այլ միջոցառումներ

prevalence of the hospitals played an encouraging role in receiving health services. During these ten years, the donations collected from the traditional balls and other activities encouraged the founders of Or-Ahayim to build a larger hospital. An official request was prepared with the signature of the Chief Rabbi for the establishment of a hospital in Balat. On February 16, 1896, Sultan Abdulhamid authorized the establishment of a hospital for Jews in Balat. The license was received on April 18, 1896. The design of the hospital was given to one of the famous architects of the time, M. Gabriel Tedeschi. In different sources, the date of the hospital's opening varies between 1898 and 1900. The atmosphere at the hospital's groundbreaking ceremony is described in the *Stambol* newspaper as follows:

*The celebration, held on Sunday the 10th of May 1896, will be remembered as a solemn and festive occasion for the Jewish community of Istanbul. Thousands of Jewish citizens came for the ceremony and gathered at the Balat Geruch Synagogue. At precisely 10 o'clock, Chief Rabbi Rav Moshe Halevi entered the temple in full regalia while a choir of children from local schools sang psalms. The Chief Rabbi slowly ascended the Teva where, after a prayer, he expressed his gratefulness to the Sultan and the Turkish people for their traditional Ottoman hospitality and tolerance. Following the ceremony, a procession consisting of the Chief Rabbi and notables accompanied by students from the Military Medical Academy slowly advanced towards the construction site to the tune of the Mecidiye March. After short rest in a decorated tent specially erected for the occasion, His Eminence came to the spot where the foundation was to be laid and, using a spade, placed the first stone and threw the first batch of mortar.<sup>1</sup>*

<sup>1</sup> *Ibid.*, 85-86.

## EPILOGUE

Or-Ahayim Hospital, established in a poor neighborhood through the Jewish community's own efforts, has witnessed many turning points in the history of the Ottoman Empire and Turkish Republic, it survived all difficulties with the help of solidarity and donations

կազմակերպվեցին, այդ թվում՝ պարահանդեսներ ու վիճակահանություններ, նաև հունարենից լադինո թարգմանվեց բժիշկ Սաուլ Նաարի «Հավատ, հույս և բարեգործություն» պիեսը՝ բեմադրվելով սիրողական մի խմբի կողմից: Ստամբուլի տարբեր մասերում և արտասահմանում բնակվող հրեական համայնքի անդամների համար այս միջոցառումները դարձան ավանդույթ, և նրանք տարիներ շարունակ հավաքվեցին միասնաբար և համապարտ պարտավորությամբ: Փողոցներում ու տներում բաժանվող նվիրատվություններին նպաստամատույց էին լինում արտասահմանում բնակվող հրեական համայնքի երևելի անձինք: Այս նվիրատվություններն օգնեցին զնելու հիվանդանոցի կառուցման համար տարածք և բժշկական սարքավորումներ: Նույն տարվա մեջ ութ մահճակալով մի փոքր բուժկետ սկսեց գործել հինգը՝ տղամարդկանց և երեքը՝ նախատեսված կանանց համար:

Գանձատուփերը Օր-Ահայիմի հիմնադիրների ակնկալածից շատ դրամ օգնեցին հավաքել: Համընդհանուր հետաքրքրությունն ու դրամահավաք միջոցառումների հանդեպ ոգևորությունը կարևոր ցուցիչներ էին, որ համայնքի մեծամասնությունը օժանդակում էր հիվանդանոցի հիմնադրմանը: Սակայն կային նաև ընդդիմացողներ: Առողջապահական ծառայություններից օգտվելու և հիվանդանոցներում բուժվելու հանդեպ XIX դարի ընթացքում գերիշխող նախապաշարմունքները ազդեցին Օր-Ահայիմ հիվանդանոցի հիմնադրման գործընթացի վրա: Հրեական համայնքում շատերը չէին ընդունում տնից հեռու օտար մահճակալում բուժում ստանալու միտքը: Այս ժամանակահատվածում Օր-Ահայիմի հիմնադիրներն ու բժիշկները ստիպված էին գործ ունենալ հիվանդանոցի դեմ տարվող պրոպագանդայի հետ: Այնուամենայնիվ, այս ռեակցիոն գործողությունները չկարողացան կասեցնել հիմնադրման աշխատանքները, և բուժկետի գործունեության տասնամյա փորձը ցույց տվեց ամբողջական հիվանդանոց հիմնելու կարիքը:

Այս տասը տարիների ընթացքում հավաքված նվիրատվությունները՝ ավանդույթ դարձած պարահանդեսներից և այլ միջոցառումներից, խրափուսեցին Օր-Ահայիմի հիմնադիրներին կառուցելու ավելի մեծ հիվանդանոց: Բալաթում հիվանդանոց հիմնելու պաշտոնական դիմումը ներկայացվեց Գլխավոր Ռաբբիի ստորագրությամբ: Սուլթան Աբդուլ Համիդը արտունց Բալաթում հրեական հիվանդանոցի հիմնումը 1896 թվականի փետրվարի 16-ին: Արտոնագիրը ստացվեց 1896 թվականի ապրիլի 18-ին: Շենքի նախագծումը հանձնվեց ժամանակի հայտնի ճարտարապետներից մեկին՝ Գաբրիել Տեղեշչիին: Տարբեր աղբյուրներում որպես հիվանդանոցի բացման տարեթիվ նշվում է 1898-ը կամ 1900-ը:

that became long-lived traditions, and has been serving people from the Jewish community over a hundred years.

Balat's experience with epidemics and the endless effort of the Or-Ahayim Hospital's founding story are extremely important in revealing how the practices of violence and care penetrate deep into daily life and are not limited to certain historical cataclysms. At this point, it may be useful to remember Rob Nixon's conceptualization of slow violence. Nixon defines *slow violence* as a type of "violence that occurs gradually and out of sight, a violence of delayed destruction that is dispersed across time and space, an attritional violence that is typically not viewed as violence at all."<sup>1</sup> Viewed from this perspective, and considering historical crimes accepted partly and with difficulties, struggles such as Wealth Tax and 6-7 September Pogroms, the Golden Horn that was left to dead, the sewers that could not be drained for more than a century, the poverty that was not a subject for the state concern while the epidemic continued, the "tolerance" that was constantly forced to be thankful for, and a contemporary narrative of the nineteenth century that does not include difficulties, are all parts of the ongoing violence. In this sense, the practice of "living together" oscillates between slow and direct violences.

<sup>1</sup> Nixon, R. 2011. *Slow Violence and the Environmentalism of the Poor*, Harvard University Press, London.

When we look at the nineteenth-century Balat's memory, we also see a practice of care in the Or-Ahayim Hospital experience. The practice of care reveals the function of providing the right service to those in need. It is a strong practice against the "urban cleaning" discourse that is based on displacing people struggling with poverty and attributes the cause of diseases to impossibilities and pollution created by human activity. Or-Ahayim Hospital could have been established in a more prestigious district of Istanbul at that time, and it could have guaranteed its sustainability by serving the wealthy people. The hospital not only provided health care to residents of a poor neighborhood, but also broke the preconceptions about receiving health care in the community, created traditions that lasted for years, and wove a lively solidarity network around these

## Ամփոփում

Աղքատ թաղում հրեա համայնքի սեփական ջանքերով հիմնադրված Օր-Ահայիմ հիվանդանոցը Օսմանյան կայսրության և Թուրքական Հանրապետության բեկումնային պահերի վկան դարձավ: Այն դիմակայեց դժվարություններին համայնքի համապարտ պարտավորության ու նվիրատվությունների շնորհիվ, որոնք դարձան երկարամյա ավանդույթներ, և հաստատությունը շարունակաբար ծառայեց հրեական համայնքին ավելի քան մեկ դար: Այս հիվանդանոցը, որի միջոցով համայնքը որոշեց իր ուսերին առնել XIX դարի առողջապահական խնդիրները և աղքատ թաղի բեռը, ունի հիշողություն, որը ներառում է պատերազմներ, պետության կողմից պարտադրված հարստության հարկը և XX դարի ընթացքում հրեական բնակչության աստիճանական նվազումը Ստամբուլում: Այս իրադարձություններից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության առարկա է: Այնուամենայնիվ, ներկայի և «միասնակյանք» փորձի վերաբերյալ քննարկումների համար այստեղ իմ ներկայացրած XIX դարի Բալաթի հիշողությունը խոսուն վկա է: Բալաթի համաճարակների փորձը և Օր-Ահայիմ հիվանդանոցի տքնաջան հիմնադրման պատմությունը խիստ կարևոր են լույս սփռելու այն փաստի վրա, որ բռնության և խնամքի կարգերը չեն սահմանափակվում որոշ պատմական աղետներով, այլ խորապես ներթափանցված են առօրյա կյանքի մեջ: Այստեղ անհրաժեշտ է հիշել Ռոբ Նիքսոնի «դանդաղ բռնության» իմաստաբանական մոտեցումը: Ըստ Նիքսոնի՝ «դանդաղ բռնությունը» «անտեսանելի, աստիճանաբար տեղի ունեցող բռնությունն է, հետաձգված ոչնչացման բռնությունը, որը տարածված է ժամանակի ու տարածության մեջ, մի հյուժող բռնություն, որը սովորաբար չի դիտարկվում որպես բռնություն»:<sup>1</sup> Այս դիտանկյունից ընթացիկ բռնության մաս են կազմում մասնակիորեն ու դժվարություններով ընդունած պատմական հանցագործությունները, պայթարները, ինչպիսիք են հարստության հարկը, 1955-ի սեպտեմբերի 6-7-ի ջարդերը, մահվան մատնված Ոսկեղջյուրը, կոյուղիները, որոնց արտահոսքի ու մաքրման խնդիրները շարունակվեցին շուրջ մեկ դար, աղքատությունը, որը երբեք չհուզեց պետությանը մինչև համաճարակները, հաջորդում էին միմյանց, «հանդուրժողականությունը», որի համար շարունակ ստիպում էին երախտապարտ լինել, անցյալի մասին պատմությունները, որոնցում չի խոսվում դժվարությունների մասին: Այս առումով «միասնակյանք» փորձը տատանվում է դանդաղ և ուղղակի բռնությունների միջև:

<sup>1</sup> Nixon, R. 2011. *Slow Violence and the Environmentalism of the Poor*, Harvard University Press, London.

traditions. Despite all difficulties and disasters (natural or social) interrupting living together, Or-Ahayim has been maintaining its function for more than hundred years.

At the beginning of the article, I mentioned that urban transformation projects based on the discourse of urban cleaning create a historical city image by melting the Fener-Balat-Ayvansaray districts in the same pot. This image haunted me. When I saw Cultural and Social Narratives Laboratory's first email suggesting a collaboration on making this book, I thought "Why Balat, specifically?" Although Balat has a voluminous place in the gentrification literature, it was definitely not considered in the context of memory as it deserves. It was clear that when scraping the surface, a wealth of information would come out. This was not a conflicting thing in my mind. The question was about considering the district separately: "Why Balat, specifically? Why not Fener-Balat?" During the project, which lasted about two years, every time I turned this article over in my head and tried to write it, I had to confront how much I internalized the urban image created by the urban transformation projects. At the end of two years, I see that what turns a district into a district with a different name despite the transitional borders and shared experiences, is the way it meets new challenges on its own terms. Balat tried to deal with pandemics that turned the nineteenth century into a long nightmare, accompanied with poverty and sewers flowing through it, the district had to struggle in more difficult conditions than many other districts of Istanbul. That's why Or-Ahayim Hospital, established to support the Jewish community of Balat, was here and not elsewhere. The memory of the place reveals that violence, along with the issues of justice and care do not work equally for everyone, even in the same community. Urban nostalgia leaves this behind, by purifying solidarity traditions of the community from the harsh conditions and practices of violence that lead to solidarity.



XIX դարի Բալաթի մասին հիշողություններում տեսնում ենք խնամքի կարգը Օր-Ահայիմ հիվանդանոցի օրինակով: Խնամքի կարգը կարիքավորներին պատեհ ծառայություն մատուցելն է: Այն գորավոր գործիք է «քաղաքային մաքրման» դատողության դեմ, որը հենված է աղքատության դեմ պայքարող մարդկանց տեղահանելու վրա և հիվանդության պատճառները վերագրում է անկարելիություններին և մարդկանց՝ որպես աղտոտվածության կրողներ: Օր-Ահայիմ հիվանդանոցը կարող էր հիմնադրվել Ստամբուլի ավելի հեղինակավոր թաղերից մեկում և ունենալ կայունության երաշխիք՝ հարուստ մարդկանց ծառայելով: Հիվանդանոցը, սակայն, ոչ միայն ծառայություններ մատուցեց աղքատ թաղի բնակիչներին, այլ նաև կոտրեց համայնքում առողջապահական ծառայություններից օգտվելու շուրջ նախապաշարմունքները, ստեղծեց ավանդույթներ, որ շարունակվեցին տարիներ՝ հյուսելով մարդկանց համապարտության աշխույժ մի ցանց այս ավանդույթների շուրջ: Չնայած բոլոր դժվարություններին, բնական կամ սոցիալական աղետներին, որոնք ընդհատեցին միասնական ապրելու փորձը՝ Օր-Ահայիմը շարունակեց իր գործունեությունը հարյուր տարուց ավելի:

Հողվածի սկզբում նշեցի, որ քաղաքային փոխակերպման ծրագրերը՝ հիմնված քաղաքի մաքրման դատողության վրա, ջանացին ստեղծել պատմական քաղաքի պատկեր՝ միաձուլելով Ֆեներ-Բալաթ-Այվանսարայ թաղամասերը մի ամանի մեջ: Այս պատկերն ինձ դադար չէր տալիս: Երբ ես տեսա «Մշակութային և սոցիալական նարատիվների լաբորատորիա» ՀԿ-ի՝ այս գրքի շուրջ համագործակցություն առաջարկելու առաջին էլեկտրոնային նամակը, մտածեցի՝ ինչո՞ւ և հենց Բալաթը: Չնայած Բալաթի մասին բազում ուսումնասիրություններ կան, մասնավորապես՝ ազնվականացման ուղղությամբ՝ թաղամասը նախկինում արժանիորեն չէր դիտարկվել հիշողության համատեքստում: Ի սկզբանե պարզ էր, որ մակերեսի տակ հարուստ տեղեկություն էր թաղված: Ես հաշտ էի այս մտքի հետ: Բայց ինձ հանգիստ չէր տալիս թաղամասն առանձին դիտարկելու հարցը: Ինչո՞ւ և հենց Բալաթը: Ինչո՞ւ և ոչ Ֆեներ-Բալաթը: Երկու տարի տևած ծրագրի ընթացքում, ամեն անգամ, երբ մտածում էի այս հողվածի շուրջ և փորձում այն թղթին հանձնել, ես ստիպված էի առերեսվել իմ ներքին քաղաքային պատկերի հետ, որը ստեղծվել էր հենց նույն քաղաքային փոխակերպման ծրագրերի շնորհիվ: Այս երկու տարվա ավարտին ես հասկացա, որ քաղաքային թաղամասը թաղամասը է դառնում, թեև անվանափոխված, ոչ միայն հատված սահմանների ու համատեղ վերապրածի շնորհիվ, այլև՝ ինչպես է թաղամասն ինքնուրույն դիմակայում դժվարություններին: Բալաթը փորձեց

## Bibliography / ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Danacıoğlu, E.** 2003. “A 100 Year Pause in History’s Long Voyage” in *Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*, Balat Or-Ahayim Jewish Hospital Foundation, İstanbul.
- De Amicis, E.** 1874. *Costantinopoli*, G. P. Putnam’s Sons, İstanbul.
- DSA. BEO / 528-39595**, “Bilad-ı mücaverede kolera zuhur ettiğinden Galata, Balıkpazarı, Kasımpaşa ve Balat.” H - 28-01-1311 (Archival Document).
- DS. BEO / 486 - 36386**, “ Ortaköy ve Kuzguncuk ve Balat’da barakalarda ikamet ettikleri halde geçen sene kolera esnasında görülen lüzum üzerine İkinci ve Dokuzuncu Belediye Daireleri dahilinde bazı hâli hanelere yerleştirilmiş olan Musevilerin oralardan ihracı hakkında.” H- 06-06-1312 (Archival Document).
- Kaya, Ö.** 2016. *İstanbul’da Yahudi Cemaatinin Yaşam Alanları 2: Galata ve Balat*, Şalom Newspaper, 7 September 2016.  
[https://www.salom.com.tr/arsiv/haber-100396-Istanbulacuteda\\_yahudi\\_cemaatinin\\_yasam\\_alanlari\\_2\\_\\_galata\\_ve\\_balat.html](https://www.salom.com.tr/arsiv/haber-100396-Istanbulacuteda_yahudi_cemaatinin_yasam_alanlari_2__galata_ve_balat.html)
- Kocabal, O., Özcan, D.** 2020. “Istanbul Bibliography 2020”, *YILLIK: Annual of Istanbul Studies* 2.
- Koçu, R. E.** 1960. *İstanbul Ansiklopedisi, cilt 4*, Tan Matbaası, İstanbul.
- Nixon, R.** 2011. *Slow Violence and the Environmentalism of the Poor*, Harvard University Press, Londra.
- Or-Ahayim Hospital: A Century of Love and Compassion*, Balat Or-Ahayim Jewish Hospital Foundation, İstanbul.
- Pardoe, M.** 1837. *The City of the Sultan and Domestic Manners of the Turks*, H.G. Clarke and Co.
- “Salgın Afetlerinde İstanbul”, in *Afetlerin Gölgesinde İstanbul: Tarih Boyunca İstanbul ve Çevresini Etkileyen Afetler*, İBB Yayınları, İstanbul.
- Takvim-i Vekayi*, No: 164 , (11 Safer 1254 [6 May 1838]).
- Zennaro, M. S.** 1868. “Etude sur le Choléra de Constantinople en 1865”, in *Gazette Medicale D’Orient*, İstanbul.
- Yıldırım, N.** 2016. “Osmanlı Coğrafyasında Karantina Uygulamalarına İsyandar, ‘Karantina İstemezük!’”, in *Toplumsal Tarih*, 150, İstanbul.

դիմանալ համաճարակներին, որոնք XIX դարը վերածեցին մի երկար մղձավանջի: Աղքատության և արտահոսող կոյուղիների հետ թաղամասը ստիպված էր պայքարը վարել շատ ավելի դժվար պայմաններում, քան Ստամբուլի այլ թաղամասեր: Այս է պատճառը, որ Օր-Ահայիմ հիվանդանոցը հիմնվեց՝ սատարելու հրեա համայնքին Բալաթում և ոչ այլ թաղամասում: Այս վայրի հիշողությունը փաստում է, որ բռնությունը, արդարությունը ու ինսամբը հավասարապես չեն գործում բոլորի համար: Թերևս դադար չտվող դժվար հարցը հետևյալն է. «Ինչո՞ւ և ենք նախընտրում բռնությունը, հոգ տանելու փոխարեն»:







## ELENI: NOVELISTIC SIMULATIONS OF SPACE MEMORY AND OBLIVION

Angelos Kottas

*“Le coeur se sature d’amour comme d’un sel divin qui le conserve; de la l’incorrutable adhérence de ceux qui se sont aimés dès l’aube de la vie, et la fraîcheur des vieilles amours prolongés.”<sup>1</sup>*

My eyes run along the lines of my book, as I am having a cigarette, hiding from everyone in the little box room on the third floor of our house. The music coming from the gramophone downstairs is now getting louder, and my sister, Aspasia, is singing “Smyrniopoula”<sup>2</sup> out of tune, a song that has become pretty popular these days. My mother calls me into the kitchen, where a load of food is being prepared. Dolma, pickled tuna and fava are already waiting on the table. Dad had been explicit: “I want every day to feel like Sunday in our home.” My mother, Euterpe, a beautiful buxom woman with a deep love for her family, had set my sisters to work. She had put her foot down and refused to get a maid since, as she kept saying, she had dutiful daughters that soon would be “real” ladies of their own house. I am the only one to be left in peace, since she knows that I long for other things in life, literature and art, so she just asks me to run some errands now and then.

“Eleni,<sup>3</sup> hop over to your father’s shop and tell him that he should close up soon. Lunch is almost ready.”

I instantly took the opportunity to have my favorite bike ride through the market in this lovely spring weather. We live in Balat Ariento, a mixed area inhabited by Rums<sup>4</sup> and Jews who are mainly merchants, craftsmen, clerks and teachers. Our house is one of the identical three-storey houses in Balat, a common architectural structure in many non-Muslim neighborhoods that have devoured the old wooden *konaks*<sup>5</sup> which I can now hardly remember. Holding my bike while I am walking down our peaceful alley, I can’t help but notice how aligned the facades of the houses are, as if they were made by the same architect probably to save some money. Modest structures, narrow, well-tended facades, imposing

<sup>1</sup> “The heart is saturated with love as if with a divine salt which preserves it; that is what makes possible the incorruptible attachment of those who have loved each other from the dawn of life, and the freshness of old loves which have lasted a long time”. Extract from *The Man Who Laughs* (L’Homme qui rit) by Victor Hugo.

<sup>2</sup> “Smyrniopoula” is a Greek version of the Italian hit of 1905, “Naninela”, which was recorded a year later in Smyrna by the band Elliniki Estudiantina.

<sup>3</sup> The protagonist of the text is based on the artist Eleni Iliadis (1895-1975). She was born in Istanbul, to Greek parents and studied visual arts in Munich. She was the youngest and only non-Muslim woman who was decorated with a medal in an important exhibition in Istanbul. During World War I, Iliadis was a rising star in Istanbul’s art world and showed several of her works at two collective exhibitions (1916 and 1917). One of her paintings was acquired for public collection, and she had another individual exhibition in 1918. However, her bright career in the Ottoman art world stopped at the start of the Greek-Turkish war (1919-1922). In 1923, following the compulsory population exchange signed between the Kingdom of Greece and the fledgling Republic of Turkey, Iliadis had to leave her hometown behind and move to Athens, where she lived and worked until her death in 1975. See Tongo, G. 2018. “Eleni Iliadis (1895-1975). An Ottoman Greek woman painter in end-of-Empire Istanbul”, *Clio. Women, Gender, History*, No. 48 (Gendering the (post-)Ottoman world), 55-78.

<sup>4</sup> Greek Orthodox Christians in Asia Minor during the last period of Ottoman Empire were self-defined as “Romios/Romia” (Greek: Ρομιός, Turkish: Rum), a name that denoted Byzantine-Roman origin and their Greek Orthodox identity. In literature, this term was used to make a distinction between Greeks living in the Ottoman Empire and the newly established Kingdom of Greece (1832).

<sup>5</sup> A large residence or inn in the Ottoman Empire.

## Անգլերու Կոտտաս

<sup>1</sup> «Միտք հագնեամ է սիրով, որ ասան պաշտպանիչ աստվածային աղ լինի. որս շնորհիվ է հնարավոր դառնում կյանքի արչայության մեծնկու սիրողների անբավական կապը ու տևական ժամանակ հարստանող կին սիրո բարձրությունը» (Ֆր. ) - հատված «Իկտոր շրջադի «Մարդը, որ ծիծաղում էր» (Ֆր.՝ L'Homme qui rit) վեպից:

<sup>2</sup> Smyrniotissa – 1905 թ. -ի խառնակալու «Naninela» հիքի հունական տարբերակն է, որ ճայագրվել է մեկ տարի անց Մսիրեայում (ներկայիս Իզմիր, հուն.՝ Տչնորո, Մսիրես, կին անվանումը՝ Օմյունիս) «Էլլինիկի Էստոլիանտինա» խմբի կողմից (Ελληνική Εστιακή). հուն.՝ Ελληνική Έστιακή, բառախաղ է՝ Էլլինիկի-հունական, Էստոլիանտինա (հայ. ) – նաստեղական նվագախումբ՝ հասկապես լայրային, որի անդամները թիկնոցներ են կրում (1898-1921):

<sup>3</sup> Տեքստի կերպարի իրական նախատիպը նկարչուհի Էլենի Իվադիս (1895-1975) է՝ ՕՄՆԿ է Մասնորոնում, հայկերի քննամբերում, գեղարվեստ է ուսանել Մյունխենում: Մասնորոնյան մի կարևոր ցուցահանդեսի մեղադիր արժանացած ամենանշխատադր է փակ ոչ մտադրան կին արվեստագետ է: Առաջին աշխարհամարտի տարիներին Իվադիսը Մասնորոնի արվեստի մեթոդային ծագող աստղերից էր, որի գործերը ցուցադրվել են երկու խմբակային ցուցահանդեսներում (1916-ին և 1917-ին): Համալսարանի հավաքածուի համար գտնվել է նրա գործերից մեկը, իսկ ամենամական ցուցահանդեսն ունեցել է նաև 1918թ. -ին: 1923-ին, Հունաստանի բազմակողմանի և Քորնթիայի նորաստեղծ Հանրապետության մեջ կեղծած համանմանագրով նախատեսված բնակչության պարտադիր փոխանակման արդյունքում Իվադիսը ստիպված էր լքել իր ծննդավայրը և տեղափոխվել Աթենք, որտեղ անդձագործել է ստյալի է մեջ մտնել՝ 1975թ.: Տե՛ս նաև, «Տեղագ. Էլենի Իվադիսը, օսմանցի հույն կին նկարչուհի կայսերական Մասնորոնի վերջույթին, Միդ. Աստուք, գեղերը, պատմություն 84, գեղարվեստագետ (հետ-)օսմանական աշխարհի» (2018); Տե՛ս, Tongo, G. 2018. "Eleni Iliadis (1895-1975). An Ottoman Greek woman painter in end-of-Empire Istanbul", *Clio. Women, Gender, History*, No. 48 (Gendering the (post-)Ottoman world), 55-78:

<sup>4</sup> Փորք Ասիայի ուղղափառ քրիստոնյա հոյակեր Օսմանյան կայսրության վերջույթին նախնականագրվում էին որպես Romios/Romia (բառացի՝ «հունուհանր/ հունիաններ», հուն.՝ Ρωμιός, րոմբ՝ Rom, հայ.՝ հոռոմ կամ ոռոմ), որ շեշտում էր նրանց բյուզանդա-հունական ծագումը և պատկանելիությունը հունական ուղղափառ եկեղեցուն: Գրականության մեջ հասցան հիշատակվում են իրեն օսմանցի հույներ, որպեսզի տարբերակվեն 1830-1832 թթ. -ից հոշակված Հունական բազմակողմանի հույներին:

<sup>5</sup> Կոնակ (րոմբ.՝ Κονάκ) - օսմանական քնդարձակ աստանտների կամ հյուրասների անվանումը:

# Էլենի. վիպագրական մտավարժանքներ՝ տարածքի հիշողության ու մոռացության շուրջ

*«Le coeur se sature d'amour comme d'un sel divin qui le conserve; de la l'incorruptible adhérence de ceux qui se sont aimés dès l'aube de la vie, et la fraîcheur des vieilles amours prolongés.»*<sup>1</sup> Աչքերս վազվզում են գրքիս տողերի վրայով, մինչ ծխում եմ մեր տան երրորդ հարկի տուփիկ սենյակում՝ բոլորից թաքուն: Ներքևից եկող գրամֆոնի ձայնն ուժգանում է, իսկ քույրս՝ Ասպարիան, լաղից ընկած ձայնակցում է մեր օրերում ահագին տարածված «Մսիրևիկոպուլա»<sup>2</sup> երգին: Մայրս ինձ խոհանոց է կանչում, որտեղ տեսակ-տեսակ ուտելիքներ են եփվում: Տոլման, արհիևացված թունան ու ֆավա կանաչ լոբին սեղանից մարդեն աչքով են անում: Հորս հստակ պահանջն է. «Մեր տանն ամեն օրը կիրակի պիտի լինի»: Մայրս՝ Էուտերպեն՝ ընտանեսեր մի փարթամ գեղեցկուհի, քույրերիս գործի է դրել: Ինչ արեցինք, միևնույն է, երկու ուղղը մի կոշիկից չհասնեց ու սպասուհուց հրածարվեց՝ միաբերան պնդելով, թե երկու անող-ղևող աղջիկ ունի, որ շուտով իրենց օջախներում են «խակական» տանտիկին դառնալու: Ինձնից ձեռք է քաշել, որովհետև գիտի՝ ես կյանքից ուզածս ուրիշ բաներ են՝ գրականությունն է ու արվեստը, էսպես որ ինձ պարզապես մեկուսեց ինչ-որ գործերով տեղ-մեղ է ուղարկում:

«Էլենի,<sup>3</sup> թռիռ հորդ խանուզ, ասա թող շուտով փակի: Ծաշը համարյա պատրաստ է»:

Շուկան հատող իմ նախընտրած հեծանվուղով անցնելու առիթը, գարնանային հանձնի եղանակին բաց չեմ թողնում: Արարմ ենք Բալաթ Արիեստոյում՝ հոռոմներով<sup>4</sup> ու հրեաներով խառը բնակեցված մի տարածքում, որոնք հիմնականում առևտրականներ, արհեստավորներ, գործակատարներ կամ ուսուցիչներ են: Մեր տունը Բալաթի տիպական եռահարկ շենքերից է՝ ոչ-մուսուլմանական թաղերին հատուկ ճարտարապետությամբ մի կառույց, որ եկել է գրավելու հիշողությունիցս արդեն ջնջված, հին փայտաշեն *կոնակներ*<sup>5</sup> տեղը: Հեծանվիս բռնած՝ ճեմնում եմ մեր խաղաղ ծառուղով ու աչքիս հա՛ գարնում են շենքերի միանման ճակատները, ասես փող խնայելու համար միևնույն ճարտարապետին են բոլորը պատվիրել: Անպաճույճ կառույցներ, նեղ, խնամված դիմապատեր, աչք շոյող մուտքի դռներ, որ իրարից տարբերվում

doorways whose only difference is the details of adornment and color. On their window frames, some houses feature the head of Hermes or Athena, while Grecian columns stand proudly at their entrances. Besides, the city's Rums often turned to the ancient Greek world for inspiration.

Preserving our Greek identity and language has always been of utmost importance for my family. The Greek heritage is not easy to handle, yet obviously one can only reflect on their cultural heritage once they are threatened to lose it. Greek words jump out of my mouth. The language we speak is slightly different from Ancient Greek but still, it is Greek.

Speaking Greek in Balat is generally accepted. On the borders of Balat lies the Fener or Phanari district, where Greek language and orthodox doctrine are dominant. The solemn and monumental architecture of this area always reminded me of the seriousness of my Greek heritage. Without even realizing it, every time I walk through Balat, my eyes gaze up at Phanari's stone hill. There looms the Phanar Roman Orthodox Lyceum, a red castle whose dome lies above the central building where there's an astronomical observatory. The red brick is reminiscent of the Romanian<sup>1</sup> secular and religious architecture. Some steps away from the Lyceum, there's a small red church called Panagia Mouchliotissa. This is the only church in the city that was never converted to a mosque. My father once told me that beneath this humble building there is an underground passage that is rumored to go all the way to Hagia Sophia. These two buildings always remind me of the place the Greek community occupies in Istanbul, a place of excellence, a somewhat arrogant attitude due to its glorious origins through its education and religion.

On the other hand, I'm so glad to live in Yahudī Balat, the Jewish Balat, which is Hispanic, more amiable, more cheerful, with its main roads full of taverns and *meyhaneler*<sup>2</sup> and with a vivid commercial life. This neighborhood, however, is far from being a ghetto,

<sup>1</sup> The name *Romania* literally means "Land of the Romans" and had been used unofficially by the population of the Byzantine Empire for their country for centuries, while it was officially used by the so-called Latin Empire of Constantinople (1204-1261).

<sup>2</sup> Traditional restaurants in the Ottoman period that replaced the taverns (*καπηλειά*) of the Byzantine era.



են միայն նախշերով կամ գույնով: Որոշ տների լուսամուտափեղկերը զարդարված են Յերմեսի կամ Աթենայի գլուխներով, իսկ հունական այլուաշարը հպարտ վեր է խոյանում մուտքի դիմաց: Ինչ խոսք, քաղաքի հոռոմները հաճախ են հին հունական աշխարհից ոգեշնչվում:

Իմ ընտանիքի համար էլ մեր հունական ինքնությունն ու լեզուն միշտ հույժ կարևոր են եղել: Հունական ժառանգությանը տեր կանգնելը խաղ ու պար չէ, թեև մշակութային ժառանգությանը անդրադառնում ես միայն այն ժամանակ, երբ կորցնելու վտանգի առաջ ես: Բերանիցս հունարան բառեր են թռչում: Մեր խոսակցական լեզուն փոքր-ինչ տարբեր է հին հունարենից, բայց դե հունարեն է:

Բալաթում հունարեն խոսելուն վատ չեն վերաբերվում: Ֆեներ կամ Ֆանարի թաղամասը, որտեղ հունարենն ու ուղղափառությունը գերիշխող են, շատ մոտ է Բալաթին: Տարածքի վեհաշուք և կոթողային ճարտարապետությունն ինձ անընդհատ հիշեցնում է հունական լրջագույն ժառանգության մասին: Ամեն անգամ Բալաթով գրոսնելիս, ինձնից անկախ, աչքերս հառում եմ Ֆանարիի քարաբլրին: Աղոտ երևում է Ֆանարի հունական ուղղափառ լիցեյը, Կարմիր ամրոցի կենտրոնական շինության գմբեթը, որտեղ աստղադիտարանն է: Կարմիր աղյուսը հուշում է ռոմանիական<sup>1</sup> աշխարհիկ և եկեղեցական ճարտարապետության մասին: Լիցեյից մի քանի քայլ այն կողմ փոքր, կարմիր եկեղեցի կա, որ կոչվում է Պանագիա Մաուչլիոսիսսա (բառացի՝ Մոնղոլաց Տիրամայր): Քաղաքի միակ եկեղեցին է, որ երբևէ մզկիթի չի վերածվել: Հայրս մի անգամ ինձ պատմեց, որ ես անշուք շենքի տակ ստորգետնյա անցուղի կա, ասում են, թե հասնում է մինչև Այա Սոֆիա: Երկու կառույցն էլ ինձ հիշեցնում են Ստամբուլի հունական համայնքի զբաղեցրած դիրքի մասին, գերիշխող դիրքի, մի տեսակ ինքնագոհ՝ կրթությամբ ու կրոնով պայմանավորված իր փառավոր ակունքներից բխող:

Մյուս կողմից, անչափ ուրախ եմ, որ Յահուդի Բալաթում (հրեական Բալաթում) եմ ապրում, որն իսպանական է և նաև, ավելի մարդամոտ, ավելի կենտրոնախ, հիմնական ճանապարհներին վիստացող գինետներով ու *մեյխաններով*<sup>2</sup>, իր զարմանազան առևտրական կյանքով: Մեր թաղը, ամեն դեպքում, գետտո չէն կոչի, քանի որ հրեական ծանրակշիռ մեծամասնության կողքին *միլլեթներ*<sup>3</sup> էլ են ապրում: Հոռոմների և հայերի ժամեր կան, ինչպես նաև՝ *մեզկիթիներ*<sup>4</sup>՝ անմիջապես սինագոգներին կից: Ինձ միշտ հիացրել է մեկմեկու նկատմամբ ես կամածին հանդուրժողականությունը: Տարբեր ժողովուրդներ ենք. անհաշվելի

<sup>1</sup> Ռոմանիա բառացի նշանակում է «հոմանգլների երկիր» և դարերով օգտագործվել է Բյուզանդական կայսրության բնակչության կողմից իբրև իրենց երկրի ոչ պաշտոնական անվանում, իսկ պատշտոնապես գործածվել է Լատինական կայսրության (1204-1261) շրջանում:

<sup>2</sup> Մեյխան (թուրք.՝ Meyhane) - օսմանյան շրջակա ավանդական սեղանատուն, որ փոխարինեց բյուզանդական գինետների (հուն.՝ κατηλιεω):

<sup>3</sup> Միլլեթ (թուրք.՝ millet) - Օսմանյան կայսրության կրոնական համայնքների անվանումը, որոնք, որպես կանոն, քաղաքներում բնակվում էին առանձնացված քաղաքամերում և անաջողորմում սեփական կրոնական օրենքներով:

<sup>4</sup> Մեզկիթ (թուրք.՝ mescit),- փոքր մզկիթ, մեզիլ:

since there are other *milletler*<sup>1</sup> living nearby this solid majority of Jews. There are Rum and Armenian parishes as well as *mescritler*<sup>2</sup> hiding just a breath away from the synagogues. I have always admired this willful tolerance one shows towards others here. Different people bearing countless geographical, national, historical adventures, yet trying to bridge the gap between us.

<sup>1</sup> Religious communities in the Ottoman Empire that usually lived in separate neighborhoods of the city and were governed by their own religious law.

<sup>2</sup> A small mosque.

I'm not saying that it's always peaceful here. In fact, as I go down at Haci Isa Mektebi on the Balat border, I can remember myself rushing to call Mr. Tsalidis,<sup>3</sup> Balat Ariento's Rum pharmacist, in order for him to take care of some people who were injured after a big fight. Nevertheless, this is where we were all born, Rums, Jews and Armenians. This is where our memories were shaped. This is our motherland. We all are like flowers in the same garden. The Ottoman administration, as a skilled gardener, should ensure that all these flowers are to maintain their unique scent and flourish. Yet, I'm afraid that this land is not for dreamers anymore.

<sup>3</sup> At 105 Tachta Minare Str, in Balat, the "Kendrikon" (Central) pharmacy was founded in 1894 by the pharmacist George Tsalidis. See Κυρκούδης, Θ. 2009. Ρωμιοί Φαρμακοποιοί της Κωνσταντινούπολης και η δράση τους, από το 1840 έως σήμερα, Εκδόσεις "Πέλιτη".

I turn left and walk into Kamiş Sokak. Among residences, coffee shops and other stores I draw on the Great Archangels group of buildings. Since I was a little girl, I was impressed by these buildings colored in red ochre and by their windows with pointed arches. They say that the Surb Hreshdagabed parish was handed over to the Armenians, since they had increased in number. According to local stories, people turned to this church in search of a cure. Blind and deaf people, couples trying to have children and people facing any kind of problem came here to pray and take part in healing rituals. We happened to come here with my father once in order to see the renowned Zoulopetra, a stone rumored to cure madness. This is where the Orthodox, Armenians and Muslims turn to in search of cure and blessing. I guess it works miracles for them, but I can't say I got anywhere.

Wistfully riding my bike in the Great Archangels' neighborhood, I turn onto Lavanda street. Looking up at a building, I notice the Star of David, a sign that it is

աշխարհագրական, ազգային, պատմական արկածների միջով անցած, բայց փորձում ենք մեր միջև եղած անդունդի գլխին կամուրջ կապել:

Չէի ասի, թե էս կողմերում մշտապես խաղաղ է: Իրականում, Բալաթի սահմանով՝ Հաջի Իսա Մեքքեթիով, անցնելիս հիշեցի, թե ոնց էի պարոն Թսալիդիսին<sup>1</sup>՝ Բալաթ Արիենտոյի հոռոմ բուժակին, շտապում կանչել, որ մի մեծ կովից վնասվածք ստացածներին օգնության հասնի: Ամեն դեպքում բոլորս էլ էստեղ ենք ծնվել՝ հոռոմները, հույներն ու հայերը: Էստեղ են կերտվել մեր հուշերը: Մեր հայրենիքն է: Բոլորս ասես մի պարտեզի ծաղիկ լինենք: Օսմանյան կառավարությունն էլ՝ որպես հմուտ պարտիզպան, պիտի հետևի, որ ամենքս ծաղկենք ու բուրենք մեր ուրույն բույրով ու ծաղկունքով: Բայց, վախենամ, որ էս հողն այլևս երազողներինը չէ:

Թեքվում եմ ձախ ու քայլում դեպի Քամիշ Սոքաբ<sup>2</sup>: Բնակելի տների, սրճարանների և կրպակների արանքում աչքիս երևում է Մեծ Հրեշտակապետերի շինությունների խումբը: Փոքրուց տպավորված եմ էս դեղնակարմրավուն ներկված շենքերով և դրանց կամարավոր պատուհաններով: Ասում են, թե Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցու ժամը տրվել է հայերին, երբ նրանք շատացել են: Տեղացիների պատմելով՝ մարդիկ այցելում էին այս եկեղեցի բուժվելու համար: Կույրերն ու խուլերը, անզավակ զույգերը և պարզապես ինչ-որ խնդիր ունեցող մարդիկ գալիս էին աղոթելու ու ամոքման ծեսերին մասնակցելու: Ես ու հայրս էլ ենք մի անգամ եկել հանրահայտ Չոուկպետրան՝ ըստ ասեկոսների՝ հոգեգարությունն ամբողջ քարը տեսնելու: Հենց էստեղ էին ուղղափառները, հայերն ու մուսուլմանները գալիս ամոքման և օրհնության հետևից: Գուցե, իրոք նրանց համար հրաշքներ էր գործում, բայց իմ դեպքում նման բան չեղավ:

Սոքերով տարված՝ հեծանիվս քշեցի Մեծ Հրեշտակապետերի թաղամասով, թեքվեցի Լավանդա փողոց: Նայեցի վեր՝ շենքերին ու նկատեցի Դավթի աստղը՝ հրեական սրբավայրի նշանը: Յամբոլ սիևագոզն է, պարզ, աչքի չզարնող մի շինություն, որտեղ ամեն ուրբաթ իր ընտանիքի հետ այցելում է իմ թանկագին ընկեր Բիանկան: Նրանք Իսպանիայից սերող սեֆարդի հրեաներ են: Թեև բռնի էին տեղահանվել՝ հասկանում եմ, թե ինչու է Իբերիայի իրենց հրեական կյանքը վերածվել լեզենդի, որի վրա էլ խարխսվում է նրանց հրեականությունը: Որոշ հրեական ընտանիքներ իրենց զավակներին ուղարկում են հունական դպրոցներ՝ ըստ ընտանեկան ավանդույթի կամ Բալաթում հրեական դպրոց չլինելու պատճառով: Ահա այդպես էս ու Բիանկան դարձել էինք համադասարանցիներ: Նրանք տանը խոսում են թե՛ հունարեն, թե՛ իսպաներեն:

<sup>1</sup> Բալաթի Քաշտա Մինարն փողոց, 105 հասցեով՝ «Կենդրիկոն», (կենտրոնական) ղեղաստոր հիմնով է 1894-ին, ղեղազոր Գևորգ Քալիդիսի կողմից: 1928թ.-ին բուրբ գործընկեր է վերցնում, որին և 1933-ին փոխանցում է գործը ու մեկ տարի անց՝ մահանում: Տե՛ս Կարսոճյան, Յ. 2009. Բոլմու Բարմաօտուսու ռյո Քոնստանտնուփուլս ևս յի ծրնոլ ռուչ, ասօ ռո 1840 էոս սյաբա, Էսճոսուս «Պենդի»:

<sup>2</sup> Սոքաբ (բոքք .՝ sokak) – փողոց (Օսման .՝ բարգա .):

a Jewish place of worship. It's the Yambol synagogue, a humble, almost invisible red building, where my dearest friend Bianca and her family would go every Friday. They are Sephardi Jews who come from Spain. Even though they were violently forced to leave the country, I can understand that Jewish life in Iberia has become a legend upon which their Jewishness hinges. Some Jewish families used to send their kids to Greek schools, either due to family tradition or the lack of Jewish schools in Balat. They also used to speak both Greek and Spanish at home, so Bianca and I ended up being classmates.

Our families got on very well. Bianca's mother, Mrs. Alice, and mine would often have a coffee together or pay each other a visit on holidays. Besides, on Saturdays, when Jewish women could not engage in household chores, it was common for the Rum and Armenian women of the neighborhood to prepare an afternoon coffee for them. Visiting each other for holidays was accepted in the communities. Balat Rums would also offer Easter eggs to Jews who in return would treat the Christians and Muslims the traditional sweet of the Pesach.<sup>1</sup>

<sup>1</sup> Pesach, or the Passover, is a major Jewish holiday that occurs in spring on the 15th day of the Hebrew month of Nisan (March-April on the Gregorian calendar).

The paradox about Istanbul's history is the way our communities experience their life here. Most probably, Christians have a feeling of bitterness for the conquest of their countries and their submission to Islam; Jews on the other hand, seem to feel grateful for the refuge they were offered as another Promised Land. Nonetheless, my relationship with Bianca was beyond any of these sentiments. There's no person I could love more, no person with whom I could share my thoughts and feelings in the same way. She used to call me "mi media naranja", my other half. However, things changed and her family, just like many other Jews, had to unexpectedly leave for Argentina some years ago.

I finally reached Ayan Caddesi, Balat's most commercial place. Streets here are much more structured compared to the sprawling Phanari; the roads are straight and meet at a right angle; the ground is

Մեր տնեցիները լավ լեզու էին գտել իրար հետ: Բիանկայի մայրը՝ տիկին Ալիսը, մորս հետ հաճախ էր սրճում, կամ տոն օրերին այցելում էին միմյանց: Շաբաթ օրերին, երբ հրեա կանայք տան գործերով չէին զբաղվում, սովորաբար հոռոմ կամ հայ հարևանուհիներն էին կեսօրվա սուրճը դնում: Համայնքներում ընդունված էր տոներին միմյանց այցելել: Բալաթի հոռոմները Չատկի ձվեր էին հյուրասիրում հրեաներին: Վերջիններս իրենց հերթին քրիստոնյաներին և մուսուլմաններին՝ հյուրասիրում էին իրենց Փեսախի<sup>1</sup> ավանդական անուշեղենը:

<sup>1</sup> Փեսախ- հրեական Չատիկը, հիմնական տոներից, որ նշվում է գարնանը, հրեական Նիսան ամսվա 15-րդ օրը:

Ստամբուլի պատմության պարադոքսը մեր համայնքների միասնական կյանքն էր: Հավանաբար, քրիստոնյաները տխրում էին, որ իրենց երկրները նվաճվել էին, ու իրենց պարտադրվել էր իսլամը, մյուս կողմից՝ հրեաները, կարծես, երախտապարտ էին, որ Ավետյաց երկրին փոխարինող մեկ այլ օթևան էր իրենց առաջարկվել: Ամեն դեպքում իմ ու Բիանկայի կապը գերծ էր նման զեղումներից: Ուրիշ մեկը չկար, ում այդչափ կսիրեի, ում հետ եղպես ազատորեն կպատմեի իմ մտքերի ու զգացմունքների մասին: Ինձ դիմում էր *mi media naranja*, ասել է թե՛ իմ երկրորդ կես: Ինչևիցե, մի քանի տարի առաջ ամեն ինչ փոխվեց. նրա ընտանիքն էլ, շատ հրեաների պես, անսպասելի մեկնեց Արգենտինա:

<sup>2</sup> Չադդիսի (թուրք.՝ Caddesi) - մեծ փողոց

Վերջապես հասա Այան Չադդեյի<sup>2</sup> Բալաթի ամենաառևտրաշատ վայրը: Ի տարբերություն Ֆանարի ցաքուցրիվ փողոցների՝ Էստեղիներն ավելի կանոնավոր են. ճանապարհներն ուղիղ են և հատվում են ուղիղ անկյան տակ, գետինը հարթ է, և ավելի հեշտ է հեծանիվ թշելը: Թեպետ Թահթա Սինարեն լի է հոռոմների խանութներով՝ հորս ցանկությունն էր, որ մեր կրպակը քաղաքի անվանի վաճառարահների կողքին լինի: Դիմացս հազար ու մի բան վաճառող խանութներ են. սյունների<sup>3</sup> հանդերձներ, հայելիներ, խոհանոցային պիտույքներ, կահույք: Մերը կտորեղենի և շորի խանութ է: Ահագին ընդարձակ է, կապույտ փայտե ճակատով ու ցուցափեղկի մանեթներով, որոնք պատված են ողջ Եվրոպայից բերված կտորներով: Ցուցանակին հունարեն, ֆրանսերեն և օսմաներեն գրված է «Իլիադիսի արտակարգ կտորեղեն»: Մոդեռն ոճով ցուցանակի նկարիչը Գալանակիսն<sup>4</sup> է, որ թողել է մակագրություն՝ «վստահություն, զնահատանք, որակ»:

<sup>3</sup> Սյունեթ (թուրք.՝ Sünnet) - 8-14 տարեկան տղաների թվատման ավանդական ծես, որ նշանավորում է նրանց հասունացումը: Մոկորոյթի համաձայն՝ տղաներին հագցնում են ավանդական զգեստներ՝ սպիտակ սալյան քիկեց, տալիս քազ ու գավազան:

<sup>4</sup> Դիմիտրիս Գալանակիս (1882-1966) - ստամբուլցի հոռոմ, որին հաճախ պատվիրել են հայրուհի խառնուրդների մեավորման և նկարչական

Հեծանիվից իջնում եմ ու պատուհանից աչք զցում խանութի վրա: Ներսում մարդաշատ է, հորս չեմ գտնում: Հենց էլ պահին պարոն Անդրեասը՝ մեր խանութի աշխատողներից մեկը, միջին տարիքի մի բարեսիրտ ու ազնիվ մարդ, ինձ նկատում է: Տեսնում եմ նրա բեղերի տակ հայտնվող հարազատ, լայն ժպիտը, երբ դուրս է գալիս հետս զրուցելու:

leveled and it's easier to ride a bike. Although Tahta Minare is full of Rum shops, my father wanted our store to be next to the city's greatest merchants. I stumble upon shops that sell all kinds of things: sünnet<sup>1</sup> clothes, mirrors, cooking vessels and furniture. Our store sells fabrics and clothing. It is rather large, with a blue wooden façade and mannequins in its windows showcasing new fabrics that have arrived from all around Europe. The shop sign reads "Iliadis Luxury Fabrics" in Greek, French and Ottoman. The sign, painted by the artist Galanakis<sup>2</sup> in Art Nouveau style, reads: "trust, appreciation, quality."

<sup>1</sup> The traditional ceremony includes the circumcision of a boy aged 8-14 and marks his transition to adulthood. According to custom, the boys are dressed in a traditional costume with a white satin cape, a crown and a scepter.

<sup>2</sup> Dimitris Galanakis (1882-1966), a Rumi from Istanbul who often undertook the decoration and painting of prestigious shops.

I get off the bike and peek into the store through the window. It's busy, but I cannot trace my father anywhere. That's when Mr. Andreas, a kind and honest middle-aged man who works in our store, notices me. I can see his familiar wide smile emerging under his mustache as he comes out to talk to me.

- Look who's here! How are you, my dear child?
- Good afternoon Mr. Andreas! How are you? Is my father here?
- Thomas went to Agora Meyhanesi. Semsis,<sup>3</sup> the violinist from Thessaloniki is performing today, and as soon as your father heard the news, he jumped in with both feet!
- I see. Thank you very much! I'll look for him there, à bientôt!
- À bientôt!

<sup>3</sup> Dimitris Semsis (1883-1950), a violinist from Thessaloniki who was a musician in the court of Sultan Abdülhamid II. He, like other great musicians, left for Thessaloniki from Istanbul after the population exchange (1923).

I ride my bike towards the seaside, outside the walls, to Balat Afuera. I can already feel the sea odor filling the air. Life in Balat is not full of comfort for everyone. This area is mainly inhabited by the working class. I pass by moldy houses and walls. There's an intense sensation of humidity and niff. For the people living here, people of work and toil, who did not have the opportunity to go to school or immerse themselves in art, a pair of boots is much more valuable than Shakespeare's and Pushkin's oeuvre and for this reason my father has instilled a deep respect for these people in me.

- Մի տե՛ս է, ով է էստեղ: Ո՛նց էս, բալա ջան:
- Բարի օր պարոն Անդրեաս: Դո՛ւք ոնց եք: Հայրիկս էստե՞ղ է:
- Թո՛մսը գնաց Ագորա Մահլեսի: Հենց իմացավ, որ Սալոնիկից ջութակահար Սեմսին<sup>1</sup> է Էսօր համերգ տալու, երկու ոտն առած՝ թռավ:
- Պարզ է: Շնորհակալություն, գնամ, գտնեմ, à bientôt<sup>2</sup>:
- À bientôt:

<sup>1</sup> Դիմաքրիա Սեմսիա (1883-1950)– ջութակահար Սալոնիկից, որ տարան Արցուլ Համիդ II-ի պալատական երաժիշտներից էր: Այլ մեծամոռ երաժիշտների պես Սամբուլից անդափովից: Սարնիկ բնակչության

<sup>2</sup> à bientôt – հրանա .՝ ցտեսություն (ծանոթ .՝

Հեծանիվս քշում եմ դեպի ծովափ՝ դեպի Բալաթ Աֆուերա: Հեռվից գգում եմ օդը լցնող ծովի բույրը: Բալաթում կյանքը ոչ բոլորի համար է հարմարավետ: Հիմնականում աշխատողներով է բնակեցված: Անցնում եմ բորբոսապատ տների ու պատերի կողքով: Բարբոսի ու խոնավության թունդ հոտ է գալիս: Էստեղ ապրողների՝ չարքաշ աշխատավորների համար, որ դպրոց գնալու կամ արվեստին տրվելու հնար չունեն, մի գույգ կոշիկն ավելի արժեքավոր է, քան Շեքսպիրի ու Պուշկինի քերթվածքները, էդ պատճառով էլ հայրս խորը հարգանք է ներարկել իմ մեջ էս մարդկանց նկատմամբ:

Առաջին աջով թեքվում եմ դեպի ափեզրի Մյուրսելիաշա փողոց տանող ուղին, որտեղ քյուզանդական ժամանակներում գտնվում էր Պալատիանի արքայական դարպասը, որի անունով էլ կոչվել է Բալաթը: Մի քիչ ներքևից թեքվում եմ դեպի Լեբլեքիջիների Սոքաք, որտեղ մուսուլմաններն են զլխից մենաշնորհել էին բոված սիսեռի առևտուրը: Հապճեպ անցնում եմ համար 17 շենքի կողքով, որտեղ «Մերգեկ Շեքերջիսի» քաղցրավենիքի խանութն է: Շատ կոլորիտային ու հնատն խանութ է՝ ցուցափեղկին շարված վարդի լոխումներով և դադափֆով<sup>3</sup>: Խանութից դուրս եկող հաճախորդի շնորհիվ կարողանում եմ վայելել թարմ կարագի բույրը, որ ինձ հիշեցնում է կյանքի հարստության մասին:

<sup>3</sup> Դադափֆ կամ դադաֆնֆ (բուրբ .՝ kadayif) – թել խմորից թեվածք, հիմնականում՝ քաղցրավենիք, փախլավայի տարատեսակ (ծանոթ .՝ քարգն .):

Մի քիչ ներքևում կտրուկ կանգ եմ առնում համար 8 տան դիմաց, որտեղ Ագորա Մեյհանեսին է՝ Բալաթի հոռոմների սիրած մեյհանեն: Կարծես նվագահանդեսը ընդմիջվել էր. նկատեցի, որ երաժիշտները շունչ էին քաշում և մեզեներ<sup>4</sup> համտեսում: Սրահը բացառապես տղամարդկանցով էր լցված՝ մորուքավոր ևավաստիներով, տարբեր խավերի և միլլեթների այրերով: Արևոտ օրվա շնորհներից օգտվելով՝ կարճիկ սեղաններն ու աթոռակները հանել-դրել էին դրսում: Սրահի ճակատին ոսկետառ գրություններ կային: Ընթերցեցի հունարենով գովազդը. «Տենեդոսի մուսկաթ գինի»<sup>5</sup>: Շուրջս ուրախ մթնոլորտ էր: Գրամոֆոնից երաժշտություն էր տարածվում, ոմանք նարդի էին խաղում, մյուսները՝ մեզեներ վայելում, որոշներն էլ սուրճի հետ ծխախոտ էին ծխում: Չսահել մատուցողն ինձ ընդառաջ եկավ՝ մուսուլմանական ձևով ողջունելով՝ սալամ, որ վկայում էր իր՝ ցածր

<sup>4</sup> Մեզն (բուրբ .՝ meze)- պոսկներով մատուցվող խորտիկների տեսակափ

<sup>5</sup> Տենեդոս կղզում խաղողագործությունը և գինեգործությունը էին արմատներ ունեն: Կղզու հողը բերրի չէ և հարձար չէ հացահատիկների մշակման համար: Բայց և այնպես, բազմաթիվ ճանապարհորդներ գովեցել են տեղական գինիները՝ հասկապես մուսկաթը, որ համարվում էր ուշ Արևելքում ամենահաջող:

I take the first right turn that leads to the coastal stretch, the Mürselpaşa street, where in Byzantine times, Palatiani, the Royal Gate after which Balat is named, was located. A little further down, I turn to Leblebiciler Sokak, a street where Muslims have always monopolized selling roasted chickpeas. I walk hastily by Number 17, where the pastry shop Merzek Şekercisi is located. It is an atmospheric and antiquated shop with rose locums and kadayif in its window display. As a customer gets out of the shop, I have the chance to enjoy the smell of fresh butter that reminds me of life's abundance.

A little farther down, I stop abruptly at Number 8, where Agora Meyhanesi is located—a popular meyhane for the Rums of Balat. The revelry has probably been paused, since I noticed that the musicians are having a break and eating some meze.<sup>1</sup> The hall is exclusively frequented by men, bearded sailors, men coming from all social classes and milletler. Taking advantage of the sunny day, they have placed some short tables and stools outside. On the hall's façade there are signs written with gold letters. I can read an advertisement in Greek "Muscat Wine from Tenedos."<sup>2</sup> There's a joyful atmosphere. There's music coming out of the gramophone, some people are playing backgammon, others are having some meze, and some others pair their coffee with a smoke. A young waiter comes towards me: "Selamun Aleyküm", the Muslim greeting that shows his lower-class origin. I respond with a polite "Merhaba" and let him know that I'm looking for my father. I finally find him at a table talking with a Muslim man, as I can guess by the way he is dressed. I can hear them talking in Turkish while the stranger asks him intensely:

– Since we do believe in your Prophet, why don't you believe in ours?

My father takes a puff at his cigarette and attempts to pipe the conversation down:

– If we could agree on all these things we are talking about, we would believe in the same God. There will come a day that we will all come to an agreement.

They smile and clink their glasses together. I come closer and say:

<sup>1</sup> A selection of small dishes served as appetizers while drinking or talking.

<sup>2</sup> Viticulture and winemaking have a very long tradition in the island of Tenedos. The soil of the island is barren and not suitable for grain. However, many travelers over time praise the wines of the island and especially the Muscat, which is said to be the best in the whole East.



<sup>1</sup> Մեհրաբա (բոսր.՝ mehraba)- բարև:

խավից սերելու մասին: Քաղաքավարի պատասխանեցի՝ մեհրաբա<sup>1</sup> և հայտնեցի, որ հորս եմ փնտրում: Վերջապես գտա նրան սեղանի շուրջ, դատելով հազուկապից՝ մի որևէ մասն տղամարդու հետ: Ականջովս ընկա՛մ, որ թուրքերեն էին խոսում, իսկ անծանոթն անդադար հարցնում էր.

- Ախր, մենք ձեր մարգարեին հավատում ենք, դուք մերին ինչի՞ չէք հավատում:

Հայրս մի մուխ քաշում, ծխամորճը թափ է տալիս ու շարունակում գրույցը:

- Թե մեր ասած ամեն խոսքին համաձայն լինեիք, հիմա նույն Աստծուն հավատալիս կլինեի՞նք: Եդ օրն էլ կգա, երբ բոլորս համամիտ կլինենք:

Միմյանց ժպտում ու բաժակները չխկացնում են: Մոտեցա ու ասացի.

- Հայրիկ, էլի ուաքը խմելով՝ քո հին գրույցն ե՞ս ամում:

- Սիրունս, ավետարանիչը ճիշտ էր գրելիս. «Մարդ ոչ միայն հացիս պիտի ապրի»<sup>2</sup>: Կյանքն էնքան չքնաղ է, բալես: Թող Աստված մեզ մի դար կյանք տա, կամ էլ՝ երկու:

Ծիծաղելով համբուրեցի նրան:

- Մայրիկն է ուղարկել, որ քեզ ասեմ՝ ճաշը համարյա պատրաստ է, հետ պիտի գնանք:

- Ճիշտ ես ասում: Ընկել էի խոսքով ու երաժշտություն լսելով: Երաժիշտները նորեն նվագեցին: Ներկաները ոտքի ելան ու սկսեցին չափով ծափ տալ: Հայրս ականջիս շշնջաց.

- Գնա, մի քիչ էլ քշի ծովափին, հետո՝ մի տասը րոպեից, կգաս: Ռաքըս խմեմ, վերջացնեմ, մորդ սիրտը բահիշի՞ով<sup>3</sup> կշահեմ:

Գլխով համաձայնեցի, քակի որ երաժշտությունն արդեն լավ բարձր էր:

<sup>1</sup> Mackey, S. 2016. "Applied theatre and practice as research: polyphonic conversations", *Research in Drama Education: The Journal of Applied Theatre and Performance*, 21:4, 478-491, <https://doi.org/10.1080/13569783.2016.1220250>.

*Let's start with your cooperation with Çağla İlk. How the idea came up to work together and to create a film based on the theatrical performance?*

I was always very interested in the multicultural life of Istanbul, and I was working for many years to find these traces, mostly Armenian ones. During my residency program in Germany I met Çağla İlk. She is an architect and works in theatre and explores urban memory in Germany. The main scope of her work is researching migration themes to use in her art. We have many friends from Gorky theatre and other institutions, second and third-generation descendants of migrants from Anatolia and Turkey. In my case, my ancestors migrated after Genocide, and it was intriguing to look at each other's experiences from that point of view. By the time we met, she had already been working with her experimental theatre on memory of specific neighborhoods and storytelling technique. She also examined architecture and stories of places, and got an award for making a theatrical performance ("Nereye?"), where you don't have professional actors, but work with the general public. Since we wanted to do something together for a very long time, I joined her team. During one of the trips to Istanbul, we started the research. Looking for human stories we aimed to choose the most interesting ones: not only the story that mattered, but the person's character, qualities of a storyteller.

One of the reasons she invited me to join her team was my project "Deep Sea Fish", a walk through the district of Cihangir in Istanbul.<sup>1</sup> So I already had a similar experience of creating an urban-memory project, and when I learned how intriguing Çağla's theatre idea is, I decided to make a film based on it.

I knew that the performance would take place for two weekends, and could happen twice a day, and since ordinary people were the actors, you could not push them to act more, to tell the same story over again. It was not their job and specialty, and we had to respect their boundaries. And I realized that such a crucial and beautiful project had to be transformed into something lasting, to become a film.

<sup>1</sup> Der-Meguerditchian, S. 2011. "Deep Sea Fish", <https://www.silvina-der-meguerditchian.de/videoworks/deep-sea-fish-2011/>

*վավերագրումը, քանի որ ժամանակի ընթացքում ջենտրիֆիկացման, կառավարական դիրքորոշումների և այլնի հետևանքով վերանում են երբևէ եղած բազմաձևակության կյանքի հետքերը, և անհրաժեշտություն կա արձանագրելու տարբեր Էթնիկական և կրոնական խմբերի խաղաղ գոյակցության մնացորդները գայիք սերունդների համար:*

***Ուլում եմ սկսել Չաղլա Իլկի հետ համագործակցությունից: Ինչպե՞ս ծագեց միասին աշխատելու և թատերական ներկայացման հիման վրա ֆիլմ նկարահանելու գաղափարը:***

Սիշտ հետաքրքրված եմ եղել Ստամբուլի բազմաձևակության կյանքով և երկար տարիներ աշխատել եմ այդ հետքերը, մասնավորապես՝ հայկական հետքերը, փնտրելու ուղղությամբ: Գերմանիայում մի նախագծի շրջանակներում հանդիպեցի Չաղլա Իլկին: Չաղլան ճարտարապետ է և միևնույն ժամանակ աշխատում է թատրոնում, ուսումնասիրում քաղաքային հիշողությունը, հետազոտում միգրացիայի թեման, որը լայնորեն կիրառում է իր արվեստում: Մենք նաև բազմաթիվ ընդհանուր ընկերներ ունենք Գորկու թատրոնից և այլ կազմակերպություններից. Անատոլիայից և Թուրքիայից գաղթյալների երկրորդ, երրորդ սերնդի ներկայացուցիչներ, ինչպես և Չաղլան: Իսկ ես սերում եմ ցեղասպանության գաղթյալների ընտանիքից, և մեզ չափազանց հետաքրքիր էր ուսումնասիրել միմյանց փորձառությունը: Մեր ծանոթության պահին նա արդեն իսկ աշխատում էր իր փորձարարական թատրոնում տարբեր թաղամասերի հիշողությունն ու պատմողական տեխնիկան ինտեգրելու ուղղությամբ: Ուսումնասիրելով տարբեր տեղանքների ճարտարապետությունն ու պատմությունները՝ նա մրցանակ էր ստացել՝ ստեղծելու իր թատերական ներկայացումը («Ner-eye?»), որտեղ փորձված դերասանների փոխարեն դերակատարները կլինեին հասարակ մարդիկ: Դեռ վաղուց միասին որևէ նախագիծ իրականացնելու գաղափար կար, և ես միացա նրա թիմին: Ստամբուլ կատարած մեր այցելից մեկի ժամանակ սկսեցինք նախագծի համար մեր հետազոտությունը: Մարդկային պատմություններ փնտրելիս առաջնորդվում էինք ոչ թե միայն դրանց հետաքրքիր լինելով, այլ մեր հերոսների պատմասացության որակներով:

Չաղլան առաջարկեց իր հետ աշխատել նաև իմ նախկին փորձառության պատճառով՝ «Deep sea fish» նախագծի, որ Ստամբուլի Չիհանգիր թաղամասը ճանաչելու շրջայց էր ենթադրում:<sup>1</sup> Այսպիսով, ես արդեն ունեի ուրբան հիշողության նման նախագիծ ստեղծելու

1 Der- Meguertitchian, S. 2011. "Deep Sea Fish." <https://www.silvina-der-meguertitchian.de/videworks/deep-sea-fish-2011/>.

*Let's talk about the technique you used while creating the film. There is a lot of archival research, I see, collaged into daily life and interviews. You used a collage technique to stress the cultural diversity of Fener-Balat. Can you tell me more about this?*

I shot the material for the film during the last/general rehearsal, using two cameras. For the theatrical performance, people spoke only in Turkish while for the film, I asked the protagonists to tell their story in two languages: in Turkish and in their native languages (Armenian, Greek, Ladino,<sup>1</sup> etc.). It was important for me to deliver the spirit of the multicultural neighborhood. Also, I wanted to present the issue of belonging the Greek teacher tells about in the film. Sometimes she feels that her knowledge of the Greek language is not enough for the University in Greece she used to attend, and while she is in Turkey, her Turkish seems to be imperfect for the locals. I wanted to show what it means to be in-between two languages, two cultures. This is something I experience as I come from Argentina and speak Spanish as a second native language as the Latino-Jewish protagonist does.

I aimed to keep all these memories and nuances in something lasting. We staged every detail starting from where people would stand and talk to the route the audience would walk through, so that all the streets, picturesque façades, markets, and cultural buildings are included. We even asked the guy who manages the hand-powered carousel to be present during the walk. We had several groups of people who would arrange everything with walkie-talkies, one behind the other. It required complex organization and logistics.

*Balat-Fener and similar neighborhoods are the places where the main migrations of the cities are more visible than in other parts of Istanbul. I see these places as maternity lands, ready to host all the "others." Migration and its reproduction are among the main features of Balat. Do you think the migrants value this neighborhood, and vice versa - do locals value the presence of migrants?*

I should disagree with you, as it was like that before, but not now. It repeats itself, you know. For example,

<sup>1</sup> Also known as Judaeo-Spanish. It is the language used by Jews originating from Spain. It flourished in the Ottoman Empire immediately after the expulsion from Spain and continued its existence there.



փորձառություն, և երբ իմացա՝ որքան հետաքրքրական է Չաղլայի թատրոնի գաղափարը, որոշեցի, որ պետք է ֆիլմ նկարահանեմ:

Թատերական ներկայացումը պիտի ցուցադրվեր ընդամենը երկու շաբաթ՝ շաբաթ-կիրակի օրերին, օրը երկու անգամ: Եվ քանի որ դերասանները հասարակ մարդիկ էին, չէինք կարող ստիպել նրանց ավելի հաճախ խաղալ, նորից ու նորից ներկայացնել նույն պատմությունը: Դա ո՛չ նրանց աշխատանքն էր, ո՛չ էլ մասնագիտությունը, և մենք պետք է հարգեինք նրանց սահմաններն ու ժամանակը: Դա էր նաև պատճառը, որ անպայման ուզեցի ֆիլմ նկարել, որպեսզի նման կարևոր ու գեղեցիկ նախագիծը չկորչի, այլ վերածվի մնայուն կյուրթի:

*Խոսենք ֆիլմում կիրառված ռեժիսորական հնարքների մասին: Ֆիլմում նկատելի է, որ շատ լայն արխիվային ուսումնասիրություն եք արել, որի արդյունքները կոլաժի պես հայտնվում են կադրերում՝ ցուցադրելու Բալաթ-Ֆենների մշակութային բազմապատկությունը: Կպատմե՞ք դրա մասին:*

Ֆիլմը նկարել եմ գլխավոր փորձի ժամանակ՝ օգտագործելով երկու տեսախցիկ: Թատերական ներկայացման համար մասնակիցները խոսում էին միայն մեկ լեզվով՝ թուրքերենով, սակայն ֆիլմի համար խնդրեցի, որ գլխավոր հերոսները իրենց պատմության մի մասը պատմեն թուրքերենով, մյուսը՝ իրենց մայրենի լեզվով (հայերեն, հունարեն, լադինո<sup>1</sup>): Ինձ համար կարևոր էր փոխանցել բազմամշակութային թաղամասի ոգին: Նաև դրանով նպատակ ունեի բարձրաձայնելու պատկանելիության խնդիրը, որի մասին ֆիլմում խոսում է հույն ուսուցչուհին: Երբեմն նրան թվում է, թե իր իմացած հունարենը բավարար չէ Դունաստանում համալսարանում սովորելիս, երբեմն էլ թուրքերենն է թերի տեղացիների հետ շփվելիս: Ուզում էի ցույց տալ՝ ինչ է նշանակում լինել երկու լեզվի ու երկու մշակույթի միջև: Սա նաև իմ անձնական փորձառությունն է. ես ծնվել եմ Արգենտինայում և իսպաներենը իմ երկրորդ մայրենի լեզուն է, ինչպես ֆիլմում հրեա հերոսի դեպքում:

Ֆիլմը նկարելիս իմ նպատակն էր պահպանել ամեն հիշողություն ու մանրուք: Մենք ամեն բան նախապես բեմադրել էինք՝ սկսած, թե ինչպես պիտի գլխավոր հերոսները կանգնեն ու խոսեն, մինչև այն ուղիև, որով պիտի հանդիսատեսը քայլեր. այնպես, որ բոլոր փողոցները, գունագեղ ֆասադները, կրպակներն ու մշակութային շենքերը ներառվեն շրջապայության մեջ: Մենք անգամ խնդրել էինք տղային, որ մեխանիկական կարուսելն էր բանեցնում, լինել իր տեղում բեմադրության ժամանակ: Մի քանի խումբ

<sup>1</sup> Judaeo-Spanish կամ Ladino, Իսպանիայի հրեաների կողմից օգտագործվող լեզու, որը լայն տարածում գտավ Իսպանիայից Օսմանյան կայսրություն հրեաներին վտարելուց հետո (Օսմանյան կայսրության քայքայումից):

Turkish migration to Germany: migrants take over the place in some sense. When they came, they did not even have the right to go to cafes, bars but were allowed to form associations, so they created their own public places, and this happens everywhere. It happened in Balat as well: migrants were marginalized and had to take over some spaces to make their own. Maybe 300 years ago, it was not the case, but in the last 100 years, I am pretty sure it was as I described.

It is also a state policy to put these poor, unprivileged people in similar neighborhoods as these are not the areas of great value to the Turkish government: they were close to the Bosphorus, muddy, poor neighborhoods, not a nice place to live. In the 1970s, Romani and Kurd migrants with low income were directed there, not due to the multicultural heritage, but because of its underdevelopment in some sense, it was a policy to get rid of migrants while letting them in.

What you mention can be the case for now. At the beginning of the 2000s, Istanbul Municipality wanted to decentralize the city, and Fener-Balat became valuable for the properties; it was also an attractive neighborhood for creative people, ones who were looking for affordable places close to the city center.

Now maybe the intelligentsia or people who do not want to give up the idea of the multicultural past tried to move to Fener-Balat. But it is a kind of romantic idea, as it does not have the same multicultural spirit as it used to. You see the traces, but there are almost no people. People left the neighborhood not only due to the displacements but for the simple desire to find a better district to live in. For example, during the 1960s, when there was a better economic situation, and some Armenians became wealthier, they moved to other neighborhoods, the same was with Jewish people.

As for how locals welcomed newcomers, I would say they were not happy. But not from the racist point of view. As I learned during our research in Fener-Balat, the old generation speaks nostalgically of the past. They say it was much better in those days, much friendlier, neither nationality, nor religion mattered, people

նացիաների միջոցով ամեն բան համակարգվում էր՝ մի խումբը հաջորդելով մյուսին: Բարդ կազմակերպչական աշխատանք էր պահանջվում:

***Ֆեներ-Բալաթում ու նման թաղամասերում քաղաքի հիմնական միգրացիոն հետքերը առավել տեսանելի են՝ ի տարբերություն Ստամբուլի այլ թաղամասերի: Ինձ այս վայրերը պատկերվում են իբրև մայրական տարածքներ՝ պատրաստ ընդունելու «ուրիշներին»: Միգրացիան և դրա վերարտադրումը, ասես, Բալաթի հիմնական նկարագրի մի մասը լինեն: Ինչն են ներգաղթյալները, ըստ Ձեզ, արժևորում այս թաղամասում, և հակառակը՝ արդյոք տեղացիները արժևորում են միգրանտների ներկայությունը:***

Այդքան էլ համաձայն չեմ այդ պնդման հետ. գուցե նախկինում այդպես էր, բայց ոչ հիմա: Պատմությունը կրկնվում է, գիտե՞ք: Օրինակ՝ թուրքերի Գերմանիա ներգաղթի դեպքում. ներգաղթյալներն, ասես, գրավում են տարածքը: Այն ժամանակ նրանք չունեին իրավունք՝ այցելելու տեղի սրճարաններ, այլ հանրային վայրեր, բայց կարող էին ստեղծել իրենց ակումբները, ասոցիացիաները և այդպիսով նրանք սկսեցին ստեղծել իրենց հանրային տեղերը. սա եղել է գրեթե ամենուր: Նույնը Բալաթում էր. ներգաղթյալները մարզիակացված էին և ստիպված էին «զավթել» որոշ վայրեր՝ իրենցը դարձնելու համար: Գուցե երեք հարյուր տարի առաջ ամեն ինչ այլ էր, բայց վերջին հարյուր տարվա ընթացքում, վստահ եմ, այնպես էր, ինչպես նկարագրեցի:

Դա նաև կառավարության քաղաքականությունն էր՝ տեղակայել այդ աղքատ, առանց արտոնությունների մարդկանց նման թաղամասերում, որոնք չէին արժևորվում կառավարության կողմից. այս թաղամասերը մոտ էին Բոսֆորին՝ ցեխոտ, աղքատ, կարճ ասած՝ ապրելու համար ոչ գրավիչ: 1970-ականներին ցածր եկամուտ ունեցող գնչու և քուրդ միգրանտները ուղղորդվեցին այնտեղ, ոչ թե բազմամշակութային ժառանգության պատճառով, այլ քանի որ սրանք թերզարգացած տարածքներ էին, ինչ-որ առումով միգրանտներից ձերբազատվելու քաղաքականություն էր դա՝ միաժամանակ ներս թողնելով նրանց:

Ձեր ասածը, գուցե, այսօր է ակտուալ: 2000-ականների սկզբին Ստամբուլի քաղաքապետարանը նպատակ ուներ ապակենտրոնացնել քաղաքը, և Ֆեներ-Բալաթը սկսեց արժևորվել անշարժ գույքի տեսանկյունից: Այն նաև գրավիչ վայր էր ստեղծարար մարդկանց համար, ովքեր փնտրում էին կենտրոնի մոտ և մատչելի բնակարաններ: Գուցե հիմա ինտելիգենցիան կամ մարդիկ, ովքեր չեն

were well-dressed, knew specific ways of integration, even manners were different: people knew how to say hello, communicate with others. But this was all about the times when this neighborhood had a better socioeconomic situation. The newcomers are from poor areas and provinces, they do not have proper education, and due to their precarious situation, they were not the type the locals would expect or like. It was a whole different neighborhood back in the mid-20th century; streets were cleaner, façades were nicer, each ethnic group had its meeting spots, e.g. the Jewish Cinema. It created a different atmosphere, but now all these cultural places have vanished. Many buildings went under water or were demolished by fire. These fires were even beneficial to the city authorities, as they would destroy old constructions, and with that, the problem of renovating the area was solved.

***Overall, memory preservation appears to me to be more a feminine function, and women have a bigger role in this regard, as opposed to male historical representation. What do you think of women's role in memory preservation? And did you see its evidence in Balat?***

I also had the idea that sometimes women are the ones who take care of memory. Even in universities, you can see that there are mostly women in Memory Studies. I've also worked with this group of researchers who wrote a book about this subject,<sup>1</sup> took part in the Memory Studies Association (MSA) annual conference in 2019 in Madrid, and the overwhelming majority of participants were women. But women preserve small memories, women do not try to make history with these memories. We do preserve memories, we transmit them from grandmothers and mothers to daughters and granddaughters, but when it comes to who will tell the story, it is always the man-the troubadour who would go from one village to another- as the official history is in the hands of men. We preserve and take care of small and everyday memories, in that sense I do agree with you. Even though in our creative team almost all the members were women, for the theatre and film we did not

<sup>1</sup> Altunay, A. G., Contreras M. J., Hirsch M., Howard J., Karaca B., and Solomon A. 2019. *Women Mobilizing Memory*, Columbia University Press, New York, <http://www.jstor.org/stable/10.7312/alti19184>.

ցանկանում հրաժարվել բազմամշակութային անցյալի գաղափարից, փորձում են տեղափոխվել Ֆեներ-Բալաթ: Սակայն սա ինչ-որ առումով ռոմանտիկ գաղափար է, քանի որ թաղամասն այլևս չունի այն բազմամշակութային ոգին, որը երբևէ կար: Դու տեսնում ես հետքերը, բայց չկան մարդիկ: Եվ մարդիկ լքել են թաղամասը ոչ միայն տեղահանումների հետևանքով, այլև՝ ավելի լավ բնակատեղի գտնելու պարզ ցանկությունից դրդված: Օրինակ՝ 1960-ականներին, երբ տնտեսական աճ էր գրանցվում, ու որոշ հայ բնակիչներ հարստացան, տեղափոխվեցին այլ թաղամասեր, նույնը եղավ հրեա բնակիչների հետ:

Իսկ ինչ վերաբերում է՝ ինչպես էին տեղացիները ընդունում նորեկներին, պիտի ասեմ, որ այդքան էլ ուրախ չէին: Ու պատճառը բնավ ռասիզմը չէր: Ֆեներ-Բալաթում իմ հետազոտության ժամանակ հասկացա, որ ավագ սերունդը կարոտով էր հիշում անցյալը: Ասում էին, որ նախկինում շատ ավելի լավ էր, ավելի ընկերական էր միջավայրը, ո՛չ ազգությունը, ո՛չ կրոնը չէին տարանջատում մարդկանց: Մարդիկ ավելի լավ հազուկապ ունեին, նիստուկացն էր տարբեր, անգամ վարվելակերպը՝ գիտեին ինչպես բարևել, շփվել այլոց հետ: Բայց սա, իհարկե, այն ժամանակների մասին է, երբ սոցիալ-տնտեսական բարենպաստ շրջան էր: Նորեկները աղքատ էին, եկել էին արվարձաններից, չունեին կրթություն և իրենց անորոշ կարգավիճակի պատճառով չէին համապատասխանում տեղացիների սպասումներին: 20-րդ դարի կեսին այն բոլորովին ուրիշ թաղամաս էր. փողոցները մաքուր էին, ֆասադները՝ գեղեցիկ, ամեն ազգային խումբ ուներ իր հավաքատեղին, ինչպես հրեական կինոթատրոնը, որի մասին խոսվում է ֆիլմում: Այդ ամենը բոլորովին այլ մթնոլորտ էր ստեղծում, բայց հիմա մշակութային այդ բոլոր վայրերը անհետացել են: Շատ շենքեր անցել են ջրի տակ կամ այրվել հրդեհների ժամանակ: Իսկ այդ հրդեհներն անգամ ձեռնտու էին քաղաքային իշխանություններին, քանի որ ավերում էին հին կառույցները, և դրանով տարածքը բարեկարգելու խնդիրն ինքնիրեն լուծվում էր:

*Հիշողության պահպանությունը ինձ ներկայանում է որպես ավելի ֆեմինին գործառույթ, և կանայք ավելի մեծ դերակատարում ունեն այդ առումով՝ ի տարբերություն պատմական ռեպրեզենտացման, որն արական գործառույթ է: Ինչ կարծիք ունեք հիշողության պահպանության կնոջ դերի վերաբերյալ, և արդյոք տեսնո՞ւ եք դրա վկայությունը Բալաթում:*

Ես էլ եմ երբեմն կարծում՝ կանայք են, որ հոգ են տանում հիշողության մասին: Անգամ համալսարաններում

stress the importance of female representation. In Balat it was different for us. We were not concentrated only on small stories, we were happy to find any traces and memories; so in that case everything was valuable for us. We had both female and male voices in the film, and in some sense, we wanted to maintain an equilibrium, a balance between female and male voices. We needed to find Armenian, Greek and Jewish stories, and we were concentrating on finding them. I did not realize the difference in the way male and female protagonists shared their stories. Everyone we met was eager to speak. But even in 2014, when the theatre performance and film were created, it was kind of a taboo to speak up, it was hard to find people willing to invest themselves in our project, to dedicate time, be there, open up, be able to tell their story to dozens of people. We were lucky to have two teachers as protagonists, as they were used to speaking to an audience. It wasn't enough for the theatre to find a person who had a lot to share, but unable to share those memories with a large audience. In film it's different, you interview somebody, and then you edit, but for the theatre their ability of interaction was of utmost importance.

*After all the changes the neighborhood faced - fires, displacements, deforestation, Islamization – it is obvious that all these changes led to the obliteration of memory. What do you think are the chances for the Fener-Balat district to preserve its multicultural spirit, the traces which are still there? In fact, that's the main question of your film as well. "To where" the multicultural neighborhood and city go?*

It depends... if one day there is a righteous government, maybe it will be possible to preserve what is left. Even by promoting similar projects like ours. Government needs to emphasize the importance of memory reservation, not in a purely romantic sense, but also to show how economically it can benefit them. If the idea of keeping the multicultural traces is introduced to locals explaining that it can serve as a tourist attraction, people will start valuing it. It is not difficult to do that now, when there are still many traces in the

<sup>1</sup> Ayşe Gül A., Contreras M. J., Hirsch M., Howard J., Karaca B., Solomon A., *Women Mobilizing Memory*. New York: Columbia University Press, 2019, մուսրթ՝ հուլիսի 7, 2021. <http://www.jstor.org/stable/10.7312/alti19184>:

կարող ես տեսնել, որ Հիշողության տեսության բաժնում հիմնականում կանայք են: Նաև աշխատել եմ մի խումբ տեսաբանների հետ, ովքեր այս թեմայով ուսումնասիրություն էին գրում,<sup>1</sup> իսկ 2019-ին մասնակցեցի Հիշողության տեսության ասոցիացիայի (Memory Studies Association – MSA)՝ Մադրիդում տեղի ունեցած ամենամյա կոնֆերանսին, և մասնակիցների մեծամասնությունը կին էր: Սակայն կանայք պահպանում են հիշողության փոքրիկ կտորները, և չեն փորձում դրանցից կերտել պատմություն: Այո, մենք պահպանում ենք հիշողությունները, փոխանցում տատերից ու մայրերից թոռներին ու դուստրերին, բայց երբ հերթը հասնում է պատմությունը ասելուն, միշտ տղամարդ-տրուբադուրն է, որ գնում է մի գյուղից մյուսը, քանի որ պաշտոնական պատմությունը տղամարդկանց ձեռքում է: Մենք հոգատարությամբ պահպանում ենք փոքրիկ, առօրյա հիշողությունները, և այդ առումով համաձայն եմ քեզ հետ:

Թեև մեր ստեղծագործ թիմում գրեթե բոլորը կանայք էին, թատերական ներկայացման ու ֆիլմի համար չենք փորձել շեշտադրել կանանց ռեպրեզենտացումը: Բայթում մեր խնդիրն այլ էր: Ոչ միայն փոքրիկ հիշողություններ էինք փնտրում, այլև ուրախ էինք գտնել առհասարակ որևէ հիշողություն ու հետք: Այս իմաստով ամեն բան արժեքավոր էր մեզ համար: Ֆիլմում կան թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց ձայներ. ձգտում էինք ստեղծել կանանց ու տղամարդկանց ձայների հավասարակշռություն: Խնդիրը հստակ էր. պետք էր գտնել հայերի, հույների ու հրեաների պատմություններ: Չեմ նկատել, որ տարբերություն լիներ, թե ինչպես են տղամարդիկ ու կանայք պատմում իրենց հիշողությունները: Բոլորը, ում հանդիպել ենք, պատրաստակամ էին կիսվելու իրենց պատմություններով: Սակայն անգամ 2014 թվականին, երբ թատերական ներկայացումն ու ֆիլմը ստեղծվեցին, խոսելու որոշակի տաբու կար, բարդ էր գտնել մարդկանց, ովքեր պատրաստ կլինեին իրենց ժամանակը ներդնել նախագծի մեջ, միշտ լինել այդտեղ ու պատմել իրենց պատմությունը տասնյակ հանդիսատեսի: Մեր բախտը բերել էր, որ գլխավոր հերոսներից շատերը ուսուցիչներ էին և սովոր էին խոսել մարդկանց մեծ խմբի առաջ: Բավարար չէր գտնել մարդկանց, ովքեր ունեին ասելիք, պետք է կարողանային նաև պատմել հիշողությունները հանդիսատեսի առաջ: Ֆիլմում այլ էր. հարցազրույց ես վերցնում մեկից, ապա մոնտաժում, բայց թատերական ներկայացման համար ամենից կարևոր էր նրանց փոխադարձ ներգործության ունակությունը:

***Թաղամասը բավմաթիվ փոփոխությունների է  
ենթարկվել՝ հրդեհներ, տեղահանումներ,***

neighborhood, not everything is destroyed yet. It is terrible to walk in Balat and see all the façades being destroyed. There is this poetic idea of the fig tree I used in my film on how you plant a fig tree in front of your house and how it destroys the house.<sup>1</sup>

I don't know what happened in the last 6 years, and we don't know how long this destructive governmental policy will continue. But maybe with digital or artistic methods, films like mine, memory can be preserved till the right time comes to sow the seeds.

In Balat the place has resonance, and people have the ability to act as a team. Yet, the last 6 years have been very stressful and hard for them to fight for their home. But what is 5-6 years in history?

<sup>1</sup> Der-Meguerditchian S. 2015. *Wohin – Nereye?* (film). "In Istanbul I heard that if you would like to get rid of your neighbor, you should throw some fig seeds onto the roof of his house, take a seat and wait." <https://www.silvina-der-meguerditchian.de/videoworks/nereye-wohin-2015/>



*կանաչ տարածքների վերացում, իսլամացում, և ակնհայտ է, որ այդ բոլոր փոփոխությունները դարձել են մոռացության պատճառ: Ըստ Ձեզ՝ որքանով է հավանական, որ Ֆեներ-Բալաթ թաղամասը կպահպանի այն բազմամշակութային ոգին ու հետքերը, որ դեռևս կան այնտեղ: Ըստ Էության, հենց դա է նաև հարցադրում Ֆիլմը. «Դեպի ո՞ւր» է շարժվում թաղամասի և քաղաքի բազմամշակութային ժառանգությունը:*

Անորոշ է... Եթե մի օր իշխանության գա այլ կառավարություն, գուցե հնարավոր լինի պահպանել այն, ինչ մնացել է: Անգամ նման ծրագրեր խթանելը կօգնի: Կառավարությունը պետք է շեշտադրի հիշողության պահպանության կարևորությունը, ոչ միայն պարզ ռոմանտիկ իմաստով, այլ նաև ցույց տալով դրա տնտեսական օգուտը: Եթե տեղացիներին բազմամշակութային հետքերի պահպանությունը ներկայացվի, օրինակ, որպես տուրիստների հոսքի խթանման ձև, նրանք կսկսեն արժևորել այն: Հիմա դեռ բարդ չէ դա անել, քանի դեռ այդ հետքերն ամբողջովին չեն վերացել: Սարսափով ես քայլում Բալաթում ու տեսնում՝ ինչպես են բոլոր հին ֆասադները ավերվում: Մի պոետիկ միտք կա, որ ֆիլմում օգտագործում են, թե ինչպես են տնկում թզենու ծառը տանդ դիմաց ու նայում՝ ինչպես է այն ավերում տունը:<sup>1</sup>

Չգիտեմ՝ վերջին 6 տարվա ընթացքում ինչ է փոխվել, և չգիտեմ կառավարական այս ավերիչ քաղաքականությունը որքան դեռ կշարունակվի: Բայց գուցե թվային կամ արվեստի մեթոդների միջոցով, ինչպիսին օրինակ իմ ֆիլմն է, հիշողությունը կարող է պահպանվել՝ մինչ կգա սերմերը ցանելու հարմար պահը:

Բալաթն ունի այդ ռեզոնանսը, և տեղի բնակչությունն ունակ է գործել որպես թիմ: Բայց վերջին 6 տարին բավականին բարդ ու սթրեսային էին. նրանք պայքարում էին իրենց տան համար: Բայց դե, ի՞նչ է 5-6 տարին պատմության մեջ:

<sup>1</sup> «Մտամբություն լսել եմ, որ երե ուզում ես ազատվել հարեանիցդ, պետք է մի քանի բզեմո սերմ նետես տան տանիքին, նստես ու սպասես». Der- Meguerditchian S. 2015. «Nereye?» ֆիլմից:

## BIBLIOGRAPHY / ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Altınay, A. G., Contreras, M. J., Hirsch, M., Howard, J., Karaca, B. and Solomon, A., 2019, *Women Mobilizing Memory*, Columbia University Press, New York. <http://www.jstor.org/stable/10.7312/alti19184>
- Der-Meguerditchian, S. 2011. "Deep Sea Fish", <https://www.silvina-der-meguerditchian.de/videworks/deep-sea-fish-2011/>
- Der-Meguerditchian S. 2015. "Wohin – Nereye?" (film), <https://www.silvina-der-meguerditchian.de/videworks/nereye-wohin-2015/>
- Mackey, S. 2016. "Applied theatre and practice as research: polyphonic conversations", *Research in Drama Education: The Journal of Applied Theatre and Performance*, 21:4, 478-491, <https://doi.org/10.1080/13569783.2016.1220250>



## **THE STREETS OF BALAT ARE A FISH-GRID**

Balat is a vibrant historic district within the ancient walls of Istanbul and has been one of the most popular destinations for day trips within the city since the early 2000s. It is also a subject of an emerging historical imagination of the Ottoman Golden Age. It was hardly any of these before, but a poverty-stricken neighborhood on the edge (physically and socially) of Byzantine and Ottoman Istanbul since the district became part of the city in the 4th century AD.

For a lay citizen today, the name Balat evokes a multi-ethnic empire that is no more, and an invented golden age where people of different religions and ethnicities lived side by side in “unmatched peace and harmony” under a “tolerant” rule. All the evidence is there: you can walk among houses of worship of three major religions of the Ecumene, see them next to each other, or at least in quite close proximity, observe their marble inscriptions carved with authentic scripts of their own. You may still see houses in which members of different communities lived and effortlessly learned to distinguish Jewish homes from others by locating their Star of David ornaments or six-petal flower motifs. There had even been living relics of this old Balat: foreign tourists gathered around the low-profile greengrocery shop run by David Behar, and some even attempted to speak in Ladino with him – the language Sephardim kept after their exodus from Spain in 1492, or researchers felt obliged to visit Leon Brudo’s dry goods shop and have an interview with him.

These all have been striking discoveries for younger generations who knew little about the imperial past. They for sure do correspond to some historical facts, yet there is much more to discover. First and foremost come the differences between an empire and a nation-state. As the two major multi-ethnic empires of continental Europe – Habsburgs and Ottomans – dissolved at the end of the First World War, several nation-states replaced them, and they formed new mindsets of past and present. Today people perceive

## Ձկնամանդալ են Բալաթի փողոցները

Ջնամենի Ստամբուլի սրտում մի պատմական թաղամաս է Բալաթը, որը, վաղ 2000-ականներից սկսած, հանգստյան օրը քաղաքում անցկացնողների ամենասիրված գրոսատեղիներից է: Նաև Օսմանյան ոսկեդարի նկատմամբ աճող հետաքրքրությամբ պայմանավորված՝ դարձել է ուսումնասիրության առարկա: Մ.թ.ա. 4-րդ դարից ի վեր քաղաքի՝ Կոստանդնուպոլսի, ապա օսմանյան Ստամբուլի մաս եղած, աղքատության եզրին (և՛ ֆիզիկական, և՛ սոցիալական առումներով) ապրող թաղը հազիվ թե նախկինում նման ուշադրության արժանանար:

Շարքային քաղաքացու մոտ Բալաթ անունն արթնացնում է անցած-գնացած բազմազգ կայսրության և մտացածին ոսկեդարի պատկերներ, որտեղ տարբեր ազգի ու հավատքի մարդիկ կողք-կողքի ապրում էին «հանդուրժող» կարգերի հովանու ներքո, «անգուգական ներդաշնակության ու խաղաղության մեջ»: Այստեղ ամեն քայլափոխի կհանդիպեք ասվածի վկայությունների, կանցնեք Օյկումենայի երեք հիմնական կրոնի հավատավորների շարվեշար կամ առնվազն իրարից ոչ հեռու գտնվող տների միջով, աչքներով կընկնեն պատերին ամենքի մայրենիով արված փորագրություններ: Դեռ կարող եք տեսնել այն տները, որտեղ ապրում էին տարբեր համայնքներից մարդիկ, որ հեշտությամբ տարբերում էին հրեաների ապրելավայրը մյուններից՝ Դավթի աստղի կամ վեցաթեթոթ ծաղկի զարդաքանդակների շնորհիվ: Անգամ հին Բալաթից կենդանի մասունքներ կգտնեք. Դավիթ Բեհարին՝ իր Էծան պտուղ-բանջարեղենի կրպակում, որի շուրջ գրոսաշրջիկները խմբվում են, ոմանք անգամ փորձում են նրա հետ խոսել լադիևոյով՝ սեֆարդիների լեզվով, որ վերջիններս պահպանել են Իսպանիայից 1492-ին տեղահանվելուց հետո, կամ էլ հետազոտողներին հարցազրույց տվող Լենո Բրուդոյին, որի հազար ու մի մանրուքի խանութը նրանց պարտադիր այցելելու վայրերից է:

Կայսերական անցյալից անտեղյակ նոր սերնդի համար այս ամենը ցնցող բացահայտումներ են: Իհարկե, նրանք *ինչ-ինչ* պատմական փաստերից գլուխ հանում են, բայց դեռ շատ բաներ ունեն պարզելու. նախնառաջ կայսրության և ազգային պետության միջև տարբերությունները: Առաջին աշխարհամարտի վերջում ցամաքային Եվրոպայի երկու հիմնական՝ Յաբսբուրգյան և Օսմանյան կայսրությունների վերացմամբ սկիզբ առած ազգային պետություններն անցյալի և ներկայի շուրջ նոր պատկերացումներ ձևավորեցին: Այսօր մարդիկ

such imperial pasts through the nation-state lens, which results in an incomplete understanding of even recent history. And this is what happens in Balat's case.

## A MUSICAL INTERLUDE

There's a famous Ottoman-Turkish folk song, *Üsküdar*.

Its origins are not clear. Some claim it originally was composed as a march for the Scottish troops who stayed in Istanbul during the Crimean War (1853-56). Some claim it is an adopted Russian or northern Slavic song. Some claim it is Sephardic. Some claim it's a composition written by famous and very popular Ottoman Armenian composer Dikran Chuhajian, who wrote and composed scores for operettas and musical dramas. Almost every nation that was once under Ottoman rule has a claim on it. There are several versions of this song with totally different lyrics in Greek, Serbian, Albanian, Bosnian, Gypsy-Serbian, Macedonian, Bulgarian, Armenian, Arabic, Ladino (Judaeo-Spanish), and Hebrew. These versions are love songs, hymns, or patriotic songs. Some languages even have the song in two different genres.

In 2003, the Bulgarian documentarian Adela Peeva produced the film "*Whose is This Song?*"<sup>1</sup>, focusing on most of these versions and how Balkan nations perceive the song as their own.<sup>2</sup> Jordi Savall, a master musician, who specialized in early European and Mediterranean music, made recordings, including five versions sung consecutively, ending with every version sung in unison that creates an unheard-of Ottoman vocal harmony.

Despite these varieties and interpretations, Turkish audiences have mostly been unaware of them. The history of Balat is perceived in quite a similar way. For Turks, it is part of Ottoman Istanbul with some Jewish and a small Greek population. The colorful variety of ethnic groups in Balat is forgotten today, just as most other versions of the song are. And I do not doubt that the whole picture would be as striking and pleasant as Savall's inclusive versions.

<sup>1</sup> A. Peeva 2003. *Whose is This Song? / Chia e tazi pesen?*, documentary.

<sup>2</sup> For Jordi Savall's versions see. <https://www.youtube.com/watch?v=T8M5hjZBozU> and [https://www.youtube.com/watch?v=O\\_EPBFs-yIM](https://www.youtube.com/watch?v=O_EPBFs-yIM)

կայսերական անցյալին նայում են ազգային պետությունների ոսպնյակով, որ չի օգնում գլուխ հանել անգամ ոչ վաղ անցյալից: Նման մի վիճակ էլ տիրում է Բալաթի իմաստավորման շուրջ:

## Երաժշտական ընդմիջում

Օսմանաթուրքական մի հայտնի ժողովրդական երգ կա՝ «Ուսքյուդարը», որի ծագումը հստակ չի. ոմանք պնդում են, որ ստեղծվել է որպես Ղրիմի պատերազմին (1953-56) Ստամբուլ հասած շոտլանդացի զինվորականների քայլերթ, ոմանք կարծում են՝ ռուսական կամ հյուսիս-սլավոնական երգի փոխառություն է: Ոմանք գտնում են, որ սեֆարդիական է: Մյուսներն էլ պնդում են, որ գրվել է անվանի և սիրված օսմանցի հայ երգահան Տիգրան Չուխաջյանի կողմից, որը բազմաթիվ օպերետներ ու երաժշտական դրամաներ է հեղինակել: Ժամանակին օսմանյան տիրապետության տակ եղած յուրաքանչյուր ազգություն պնդում է, որ իրենն է: Երգի բառերի առնվազն մեկ, իսկ երբեմն էլ՝ մի քանի տարբերակ կա հունարեն, սերբերեն, ալբաներեն, բոսներեն, զնչուական սերբերեն, մակեդոներեն, բուլղարերեն, հայերեն, արաբերեն, լադինոյով (հրեական իսպաներեն) և եբրայերեն: Սրանք սիրային երգեր են, հիմներ կամ հայրենասիրական երգեր: Որոշ լեզուներով երգվել են նույնիսկ երկու տարբեր ժանրերով:

Բուլղարացի վավերագրող Ադելա Պենայի 2003-ին նկարահանած «Այս երգն ո՞ւմն է» ֆիլմը<sup>1</sup> ներկայացնում է տարբերակների մեծ մասը, և թե ինչպես են բալկանյան ժողովուրդները երգը համարում իրենցը:<sup>2</sup> Վարպետ երաժիշտ Ժորդի Սավալը, որ վաղ եվրոպական և միջերկրածովային երաժշտության մասնագետ է, ձայնագրել է իրար ներդաշնակորեն հաջորդող հինգ տարբերակ, որոնք վերջում ի մի են բերվում՝ ստեղծելով օսմանյան չլաված բազմաձայնություն:

Չնայած առկա բազմազանությանը և երգի շուրջ նշանակալի ուսումնասիրություններին՝ թուրք հանդիսականը հիմնականում անտեղյակ է մյուս տարբերակներից՝ բացի թուրքական «օրիգինալից»: Համանման մի ընկալում էլ կա Բալաթի պատմության շուրջ: Թուրքերի համար Բալաթն օսմանյան Ստամբուլի մաս էր՝ մասամբ հրեաներով, մի քիչ էլ հույներով բնակեցված: Բալաթի եթևիկ խմբերի զունեղ բազմազանությունը մոռացության է մատնվել՝ ճիշտ այնպես, ինչպես երգի մնացած տարբերակները: Իսկ ես կասկած չունեմ, որ Բալաթի ամբողջական պատկերը նույնքան ապշեցնող ու տպավորիչ կլինի, որքան Սավալի խմբավարությամբ հնչեցված «Ուսքյուդարի» ներառական տարբերակը:

<sup>1</sup> A. Peeva 2003, *Whose is This Song? / Chia e tazi pesen?*, վավերագրական ֆիլմ:

<sup>2</sup> Յորդի Սավալի տարբերակները տե՛ս <https://www.youtube.com/watch?v=T8M5hjZBozU> and [https://www.youtube.com/watch?v=O\\_EPBFS-yIM](https://www.youtube.com/watch?v=O_EPBFS-yIM):





**Andee! Andee! Vamoz Balat'a /  
Ռ՛ւր, դեպի ո՛ւր, գնացի՛նք Բալաթ**

Բալաթն իբրև թաղամաս առաջին հայացքից առանձնապես ոչնչով աչքի չէր ընկնում՝ ո՛չ հոյակերտ կառույցներ ուներ, ո՛չ հիմնական ճանապարհ, ո՛չ ընդարձակ հանրային տարածքներ: Սովորական վայր էր, ուր քաղաքի այլ մասերից որևէ մեկը հազիվ թե գար զբոսնելու: Անգամ շրջիկ առևտրականներն էին միայն մոտակա թաղերից գալիս, որովհետև Բալաթում շատ փող չէիր աշխատի:

Մյուս կողմից, Բալաթը միավորում էր Ստամբուլի տարբեր ծայրերից մարդկանց: Սևծովյան շրջանից եկողներին, որ աշխատում էին Ոսկեղջյուրի դիմացի ավիի նավակայաններում ու նավերի վրա: Բոլոր ազգություններից աղքատ կանանց, որ ծառայում էին իրենց համայնքի հարուստների տներում՝ օժիտ հետ գցելու կամ ընտանիքներին օգնելու համար: Քաղաքով մեկ շրջող գնչու երաժիշտներին: Ում գործերը փոքրիշատե լավանում էին, իրենց երեխաներին ուղարկում էին ավելի լավ թաղամասի դպրոցներ: Ումանք մանր-մուր գործեր էին անում Մեծ Բագարում, մյուսները՝ նավահանգստում: Այլ թաղերի բնակիչների աչքին Բալաթն ընդամենն իրենց առօրյան հեշտացնողների, իրենց ծառայություններ մատուցողների բնակատեղին էր:

Բայց և այնպես, Բալաթը մեծ հետք է թողել ժողովրդական մշակույթի վրա: Թուրքական սիրված սովերների թատրոն «*Զարագրգոն*», որ իր ժամանակի ամենագունեղ զվարճանքն էր, Բալաթի հայտնի դարբանների մոտ նստած, անցնող-դարձողներին հետևող հրեա կանանց մասին մի երգ կա: Երկու տարբերակ ունի՝ մեկը լադիևոյով կամ հրեական իսպաներենով, մյուսը՝ թուրքերեն, որի մի տողը լադիևոյով է:

Ande vamos el de aki  
Yo kero por aki  
Kaminomoz el Balata  
Cünbüş kon salata<sup>1</sup>  
Ande? Ande? Yel Balat'a!  
Balat kapusundan yirdim  
içeri  
Koriğalar oturmuş iki keçeli  
Çok oldu mu yarım burdan yeçeli  
Ben onu yörmedim, o beni yördi  
Ande? Ande? Vamoz Balat'a!

Եկ ես կողմով գնանք,  
Էստեղով եմ ես ուզում,  
Պտտենք Բալաթում  
Սովորա-սիկի, քեֆ ու խնդում  
Ո՛ւր, ո՛ւր գնանք, եկ Բալա՛թ  
գնանք:  
Բալաթի դարբասով անցա  
Ձուխտ քեչեթին  
ջիուդ սիրուներ տեսա  
Շուտո՛ւր վ յարս էստեղերով անց  
կացավ  
Ես չտեսա, բայց նա ինձ տեսավ  
Ո՛ւր, դեպի ո՛ւր: Գնացի՛նք  
Բալաթ:

*Figure 1: A View From Balat Streets, SALT Research, Eleonora Arhelaou Collection, 1995. Photographer: Eleonora Arhelaou. Title: Building number 7 on Usturumca Street*

**Նկար 1:** Տեսարան Բալաթի փողոցներից մեկում: SALT Research, Էլեոնորա Արհելաու հավաքածու, 1995: Լուսանկարիչ՝ Էլոնորա Արհելաու, վերնագիր՝ Ուստուրումքա փողոցի 7-րդ շենքը:

<sup>1</sup> Cünbüş kon salata (լադիևո) - բասաղի՝ ասու-խոսեկ և սկոտեղ:

**ANDE! ANDE! VAMUZ BALAT'A /  
WHERE TO? WHERE TO? COME TO BALAT**

Balat had no particular attributes as a district of Istanbul – no monumental buildings, no main roads, no open public spaces. It was an ordinary place where someone from other parts of the city rarely came to walk around. Even most peddlers came only from neighboring districts, as Balat offered little opportunity to make a profit.

On the contrary, the people of Balat commuted to various parts of İstanbul. Migrant men from the Black Sea region worked in the navy and on the shipyards on the opposite shore of the Golden Horn. Poor young women from every community went to serve in wealthier households within their community, to save for their dowries, or to contribute to the household economy. Romani musicians worked all around the city. Better off families sent their kids to schools in better districts. Some residents worked in the Grand Bazaar in petty jobs, some in the port. For most of the residents from other neighborhoods, Balat was just a place providing help for daily life and other services. Still, it had a distinctive stamp on popular culture. A song in *Karagöz*, Turkish well-liked shadow puppet theater—the most colorful entertainment media then—talks about Balat, its famous gate, Jewish women sitting there and observing passersby. It has two versions, one in Ladino, the other in Turkish with a line in Ladino.

Ande vamos el de aki	Let's go from here
Yo kero por aki	I want to go from there
Kaminomoz el Balata	Let's have a walk in Balat
Cünbüş kon salata	And fun and platters
Ande? Ande? Yel Balat'a!	To where? To where? Come to Balat!

içeri	
Koriçalar oturmuş iki keçeli	I entered the gate of Balat
Çok oldu mu yarım burdan	Jewish beauties sit on double
yeçeli Ben onu yörmedim,	mats
o beni yördi Ande? Ande?	Has it been long since my
Vamuz Balat'a!	beloved passed by?
	I didn't see her, yet she saw me
	To where? To where? To Balat!

«Քարագոցն» օսմանական առօրյան պատկերող երաժշտական զվարճախաղ է, որտեղ հանդես են գալիս մարդիկ՝ հասարակության տարբեր շերտերից: Ամեն մի էթնիկ խումբ ներկայացված է որոշակի կերպարով, գրեթե ամեն համայնք՝ հատկանշական երգով: Բայց և այնպես, «Յրեայի երգն» է մյուսներին գերազանցել ու դարձել բոլոր ժամանակների հիթ: 20-րդ դարում իր ժողովրդականությունը կորցրած «Քարագոցից» մի քանի երգ է հիշվում, այդ թվում «Յրեայի երգը»:

Երգում խոսվում է «քեֆի ու սիևու» մասին: Ամենայն հավանականությամբ խոսքը ժամանակին Բալաթի փողոցները գրավող բազմաթիվ *մեյխանների*՝ Միջին արևելքի ոճով ալկոհոլ մատուցող հացատների մասին է, որտեղ, որպես կանոն, կենդանի երաժշտություն էր հնչում: Ի տարբերություն Գալաթայի և Բեյջոլուի հռչակավոր *մեյխանների*՝ միայն տեղացիներին սպասարկող Բալաթի *մեյխանները* հավանաբար բալաթիցիներին օգնում էին հեռու-մոտիկ գործատեղից տուն դառնալիս օրվա հոգսերը թոթափել: Միայն թաղեցիներին սպասարկող նմանատիպ մի քանի *մեյխան* գործում էին մինչև վաղ 2000-ականներ:

Բալաթը Ստամբուլի այլ մասերից մարդկանց դեպի իրեն քաշող մի տեսարժան վայր ուներ՝ Սուրբ Յրեշտակապետաց հայկական եկեղեցին: Սուրբ Յրեշտակապետացը հրաշագործ պահապան սրբի հետ կապվող ստամբուլյան սրբատեղիների շարքում ամենահայտնիներից էր: Ամեն սեպտեմբերի երկրորդ շաբաթվա վերջին ողջ Ստամբուլից և այլ վայրերից մարդիկ՝ անկախ իրենց հավատքից, լցվում էին եկեղեցու գավիթը՝ իրենց ցավերն ամոքող հրաշքի սպասումով: Տեսարանը գրեթե նախապատմական մի հավաք էր հիշեցնում: Մարդիկ գիշերում էին եկեղեցում, մատաղ էին անում, աղոթում, հաց ու ջուր կիսում իրար հետ և կրոնական հիազմայլանք ապրում:

Սուրբ Յրեշտակապետացը Բալաթի բազմաթիվ պաշտամունքային վայրերից միայն մեկն է: Մոտակայքում երեք ուղղափառ հունական եկեղեցի կա, երեք կանգուն սինագոգ (մնացածը՝ ավերակ), որոնք չեն գործում, ինչպես նաև մի քանի մզկիթ: Բոլոր կառույցները հինգ ըրպեի հեռավորության վրա են իրարից: Եթե տարածությունը կրկնապատկեք՝ եկեղեցիների, սինագոգների ու մզկիթների քանակն էլ կբազմապատկվի: Համայնքները նաև ունենին քաղաքից դուրս, 15 ըրպեում հասանելի գերեզմանոցներ: Իսկ զննչուններին մասնաբաժին էր հատկացված մուսուլմանական գերեզմանոցում: Ծիսական և հուղարկավորման վայրերի այս առատության մեջ միակ հայկական եկեղեցին՝ իր տեսարժանությամբ և ճանաչմամբ, գերազանցում է մյուսներին:

*Karagöz* is a musical show based on daily Ottoman life where people from every layer of the society parade through. Each and every ethnic community is represented through a certain character, almost every community has a distinctive song. *The Song of the Jew* somehow overrode all others and became a timeless hit. With its loss of popularity in the 20th century, only a few of its songs still survive, including the *Song of the Jew*.

The song tells about “fun and platters.” This most likely refers to *meyhanes* – Eastern Mediterranean style of alcohol serving restaurants, mostly with live music – that once lined streets of Balat. These *meyhanes*, unlike more famous ones in Galata and Beyoğlu districts, were specially designated for Balat residents thus helping them to relieve daily stress after work. This type of small *meyhane* existed until the early 2000s.

The single attraction that drew people to Balat from other parts of İstanbul was the Armenian Church of *Surb Hreshdagabed* or the Holy Sepulcher. Among the many İstanbul holy buildings associated with miracle-working patron saints, *Surb Hreshdagabed* became one of the most popular. Every second weekend of September people from all over İstanbul and from other places, regardless of their faith background, filled the sanctuary to wait for a miracle to cure their diseases. It resembled an almost pre-historic gathering; people slept over in the church, offered animal sacrifices, prayed, shared food and beverages, and experienced religious ecstasy.

*Surb Hreshdagabed* is just one of the numerous houses of worship in Balat. In addition to several mosques, there are three Greek Orthodox churches in the vicinity, three synagogues with intact buildings (and more in ruins) yet without congregations.. These buildings are located in a circle which you can go round in 5 minutes. If you double this distance, the number of churches, synagogues, and mosques multiply. All of these communities have their graveyards just outside the city walls, within walking distance of less than 15 minutes. Roma also have their own section in the Muslim graveyard. Being the only Armenian site among

Բայց և այնպես, Բալաթի մասին լսելիս կամ ընթերցելիս գերիշխող են հրեաների և հույների պատմությունները, թեպետ հույները հիմնականում բնակվել են հարևան Ֆեներ թաղամասում: Բալաթի հունական համայնքը փոքր էր: Իսկ գնչուները, բուլղարները, ալբանացիները, հայերը, տարբեր շրջանների մուսուլման և քրիստոնյա անատոլիացիները և անգամ թուրքերը Բալաթի մասին հանրային հիշողության մեջ գրեթե կամ բոլորովին տեղ չունեն:

## Վերայցելելով Բալաթ

Վերջին երկու տասնամյակում Թուրքիայում աճել է պատմության նկատմամբ հետաքրքրությունը: Պատմության գրքերը և անգամ դասագրքերը վաճառվում են աննախադեպ թվով: Բոլոր հիմնական հեռուստաալիքներով պատմությանը նվիրված, ժամեր տևող թոք-շոուներ են հեռարձակվում: Էլ չասած, որ Օսմանյան կայսրության տարբեր շրջանների մասին տարաբնույթ պատմական դրամաները հեռուստատեսությանը չեն իջնում: Մեծ մասամբ այս դրամաներն ու թոք-շոուները ստեղծվել են օսմանականությունը՝ իբրև ուսմունք, նոր գաղափարախոսական հովերով վերհանելու նպատակով: Օսմանիզմը (կամ ինչպես ոմանք երկիմաստորեն պնդում են՝ *նորօսմանականությունը*) անհարկի վերագրումի մի գաղափար է, որ Օսմանյան կայսրությունը մեկնում է որպես թուրքական անծայրածիր ազգային պետություն, այլ ոչ՝ իբրև բազմազգ կայսրություն: Օսմանիզմի ոսպնյակի տակ օսմանյան պատմության և հասարակության որոշ անբակտելի մասեր ջնջվում են: Թեև օսմանյան պատմությունը կայացած գիտաճյուղ է՝ միջազգային գիտական մտքի մեծ ավանդով, բայց և այնպես ընտրողաբար և անբավարար չափով է վերածվել հանրայնորեն գիտակցված պատմության և մատուցվել հանրակրթության միջոցով: Ուստի, օսմանյան պատմությունը՝ իբրև գերակա հանրային պատում, դեռևս լեգենդների վրա է հիմնվում:

Ֆեներ թաղամասի Սվետի (սուրբ) Ստեֆան եկեղեցին այս իրավիճակը դիպուկ բնորոշում է: Սա թուջածույլ շինություն է, որ ձուլվել և նախագծվել է Վիեննայում: Թեև ուշ օսմանյան շրջանի ազգայնականության դեմ պայքարին նվիրված հուշարձան է, բայց քաղաքային ֆոլկլորի շնորհիվ այլ համբավ է ձեռք բերել և հազվադեպ է կապվում Ստամբուլի փոքրաթիվ բուլղարական համայնքի հետ:

Բուլղար ազգայնականության վերելքը ցավոտ պառակտում մտցրեց հունական ուղղափառ պատրիարքարանկի և բուլղար համայնքի միջև, որ հատկապես սրվեց 1860-

this abundance of religious and burial places, the popularity of Surb Hreshdagabed surpasses all others. Yet when you read or hear about Balat, the stories of Jews and Greeks dominate the narrative, despite the fact that Greeks reside mainly in the neighboring Fener district. Their community in Balat was small. The Roma, Bulgarians, Albanians, Armenians, Muslim and Christian Anatolians from different regions, and even Turks have little or no place in the popular memory of Balat.

### **BALAT REVISITED**

There has been a growing public interest in history in the last two decades in Turkey. History books and even textbooks sell in unprecedented numbers. Every main TV channel has a long-running talk show on history. You may watch various historical dramas set in different periods of the Ottoman Empire on various TV channels. Most of these dramas and some of the talk shows were designed to indoctrinate Ottomanism, a new popular ideology. Ottomanism (or as some call it in an oxymoronic way- neo-Ottomanism) is a revisionist idea that envisions the Ottoman Empire as an extended Turkish nation-state rather than a multi-ethnic empire. And the lens of Ottomanism excludes several integral parts of Ottoman history and society.

Although Ottoman history is a strong field of scholarship with many international contributions, it is still selectively and poorly translated into popular history and public education. Legends still prevail in established historical narratives.

Sveti [Saint] Stefan Church in the neighboring Fener district illustrates this situation well. It is a cast-iron building, designed and cast in Vienna. Even though it is a monument related to the clash of nationalisms during late Ottoman history, its reputation is colored by urban folklore, and it is rarely linked to the small community of Bulgarians of Istanbul.

The rise of Bulgarian nationalism brought a painful divergence from the Greek Orthodox patriarchate,

<sup>1</sup> Մանրամասների համար տե՛ս Kuruyazıcı, H. 1994. "Bulgar Eksarhanesi". *Dünden Bugüne İstanbul Ansiklopedisi*, Tarih Vakfı Yayınları, İstanbul:

ից հետո: Նախկինում բուլղարները՝ իբրև ուղղափառ քրիստոնյաներ, օսմանյան հունական ուղղափառ եկեղեցու մաս էին: Պատրիարքարանը, որ ի պաշտոնե Բալկանների և Անատոլիայի ուղղափառ համայնքները վերահսկող օսմանյան կառույց էր, չցանկացավ իր իշխանությունը տարածել ինքնավար կամ տիրազուլի բուլղարական եկեղեցու վրա: Բուլղարացիների՝ ազգային եկեղեցի ունենալու պահանջը հունաց ուղղափառ պատրիարքի կողմից մերժվեց: Թեև բուլղարները հիմնեցին ազգային եկեղեցի, բայց հունաց պատրիարքը չճանաչեց այն: 1870-ին Բուլղարիայի կառավարիչները, որոշակի դիպլոմատիկ հնարքներ բանեցնելով, օսմանյան իշխանություններից ստացան իրենց անջատ եկեղեցին՝ որպես *էքզարքություն* հիմնելով<sup>1</sup> համար անհրաժեշտ թույլտվությունը: Հունական պատրիարքարանի հարևանությամբ գտնվող նրանց փայտաշեն եկեղեցին երկու անգամ կրակի բաժին դարձավ՝ ամենայն հավանականությամբ միտումնավոր հրկիզվելով: 1989-ին նրանք կառուցեցին կոթողային Սվետի Ստեֆանը՝ թուջածույլ և բետոնից, հիմնավոր շինություն: Հունական պատրիարքարանը միայն 1945-ին ընդունեց բուլղարական եկեղեցին որպես հավասարը հավասարին: Բայց արի ու տես, որ հանրային հիշողության մեջ գերակա է ուշ 19-րդ դարից մնացած քաղաքային լեգենդը, որի համաձայն՝ մի գեղեցիկ օր բուլղարները ցանկացան իրենց սեփական եկեղեցին ունենալ, և սուլթանը նրանց շնորհեց նման իրավունք՝ մի պայմանով, որ եկեղեցին պիտի կառուցեն քառասուն օրում: Իմաստուն բուլղարները միտք արեցին և լուծումը գտան՝ Եվրոպայում թուջից ձուլել տալով իրենց եկեղեցին, հասցրին Ստամբուլում տեղադրել 40 օրից էլ շուտ: Այս հետաքրքրաշարժ լեգենդի կողքին իրական՝ դժվարամարս պատմությունը խամրում է, և զուր չէ, որ նախապատվությունը տրվում է լեգենդին, ոչ թե՛ փաստերին: Տարածված պատմությունը հիմնված է երկբևեռ հակադրության վրա՝ բացարձակ իշխանության տեր մուսուլման/թուրք կառավարիչների և ենթակա քրիստոնյաների միջև, որոնց վիճակված էր ապստամբել իրենց պետությունները հիմնելու համար: Շատ քչերն են տեղյակ, որ Ստամբուլում հնաբնակ բուլղարական համայնք կա, և եկեղեցին իրենցն է: Մարդկանց մեծ մասի համար սա ժամանակին հպատակ եղած, մի օտարերկրյա կառավարության կողմից կանգնեցրած կառույց է, որ ոչ մի կապ չունի տեղացիների հետ: Բալաթի պատմությունն էլ է նման կերպ պարզունակեցվում: Բնակի որ բնակիչները մեծ մասամբ հրեաներ էին, իսկ հրեական համայնքն Օսմանյան կայսրության փլուզման գործում ուղղակի մասնակցություն առանձնապես չի ունեցել, ինչպես նաև՝ կենտրոնական իշխանության հետ վեճ, ուստի հրեաներին կայսրության պատմության մեջ



**Figure 2:** A View From Balat Streets, SALT Research, Eleonora Arhelaou Collection, 1989. Photographer: Eleonora Arhelaou. Title: Buildings number 20 and 22 on Usturumca Street

**Նկար 2:** Տեսարան Բալատի փողոցներից մեկում: SALT Research, Էլեոնորա Արիելոու հավաքածու, 1995: Լուսանկարիչ՝ Էլոբրնրա Արիելու, վերնագիր՝ Ուստուրումբա փողոցի 20-րդ և 22-րդ շենքերը:

Painter Eleonora Arhelaou's (1937-2021) photographs taken in Fener-Balata streets in different years accompany Emre Yalçın's article. Arhelaou was born in the Fener district of Istanbul and grew up in Talimhane, Taksim. She completed her high school and undergraduate education in Athens; received her master's in Munich, and studied photography in London. Arhelaou continued her ties with Istanbul and traced the Greek heritage of Istanbul with photography in different years.

Source: Salt Research <https://archives.saltresearch.org/handle/123456789/210957>

Նկարիչ Էլեոնորա Արիելուի (1937-2021) լուսանկարները արվել են Ֆեներ-Բալատի փողոցներում տարբեր տարիների ընթացքում և օգտագործված են Էմրե Յալչնի այս հոդվածում: Արիելուն ծնվել է Ստամբուլի Ֆեներ թաղամասում, ապա տեղափոխվել Քալիսնանե, Քարսիս: Ավագ դպրոցի ու հետագա կրթությունը ստացել է Աթենքում, ապա Մյունխենում ստացել մագիստրոսի աստիճան և շարունակել է կրթությունը Լոնդոնում՝ ուսանելով լուսանկարչություն: Արիելուն միշտ պահպանել է Ստամբուլի հետ կապը՝ իր կյանքի տարբեր տարիներին լուսանկարելով թաղարի հունական ծառայությունը:

Աղբյուր՝ Salt Research <https://archives.saltresearch.org/handle/123456789/210957>:



վերապահվել է ոչ մուսուլման օսմանական համայնքներից ամենաընդունելի կարգավիճակը: Ավելին, Բալաթը պատկերվում է գրեթե իբրև հրեական գետտո, սակայն ի հակադրություն արևելաեվրոպական գետտոների՝ հանդուրժող և խաղաղ: Իսկ այս ողջ պատմությունը կտրուկ ընդհատվում է 1948թ.-ին Իսրայելի հռչակմամբ և հաջորդող արտագաղթի ալիքով: Մինչդեռ, Բալաթը ոչ մի կապ չունի գետտոյի հետ, ոչ էլ բացառապես արտագաղթի պատճառով է դատարկվել: Ուրեմն, փաստերը վեր հանելու համար հարկ է փոքրաթիվ աղբյուրների մեջ խորանալ, քանի որ տարածված տեղեկատուներն ու մեդիան շարունակում են նույն՝ հին ու ծեծված պատմությունները կրկնել:

## Հետազոտության անձնական պատմություն

Որպես Ստամբուլի քաղաքային պատմության մասնագետ և հետազոտող՝ իմ կայացման համար պարտական եմ Բալաթին: Պատանեկան տարիներին սկսեցի ուսումնասիրել ընտանիքիս պատմությունը, ինչն ինձ մղեց հետաքրքրվել Ստամբուլի պատմությամբ, դա էլ իր հերթին հանգեցրեց պատմաբանության և քաղաքային պատմության ոլորտում համապատասխանաբար՝ բակավաճի և մագիստրոսի գիտական աստիճաններ ձեռք բերելուն:

Ինձ նախորդած հայրական կողմիս հիևզ սերունդ ապրել է Բալաթում՝ սկսած 19-րդ դարի կեսերից: Մերոնց տունը Բալաթի ծայրամասում էր՝ սուֆի բանաստեղծ և Մեհմեդ II Նվաճողի ժամանակակից Սուլա Աշքիի անունը կրող թաղում, որ գտնվում էր Պաստըրմաջը Յոթուշու կոչվող լանջի վրա և Բալաթը կապում էր բլրի վրայի ավելի բարվոք թաղերի հետ: Լադիևոյով կոչվում էր *Les Eskaleros de la Kasturiya*, թարգմանաբար՝ Կաստորիայի սիւնագոգ տանող աստիճաններ:

Մերոնց տունը համեմատաբար մեծ, փայտաշեն կառույց էր, որը շրջապատված էր մրգատու ծառերով, թփերով, ջրհորներով և մի ավազանով: Մանկական երևակայության համար՝ բավականին ոգևորիչ մի միջավայր:<sup>1</sup> Տունն այլևս մշտապես բնակեցված չէր, երբ ես մեծանում էի Ստամբուլի այլ՝ «նոր» թաղամասերում, բայց և այնպես հեքիաթային մի վայր էր ինձ և սերնդակիցներին համար: Յորական տատս և հորաքույրներս սիրով և ուրախությամբ էին Բալաթի տան մասին պատմություններ անում՝ կիսվելով իրենց թանկ հիշողություններով:

Վաղ 1980-ականներին, պատանի հասակում Բալաթի տան շուրջ իմ ընկալումները սկսեցին հասունանալ: Ընտանեկան պատմասացության շնորհիվ, ի վերջո, ոչ միայն բացահայտեցի մեր տոհմի և տունուտեղի

<sup>1</sup> Իմ նախկին իրավաձեռքից երկուսը, որ վերաբերում են մի շինության ու մի ընտանիքի պատմությանը, անողակտրեն անըրադատում են նաև Բալաթի պատմությանը: Sü'ü Yalçın, E. 2003. "Pastırmacı Yokuşu, No: 7; History of a Mansion in Balat-Istanbul", in İ. Suraiya Faroqhi & Christoph Neumann, *The Illuminated Table, the Prosperous House, Food and Shelter in Ottoman Material Culture*, Orient-Institut, Istanbul: Yalçın E. 1997. "Güzel Şehirdeki Güzel Evler, Güzel Evlerdeki Meraklı İnsanlar / Les Belles Maisons et Leur Curieux Habitants" (Turkish and French), *Mediterraneans*, 10: Istanbul special issue.

which especially intensified after 1860. Bulgarians had previously been considered part of the Ottoman Greek Orthodox community as worshippers of Orthodox Christianity. The patriarchate- the Ottoman institution to control Orthodox communities of the Balkans and Anatolia – did not want to waive its jurisdiction over an autonomous or autocephalous Bulgarian church. The Bulgarian claim for a national church was rejected by the Greek Orthodox Patriarchate. Even though Bulgarians established a national church, the patriarchate did not recognize it. Bulgarian authorities obtained necessary permissions from Ottoman authorities after a series of diplomatic maneuvers to establish their autocephalous church as an exarchate<sup>1</sup> in 1870. Their wooden church close to the Greek patriarchate was twice burned, most likely arson. They constructed a monumental building in 1898, a cast iron and concrete construction. The Greek Patriarchate recognized the Bulgarian church as its equal only in 1945.

<sup>1</sup> For details see Kuruyazıcı, H. 1994, "Bulgar Eksarhhanesi", in *Dünden Bugüne İstanbul Ansiklopedisi*, Tarih Vakfı Yayınları, İstanbul.

Yet what prevails in popular memory is an urban legend of the late-nineteenth century. According to this legend, back in the day Bulgarian people wanted to establish their own church, and the sultan granted them such a right on condition that they construct the whole church within 40 days. Wise Bulgarians thought and came up with the idea of casting the church in iron in Europe and setting it up in İstanbul in less than 40 days.

This curious legend overshadows a complicated history, and is somehow preferred to the facts. Popular history is based on a binary opposition between Muslim/Turkish rulers with absolute power and Christian subjects destined to rebel and establish their state. Few people are aware that there has long been a Bulgarian community in İstanbul and that the church is theirs. For most people, it is a building erected by a foreign government of a then-subject principality and has no connection with locals.

The history of Balat is simplified similarly. Given the fact that the majority of the population was Jewish, and that the Jewish community had almost no direct involvement in the dissolution of the Ottoman Empire or any dispute with the central government, they have a

<sup>1</sup> Ավարտական քննիչ որոշ հասովածների հասանելի են հնդկյուտ աղբյուրներով՝ Yalçın, E. 1992a. "Balat: Some Observations on Social Structure and Changes From 1920's to 1960's", Bulletin d'Observatoire Urbain D'Istanbul, 3; Yalçın, E. 1992b. "Pastırmacı Yokuşu in Molla Aşkı Mahallesi from 1900's to 1960's", Bulletin d'Observatoire Urbain D'Istanbul, 4;

<sup>2</sup> Varol, M.-C. 1991. Balat, une Juif Feaubourg d'Istanbul, ISIS Press, İstanbul; Deleon, J. 1992. Balat ve Çevresi, Can, İstanbul.

<sup>3</sup> Karmi, I. 1992. Jewish Sites of Istanbul, ISIS Press, İstanbul.

<sup>4</sup> Koçu, R. E. 1946a. İstanbul Ansiklopedisi, Tan Matbaası, İstanbul; *Türk Ansiklopedisi 1945*. Milli Eğitim Bakanlığı, İstanbul.

<sup>5</sup> Պերվիշյան սպանովագրական քարտեզները հասանելի են IBB Atatürk գրադարանում և IFEA-ում (Անատոլիայի հնագոտությունների ֆրանսիական ինստիտուտ): Ջնտագա տարիներին այս կորպուսի տպագիր և բժային տարբերակները նույնպես հրատարակվել են համացանցում: Ayverdi, E. H. (1973), Ստամբուլի քարտեզը 19-րդ դարում, 2-րդ հրատարակություն, İstanbul Fethi Cemiyeti Publications, İstanbul; Ստամբուլ քաղաքի ուղեցույց (1934), Ստամբուլի քաղաքապետարան, Ստամբուլ; Ստամբուլի պլան (1989), Ստամբուլի քաղաքապետարան, Ստամբուլ:

<sup>6</sup> Schiele, R., Schiele, W. ve Firatlı, N. 1977. Bildlexikon Zur Topographie İstanbuls, Deutsches Archological Institute, Tübingen.

<sup>7</sup> "Balat Öyküleri" 1991. Gani Müjde (հոկտեմբեր), Sencer (նվարտագրող), Nankör Magazine ve "Balat Hikâyeleri" (1991-92), Gani Müjde (հոկտեմբեր), Sencer (նվարտագրող), D'e'li Magazine:

<sup>8</sup> Koçu, R. E. haz., 1946b. "Balat", İstanbul Ansiklopedisi içinde, Tan Matbaası, İstanbul.

պատմությունը, այլև, թե որքան տարբեր էր Բալաթը դեռևս դրանից երեք տասնամյակ առաջ, և թե որքան կտրուկ էր ամեն ինչ փոխվել: Այս պատմություններն էին, որ ինձ ուղղորդեցին դեպի քաղաքային պատմաբանություն:

Թեև Բալաթի նկատմամբ հետաքրքրությունս գնալով ավելի գիտական էր դառնում, բայց գրավոր աղբյուրների սակավությունն ինձ համար շարունակում էր մնալ մեծագույն մարտահրավեր: Երբ 1992-ին գրում էի բակավարիատի ավարտական թեզս, ձեռքիս տակ ունեի մի քանի խղճուկ աղբյուր: Թեզիս անվանացանկը ներառում էր ընդամենը 13 անուն:<sup>1</sup> Բալաթին նվիրված միայն երկու գիրք<sup>2</sup> կա: Վարդի գիրքը հետազոտության է, իսկ Դելեոնինը՝ ուղեցույցի ու հուշագրության խառնուրդ: Կա նաև Էլան Ջարամիի Բալաթին լայնորեն անդրադարձող ուղեգիրքը:<sup>3</sup> Այլ հիշատակելի աղբյուրներ են երկու հանրագիտարան՝ Ստամբուլինը և Թուրքականը<sup>4</sup>, քարտեզների չորս ժողովածու<sup>5</sup>, Ստամբուլի քաղաքաշինական պատմական կառույցների վերաբերող մի գիրք<sup>6</sup> և կոմիքսների ամսագրում վաղ 1960-ականներից մինչև 1970-ականների կես հրատարակված Բալաթի մասին հուշերի պատկերապատման շարքը:<sup>7</sup> Օգտագործած գրականության ցանկս սահմանափակ էր ոչ թե, որ արհամարհել կամ չէի օգտվել ուրիշ աղբյուրներից, այլ դրանք ուղղակի չկային:

Նախնական տեղեկության համաձայն՝ Բալաթը հիմնականում հրեական թաղամաս էր: «Հրեայի երգը» մանկուց գիտեի: Ստամբուլի հանրագիտարանում (*İstanbul Ansiklopedisi*) Բալաթին նվիրված հոդվածի հենց առաջին տողը հավաստում էր, որ «Բալաթն» ու «հրեականը» ստամբուլցիների համար նույնական են:<sup>8</sup> Սակայն, Բալաթի սոցիալական պատմության մեջ խորանալով, պարզեցի, որ սա ամենևին էլ ողջ ճշմարտությունը չէ: Այո, Բալաթում բազմաթիվ սինագոգներ կան, և զգալի թիվ են կազմել հրեա բնակիչները, բայց սա ամբողջը չէ: Վառ օրինակ էր հենց մեր թուրք ընտանիքը կամ մեր հարևանությամբ ապրած թուրք բազմաթիվ ընտանիքներ, ինչպես նաև՝ տարբեր էթնոկրոնական խմբերից ընտանիքներ՝ հայեր, գնչուներ, հույներ, քարամանցիներ (թրքախոս հույն ուղղափառներ), բուլղարներ, ալբանացիներ և Անատոլիայի տարբեր շրջաններից ու Բալկաններից եկվորներ: Նման խառը սոցիալական կառույցի մեջ խորամուխ լինելը հեշտ գործ չէր: Բայց ակներև էր, որ Բալաթն օսմանյան Ստամբուլի ավելի ընդգրկուն, խառը ժողովրդագրական պատկերի մաս էր: 1990-ականներին ուշ օսմանյան Ստամբուլի ժողովրդագրության մասին թեկուզ և սակավաթիվ, բայց որոշ հասանելի աղբյուրներ կային, որ ինձ օգնեցին՝ Բալաթի քաղաքային ավելի լայն պատկերը ստանալ՝

suitable place in the history of the empire as the most acceptable of the Ottoman non-Muslim communities. Moreover, Balat is pictured as almost a Jewish ghetto, yet contrastingly tolerant and peaceful, unlike the Eastern European ones. And this story abruptly ends with the emergence of Israel in 1948 and the following waves of migration. Balat was neither akin to a ghetto nor lost its population because of emigration. Yet, one has to dig through limited resources to figure out the facts, as most popular sources and the media keep telling the same stories.

### A PERSONAL HISTORY OF EXPLORATION

As an educated historian and a researcher of the urban history of İstanbul, I owe my interest in this field to Balat. I started a personal search for family history during my late teens, which evolved into a curiosity about the history of İstanbul eventually leading me to earn BA and MA in history and urban history consecutively.

My paternal family resided in Balat for five generations before me, starting from the mid-19th century. The family house is located on the outskirts of Balat, in a neighborhood named after Molla Aşki, a Sufi poet and a contemporary of Mehmed II the Conqueror. The house is on Pastırmacı Yokuşu, a steep slope that connects Balat to better neighborhoods atop the hill. It's called *Les Eskaleros de la Kasturiya in Ladino*, meaning the Steps to Kastoria Synagogue.

Our family house is a relatively large wooden building in a garden located above an ancient wall, surrounded by fruit trees, shrubs, wells, and a cistern.<sup>1</sup> This was inspiring enough for a kid's imagination. The house was not inhabited continuously when I was growing up in other "new" neighborhoods of İstanbul, yet it was a fairy-tale place for me and my generation. My paternal grandmother and aunts fondly and merrily told stories about this house and Balat, sharing their dear memories.

My perception of the house started to evolve in my late teens in the early 1980s. With the help of family storytellers I gradually discovered not only the history

<sup>1</sup> Two of my previous publications focusing more on the history of a single building and a single family, also touch on the history of Balat indirectly, see Yalçın, E. 2003. "Pastırmacı Yokuşu, No: 7; History of a Mansion in Balat-Istanbul", ed. Suraiya Faroqhi ve Christoph Neumann, in *The Illuminated Table, the Prosperous House, Food and Shelter in Ottoman Material Culture*, Orient-Institut, İstanbul; Yalçın E. 1997. "Güzel Şehirdeki Güzel Evler, Güzel Evlerdeki Meraklı İnsanlar / Les Belles Maisons et Leur Curieux Habitants" (Turkish and French), *Mediterraneans*, 10: İstanbul special issue.

չնայած որ այդ տարասեռ բնակչության առօրյան ուսումնասիրելու համար, մինևույն է, ստիպված էի շատ փորփրել:

Ինչևէ, թաղամասի ֆիզիկական կառուցվածք փաստագրելը բավականին հեշտ էր, որովհետև Բալաթը հիմնականում կառուցվել էր 1856թ.-ի Մեծ հրդեհից հետո հաստատված նախագծով: Ուշ օսմանյան շրջանի հայկական սիրված «Աղավի» երգում մի այսպիսի տող կա՝ «Իստամբուլին ճամփան ձուկի ըզգարա<sup>1</sup>...», որ հիշեցրեց ինձ վանդակակերպ նախագծի ժամանակների Բալաթի մասին, որտեղ համատեղ ապրում էին տարբեր Եթևոկրոնական խմբերից մարդիկ:

Փաստացի, Բալաթում կատարվածը Ստամբուլում 1840-ականներից սկսած, նոր քաղաքաշինական օրենսգրքով հաստատված պրակտիկա էր: Նախկինում կացարանները հիմնականում փայտից էին և դյուրավատ: Հրդեհը, դեռ չսկսված, միանգամից տարածվում էր: Նոր օրենքը պարտադրում էր փայտի փոխարեն աղյուս և կիր գործածել, և նախապատվությունը տրվեց փողոցների առավել նախընտրելի փոխուղղահայաց դասավորությանը, որ եկավ փոխարինելու նախկին անկանոն պատկերին: Այս մոտեցմամբ վերակառուցվեցին հին Ստամբուլի սրտում գտնվող, հրկիզված տարբեր թաղամասեր:

Կարճ ասած՝ Բալաթը հիմնականում 19-րդ դարի կեսերի քաղաքաշինության պահպանված նմուշ է՝ ավելի վաղ շրջանի մի քանի աղյուսե շինություններով, զուտ պաշտամունքային կառույցներով և խանութների շարանով: Կան նաև վաղ 19-րդ դարից մնացած որոշ «անկյավներ», որոնց ձեռք չեն տվել, որտեղ մեծ հրդեհները չեն հասել, ինչպես օրինակ՝ Պասադրմաջը Յոթուշուն: Այս ամենը պարզելը համեմատաբար կարճ տևեց: Ծանր փորձությունս եղավ Բալաթի սոցիալական կյանքի մանրամասների բացահայտումը:

Բալաթի սոցիալական կյանքի վրա լույս սփռող միայն երկու գրավոր աղբյուր կար (վերը հիշատակված), որ հիմնականում անդրադառնում էին հրեական համայնքին: Տեղին է նշել, որ երկուսն էլ նոր էին հրատարակվել՝ Բալաթի շուրջ աճող հանրային հետաքրքրության արդյունքում: Ճիշտ է՝ տրամադրում էին արժեքավոր տեղեկություններ, որ այլուր դժվար գտնելի, բայց միայն մասամբ էին ներառում ընդհանուր պատկերը: Աղբյուրների բացերը լրացնելու կամ սոցիալական կյանքի պատումը գրեթե գրոյից կառուցելու համար պետք է բացահայտեի բանավոր պատմությունը՝ իբրև այլընտրանքային մեթոդ: Մինչդեռ բանավոր պատմությունները՝ իբրև մեթոդ, միշտ չէ, որ հավաստի են համարվում: Մի քանի հանդիպում անցկացրի հորս և նրա երկու քրոջ հետ, ևս մեկը՝ նրանց զարմուհու հետ, մեկն էլ՝ թաղամասի նախկին բնակչի հետ, բոլորն էլ

<sup>1</sup> Նկատի ունի վանդակաճաղ մանդալը (Izgara – բուրբ.՝ ցանց, մանդալ), որը հեղինակին ինչպես՝ է 19-րդ դ. Ստամբուլում կառուցված փողոցների քաղաքաշինական սկզբունքը՝ փոխուղղահայաց փողոցների ցանցը, որ մեզանում առավել հայտնի է «հիպոդամյան սկզբունք կամ համակարգ» անվամբ (Օնթ.՝ թարգմանչի):



Figure 3: A View From Balat Streets, SALT Research, Eleonora Arhelaou Collection, 1989. Photographer: Eleonora Arhelaou. Title: View of Buildings on Balat.

Նկար 3: Տեսարան Բալաթի փողոցներից մեկում: SALT Research, Էլեոնորա Արհելաու հավաքածու, 1995: Լուսանկարիչ՝ Էլոնորա Արհելաու, վերնագիր՝ Շենքերի տեսարան Բալաթում:

թուրքեր էին: Նաև մի քանի հանպատրաստից, չձայնագրվող հարցազրույցներ արեցի 1920-ականներից մինչև 1940-ականներին ծնված բալաթցիների հետ, որոնք ինձ օգնեցին հիմնականում վերստուգել մյուս բանավոր աղբյուրներիս տեղեկությունները. մեծ մասը կրկին թուրքեր էին:

Թեև նրանք հիմնականում թուրքեր էին՝ բոլորն էլ մանրամասն ներկայացնում էին Բալաթի բազմազգ առօրյան: Շատ տեղեկացված չէին այլ համայնքների ներքին կյանքից, ինչը հասկանալի է: Բայց դրանից զատ, պատկերավոր նկարագրում էին Բալաթի վատ առօրյան՝ որպես ժամանակավրեպ օսմանյան մի թաղամասի, որ բարեհաջող կերպով գոյատևել է մինչև ուշ 1950-ականներ:

Սոցիալական կյանքի շուրջ առաջին եզրահանգումներիցս մեկն այն էր, որ Բալաթում հիմնական զբաղմունքի և էթնիկ պատկանելիության միջև հստակ կապ կար: Հրեաները հիմնականում, բայց ոչ միայն, զբաղվում էին անագի վերամշակամբ, զողմամբ, հնակարկատությամբ, պտուղ-բանջարեղենի և կանաչեղենի մանրածախ առևտրով, անձրևանոցների և կարի մեքենաների վերանորոգմամբ: Հույներն ու հայերն ավելի բարդ հմտություններ պահանջող ոլորտներում էին ներգրավված՝ շինարարություն, էլեկտրականության անցկացում, ջրմուղագործություն: Մթերքի շրջիկ առևտրով զբաղվում էին քարամանցի թուրքերը (մնատոլիայի թրքախոս ուղղափառ քրիստոնյաները)՝ իրենց հատուկ տարազներով և ականջ ծակող առոգանությամբ: Բուլղարները կաթի և կաթնամթերքի հիմնական մատակարարներն էին: Ալբանացիները հայտնի խոհարարներ և մթերավաճառներ էին՝ հատկապես փորտիքի: Գնչուները ժամանցի ոլորտում էին գործում, հիմնականում ապահովում էին զվարճանքը և հարսանիքների ու տոնախմբությունների խնջույքները: Գալիս էին իրենց շարժական խոհանոցներով, վրաններ խփում և տեղում կազմակերպում եփութափը, մեկ այլ խումբ էլ խնջույքի ընթացքում ապահովում էր կենդանի երաժշտությունն ու պարերը: Երբ նեղն էին ընկնում, նախընտրում էին շրջիկ հնակարկատությամբ զբաղվել: Գնչուական նվագախմբերով հայտնի մեյհաններն ու զինետներն աշխատանքում էին ոչ մուսուլմաններ:

Շատ իմ աղբյուրների՝ առօրյան առևտրով ու սպասարկմամբ չէր սահմանափակվում: Նրանց տրամադրած տեղեկությունները ներառում էին մանկական խաղերից սկսած մինչև համայնքային տոնախմբությունների նկարագրություններ՝ Փեսախն իր մացրով, Չատիկն իր ներկած հավկիթով, հրեաների Սաբաթ-շաբաթի և հույների կիրակնօրյա զբոսանքները, Սուրբ Հրեշտակապետացի սեպտեմբերյան տոնը, արևելաքրիստոնեական գարնանային բարեկենդանը,

of our family and household, but also how life was quite different in Balat just three decades before, and how it swiftly changed. All these stories led me to urban history.

Yet, as my interest in Balat was transformed into a more formal pursuit, the biggest challenge I had was the scarcity of written sources. When I wrote my BA graduation thesis in 1992, I had only a small pile of sources.<sup>1</sup> The bibliography of my paper included only 13 items. There are only two books on Balat<sup>2</sup>; Varol's was a research and Deleon's was a mixture of a guidebook and a memoir. There is also İlan Kami's guidebook with large parts on Balat.<sup>3</sup> The other sources include two encyclopedias<sup>4</sup>, four map collections<sup>5</sup>, a book on historical urban structures of Istanbul<sup>6</sup> and a series of memoirs on Balat from the early 1960s to mid-1970s in a cartoon series published in comic magazines<sup>7</sup>. The limited size of the bibliography was not because I did not use any other available resources, or I simply ignored them. There were not any others.

The first thing I learned about Balat was that it is a predominantly Jewish district. I already knew the *Song of the Jew* as a kid. The Balat article in *Istanbul Ansiklopedisi*, starts with a statement that the words Balat and Jewish are identical for Istanbulites.<sup>8</sup> As I pursued its social history, I figured out that this was not entirely true. Yes, there are numerous synagogues and there had been a considerable Jewish population, but this was not the whole story. Well, my family is Turkish, and there were several Turkish families around them, as well as families from various ethno-religious groups: Armenian, Roma, Greek, Karamanli (Turkophon Greek Orthodox), Bulgarian, Albanian and migrants from different regions of Anatolia and the Balkans. It wasn't easy to get deeper into this mixed social structure. This was obviously part of the larger mixed demographics of Ottoman Istanbul. Yet, again in the early 1990s, there were few established sources on the demographics of late Ottoman Istanbul. They surely helped to locate Balat in the bigger picture. Still, I had to dig in for daily dynamics of this mixed population.

<sup>1</sup> One can access parts of this thesis without appendices and visual materials from the following sources:

Yalçın, E. 1992a. "Balat: Some Observations on Social Structure and Changes From 1920's to 1960's", *Bulletin d'Observatoire Urbain D'Istanbul*, 3; Yalçın, E. (1992b), "Pastırmacı Yokuşu in Molla Aşkı Mahallesi from 1900's to 1960's", *Bulletin d'Observatoire Urbain D'Istanbul*, 4.

<sup>2</sup> Varol, M.-C. 1991. *Balat, une Juif Feaubourg d'Istanbul*, ISIS Press, İstanbul; Deleon, J. 1992. *Balat ve Çevresi*, Can, İstanbul.

<sup>3</sup> Karmi, İ. 1992. *Jewish Sites of Istanbul*, ISIS Press, İstanbul.

<sup>4</sup> Koçu, R. E. ed., 1946a. *Istanbul Ansiklopedisi*, Tan Matbaası, İstanbul; *Türk Ansiklopedisi* 1945. Milli Eğitim Bakanlığı, İstanbul.

<sup>5</sup> Pervitiç Sigorta Haritaları, İBB Atatürk Kütüphanesi ile IFEA - Fransız Anadolu Araştırmaları Enstitüsü'nden erişilebilir. Sonraki yıllarda bu külliyyatın basılı ve internet üzerinde dijital versiyonları da yayımlandı. Ayyerdi, E. H. ed., 1973. 19. *Yüzyılda İstanbul Haritası*, 2. basım, İstanbul Fetih Cemiyeti Yayınları, İstanbul; İstanbul Şehir Rehberi 1934. İstanbul Belediyesi, İstanbul; İstanbul Planı 1989. İstanbul Belediyesi, İstanbul.

<sup>6</sup> Schiele, R., Schiele, W. ve Fıratlı, N. 1977. *Bildlexikon Zur Topographie Istanbul*, Deutsches Archäologisches Institute, Tübingen.

<sup>7</sup> "Balat Öyküleri" 1991. Gani Müjde (author), Sencer (illustrator), *Nankör Magazine* ve "Balat Hikâyeleri" (1991-92), Gani Müjde (author), Sencer (illustrator), *D'e'li Magazine*.

<sup>8</sup> Koçu, R. E. ed., 1946b. "Balat", *Istanbul Ansiklopedisi* içinde, Tan Matbaası, İstanbul.



մուսուլմանների տոնախմբությունները և տոնավաճառները, որ կազմակերպվում էին այս բոլոր օրերի առիթներով, պատկերներ, որ հիշեցնում են Ֆեդերիկո Ֆելիկի ֆիլմերը:

Այս իրադարձությունների մասին մարդկանց պատմությունները լսելիս հորական տատիս էի ջերմությամբ հիշում: Նրա հայրը հոգևոր կրթություն էր ստացել և ծառայում էր Աբդուլ Յամիդ II-ի պալատում որպես իմամ և մուեզզին (աղոթակոչ): Այդ պատճառով էլ տատս իմ աչքին կրոնական և մշակութային հարցերով մեծ հեղինակություն էր, թեև ինքը նման հավակնություն չունէր: Դեռ նախադպրոցական տարիքից սրտովս էր նրա՝ գարնանը ձու ներկելու և հարևանների երեխաներին բաժանելու սովորույթը: Յետո տեղափոխվեցինք նոր բնակարան, որտեղ ես տարեկից, մտերիմ չորս ընկեր ձեռք բերեցի՝ երեքը՝ թուրք, մեկը՝ հայ: Նոր բնակարանում առաջին գարնան օրերից մի օր հայ ընկերս ներկած ձու բերեց: Ես զարմացա, որովհետև նման բան թուրք տատիցս էի միայն սպասում: Նա էլ իմ բացատրությունից զարմացավ: Դե, թուրք ընկերներս գիտեին, նրա կողմից էին: Թեզիս համար հարցազրույցներ անելիս միայն պարզեցի, թե ինչպես է տատիս մայրը՝ 1977-78 թթ. Ռուս-թուրքական պատերազմի փախստական, մի մանուկ չերթեզ (աղըղե), հայտնվելով Բալաթի սոցիալական խառը հյուսվածքում, ընկերացել տարբեր էթնկրոնական խմբերի ներկայացուցիչների հետ:

Ինքնաբուխ, անկազմակերպ իրադարձությունները երեխաների համար ամենագրավիչն էին, ինչպես գնչու կանանց երաժշտական վեճ-մրցույթները: Սովորական վեճը վերածվում էր մեծ հանդեսի, որ կարող էր անվերջ ձգվել՝ իր հանկարծաստեղծ, հանգավոր փոխիրաձգությամբ, թե ում ամուսինը կամ տունուտեղն է ավելի լավը: Երաժիշտներն ու ամբոխը մշտապես հավաքվում էին նրանց շուրջը, թամաշա անում և կողմ բռնում՝ օգնելով մրցակիցներից որևէ մեկին ի ցույց դնել իր կահկարասին, աման-չամանը կամ ձեռքի տակ ընկած ամեն բան, որ կարող էր մեկի առավելությունը մյուսի նկատմամբ հաստատել: Իմ աղբյուրներն այս վեճ-մրցույթների մասին վառ մանրամասներ էին հաղորդում, որ մեկ այլ տեղ գրառված չեմ հանդիպել: Նրանք նաև սիրով պատմում էին Քաղըթանեի՝ այլ անվամբ Եվրոպայի քաղցր ջրերի պիկնիկների մասին, որտեղ բոլոր էթնկրոնական խմբերից մարդիկ հասնում էին թիանավակների տորմիկներով:

Երկու վայր կար, ուր ամեն տարիքի և համայնքի մարդիկ գնում էին զվարճանալու: Մեկը շուկայի կինոթատրոնն էր: Հիմնվել էր 1910-20-ականների միջակայքում և կոչվում էր «Ազգային սինեմա»: Ցուցադրում էր եվրոպական և ամերիկյան ֆիլմեր: Ովքեր չէին կարող իրենց թույլ

However, it was quite easy to follow up and document the physical structure of the district. Most of Balat was constructed on a grid plan introduced after a big fire in 1856. A popular Armenian song of the late Ottoman period, *Aghavni*, that starts with this line- “İstanbulin champan dzukin ızgara / The streets of Istanbul are a fish-grid”- just reminded me grid system of this era where people of different ethno-religious groups shared their daily life.

In fact, what happened in Balat was already a common practice in İstanbul by the 1840s with the introduction of a new urban code. Dwellings in the city were mostly wooden and thus prone to fire. Once a fire started, it would spread easily. The new law enforced use of brick and mortar instead of wood, and a grid street pattern was imposed on the former irregular one. Several districts in the ancient core of İstanbul were reconstructed in this way after being reduced to ashes by big fires.

In short, Balat mostly retained a mid-19th century urban fabric with some older brick buildings, houses of worship and rows of shops. There are also some enclaves like Pastırmacı Yokuşu that are left untouched at least since the early 19th century as the big fires did not reach them. It didn't take long to figure out. I had the much more difficult task of discovering the characteristics of social life.

Only two written sources (mentioned above) back then included extensive information about social life in Balat, and mainly of the Jewish community. One may note that these were quite recent publications, a result of the newly emerging popular interest. They provided valuable information that is hard to find elsewhere, yet they were not exhaustively researched accounts. To fill in the blanks on sources, or rather to construct a narrative of a social history almost from scratch, I had to come upon oral history as an alternative method. Yet it is not always considered a reliable method. I recorded several sessions with my father and his two sisters, another session with a cousin of theirs, and one with a former inhabitant of the neighborhood -all Turks. I also had numerous smaller unrecorded impromptu interviews with different inhabitants of Balat born

տալ այցելել Բեյօղլուի շքեղ կինոսրահը, այս թատրոնի փայտե աթոռներին նստած էին ֆիլմեր դիտում: Մյուսը՝ Պաստըրմաջը Յոքուշուի բացօթյա սրճարանն էր, որ կոչվում էր «Էթեմի պարտեզ»՝ հավանաբար տիրոջ անունով: Գտնվում էր Ոսկեղջյուրին, Բեյօղլուին և Թոփթափի պալատին նայող դարավանդավոր բլրի վրա: Տղամարդկանց, կանանց և երեխաների հավաքատեղի էր, որտեղ առիթից առիթ նաև կենդանի երաժշտություն էր հնչում: Հորական պապս նույնպես ունկնդրել է առայսօր իր «Մտքիս անուշ վարդը» (Fikrimin ince güllü) երգով հայտնի, թաղի հանրաճանաչ երաժիշտ Իսմաիլ Հաքթիի Բեյի գլխավորած ամենշաբաթյա երաժշտական զրույցներն ու համերգները: Բալաթի պատմությունների հեղինակ Գանի Մյուժեն վաղ 1960-ականներին էստեղ ելույթ է ունեցել որպես մանուկ երգիչ:

Իմ բանավոր աղբյուրների հիշողություններում առկա էին նաև փոքրաթիվ վեճերն ու ընդհարումները: Էթնոկրոնական համայնքներն ունեին իրենց սպորտային ակումբները: Ֆուտբոլի բոլոր խաղերն ավարտվում էին կարճատև կռվով՝ հատկապես, երբ թուրքերն էին պարտվում: Ամեն դեպքում, աննշան ընդհարումները մթազնեցին, երբ, ի պատասխան Սալոնիկում Աթաթուրքի նախնիների տան պայթեցման, տեղի ունեցան 1955-ի սեպտեմբերի 6-7-ի դեպքերը, որ թալանի, գործազրկման և հալածանքի ալիք բարձրացրին Ստամբուլի ոչ մուսուլման փոքրամասնությունների նկատմամբ: Դեպքերը, ինչպես պարզվեց, կազմակերպված էին Թուրքիայի հետախուզական ծառայության կողմից: Բալաթն էլ զերծ չմնաց այդ ամենից, թեև ոչ մուսուլմանական թաղամասերից ամենաաղքատն էր:

Իմ աղբյուրների մեծ մասի համաձայն՝ 1948-ից անմիջապես հետո սկսվել է հրեաների արտագաղթը՝ հիմնականում դեպի Իսրայել: Բայց և այնպես, նրանք նաև պատմում էին, թե ինչպես են անգամ ամենափոքր հրեական կրպակներն ավերվել 1955-ի դեպքերի ժամանակ: Հրեաների գաղթի տարեգրությունը պարզելը ժամանակատար գործ էր: Ի վերջո պարզեցի, որ դա տեղի է ունեցել ալիքներով և երկու ուղղությամբ՝ արտագաղթ-ներգաղթ: Առաջին մեծ ալիքը հաջորդել է 1942-ին ընդունված Ունեցվածքի հարկի կիրառմանը, որը՝ իբրև պատերազմական շրջանի հարկատեսակ, թիրախավորում էր ոչ մուսուլմաններին. 4000 մարդ արտագաղթեց Պաղեստին: Իսրայելի անկախության հռչակումից հետո՝ 1948-51 թթ.-ներին շուրջ 35 000 մարդ արտագաղթեց, որոնց 10 %-ը հինգ տարվա ընթացքում վերադարձավ: Իմ թուրք և հրեա բանավոր աղբյուրները նույնպես հիշատակում էին տարբեր արտագաղթողների, որոնք շատ շուտով նախընտրեցին վերադառնալ Ստամբուլ: Համարվում է, որ Թուրքիայից արտագաղթածների ընդհանուր թվի 40%-ը հրեական

between the 1920s to the 1940s. This helped to cross-check my other oral sources, who were mostly Turks as well.

Even though my sources were Turks, they all depicted the multi-ethnic everyday life in minute detail. They didn't know much about the inner dynamics of other communities, and this is understandable. Besides this, they drew a vivid picture of Balat, an anachronistic Ottoman neighborhood that survived well into the late 1950s.

One of my earliest conclusions about social life was that in Balat ethnicity and occupation are not strongly correlated: Jews were mainly occupied with – but not limited to – tin processing, soldering, cobblery, small scale grocery and green grocery, repair of umbrellas and sewing machines. Greeks and Armenians were mostly involved in jobs requiring more sophisticated technical skills: construction activities, installation of electricity and plumbing. They had small shops, groceries, and restaurants as well. Peddlers of the food trade were Anatolian Turks or Karamanlis (Turkophonic Christian Orthodox people of Anatolia) with their authentic costumes and thick accents. Bulgarians were the major milk and dairy producers. Albanians were famous food vendors and cooks – especially of *offal*. The Roma were in the entertainment business. Their main occupation was entertaining and catering in weddings and festivities. They came with their kitchen equipments, and then installed them under a tent where they prepared the food. Another group would be playing music and dancing while catering went on. They preferred to peddle as cobblers when they were short of money. Famous *meyhanes* and taverns with Roma bands were run by non-Muslims.

Daily life was not limited to trade activities in the narrative of my sources. They provided information ranging from children games to community festivities, including Passover with matzas, Easter with colored eggs, Sabbath promenades of Jews, Sunday promenades of Greeks, Surp Hreshdaghabet's holy day in September, spring carnival of Eastern Christians, Muslim festivities and local fairs set during any of these events resembling scenes from Federico Fellini movies.

համայնքից է: Հետագայում էլ երբեմն եռանկիչ, երբեմն քառանկիչ թվերով էր չափվում տարեկան գաղթը (վիճակագրությունը վերցված է՝ Շուլե Թոքթաշի «Մշակութային ինքնություն, փոքրամասնությունների վիճակ և ներգաղթ. Թուրքիայի հրեական համայնքն ի համեմատ Իսրայելի թուրք-հրեական ներգաղթյալների», Միջին Արևելքի հետազոտություններ, ILIV/3 (2008) / *Cultural Identity, Minority Position and Immigration: Turkey's Jewish Minority vs. Turkish-Jewish Immigrants in Israel*, Middle Eastern Studies, ILIV/3 (2008)): Տեղեկություններ չկան, թե նրանցից քանիսն էին Ստամբուլից կամ Բալաթից: 1950-ականների կեսին տեղի ունեցած գաղթի երրորդ ալիքի ուղղությունն Իսրայելը չէր: Հրեական համայնքը որոշեց տեղափոխվել Բալաթից և Հասքոյից ավելի լավ թաղամասեր. ստամբուլյան երկու թաղամասերն էլ կապվում էին աղքատության հետ:

Բալաթի ժողովրդագրական պատկերի կտրուկ, կամավոր փոփոխությունը համեմատաբար հանդարտ ընթացք ունեցավ: Հրեաները վաճառեցին իրենց տները կամ հարևաններին, կամ նրանց հետ կապեր ունեցող Անատոլիայի խորքերից եկվորներին: Չուգահեռաբար նման տեղաշարժեր եղան Ստամբուլի ոչ մուսուլմանների խմբերում՝ ավելի շատ քաղաքի ներսում, քան դեպի այլ երկրներ: Հատկապես Բեյոյուլից և Գալաթայից տեղափոխվող բնակիչները նախընտրեցին չվաճառել իրենց սեփականությունը, թեև մեծ մասի ունեցվածքը մնաց լքված կամ հայտնվեց զավթիչների ձեռքում: Այս ամենի հետևանքով գոյացան ճնշված քաղաքային տարածքներ: Չնայած Բալաթի նոր բնակիչները փորձում էին շեն պահել քաղաքային միջավայրը, աշխատեցնել իրենց գևած և պահած փոքր վաճառակետերը, որ հույժ կարևոր էին իրանց առօրյան ապահովելու հարցում՝ աղքատության մակարդակը կտրուկ տատանումներ չգրանցեց: Բալաթի խեղճացումը տեղի ունեցավ մյուս՝ ոչ մուսուլմանական, ամայացած թաղերի համանմանությամբ: Ամեն դեպքում, Բալաթն անմխիթար վիճակի հասցնողը ոչ թե զավթիչներն էին, որ այս պարագայում առանձնապես կապ չուներին, այլ՝ աղքատությունը:

Նոր բնակիչների մեծ մասը Սև ծովի կենտրոնական կամ արևմտյան շրջաններից էին: Այս շրջաններից Բալաթում ապրողներ արդեն իսկ կային, և նրանց ներհուքը պատահական չէր: Նորաբնակների թվում էին նաև Սվաբի և Կարսի նահանգներից եկածները: Երբ հրեաները վաճառեցին իրենց սեփականությունը նրանց և հեռացան, Բալաթը դարձավ հիմնականում թուրքերով բնակեցված: Թեև հույները 1955-ի դեպքերից անմիջապես հետո չլքեցին իրենց տները, հրեաների ներքին զանգվածային տեղաշարժը իրանց վրա էլ ազդեց: Տարածքում ցրված ապրող սակավաթիվ հույն

I dearly remembered my paternal grandmother when I listened to people talking about these events. Her father had a formal religious education and served as an imam and muezzin in the court of Abdülhamid II. This made her an authority in religious and cultural affairs in my eyes even though she never claimed so. In my preschool years I enjoyed her habit of coloring eggs in the spring and handing them over to all the kids in the neighborhood. We later moved to an apartment block where I had four close friends around my age, three Turks and an Armenian. My Armenian friend came with colored eggs in my first spring there. I was surprised, because this is something I expected from a Turkish grandmother. He was surprised by my explanation. My Turkish friends backed him. While I carried out interviews for my paper, I learned how my grandmother's mother, a child of a Circassian refugee of the 1877-78 Russian-Turkish War, blended in the mixed social fabric of Balat, and made friends from other ethno-religious groups.

Unscheduled and spontaneous events attract kids the most. For instance, I recall impromptu musical quarrels among Romani women. A simple quarrel would turn into a big show that could go on forever along with improvised rhymes claiming how superior one's husband or one's household was over the other. Musicians and a large crowd instantly gathered around them, watching and taking sides, helping them to exhibit their household goods, furniture, kitchenware, and whatever that could support this superiority claim. My sources offered vivid details about these quarrels I wouldn't find in any written source. They also fondly talked of spring picnics on Kâğıthane, or the Sweet Waters of Europe, where people of every ethno-religious group went in small flotillas of rowboats.

There were two places where people of every age and every community went for entertainment. One was a cinema in the market. It was established sometime in the late 1910s or 1920s and was called *The National Cinema*. It showed European and American movies. Those who couldn't afford to go to chic cinemas in Beyoğlu, enjoyed movies on the

ընտանիքները վաղ 1960-ականներին հեռացան: Նման մի բան կատարվեց նաև Բալաթի հայերի հետ: Իմ երկու բանավոր աղբյուրները, ինչպես նաև գրավոր աղբյուրները հայերին հիշատակում են որպես Բալաթի ամենափոքրաթիվ համայնք: Իմ աղբյուրների փոխանցմամբ՝ հայերի մի քանի տուն կար Մուլա Աշքի թաղում և փոքր համայնք՝ եկեղեցուն հարող տարածքում, որ ի վերջո անհետացավ վաղ 1960-ականներին կամ միախառնվեց նոր ժողովրդագրական պատկերին: Խորենյան դպրոցի բակը վաղ 1940-ականներին ծառայում էր որպես տեղացի հայերին պատկանող կաթնամթերքի վաճառակետ, հետագայում տարածքը վերածվեց բացօթյա կինոթատրոնի:

Իմ աղբյուրների հավաքական հիշողության մեջ հայերը պիտակավորվում էին որպես 1918-23 թթ.-ին Ստամբուլը գրաված Դաշակցային օկուպացիան ուժերի հետ համագործակցողներ: Ուստի, նրանց չէր կարելի վստահել: Նման անվստահություն կար նաև հույների նկատմամբ, թեև ավելի շատ անձնական մակարդակում, քան ողջ համայնքին վերաբերող: Աղբյուրներիցս ոչ մեկը հայերի վերաբերյալ ավելի վաղ շրջանի կամ ավելի դաժան դեպքերի հետ կապված հիշողություններ չունեն, մասամբ նաև, որովհետև դրանք պատահել էին իրենց ծնվելուց առաջ: Մինչդեռ Դաշակցային օկուպացիան ավելի ուշ էր տեղի ունեցել և ինչ-որ կերպ պահպանվել էր նրանց հավաքական հիշողության մեջ, ավելի քան Նախորդող իրադարձությունները՝ 1896-ի Բանկ Օտոմանի գրավումը և դրան հաջորդած ջարդը<sup>1</sup>, ինչպես նաև 1915-ի հայտնի դեպքերը: 1942-ի Ունեցվածքի հարկի՝ Բալաթի հայերի և հույների վրա թողած հետևանքների մասին անմիջական վկայություններ և հիշատակություններ չունենք:

Օրհան Օթայի հուշագրությունը<sup>2</sup> իմ բանավոր աղբյուրներում բացակա հայ հարևանի հետ երկար սպասված հանդիպումն այսպես էր: Գրքում նա պատմում է Հաքևա անունով միջին տարիքի աշխատավորի մասին, որ թերթերից և ամսագրերից քաղված քարտեզների օգնությամբ ուշի-ուշով հետևում էր երկրորդ աշխարհամարտի դեպքերին: Նրա կինը՝ տնային տնտեսուհի Նարդուհին, մտերիմ է եղել հեղինակի մոր հետ: Օթայն անդրադառնում է կրոնական տոների առիթներով նրանց փոխայցելություններին ու միմյանց տրվող նվերներին:

Ալբանացիները, մուսուլման լինելու շնորհիվ, հեշտությամբ հաջողացրին խառնվել մյուսներին: Բուլղարների համայնքն արդեն իսկ վերանում էր ճիշտ այնպես, ինչպես հույներինը և հայերինը: Միակ տեղական համայնքը, որ մնաց իր տեղում և անգամ անց, գնչուներն էին:

Առնվազն 19-րդ դարավերջից մինչև 20-րդ դարի կեսերը Բալաթի խառը բնակչությունը կարծես թե

<sup>1</sup> Ավելին ուսումնասիրվում է հոսիսը ակն'ու Eldem, E. 2011. "26 Ağustos 1896 'Banka Vakası' ve 1896 'Ermeni Olayları' ", İmparatorluğun Çöküşü Döneminde Osmanlı Ermenileri Bilimsel Sorumluluk ve Demokrasi Sorunları, İtup . Aral F., İstanbul Bilgi Üniversitesi Yayınları, İstanbul, 127-152.

<sup>2</sup> Okay, O. 2002. Bir Başka İstanbul, Kubbealtı Neşriyat, İstanbul.

wooden benches of this cinema. The other was an open-air coffee house in Pastırmacı Yokuşu, which was called *Ethem's Garden*, most likely after its owner's name. It was located on a terraced hill overlooking Golden Horn, Beyoğlu and the Topkapı Palace. It was a gathering place for men, women and children. There was occasionally live music. My paternal grandfather also enjoyed weekly music lectures and sessions there under the supervision of a famous musician of the neighborhood, İsmail Hakkı Bey who is still popular with his song "Fikrimin ince gülü / The graceful rose of my mind." Gani Müjde, author of *Balat Stories*, performed here as a child singer in the early 1960s.

Minor disputes and clashes were not absent in the memories of my oral sources. Sporting clubs were organized around ethno-religious communities. Any soccer game would end with a small fight especially if the losing side was Turkish. Yet these minor clashes were overshadowed by the events of 6-7 September 1955, an orchestrated wave of plunder, sacking and abuse against non-Muslim minorities of İstanbul, originally started as protests against the bombing of Atatürk's family house in Thessaloniki. This event turned out to be orchestrated by the Turkish intelligence service. Balat had its share even though it was the poorest non-Muslim neighborhood.

Most of my sources initially indicated that Jewish migration to Israel started immediately after 1948. Yet they also recounted how even tiny Jewish shops were destroyed during the events of 1955. It took some time to find out the exact date of Jewish migration. Eventually I figured out that it took place in waves and in both ways. The first big wave occurred after the Capital Tax, a wartime tax targeting non-Muslims in 1942: 4000 people migrated to Palestine. After the independence of Israel, the number of migrants was nearly 35.000 during the 1948-51 period, and 10% of them returned in five years - my Turkish and Jewish oral sources mention several emigrants who preferred to return to İstanbul after a short while. The total number of migrants is believed to constitute 40% of the Jewish community in Turkey. Then it



համակեցության ձևեր էր մշակել: Նրանց բնակատեղիների միջև ակնառու կամ գծված սահմաններ չկային, ինչպես ցանկացած օսմանյան քաղաքում: Պաշտամունքի վայրերի շուրջ նկատելի էին տվյալ համայնքի խիտ բնակեցումներ, բայց ոչ միշտ: Մուսուլման ընտանիքները կարող էին ապրել սինագոգի հարակից փողոցում կամ ոչ մուսուլմանները՝ մզկիթին կպած: Խանութները նույնպես խմբված չէին ըստ համայնքների, ավելի շուտ շարքեր էին կազմում ըստ ոլորտի կամ ծառայության:

Որոշակի համայնքի պատկանելն առօրյայում մեծ տարբերություն չէր տալիս: Հիմնականում առևտուր անում էին իրենց համայնքից որևէ մեկի խանութից, բայց ոչ միշտ: Խառնամուսուլթյունները հազվադեպ էին, բայց ոչ չտեսնված: Հարևանները կարող էին լինել ընտանիքի մոտիկ բարեկամներ՝ անկախ իրենց հավատքից: Ավելի մեծ տարբերություններ կային հին քաղաքաբնակների և գյուղերից եկածների միջև, քան տարբեր էթնոկրոնական խմբերի: Տարբեր համայնքներից հարուստ ընտանիքներն ապրում էին շրջակա բլուրների վրա, որտեղից ավելի լավ տեսարան էր բացվում, օդն ավելի թարմ էր, իսկ տնամերձերը՝ ընդարձակ:

Թեև համայնքները փոխգործակցում էին որպես փակ սոցիալական խմբեր՝ շատ անհատներ շրջանցում էին նման մոտեցումը: Կային իրար նկատմամբ նախապաշարմունքներ, որոնք առանձնապես ազդեցություն չէին թողնում անհատական շփումների վրա: Բալաթի առօրյայում թուրքերը, ասես, *primus inter pares*-ը (լատ.՝ հավասարներից առաջինը) լինեին, բայց ներհամայնքային գործերում որոշիչ դերակատարում չունեին: Էթնոկրոնական խմբերի միջև լինում էին նաև սրված վիճակներ և բախումներ, որոնք, սակայն, հազվադեպ էին վերաճում զանգվածային գործողության: Վկայություններ չկան 1896-ի Բանկ Օտոմանի գրավման կամ 1915-ին Բալաթում տիրող իրավիճակի մասին, բայց և այնպես, բացառված չէ, որ դեռևս ի հայտ կգան արխիվներում կամ անտիպ հուշերում: Ստամբուլի 1918-1923-ի Դաշնակցային օկուպացիայի տարիներին հավասարակշռությունը թեթևակի խախտվեց ի օգուտ ոչ մուսուլմանների՝ թուրքերին գրկելով *primus inter pares* կարգավիճակից, ինչը սակայն վերականգնվեց օկուպացիայից անմիջապես հետո: Բացառություն կազմող հնգամյա շրջանից հետո կյանքը կրկին հոսեց իր սովորական հունով առնվազն մինչև Երկրորդ աշխարհամարտ:

continued in mostly three, sometimes four-digit numbers per year.<sup>1</sup> We have no information about how many of them were from Balat, or other districts of Istanbul. The destination of the third great wave of migration during the mid-1950s wasn't Israel: the Jewish community made the decision to leave Balat and Hasköy for better districts. These two districts have been associated with poverty in İstanbul.

<sup>1</sup> Data is from Şule Toktaş, "Cultural Identity, Minority Position and Immigration: Turkey's Jewish Minority vs. Turkish-Jewish Immigrants in Israel", *Middle Eastern Studies*, ILIV/3 (2008)

